

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ»
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



УНИВЕРСИТЕТ
“ГРИГОР НАРЕКАЦИ”

ԴՊՐԱՏՈՒՆ

Գիտական հոդվածների
Ժողովածու

Сборник научных статей

3-2015



«Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարան
Госаккредитованный университет “Григор Нарекаци”

ԴՊՐԱՏՈՒՆ

Գիտական հոդվածների ժողովածու
Сборник научных статей

3
2015

Ստեփանակերտ
Степанакерт

«Դիզակ պլուս» հրատարակչություն
Издательство “Дизак плюс”

Հրատարակվում է 2011թ.
Издаётся с 2011г.

Գլխավոր խմբագիր

Հակոբյան Վարդան - բան. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ստեփ. «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտոր

Պատասխանատու խմբագիր

Բեգլարյան Ժաննա - ՀԼԳ ամբիոնի դասախոս, բան. գիտությունների
թեկնածու, դոցենտ

Դպրատուն: Գիտ. Հոդվածների ժող. /«Գրիգոր Նարեկացի» պետ. հա-
վատարմագրված համալս. - Ստեփանակերտ: Դիզակ պլյուս, 2015.
Հ. 1:2015 / խմբ. խորհուրդ՝ Ա. Ավագյան և ուրիշ: Գլխ. խմբ.
Վ. Հակոբյան.-128 էջ:

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ - բան. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *ԱՐՁՈՒՄԱՆ-
ՅԱՆ ԼԻՆԻԹ* - բան. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ* - բան.
գիտությունների թեկնածու, *ԲԱԼԱՅԱՆ ՈՂՆԱ* - պատմական գիտությունների թեկ-
նածու, դոցենտ, *ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՍԱԼՅԱ* - գրականագետ, դոցենտ, *ԴՈՒՆԻՍԱՆ-
ՅԱՆ ԱՆԼԻՏԱ* - ՀԳԱԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր, *ԹՈՎՄԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ* - ման-
կավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, *ԹՈՎՄԱՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ* -
բան. գիտությունների թեկնածու, դոցենտ, *ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ* - բան. գիտու-
թյունների դոկտոր, պրոֆեսոր, *ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՎԱԿ* - իրավաբանական գիտու-
թյունների թեկնածու, *ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ* - մանկավարժական գիտու-
թյունների դոկտոր, պրոֆեսոր, *ՄԱՆԱՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ* - փիլիսոփայական գի-
տությունների դոկտոր, ՀԳԱԱ թղթակից-անդամ, *ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ* - բան.
գիտությունների թեկնածու, *ՄԿՐՏՅԱՆ ԷՂՎԱՐԴ* - բան. գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, *ՍՈՒՄԱՅԵԼՅԱՆ ՀՈՎԻԿ* - բան. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ - բան. գիտությունների թեկնածու, *ՍԱՐԻՆՅԱՆ ՍԵՐ-
ԳԵՅ* - բան. գիտությունների դոկտոր, ՀԳԱԱ ակադեմիկոս, *ՍՈՂՈՍՈՆՅԱՆ
ՏԱԹԵՎԻԿ* - բան. գիտությունների թեկնածու, դոցենտ, *ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ԺԵՆՅԱ* -
բան. գիտությունների դոկտոր, *ՕՀԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ* - ռուսաց լեզվի և
գրականության ամբիոնի դասախոս

ՍԵՐՁԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ
ՀՀ ՊԱՍ ակադեմիկոս

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ՂԱՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում ապացույցի ենթակա հարց չէ: Այն միանգամայն հավաստի իրողություն է դարավոր բռնությունների, հափշտակված պատմական Հայաստանի, բնաշախարհից օտարված ազգային զանգվածների, միլիոնավոր զոհվածների անհերքելի վկայությամբ: Բայց որպես պատմական եղելություն, դա արժանի է խոր ու համակողմանի ուսումնասիրության, և դրա գիտական իմացությունն ուսանելի է ոչ միայն իրավական ու դիվանագիտական տեսակետից, այլև քաղաքակրթության, Արևելքի ու Արևմուտքի բախման, կրոնական մաքառումի, մարդաբանության, ցեղային հատկանիշի, սաղիզմի հոգեբանության ճանաչման առումով: Առավել ևս, որ թուրքի ցեղային այդ ծրագիրը շարունակվում է գործել նաև այսօր, ավելի կատարելագործված, ավելի ստոր ու ավելի ոճրագործ եղանակներով: Այս իմաստով հայոց ցեղասպանության խնդիրը պետք է քննել ներկա իրադարձությունների դիտակետից, իրերի տրամաբանության մեջ հայտնաբերելու պատմության փորձը:

«Կարամազով եղբայրներ» վեպում Դոստոևսկին թուրքական վանդալիզմի հոգեբանությունը արտացոլող մի այսպիսի պատկեր է ներկայացնում. «Իրոք, երբեմն խոսում են մարդու «գազանային» դաժանությունների մասին, բայց դա սոսկալի անարդարություն և վիրավորանք է գազանների նկատմամբ, գազանը երբեք չի կարող այնքան դաժան լինել, որքան մարդը, այնպես արտիստորեն, այնպես գեղարվեստորեն դաժան: Վագրը պարզապես հոշոտում է, պատառոտում է և միայն այդ կարող է անել: Նրա մտքովն անգամ չէր անցնի մարդկանց ականջները զանել ցանկապատին և ամբողջ գիշեր թողնել այդպես, եթե նույնիսկ ի վիճակի լիներ անելու այդ բանը: Իսկ այդ թուրքերը, ի միջի այլոց, հեշտասիրությամբ տանջել են նաև երեխաներին, մոր արգանդից դաշույնով կտրել-հանելուց սկսած մինչև ծծկեր երեխաներին վեր նետելը և սվինի ծայրով բռնելը՝ այն էլ մոր աչքերի առաջ: Հենց բուն հեշտանքն էլ մոր աչքերի առաջ անելն է: Բայց ահա մի այսպիսի տեսարան հատկապես հետաքրքրել է ինձ: Պատկերացրու ծծկեր մանկիկը՝ դողալիս ու մոր ձեռքերին, շուրջը՝ ներխուժած թուրքեր: Նրանք մի զվարճալի խաղ են սկսել, փայփայում են փոքրիկին, ծիծաղում են, որպիսի նրան էլ ծիծաղացնեն, հաջողում են, մանկիկը ծիծաղում է: Այդ ռոպեին թուրքը նրա վրա ատրճանակ է ուղղում՝ դեմքից չորս մատնաչափ հեռավորությամբ: Մանկիկը ուրախ ծվլում է, թաթիկները երկարում, որ բռնի ատրճանակը, և արտիստը հանկարծ չրթացնում է բլթակը ուղիղ նրա երեսին, ջախջախում նրա գլուխը... Արվեստ է, այնպես չէ՞: Ի դեպ ասում են, որ թուրքերը քաղցրավենիք շատ են սիրում»:

Ավելի սպառիչ դժվար է բնութագրել թուրք ռասսայի էթնիկական հատանիշը և կասկած չկա, որ ոճրագործի «արտիստական» այս հաճոյասիրությունն առավել հնարամիտ է դրսևորվել Հայաստան աշխարհում, քան

Բուլղարիայում, որ ներկայացնում է Դոստոևսկին: Երևույթի արտացոլումը գեղարվեստական գրականության մեջ իմացաբանական հենց այն առանձնահատկությունն ունի, որ փաստի գործողության մեջ հայտնաբերում է հոգեկան-զգացական արտածումը, այսինքն ոճագործության կենսահոգեբանությունը: Այս տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հայ գեղարվեստական գրականության ընծեռած նյութը: Առհասարակ ազգի տրոհման, տարրալուծման, անէացման հարցը եղել է 19-րդ դարի և 20-րդ դարասկզբի հայ գրականության առաջնակարգ թեմաներից մեկը: Հայ դասական գրողների՝ Աբովյանի, Ալիշանի, Նալբանդյանի, Րաֆֆու, Պատկանյանի, Պարոնյանի, Փափագյանի, Պռոշյանի, Սրվանձտյանի, Կյուրճյանի, Թվկատինցու, Ջարդարյանի, Ահարոնյանի, Առանձարի գեղարվեստական պատկերներում դժոխային դրվագներ է հյուսել հայոց դանթեականը՝ բռնության, հալածանքի, տեղահանության, սովի, համաճարակի, կողոպուտի, ֆիզիկական հաշվեհարդարի, զանգվածային ոչնչացման քաոսում իրագործելով ազգի բնաջնջման մի ծրագիր: Իսկ որպես մղձավանջային սարսուռների արձագանք հայոց մուսանները Պեշկեպաշյանի, Դուրյանի, Հովհաննիսյանի, Թումանյանի, Իսահակյանի, Սիամանթոյի, Վարուժանի, Տերյանի բանաստեղծական ներշնչանքները տոգորել են ազգային վշտի մոտիվներով, երկինք առաքելով կորսված իղձերի, խորտակված երազների, կարոտի, մահվան, անդարձ ուղիների տիեզերական թախիծը:

Իր ուղեգրություններում, պատմական ակնարկներում, հայրենասիրական խոհերում Արաքսից անդին գտնվող երկիրը Աբովյանին ներկայանում է որպես մութ, խավար ու դժոխային մի աշխարհ, ուր լենկթեմուրների, թաթար մոնղոլների և այլ վայրենի հորդանների հետնորդը՝ «բարնարոս թուրքը» բռնության ու սարսափի ուրվականն է կախել հայոց երկնականարից, և ուր հայ ժողովուրդը «ինքնահորդոր գոհաբերությամբ» իր լիներությունն է պահպանում «բարբարոսների ժանիքների մեջ»: Եվ արդեն 50-60-ական թվականներից սկսած հայ մամուլի օրվա լուրերում տիրապետող են դառնում գավառներում թուրքերի ու մահմեդական այլ ցեղախմբերի ասպատակությունների վերաբերյալ տազնապալից հաղորդումները: «Օր չըլլար, շաբաթ չըլլար, որ զանազան քաղաքներեն առաջնորդներ ու անկարգ և ազգավեր ընթացքից ու ինքնակոչ բռնավորներու բարբարոսների նկատմամբ նամակներ չգան», - հաղորդում է Սվաճյանի «Մեղուն» (1864, N 244): «Գավառներու մեջ հայերու արյուն կը հոսի բռնության ձեռքով, հարստահարությունները կը կրկնապատկին, թշվառության ճիվաղ դեմքը օրե օր նահատակները կը շինե», ահագանգում է Չիլինկիրյանի «Ծաղիկը» (1862, N 43): Ջեթունի ապստամբությունը (1862) բռնադատված ժողովրդի բողոքի ու ցասման ցույց էր Օսմանյան Թուրքիայի ազգահալած քաղաքականության դեմ: Դաժանորեն ճնշվում է ապստամբությունը, արևմտահայ իրականության մեջ մոլեգնում է քաղաքական ռեակցիան, ըստ էության ոչնչացնելով սահմանադրական իրավունքի փշրանքները: «Քնար և շիրիմ», «Մերձ ի մահ» եղերերգություններում Պեշկեպաշյանը հայրենի երկիրը պատկերում է որպես «ավերակված ամայություն», ուր «սև գիշերների» մղձավանջում լսվում է միայն բուի «չարագուշակ» կոինչը: «Նոր սև օրերում» Դուրյանը տեսավ «արցունքներու լոկ երկինք», «Մոխիր հագած, արյուն ծծած սև հողեր», ուր «Մառախուղ են հագեր դաշտքն ու լեռինք» և «ոտնակոխ հայուն սիրտը և տաճարը»:

70-ական թվականներին Թուրքիայում տեղի է ունենում պետական հե-

ղաշրջում: Գահ է բարձրանում Սուլթան Համիդը և արյունոտ բռնատիրությունը հայոց ցեղասպանությանը տալիս է պետական քաղաքականության կերպարանք, օրակարգի մեջ դնելով «հայկական հարցի» լուծման թուրքական տարբերակը: Մահմեդական խառնամբօխի ներխուժումը հայկական գավառները աստիճանաբար փոխակերպում է երկրի էթնիկական կազմը: Հայերի թվական գերակշռությունը աստիճանաբար նվազում է այլատարր ցեղերի հարաբերությամբ, հարկադրական պանդխտությունից հայազրկվում է պատմական բնաշխարհը: Մի ականատես այսպես է նկարագրում իր տպավորությունը Ալաշկերտի գավառից. «Ուղևորության ժամանակ շատերը ճանապարհին վրա կը մնան կիսամեռ կամ դիակացիալ, գարշահոտություն կը տիրեր ամենուրեք և Պայազետեն մինչև Վաղարշակերտ ամբողջ դաշտն ծածկված էր դիակներով... Այս սովյալ ու խոտակեր մարդոց շատերուն երեսներն, աչքերն, ձեռքերն, փորն ու ոտները ուռած են և ասոցմե հիվանդություն մը գոյանալով սկսած է և հարուստ և առողջ անձանց ալ ազդել» (Լեո, Գրիգոր Արծրունի, հ. 2, էջ 140-141): Մի այլ իրողություն է ներկայացնում Գարեգին Սրվանձտյանը «Թորոս աղբար» գրքում. «Թրքաց հին բռնության արդյունք է, որ Զիլեի հայք ամբողջ թուրքերեն կը խոսին, երբեք հայերեն չգիտեն, անչափ կը զարհուրեն տաճիկերեն և կատարելապես ստրուկ են անոնց առջև...» («Թորոս Աղբար», 1879, էջ 73):

Ականավոր հրապարակախոս Մ.Մամուրյանի բնորոշմամբ, ազատությունը թուրքիայում իրական է միայն «գերեզմանի մեջ»: Անիրավությունների համատարած դժոխքում իշխող բարբարոսի՝ «առաջնորդը, կուսակալը, քննիչը, դիվանագետը, քյուրտը և չերքեզը խոսքը մեկ ըրեր են Փոքր Ասիո ու Հայաստանի ժողովուրդները կեղեքելու, խուզելու և անոր կործանումը փութացնելու համար...», «... ջուրի տեղ արյուն կը խմեն, հացի տեղ մարդու միս կուտեն, անկողնի տեղ արյունալի դիակներու վրա կը պառնեն և ժողովուրդն կ'սպասեն, ինչպես կ'սպասեն գառնուկներ սպանդարանին դուռն...» («Արևելյան մամուլ», 1879, N 202):

Թուրքական ժանտախտի սարսափները այլաբանական դիպուկ ու խորհմաստ բնութագրումներ են ձևակերպել Հակոբ Պարոնյանի երգիծական առածներում, կալամբուրներում, այլուզիաներում, լուրերում: Այս տեսակետից հատկապես նշանակալից են «Կամիթներ», «Հոսհոսին ձեռատետրը», «Ծիծաղը»: Թուրքիայում «ճշմարտությունը դազաղի մեջ է դրված», իսկ ողջամտությունը, անաչառությունը, անկեղծությունը գրանցվել են «հանցանքներուն ցանկին մեջ»: «Գավառաց մեջ հայերն ապահովություն չունին, ոչ ստացվածքի, ոչ կյանքի և ոչ պատվի, խեղճերը կը կողոպտվին, կը սպաննվին և այս վիճակին մեջ բազկատարած գթությունը կը հայցին: Գավառաց մեջ հայոց հպատակությունն գերություն է, գերությունն ավելի գեշ է», -գրում է Պարոնյանը:

Հայերի հանդեպ թուրքական ոճրագործությունները մի ամբողջ մոտիվ են կազմում Ռաֆայել Պատկանյանի պոեզիայում: «Մշեցու հեկեկանքը», «Ղարիբ մշեցի», «Ծերուկ վանեցի», «Հազարեն մեկը», «Հայի արյուն», «Թալանած գեղ», «Երկու պատկեր» և այլ բանաստեղծություններում, նա ազատագրական պայքարի կոչելով նահատակ ժողովրդին, Արևմտահայաստանը ներկայացնում է որպես ոճիրների, մահվան ու ողբի երկիր: Թուրքը «հաճույքի համար» իր սուրը լվանում է հայի արյունով, «սուլթանի տոփոտ պասքը հագնում է» պարկեշտասուն հայ աղջիկներով, ուր բռնի ուրացությամբ Քրիստոսի սուրբ խաչը պղծվում է Մահմեդի գարշահոտ հավատով, և կրակի են մատնված տուն, եկեղեցի, պարտեզ ու այ-

գի» և դեռ երեկ ճոխ ու վաստակած նահապետական գերդաստանը այսօր մխում է «թշվառ անթաղ դիակներով»:

Թուրքիայի պետական-քաղաքական կառուցվածքի և Արևմտահայ ժողովրդի ողբերգական կացության գեղարվեստական մի ամբողջ հանրագիտարան է Րաֆֆու ստեղծագործությունը: Ուղեգրություններում, նամակներում, վեպերում ու հրապարակախոսական աշխատություններում վերլուծելով 19-րդ դարի Թուրքիայի սոցիալական, իրավական ու տնտեսական կյանքը, նա բացահայտել է ֆեոդալիզմի ու կրոնական ֆանատիզմով ուռճացած բռնապետության այլանդակությունը, քաղաքակրթության ողբերգական բախումը բարբարոսության վանդալային արշավին: Բնութագրելով Արևմտյան Հայաստանի ներքաղաքական կացությունը՝ Րաֆֆին «Ջալալեդին» վեպում ասում է. «Հակառակ ազգություններ՝ մեկը վերջին ստրկության հասած հայը, մյուսը վերջին բարբարոսության հասած Մահմեդականը»: Եվ որովհետև մահմեդական գերիշխող բարբարոսը ավազակաբարո է և գործում է «հափշտակեցեք, կողոպտեցեք, այրեցեք և կոտորեցեք» անասնական օրենքով, ուստի և հպատակի ֆիզիկական ոչնչացումը արդարացվում է «մարգարեի» պատվիրանով: Ժամանակ առաջ Սահրատին հայրենի եզերքը ներկայանում էր որպես մի գեղեցիկ արարչություն, «խոտավետ արոտներում արածում էին ոչխարների հոտեր, ձորերի մեջ կազմված էին խաշնարած հայերի վրաններ և հովիվների սրինգը հեռվից հնչում էր թռչունների առավոտյան ծայների հետ»: Իսկ ահա այժմ ոչ մի շունչ, ոչ մի կենդանություն, «մի չոր և ոչնչացնող ձեռք անցել էր այդ ընդարձակ տարածության վրայով, իր հետքից թողնելով ավերակներ և ամայություն»: Երբ անկասկած է ֆիզիկական ոչնչացումը, բարոյական սրբապղծությունը ինքնին վերաճում է սադիստական հաճույքի՝ պղծել եկեղեցու սրբությունը, վանականների մարմինն շիկացած երկաթով խարան դաջել, բռնաբարված ու անարգված կանանց մերկ շուրջպարի քաշել՝ «բարբարոսության ամենախայտառակ մի ցույց»:

«Խենթը» վեպը ցեղասպանության իրական հանգամանքների մեջ է ստուգում ազգային ազատագրության գաղափարը: «Կրոնական մոլեռանդությանը խառնված զինվորական անգթության հետ, անցնում էր, բարբարոսության ամեն չափից ու սահմանից, մարդը գազան դարձած, կեղեքում էր, մահացնում իր նմանին», գրում է Րաֆֆին, որոշակիորեն դիտելով ոչ միայն գոյության կռվի գործունը, այլև բարբարոսության հոգեբանական այն պատճառականությունը, որի անխուսափելիությամբ տեղի է ունենում Խեչոյի տոհմիկ գերդաստանի ողբերգական կործանումը: Դեռ երեկ Եփրատի հովտի հայաբնակ գյուղը գեղատեսիլ բնության հետ ծովված հրաշակերտ էր ներկայանում և արարչության պարզներով օծում Խեչոյի նահապետական գերդաստանի առօրյան՝ յոթ որդիներով, հարսներով, թոռներով, ծոռներով, կովերի, գոմեշների, եզների, ձիերի ընտիր նախիրներով, հազարի չափ ոչխարի հոտով, ջրաղացով, ծիթհանով՝ տնտեսական մի գեղեցիկ կազմակերպության, աշխատանքի, վաստակի, պարտքի ու պարտականության ներդաշնակ բովանդակությամբ, աստծո օրհնությամբ, էթնիկական ոգու հազարամյա սովորությամբ: Թվում էր, թե հավերժությունը շնորհված է վերուստ, բայց քուրդ անասնաբարո ցեղախմբի արշավից հետո բոլորովին այլ է պատկերը. «հովտի ամբողջ տարածությունը ներկայացնում էր մի սգավոր անապատ... Կյանքը դադարել էր ամեն տեղ. դաշտերից չէր լսվում երկրագործի ուրախ երգը, արոտամարգերի վրա անասունները չէին արածում, ամեն ինչ լռել էր,

ամեն ինչ գտնվում էր խուլ մեռելության մեջ: Կարծես ապականության կործանիչ դեռ դեռ նոր անցել էր այդ թշվառ երկրի վրայով, ոչնչացրել էր բոլորը, ինչ որ ստեղծել էր մարդու աշխատասեր ձեռքը»: Խեչոյի գերդաստանի կործանումը հայերի ցեղասպանության գեղարվեստական այլաբանությունն է:

«Կայծեր» վեպի «Ի՞նչ է պարսիկը», «Ի՞նչ է քուրդը և ի՞նչ է թուրքը» ակնարկներում Րաֆֆին պատասխան էր տալիս որոշակի հարցերի, ցույց տալիս էթնիկական այն միջավայրը, որի մեջ դրված էր հայ ժողովուրդը: Վեպի հերոսները ուխտագնացներ են և շրջելով Հայաստան աշխարհի գավառներում՝ նրանք ամենուրեք ականատես են լինում ողբերգական սարսափների՝ ցնորված կորուսյալներ, կործանված ձակատագրեր, բռնաբարված կանայք, ավերված գյուղեր, կողոպտված եկեղեցի, անարգված սրբություններ, անսանձ կամայականություն, սպանելու իրավունք, պետականորեն հովանավորված ոճրագործությունների մղձավանջ, որի ընդերքից հառնում է հարյուրամյակների պատմության փորձով գուշակված ազգային աղետի տագնապալից ահագանգը. «Թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթելուց հետո կդառնա կրթյալ ավագակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա... Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է վարվել մեզ հետ թուրքը: Նրա ամեն մի տողը արյունով և արտաքուսով է գրված: Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը»: (Րաֆֆի, ԵԺ, հ.9, 1964, էջ 271-272):

90-900-ական թվականներին Հայաստանի ազգային-քաղաքական կացությունը մթագնվում է իշխող պետությունների վարչական խստություններով: Ցարական արքունիքի թուրքասիրական հակումները ուղեկցվում են հակահայկական գործողություններով (դպրոցների փակում, գրաքննչական վերահսկողություն, ազատագրական շարժումների արգելում), սուլթանի կառավարությունը եվրոպական պետությունների խոսքի դիվանագիտության շղարշի ետևում գործի է դնում «հայկական հարցի» լուծման իր տարբերակը: Անկարող լինելով տնտեսական ու քաղաքական ճգնաժամը լուծել «արտաքին պատերազմի» միջոցով, Սուլթան Համիդը ելքը գտնում է «ներքին պատերազմի» մեջ, ընդդեմ գլխավոր թշնամու՝ հայ ժողովրդի: Համիդեական նորաստեղծ գնդերով նա հայկական գավառները տրամադրում էր մահմեդական ցեղապետների ասպատակությանն ու հողի բռնի սեփականացմանը, ամենախիստ գրաքննությամբ փականք է դրվում ազգային մշակույթի, մամուլի և գրականության վրա: «Ամեն օր կը փնտրվին այն ամեն գիրքերն, որոնց մեջ Հայաստան բառն կը գտնվի: Ամեն օր կը ձերբակալվին և կը բանտարկվին Հայկա և Վարդանա պատկերներն», -գրում է Պարոնյանը: «Գահավեժ անկումի, խուճապական տագնապի, արյան արցունքի մեջ նսեմաստվեր կաղոտանար 1891-1895-ի մտավորական վերածննդի արևածագը», տագնապ է արտահայտում Արփիար Արփիարյանը:

Վարչական ու իրավական սահմանափակումներից Սուլթան Համիդն անցնում է բացահայտ հարձակման: 1894-1896 թվականներին թուրքական սատրապները ջարդեր են կազմակերպում Հայաստանի գրեթե բոլոր գավառներում՝ Սասունում, Էրզրումում, Տրապիզոնում, Մարաշում, Սեբաստիայում, Երզնկայում, Վանում, Բաղեշում, Խարբերդում և այլուր, որոնց ընթացքում զոհ են գնում ավելի քան երեք հարյուր հազար հայեր: Սա Մեծ եղեռնի նախերգանքն էր, քաղաքակրթության դարաշրջանի ցեղասպանության առաջին փորձը:

Նոր շրջան է թևակոխում ազգային մաքառումը: Ձևավորվում են ազգային-հեղափոխական կուսակցություններ, որոնք Հայաստանի ազատագրության հարցը հռչակում են որպես ազգային ծրագիր: «Դեպի Երկիր» կոչը լայն արձագանք է գտնում ժողովրդի բոլոր խավերում, կազմավորվում են կամավորական զնդեր, որոնք նահատակության են գնում հանուն ազգի փրկության, Հայոց լեռնաշխարհում հայտնվում է ֆիդային՝ ժողովրդական վրիժառուն: Այս իրողությունը որոշակի ուղղություն է տալիս ազգային գաղափարաբանությանը, մամուլը և գրականությունը հագեցնում են թուրքական բռնությունների դեմ հայոց դիմադրական շարժման վավերագրական ու գեղարվեստական պատկերներով, գրականության մեջ հայտնվում է հայ հեղափոխականի կերպարը (Լևոն Շանթ, Երվանդ Օտյան, Ավետիս Ահարոնյան), ֆիդային մի ուրույն մոտիվ է գծում հայ երգի և բանաստեղծության մեջ (Ավ. Իսահակյան, Սիամանթո), պոեզիայում հնչում է ռոմանտիկական իղծերի փլուզման և ազգային վշտի արձագանքները (Հ. Թումանյան, Հ. Հովհաննիսյան):

«Պատկերներ թուրքահայ կյանքից», «Նամակներ թուրքաց Հայաստանից» պատմվածքների ու ակնարկների շարքերի սուր հանգամանքների վրա դիտված սյուժեներում, Վրթանես Փափագյանը արտացոլում է արևմտահայ իրականության հիվանդագին ջղաձգումները («Ենիչերի», «Ճգնավոր Եղո»), թուրք սատրապների ավազակաբարո ինքնիշխանությունը («Շահնա», «Արդար դատաստան», «Հաջի աղան»): Ավետիս Ահարոնյանը արտահայտում է կործանվող մի աշխարհի սարսուռները. «Պուտ մը կաթ», «Փշուր մը խաց», «Բաշոն», «Բախտի խաղեր», «Խավարես լուսին», «Դարավոր կաղնի», «Մայրեր» պատկերներում, «Սև օրեր», «Ռաշիդը», «Սրբկի սուրբը», «Կյանքի դասը», «Կույրերը» վիպակներում գրողը ներկայացնում է փախուստի, սովի, գրկանքների, թշվառության զգայացուց տեսարաններ, հայոց մթնոլորտը տոգորելով ողբի, լացի, հառաչանքի ու տագնապի սրտակեղեք հեծեծանքներով: Որդեկորույս մայրերի, սովից մահացող մանուկների, անթաղ մնացած դիակների, հետապնդումից ձողոպրած փախստականի, մահվան ուրվականից հալածվածների, ողբի, աղերսանքի, ցնորամիտ գառացանքի մի համատարած մղձավանջ է իրականությունը, որ երևակայության հիվանդագին բորբոքումների մեջ ձև է տալիս անդրշիրիմյան ուրվապատկերների. «Սատանաները գնդակ էին խաղում հանձարների գանգերով լցված դամբարաններում: Բորենիները լիզում են բորբոսնած ոսկորները և դունչերը ձգած երկնքի երեսին ոռնում իրենց քաղցր կատաղությունը, բուերը հեծկտում են ավերակներում, օձերը ֆշշացնում փտած ծառերի խռոչներում և հսկայական մի չղջիկ իր ջլուտ, գարշահոտ թևերով շրշյուն էր հանում և հողմահարում մռայլ մարդկության գունատ, մահադրոշմ ճակատը»: Թվկատինցու, Ռուբեն Զարդարյանի, Առանձարի, Արտաշես Հարությունյանի և այլ գրողների գեղարվեստական պատկերներում հայտնաբերվում է մի նոր աշխարհի հայոց բնօրանը՝ հինավուրց ու ավանդական, բայց և բռնությամբ հափշտակված հայրենի եզերք, ուր կամայականությունների ու ծաղրուծանակի համատարած մթնոլորտում քայքայվում են բարոյական արժեքները և ավանդակեցության դարավոր սկզբունքները տեղի են տալիս լքումին, հեռացմանն ու ապաշխարանքին:

Հայրենի Ակնից եկող չարագուշակ լուրերի «գարհուրանքով» ձևավորվեցին Ատոմ Յարձանյան-Սիամանթոյի բանաստեղծական մտապատկերները: Մղձավանջային տեսիլներում հառնում է հոշոտված ծննդավայրը և գարհուրանքի ճիչը փոխակերպում բանաստեղծության՝ «Կոտո-

րած, կոտորած, կոտորած... Եվ բարբարոսները ավարով և արյունով կը դառնան...»: «Դյուցազնորեն» շարքում պատգամախոսելով վրեժի, ըմբոստացման, հաղթանակի ու խաղաղության արշալույսների ծագումը, Սիամանթոն «Հայորդիներում» ներբողում է հայ հեղափոխությունը, խորհրդանշելով Գաղափարի ու կամքի մի հզոր ես, որի անունը Պայքար է, իսկ վախճանը՝ Հաղթանակ: «Հոգեվարքի և հույսի ջահերում» մաքառման երգը տեղի է տալիս խոհափիլիսոփայական մտորումին: Արյունոտված հովիտների վերիուշը «չարչարանքի երազներում» այլափոխվում է մահվան տեսիլների և անդրշիրիմյան աղաղակների մշուշից առկայծող աստղերը վերստին ավետում են «հաղթանակի Ռազմերգի որոտումը»:

Սիամանթոն այն բացառիկներից էր, որ զգաց երիտթուրքերի ազգայնական տրամադրությունների ընդերքում թաքնված մութ դիտավորությունների խարդավանքը հայ ժողովրդի նկատմամբ: Այդ նախազգացումների մտապատկերներից նա կառուցում է «Կարմիր լուրեր բարեկամես» շարքը, որ Վարուժանն անվանեց «Տաղանդավոր ոճերեզոթյուն»: Հայոց դանթեականի եղերամատյանում բանաստեղծը տարրալուծում է թուրք-ֆեոդոնների կենսահոգեբանությունը, վանդալիզմի «էսթետիկան», սադիզմի հոգեկան հաճույքը, որ վերաճում է բանաստեղծական հիմնի («Իրենց երգը»):

«Պաշտումով կը վերաբերվիմ կոմիտներուն հանդեպ», այսպես Վարուժանը գտավ «Ցեղին սիրտը» բանաստեղծական շարքի գաղափարը: Ցույց տալով հայ ժողովրդի զոհաբերությունը բազմիս վրա, բանաստեղծը պայքարի ու կորուսի երգով ոգեկոչում է նահատակներին, մահվան փառքը իմաստավորում ազատության վեհությամբ և ներբողում «ցեղին սրտի» հավերժությունը: Հայոց եղեռնապատումի ամենաարտահայտիչ դրվագներից են «Ջարդը» և «Կիլիկյան մոխիրներում» քերթվածները: Եթե առաջինը վերաբերում է 1895-1896 թվականների հայոց եղեռնին, ապա երկրորդը՝ պատմում է երիտթուրքերի սանձազերծած Ադանայի ոճրագործությունը: «Մահ և մոխիր», «միահամուռ կը խմեն արյուն ծերի ու մանկան», ահա ինչի է ընդունակ «վայրագ ոգին», «դահիճ ցեղը»: «Կիլիկիայի ջարդը ձնեց աղիքներս: Ցեղին հոգին արյուն կուլա մեջս, հրդեհված քաղաքներեն եկած ամեն լուր՝ տաք մոխրի պես կը թափի գլխուս և սրտիս վրա», գրում է Վարուժանը, թուրքի քաղաքակրթությունը նմանեցնելով «փտած կաթսաների կլայեկին» և հեգնելով այն «պոռնկացած» տեսակետը, թե «թուրքը ի բնե բարի է», իսկ վայրագությունների սկզբնապատճառը «հայի անխոհեմությունն է»:

Ցեղասպանության արհավիրքը և ազատագրական մաքառումը հայ գաղափարաբանությանը զբաղեցնում է ազգապահպանության ուղիների որոնմամբ, առաջադրելով պատմության և ոգու գոյական հիմունքները: Հայոց ոգու ինքնության ճանաչումը դառնում է ազգային մտածողության գլխավոր ուղղություններից մեկը: «Ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը, ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ու՞ր որոնենք էդ ոգին», գրում է Թումանյանը և դարերով երկնած մեր խորունկ հոգու անգին ու ծով գանձերի հավերժությունը խորհրդանշում հայոց հինավուրց լեռներում ծագող առավոտներով («Հայոց լեռներում»):

Լևոն Բաշալյանի, Ռուբեն Ջարդարյանի, Զյուլյուրյանի, Զիֆթե Սարաֆի և այլ գրողների արձակ սյուժեներում փիլիսոփայական իմաստ է ստանում հայոց տոհմիկ ինքնության ու հայկական ոգու ստեղծող բնույթի գաղափարը: Բաշալյանի «Ցեղին ձայնը» նովելի պատմանի հերոսի անհատական զգացողություններն արթնանում են այն բնագոյներով, ինչը նե-

րարկվել է ցեղի արյան բջիջներում. «Կը խնդրեր այն գենքը, որ պիտի ապրեցներ զինքը... Արյունի մեջ ուներ այդ պետքը՝ դեպի իմացականությունը, դեպի գիտությունը, դեպի հառաջադիմությունը, դեպի հաղթանակը: Ատով էր, որ իր ցեղը տներ էր ու պիտի տներ»:

Ազգային ոգու նորակերտման գեղարվեստական արտահայտությունը հանդիսացավ հեթանոս շարժումը, որի միտումն է հայ արյունը վերածնել հեթանոս աստվածների ֆիզիկական հզորությամբ, վերադարձնել նրան ուժի, սեռի, գեղեցկության նախնական կուլտը: Գրական այդ հոսանքի բարձր արտահայտությունը հանդիսացավ Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» շարքը, որի բնաբանն էր. «Ես կերգեմ զինին-Բագիններուն ծիծաղը և խորաններուն արյունը: Դարերու կյանքը կերգեմ, հանուն հաճույքի և տառապանքի գեղեցկության»:

Դեպքերի ընթացքը աստիճանաբար ցրում է պատրանքները երիտթուրքերի խոստացած ազատությունների վերաբերյալ: Երկրի քաղաքական մթնոլորտում կախվում է հայ ժողովրդի հանդեպ ազգայնամոլ կուսակցության մուր ղիտավորությունների աղետը: Այդ նախազգացումներն առավել տազնապալից են դառնում համաշխարհային պատերազմի նախօրեի քաղաքական լարված հանգամանքներում: «Վայ հայ ժողովրդին, - ասում է Զոհրապը, - եթե համաեվրոպական պատերազմ ծագի, թուրքերը իթթիհատեն ղեկավարված՝ անպատճառ կը միանան Գերմանիո և թրքահայության համար մահացու վտանգ կա այնտեղ»: «Այս հուսահատության, զգվանքի, անկարելի ստրկության, պոռնիկ համակերպումի և իմ բառարանես և Ձեր բառարանես բացակա ամեն հայիոյանքի արժանի օրերուն մեջ, հայ օրերուն մեջ», այսպես է Սիամանթոն բնութագրում հանգամանքների ողբերգական կացությունը: Եվ կատարվում է անխուսափելին: Օգտվելով պատերազմի խառնակ հանգամանքներից՝ երիտթուրքերի կառավարությունը բարբարոս ցեղի վանդալային բնազդը գրգռում է հայաստանության կոչով: Սանձագերծվում է Մեծ եղեռնը՝ ոչնչացնելով երկու միլիոն հայություն, բռնությամբ տեղահանված հոծ զանգվածների սովի, համաճարակի, զրկանքների ու խոշտանգման ճանապարհներով ապաստան են որոնում օտար հորիզոններում: Մարդկության պատմության մեջ այդ աննախադեպ ոճրագործությանը զոհ են գնում նաև հայ գրողներ ու մտավորականներ՝ Գրիգոր Զոհրապը, Ատոմ Յարաճանյան-Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Ռուբեն Զարդարյանը, Թևկատինցին, Ռուբեն Սևակը, Արտաշես Հարությունյանը, Երուխանը, Տիգրան Զյոկյուրյանը, Սմբատ Բյուրատը, Մելքոն Կյուրճյանը և ուրիշներ:

Հայոց մուսաները անհուն կսկիծով արտաբերեցին ազգային աղետի եղերերգը: «Հայրենիքում իմ արնաներկ», «Չարերի կոխան, խաչված իմ երկիր», «Իմ ժողովուրդը անել վշտի մեջ, երկիրն իմ անբախտ և աղետավոր», ազգային ցավը այսպես վերապրեց Վահան Տերյանը և հավատալով նրա վերածնությանը, դարերի հեռավորությունից վկայակոչեց «Երկիր Նաիրին», որպես հավերժական գոյության խորհրդանիշ. «Եգիպտական բուրգերը փոշի կդառնան, Արևի պես երկիր իմ, կվառվես վառման: Որպես Փյունիկ կրակից կելնես, կելնես նոր Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր»: Հովհաննես Թումանյանը հոգեհանգիստ կարդաց նահատակված զոհերին՝ «Հանգեք իմ որբեր... Իզուր են հուզմունք, իզուր և անշահ, Մարդակեր գազան՝ մարդը դեռ երկար էսպես կը մնա...», և ի լուր աշխարհի ազդարարեց պատգամը, թե «Հայաստանը պետք է խոսի»։ «Եվ պետք է խոսի էնքան լուրջ ու զգաստ, ինչքան լուրջ ու զգաստ է լինելու ամենից մեծ վշտավորն ու ամենից շատ վտանգվածը ժողո-

վորդների մեջ, այլև էնքան հաստատուն ու բաց ճակատով կարող է խոսել մի ժողովուրդ, որ ապրել է մարդկային լավագույն ձգտումներով և ամեն ինչ տվել է ու կտա ազատ կյանքի համար» (Հ. Թումանյան, ԵԺ, հ.4, Երևան, 1961, էջ 396): Բանաստեղծի ակնարկած այդ խոսքը եղավ Հայաստանի անկախ հանրապետության ստեղծումը, որը իրականացնելով պատմության հազարամյա երազանքը, հավաստեց Հայկական ոգու անխորտակելիության ու հարատև գոյության առասպելը:

Եղեռնը խորապես ցնցեց հայոց ազգային հոգեբանությունը, իր դրոշմը դրեց հոգևոր մշակույթի՝ պատմագրության, գրականության, արվեստի, փիլիսոփայության վրա և ստեղծեց ոճրապատումի, հայրենաբաղժության, կարոտախտի մի հսկայական ժառանգություն, որը բացառիկ արժեք է ներկայացնում համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

РЕЗЮМЕ

**Сергей Саринян
Геноцид армян в литературе 19-го века.**

В статье рассматривается художественное отображение геноцида армян в литературе конца 19-го начала 20 века. Автор пришел к выводу, что геноцид глубоко потряс армянскую национальную психологию и оставил неизгладимый след в ее духовной культуре созданием огромного литературного наследия-литературы о геноциде и ностальгии, что представляет исключительную ценность в истории мировой культуры.

SUMMARY

**Sergey Sarinyan
Armenian Genocide in 19th-Century
Literature**

The article is devoted to the artistic reflection of the Armenian genocide in the literature of the late 19th and early 20th century. Author comes to the conclusion that genocide has deeply shocked the Armenian national psychology and put an indelible stamp on its spiritual culture by creating great literary heritage-literature of genocide and homesickness, that represents exceptional value in the history of the world culture.

ԱՆՏԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Կաճառ» գիտական կենտրոն,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Ինչպես հայտնի է՝ Արևմտյան Հայաստանից և այլ շրջաններից հայ ազգաբնակչության մեծամասնության բռնատեղահանությունից հետո, անդրենաժին ժողովրդի ցեղասպանության դիվային քաղաքականությունը Թուրքիան շարունակեց անպատիժ իրագործել նաև Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասի հայաբնակ այլ վայրերում: Տարածաշրջանում հաստատվելու համար Իրանի ու Թուրքիայի միջև ծավալված պայքարի ու անգիջում մրցակցության արդյունքում երկարատև պատերազմներից տուժած հայ ազգաբնակչությունը ոչ միայն գոյատևում էր, այլ նաև ուժ էր գտնում իր մեջ արժանի հակահարված հասցնելու թուրք զավթիչներին: Հակաթուրքական պայքարի փայլուն էջեր գրվեցին XVIII դարի առաջին երեսնամյակում, երբ, ինչպես վկայում են վավերագրերը, միայն Արցախի լեռներում էին շարունակվել ինքնապաշտպանական մարտերը, մինչև վերջ մնալով անառիկ ու աներեր: Ազատագրական պայքարը չմարեց նաև Պարսկական արքունիքի և Թուրքիայի աջակցությամբ հակառուսական խանությունների ռազմական ներուժի մեծացման քաղաքականության արդյունքում նաև Ղարաբաղում՝ նման վարչական միավորի ստեղծումից հետո: Հայության դիրքերի հետագա թուլացման էր միտված նաև թուրք(թաթար) և հայ հանրությունների զինված ընդհարումների հրահրումը ողջ Անդրկովկասի տարածքում: 1918 թվականին թուրքական բանակի մի զորամաս, Ադդամից ձեղքելով հայ գյուղացիների պաշտպանական գիծը, ուղղվեց Շուշի: Այդ և հետագա երկու տարիներին, հերթական նախահարձակման ընթացքում թուրքերի մոզոնած ոճրագործությունները շարունակեցին ներկայիս ադրբեջանցիների նախնիները՝ մուսավաթական ժամիշխանների գլխավորությամբ...

Թուրք և ադրբեջանցի վանդալներն ու մուսավաթական կառավարության զինված ուժերը Կովկասի Փարիզը և Անդրկովկասի մարզարիտը համարվող Շուշի քաղաքը 1920 թ. մարտի 23-ին վերածել էին կրոնական մոլեռանդության, գազանային բնազդների դրսևորման ասպարեզի: Ընդամենը մի քանի օրում հրո ճարակ դարձան ավելի քան մեկ դարի ընթացքում արարված համամարդկային արժեքները, հայ ժողովրդի մշակութային ժառանգության բացառիկ գոհարները, ճարտարապետական կոթողներ, գազանաբար հոշոտվեցին շուրջ ութ հազար¹ խաղաղ բնակիչներ, առևանգվեցին և հետագայում մահմեդականացվեցին հարյուրավոր աղջիկներ ու երեխաներ, զնդաններ նետվեցին հազարավոր անմեղ մարդիկ:

Ադրբեջանի դեմոկրատական հորջորջված հանրապետությունը, իր խղճուկ ու կարճատև գոյության վախճանին, իրականացրեց Թուրքիայի ցեղասպանական քաղաքականությունը Գանձակի շրջանից մինչև

¹ Շուշիում հայ բնակչության ցեղասպանության զոհերի թիվը տարբեր հեղինակների մոտ տարբեր է: Մտադիր ենք առաջիկայում առանձին ուսումնասիրության նյութ դարձնել այդ ոչ հասարակ խնդիրը:

Արաքս: Մինչ հայ ազգաբնակչությունը մի վերջին ճիգով փորձում էր հակահարված հասցնել անագորյուն թշնամուն, սրընթաց փոխվեց քաղաքական իրադրությունը: Ադրբեջանի հանցագործ վարչակարգի ոճրագործություններն այդպես էլ մնացին անպատիժ, որովհետեւ 11-րդ կարմիր բանակի ներխուժումն Անդրկովկաս և սփյնների վրա նոր կարգերի ներմուծումը կտրուկ փոխեցին ուժերի դասավորությունը, ինչը վերստին համապատասխանում էր ակնթարթորեն կերպարանափոխված մուսավաթական պարագլուխների գիշատիչ շահերին, բարենպաստ պայմաններ ստեղծելով հայաբնակ մարզերի ու հենց Հայաստանի Հանրապետության հանդեպ տարածքային պահանջներ ներկայացնելու և իրենց զավթողական քաղաքականությունը շարունակելու համար:

Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կողմից ծրագրված ու իրականացված Շուշիի հայ ազգաբնակչության ցեղասպանության թեման վերջին տարիներին դարձել է հայ պատմագրության քննության առարկան²: Ճշմարտությունը տեղ հասցնելու համար պահանջվում է երկարատև ու անդադար պայքար: Հատկանշելի են Ադրբեջանի պետական ահաբեկչությունն ու էթնիկական գտումների քաղաքականությունը դատապարտելու և միջազգային հանրությանը դրա անհրաժեշտությունը ներկայացնելու «Կաճառ» գիտական կենտրոնի նախաձեռնությունները: Արդեն իններորդ տարին է, ինչ Շուշիում Կենտրոնի կողմից կազմակերպվում են զանազան միջոցառումներ՝ նվիրված 1920 թ. մարտյան ողբերգության հերթական տարելիցներին: Ցեղասպանություն վերապրած մեր հայրենակիցների սերունդների նպատակը ոչ միայն Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական գտումների քաղաքականության դատապարտումն է, այլև միջազգային հանրությունից, նախ և առաջ, Ադրբեջան-ԼՂՀ հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված պետությունների կողմից նույնը ակնկալելն ու պահանջելն է: Ավելացնենք, որ Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության քաղաքականությունը Շուշիում շարունակվելու հիմնահարցի քննարկումը հրատապ է մեզ պարտադրված տեղեկատվական պատերազմում հակառակորդին արժանի հակահարված տալու տեսակետից:

Ռուսական կայսրության տրոհումից հետո, Արցախի նկատմամբ կովկասյան թաթարների (որոնք հետագայում հորջորջվեցին ադրբեջանցիներ) հավակնությունների առանցքում առանձնահատուկ տեղ էր հատկացվում Շուշիին: Նոր հնչողություն էր ստացել «Շուշիին տիրողը տերն է ամբողջ Արցախի» հին իմաստությունը: Մասամբ դրանով է բացատրվում այն, որ տաճկական գորբերը, ապա անգլիացիները, նրանց հետևից մուսավաթականները և, սրանց հետքերով, կարմիր բանակը ձգտում ու մղվում էին դեպի Արցախի հիմնավորը ոստանը: Ահա թե ինչու, Շուշիի մարտի 23-ի ողբերգությունը բացասաբար անդրադարձավ Ադրբեջանի զավթողական նկրտումներին դիմագրավելու, Արցախը Հայաստանի կազմում պահելու համաժողովրդական իղծերի իրականացման վրա: Ընդամին, վեր հանելով այդ ողբերգության պատճառները, հնարավոր

² Թեմայի պատմագրության մասին տես Հարությունյան Մ. Ա., Շուշիի մարտյան ողբերգության պատմագրության հիմնահարցերը.- «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական գտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ: Խմբ.՝ Մ. Ա. Հարությունյանի: «Կաճառ» տարեգիրք, գիրք 4, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2010, էջ 45-60: Թեմայի ուսումնասիրվածության վիճակը կամ պատմագրության տեսությունը վերստին ներկայացնելը նպատակահարմար չենք գտնում տեղի սղության պատճառով:

կլինի լույս սփռել նաև այն մուր և խճողված հարցի վրա, թե երկարատև պայքարով իր ինքնուրույնությունը պահպանած Արցախի հայ ազգաբնակչությունն ինչպես հանկարծ հանիրավի հայտնվեց Հայաստանից դուրս ու մեկուսացվեց նրանից:

Հարկ է առանձնացնել Շուշիի մարտյան ողբերգության թե ներքին և թե արտաքին պատճառները: Ներքին պատճառների մասին խոսելիս պետք է նկատի ունենալ այն ժամանակվա ղեկավար մարմինների, քաղաքական գործիչների՝ որոշ դեպքերում թույլ տրված վրիպումներն ու սխալները, թերացումներն ու ավելորդ զգուշավորությունից եկող անվճռականությունը: 1999-ին հրատարակված մի ուշագրավ գրքում, որը ժամանակի ղեկավար գործիչներից մեկի Եղիշե Իշխանյանի՝ արժեքավոր հուշագրությունն է, խոսուն փաստեր կան ոչ միայն Արցախում, այլև ամբողջ Հայաստանում քաղաքական առանձին կազմակերպությունների ու գործիչների, ինքնապաշտպանության որոշ ղեկավարների թույլ տված սխալների մասին, որոնք ծանր կորուստների պատճառ են դարձել, ունեցել անուղղելի հետևանքներ: Հիրավի, պատմական դասեր են պարունակում կադրերի սխալ ընտրության, քաղաքական առումով միատարր կառավարության պատճառած վնասները: Ոչ պակաս վնասակար եղան բնակչության զանգվածային վերաբնակեցման մասին անիրական մտքերը, որ ունեին Հայաստանի ղեկավար մի քանի գործիչներ, ինչը խանգարում էր ինքնապաշտպանության ու երկրի կառավարման արդյունավետ կազմակերպմանը³: Ընդսմին, այդ ամենը հաճախ դյուրացրել է հակառակորդի չար դիտավորությունների իրագործումը, խոչընդոտել ճիշտ ու նպատակասլաց վճիռների կայացմանը: Այս առումով, իրեն չարդարացրեց Արցախի կառավարության խաղաղասիրական, հաշտվողական քաղաքականությունը: Հարևան ադրբեջանցիները չարաշահեցին հայ ղեկավարների բարյացակամությունը և հանդուրժողականությունը, ինչպես նաև օգտվեցին հայերի կողմից որոշեցրված ինքնապաշտպանության պասսիվ ռազմավարությունից և ռազմական նախաձեռնությունը՝ վերցրին իրենց ձեռքը: Թերացումների ու անվճռականության արտահայտություններ էին նաև ռուսական սահմանապահ 6-րդ գնդի հետ ընկած ստորաբաժանումների չզինաթափումը⁴, Բերդաձորի պաշտպաններին օգնություն չհասցնելն ու Թիֆլիսում կազմավորված Շուշիի (կամ Արցախյան) գնդի նշանակման վայր տեղափոխումը ժամանակին չկազմակերպելը, Ջորավար Անդրանիկի արշավանքին չնպաստելը, դրածո գեներալ-նահանգապետին և Խանքենդում ու Շուշիիում հիմնավորվող ադրբեջանական զինված կազմավորումներին լրջորեն ու ժամանակին չընդդիմանալը, 1919 թ. հունիսի սկզբներին Շուշիում Սուլթանովի արյունոտ սադրանքները, մոտակա Ղայբալիշեն, Կրկժան, Փահլուլ (Վարդուբ), Ղաշուշեն գյուղերի ավերումներն ու բնակիչների կոտորածներն անպատիժ թողնելը, զինված պայքարին անբավարար նախապատրաստվելը և այլն: Ինչ խոսք, այդ ամենի մասին առանձին-առանձին կարելի է խոսել ավելի երկար, մանրամասները դիտարկելով օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքների ամբողջության մեջ, սակայն, նպատակահարմար ենք գտնում ծանրանալ, մեր կարծիքով, առավել կարևոր արտաքին գործոնների ու աշխարհաքաղաքական անբարենպաստ զարգացումների վրա:

³ Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ. 1917-1920, Եր., 1999, էջ VIII: Հավելյալ մանրամասներով այդ տեղեկությունները լրացրել է Աբրահամ Կիսիբեկյանը (տես նրա՝ Հուշեր, Գիրք Ա, Գիրք Բ, Եր., 2011)

⁴ Նույն տեղում, էջ 92-93:

Շուշիի ողբերգության և, ընդհանրապես, Արցախյան խնդրի չլուծման պատճառներից, թերևս, ամենագլխավորը, տաճկական գործուն է: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մանավանդ՝ ռուսական հեղափոխությունից հետո, տաճկական գործակալներ էին վխտում հավատակիցներով խիտ բնակեցված շրջաններում, հետամուտ լինելով Անդրկովկասում հենարան ունենալու և ռուսական կովկասյան բանակի թիկունքին սպառնալիք ստեղծելու, իսկ բարեպատեհ առիթով՝ նաև իրենց զավթողական ծրագրերը դյուրությամբ իրագործելու հեռագնա նպատակներին: Տաճկական գործերի բացահայտ ագրեսիայի հետևանքով 1918 թ. սեպտեմբերին ընկավ Բաքվի կոմունան և սրի քաշվեց հայ բնակչության մի մասը, ինչը ևս ծանր նստեց ու բացասաբար անդրադարձավ արցախյան իրադարձությունների վրա: Արցախի հայ ազգաբնակչության ուշքն ու միտքը Բաքվի իր հայրենակիցների գոյապայքարի վրա էր, հույս փայփայելով, թե նրանց ինքնապաշտպանության ուժերից տաճկական զավթիչները ջարդ ու փշուր կլինեն: Սակայն Բաքուն պաշտպանող օտարերկրյա ուժերը մերկացրին ձակատը, հայ կամավորներին թողնելով մենակ թշնամու մեծաքանակ ուժերի դեմ հանդիման: Իսկ թուրքերը ձգտում էին օր առաջ գրավել Բաքուն, որովհետև, ինչպես ժամանակակիցն է իր համար պարզել հետագայում, Եռյակ(Քառյակ) Ջինակցությունը նավթի ու բենզինի սուր կարիքի մեջ էր⁵: Փաստորեն թուրքերը կարողացան Դաշինքի շահերը ծառայեցնել իրենց կայսերապաշտական շահերին և լուծել պանթուրքական խնդիրներ: Անկասկած, մեծ էր Բաքվի ռազմավարական նշանակությունը: Կորցնելով Բաքուն, հայերը, ցավոք, ծեռքից բաց թողեցին այնպիսի մի հզոր տնտեսական ու քաղաքական գործուն, ինչպիսին նավթն էր, ինչի բացասական հետևանքներն աղետալի էին: Մխաված չենք լինի, եթե ասենք, որ Բաքվի անկումը հանգեցրեց նաև Շուշիի անկմանը... Այս տեսակետից, թերևս, ճիշտ կլիներ Արցախից մարտական գործողությունների սկսման նշաններ ցույց տալ, շեղել տաճկաթաթարական ուժերի ուշադրությունը և, հնարավորինս, թեթևացնել Բաքվի պաշտպանների, դրանով իսկ՝ Արցախի ինքնապաշտպանության գործը: Սակայն, դժբախտաբար, ոչ Արցախից, ոչ էլ Գանձակից նման շարժումներ կամ խուսանավումներ չծեռնարկվեցին: Բաքվի պաշտպանները մեկուսի կռվեցին ու պարտվեցին: Հենց դրանից հետո տաճկական գործերը հնարավորություն ստացան ներխուժել Արցախ և առանց լուրջ դիմադրության հանդիպելու, մտան Շուշի: Ինչքան էլ ջանանք արդարացնել կամ հիմնավորել ժամանակի քաղաքական գործիչների Շուշիի հանձնման որոշումը, փաստելով պատերազմում Թուրքիայի վերահաս պարտության ակներևությունն ու ակնկալությունները, ինչպես նաև բնակչության զինաթափման և բանտարկության միջոցով ազատագրական շարժման ակտիվիստների մեկուսացման հետևանքների պայմանական թեթևությունն ու տանելիությունը, միևնույն է, տաճկական գործերի մուտքը ծանր հարված էր Շուշիի ինքնապաշտպանությանը, ինչը բարոյափոխեց բանական ճնշող ներգործություն ունեցավ ու երկարատև նստվածք թողեց մարդկանց գիտակցության մեջ, իսկ դրան հակառակ, բարձրացրեց մահմեդական բնակչության մարտական ոգին ու ընդլայնեց հավակնությունների շրջանակը...

Առաջին աշխարհամարտի ավարտից ու Մուդրոսի հաշտության պայմանագրի ստորագրումից (1918 թ. հոկտեմբերի 30) հետո, երբ տաճկական գործերը հարկադրված էին հեռանալ Անդրկովկասից, բազմաթիվ տաճիկ սպաներ, անգամ երիտթուրքական պարագլուխներ ու ռազմա-

⁵ Նույն տեղում, էջ 92-93:

կան հրահանգիչներ⁶ մնացին մահմեդականներով բնակեցված շրջաններում և շարունակեցին իրենց սև գործը, բորբոքելով հավատակիցների մոլեռանդությունը, դավադրաբերելով նրանց այլազգիների ու այլադավանների դեմ: Սակայն, մինչև հեռանալը տաճիկները հասցրել էին լուծել մի շարք ռազմավարական խնդիրներ, մասնավորապես, մուսավաթականների հետ համագործակցությամբ, ծանր հարվածներ էին հասցվել հայկական դիմադրական կարևոր կենտրոններին Բաքվին, Շուշիին, հողմախապատրաստելով նորաթուխ Ադրբեջանի կայացման, այսինքն Կովկասում տաճկական առաջնադիրքի (ֆորպոստի) հաստատման համար: Հետագա, մանավանդ՝ հայ-թուրքական պատերազմին և Մոսկվայի ու Կարսի չարադետ պայմանագրերին հաջորդած իրադարձություններն անառարկելիորեն ապացուցում են ոչ միայն Թուրքիա-Ադրբեջան հանցավոր կապերը, այլև բացահայտում տաճկական ռազմամուլների հեռագնա նպատակները Ադրբեջանի ստեղծմամբ Կովկասում իր մշտական աջակիցն ու հենարանն ունենալու, Իրանի նկատմամբ իր հավակնություններին հագուրդ տալու և, վերջնական արդյունքում, պանթուրանական ծավալապաշտ զառանցանքները կենսագործելու համար: Արցախյան պատերազմի տարիներին ժամանակակից Թուրքիայի բռնած բացահայտ հակահայկական դիրքը, իսկ վերջին շրջանում, Ադրբեջանում ու հատկապես՝ Նախիջևանում իր ռազմաքաղաքական ազդեցության մեծացումը, գալիս են մեկ անգամ ևս փաստելու աշխարհաքաղաքական զարգացումներում, ազդեցության գոտիների համար պայքարում ու շահերի բախման կիզակետում Ադրբեջան-Թուրքիա ագրեսիվ համագործակցության ակունքներն ու հարաճուն վտանգը:

Վճռորոշ էր նաև անգլիական գործոնը: Տաճիկներին փոխարինած անգլիացիները հակված էին Արցախն ու Ջանգեզուրը տեսնել Ադրբեջանի, իսկ Նախիջևանն ու Կարսի մարզը՝ Հայաստանի կազմում: Հայերը չկարողացան օգուտել թուրքական գործերի դեմ մարտնչելու, դրանով իսկ դաշնակից երկրների հաղթանակին նպաստելու հանգամանքից, ուստի անգլիացիներին սիրաշահելու և իրենց կողմը գրավելու հնարավորությունից: Ընդհակառակը, Բաքվում հաստատված անգլիական առաքելությունը, մշտապես գտնվելով մուսավաթականների քարոզների ու շողոթորթությունների ազդեցության տակ, ադրբեջանամետ քաղաքականություն էր վարում, մանավանդ, որ Անգլիան ու նրա դաշնակիցները, ինչպես իրենց ախյան Ջինակցությունը, նավթամթերքների կարիք էին զգում և զուտ շահադիտական նպատակով հակված էին գոհացնել ադրբեջանցիների, թեկուզ և ապօրինի ու հավակնոտ պահանջները: Կռահել կարելի է, թե ինչ միջոցներով էին ադրբեջանցիների պարագլուխները հայերին «սևացնում անգլիացիների աչքին», մեղադրելով հայերին բոլշևիկյան գաղափարների տարածման, ռուսասիրության մեջ: Ադրբեջանական կողմը ներշնչում էր անգլիացիներին, թե իբր Հայաստանի կառավարության ներկայացուցիչները հակաանգլիական միտումներ են մտցնում ժողովրդի մեջ⁷: Պակաս ազդեցություն չունեցավ նաև Բաքվի կոմունայում հայերի գլխավոր դերի ու գերիշխող դիրքի հանգամանքը, ինչը ևս վարպետորեն շահարկվեց մուսավաթականների կողմից: Այս ամենին զուգընթաց, անշուշտ, չպետք է անտեսել նաև անգլիական ֆինանսատնտեսական և այլ շահերի հետևանքները⁸:

⁶ Այդ մասին են վկայում նաև ժամանակակիցների հուշագրությունները և արխիվային փաստաթղթերը (տես, օրինակ, «Արցախ» հանդես, Ստեփանակերտ, 1989, հ. 1, էջ 89)

⁷ Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ. 1917-1920, էջ 84:

⁸ Այդ մասին, բրիտանական արխիվների նյութերի հիման վրա, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Ռիչարդ Յովհաննիսյանը: Steu Hovannisian Richard, The Republik of Armenia. v. 1. The first year, 1918 - 1919. University of California press, Berkeley.Los Angeles.London, 1972, pp. 156-161:

Կարելի է առանձնացնել այսպես կոչված թուրք-ադրբեջանական գործոնի ևս մի քանի դրսևորումներ: Անգլիացիների օժանդակությամբ ու պաշտպանությամբ գեներալ-նահանգապետության հաստատումն Արցախում հող նախապատրաստեց Ադրբեջանի զավթողական նկրտումների իրականացման և բռնապետության հաստատման համար: Այդ ճանապարհին Ադրբեջանը չէր կանգնում ոչնչի առաջ, սկսած տնտեսական բոլկոտից ու շրջափակումից, վերջացրած բնակավայրերի ու խաղաղ բնակչության բնաջնջմամբ: Ի դեպ, XX հարյուրամյակի վերջերին Խորհրդային Ադրբեջանի իշխանություններն այս նույն մեթոդներն էին կիրառում, նպատակ ունենալով ճնշել Արցախի հայ ազգաբնակչության օրինական, ժողովրդավարական շարժումը:

Դեմոկրատական հորջորջված Ադրբեջանը պատերազմ սկսեց ու բացահայտ ագրեսիա ձեռնարկեց Արցախի դեմ: Պաշարված փոքրիկ լեռնաշխարհի շուրջ ու ներսում ծավալված ծանր մարտերը, մանավանդ՝ Շուշիում, Վարարակնում, ապա և՛ Ասկերանում, հիմնականում անհաջող էին ընթանում հայերի համար, որովհետև զգացվում էր գեներալի ու զինամթերքի պակաս, մյուս կողմից էլ Ադրբեջանը Արցախի դեմ էր հանել իր գրեթե ամբողջ զինուժն ու զինանոցը, ինչի հետևանքով էլ, թերևս, ապրիլի 28-ին 11-րդ կարմիր բանակը, առանց լուրջ դիմադրության, գրավեց Բաքուն:

Արտաքին ու ներքին գործոնների միջակայքում կարելի է առանձնացնել Հայաստանի Հանրապետության կրավորական դիրքը և գործնական օգնության ուշացումը: Դրաստամատ Կանայանի ու Գարեգին Մոզեհի գորամասերի ուշացած միջամտությունը եղավ այն ժամանակ, երբ արդեն Շուշին ավերված էր և Ադրբեջանն արդեն պատերազմական գործողություններ էր վարում Արցախի մյուս շրջաններում: Սակայն, այդ ուշացված օգնությունն էլ ունեցավ որոշակի նշանակություն, թեև ներքին անհամերաշխությունը և հայ բոլշևիկների առձակատումը, ինչպես նաև կարմիր բանակի մոտիկությունը և այլ գործոնների առկայությունը, ի չիք դարձրին սպասվող դրական տեղաշարժերը ու նախանշվող հաջողությունները:

Կարծիքներ կան, թե Ադրբեջանի մուսավաթական կառավարության մայրամուտին հայերի ընդվզումը սխալ էր և ժամանակ չափելու դեպքում հնարավոր էր խուսափել Շուշիի ավերումից ու բնակչության սրածուծից: Սակայն, բազմաթիվ փաստեր գալիս են հաստատելու, որ Սուլթանովը և Ադրբեջանի ղեկավարները ակտիվորեն նախապատրաստվում էին գեներալի ուժով Արցախը նվաճելուն, իսկ այդ նպատակի համար գլխավոր թիրախ էր ընտրված հենց Շուշի քաղաքը: «Հուսով եմ, - Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահին հասցեագրված գեկույցում գրել է տխրահռչակ Սուլթանովը, - որ Շուշի քաղաքում Կենտրոնի և հայկական շարժման պաշտոնական ենթարկեցման հետ, Ղարաբաղում հայերի ենթարկեցման հարցը արագ կընդունի բարեհաջող վերջավորություն»⁹: Մեկ այլ ժամանակակից վկայությամբ՝ «Կամենալով մեկընդմիշտ վերջ տալ Արցախի ինքնուրույնությանը, մուսավաթականները, 1920 թ. մարտի սկզբներին իրենց գրեթե ամբողջ կանոնավոր զորքերը և բազմաթիվ զինված ավազակախմբերը, նետեցին նրա սահմանների ուղղությամբ, իսկ մարտի 20-ին հայ ազգաբնակչությանը զինաթափվելու վերջնագիր ներկայացրին»¹⁰: Այլ վկայություններ ևս կան: «Մարտ ամսվա սկզբներին, նոր համալրվածներով կրկին ուժեղացվեցին Շուշիի, Խանքենդու և Աղդամի կայազորները»

⁹Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Отв. ред. В. А. Микаелян, сост. Аюян В. А., Баликян О. С., Вирабян А. С., Микаелян В. А., Эвоян В. С. Ереван, Изд. АН Армении, 1992, док. 153, с.238.

¹⁰Правда о Нагорном Карабахе. Сост. В. А. Товмасын, Ю. Б. Нерсисян. Степанакерт, 1989, с. 27.

րը: Շուշիում երևացին թուրք սպաներ, գեներալ Խալիլ փաշայի գլխավորությամբ»¹¹: Մինչ այդ, Շուշի էին ժամանել Նուրի փաշան և Նովրուզովը: Ադրբեջանի կառավարությունը նրանց պարտավորեցրել էր գործել «լայն մասշտաբով և ենթարկել տալ Ղարաբաղ-Ջանգեդուրը»¹²: Այս ամենը վկայում է, որ Շուշիի աղետն առանց առիթի էլ, վաղ թե ուշ, լինելու էր, քանի որ դեմոկրատական հորջորջված Ադրբեջանն իր վերջին շնչում իսկ կատարելու էր Թուրքիայի կողմից նախանշված սև գործը՝ հայ բնակչության էթնիկ մաքրումն ավարտին հասցնելու համար Արցախի մայրաքաղաք Շուշին կործանելու դիվային «առաքելությունը»...

Շուշիի ողբերգության պատճառների շարքին կարելի է դասել տնտեսական գործոնը: Շուշիի տնտեսական անկումը¹³, ինչն, անկասկած, ազդում էր նաև բնակչության կարողությունների ու դիմադրական ոգու վրա, պարարտ հող նախապատրաստեց այն հեշտությամբ կործանելու հրեշավոր ծրագրի իրականացման համար:

Օբյեկտիվ պատճառներից էին նաև հաղորդակցության ճանապարհների արդյունավետ օգտագործման հնարավորության, կապի միջոցների բացակայությունը, տնտեսապես կախված լինելը երբեմնի ռուսական կայսրության այլ շրջաններից և այլն:

Սուբյեկտիվ պատճառներից զուտ ռազմական գործի կազմակերպման թերացումներից պետք է առանձնացնել հայկական կանոնավոր ստորաբաժանումների ու ինքնապաշտպանության համակարգի ու դեկավարող կառույցների չկատարելագործումը, հետախուզության ու հակահետախուզության բացակայությունը, թշնամու վարձած լրտեսների առկայությունը, գաղտնիության կանոնների անտեսումը, ծաղկող բերանբացությունը, թշնամու նկատմամբ վերահսկողության բացակայությունը, նրա ծրագրերի ու գործողությունների չիմացությունը, իրավիճակին չտիրապետելը, դանդաղ կոտորությունը և այլն:

Իրադարձությունները, մեր կարծիքով, զարգացել են այսպես. Սուլթանովը հրամայել է գործին հարվածել հայության գլխավոր կենտրոնին՝ Շուշիին: Միաժամանակ, Աղդամում կենտրոնացված գործը են սպառազինված ամբոխը, ինչպես և կանխատեսված էր, սկսել են արշավանքը Ասկերան-Խոջալու-Խանրենդ-Շուշի գծով՝ նպատակ ունենալով համալրել ու ըստ ամենայնի աջակցել Շուշիի հայությանը հնազանդեցնող (իրականում՝ բնաջնջող) ոճրագործներին: Որ հենց ԱՂՀ-ն էր բացահայտ պատերազմ սկսել արցախահայության դեմ, վկայում է նաեւ այն փաստը, որ Գանձակի, Շամքորի եւ այլ ուղղություններով ադրբեջանական գործերը ուժեղացված զինավառ ավազակներով, լայնածավալ հարձակման էին անցել հայերի բռնի տեղահանության ու էթնիկական զտման նպատակով:

Արցախահայությանն ահաբեկելու, սարսափազդու կոտորածներով ընկճելու ԱՂՀ-ի պետական քաղաքականության իրախուզացումը Սուլթանովի կողմից Շուշիից սկսելը պատահական չէր, քանի որ Արցախի մայրաքաղաքի բնակչությունն առնվազն 1919 թ.-ից պատանդի կարգավիճակի էր մատնվել (ևեռ) եւ, ինչպես վավերագրերն են հաստատում, հակառակորդի կողմից դիտվում էր Արցախը նվաճելու կարելու գործին: Այդ նախն է վկայում նաեւ հետեւյալ վավերագիրը. «Հուսով եմ, - Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահին հասցեագրված զեկույցում գրել է տխրահեռակ Սուլթանովը, - որ Շուշի քաղաքում Կենտրոնի եւ հայկական շարժման պաշտոնապես ենթարկեցումով, Ղարաբաղում հայերի

¹¹ Հովհաննիսյան Գ. Ա., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Եր., 1971, էջ 142:

¹² Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, док. 250, с.373, док. 262, с.386.

¹³ Տեր-Պապարյան Ռ. Հ., Շուշի քաղաքը, Եր., 1993, էջ 60-63:

ենթարկեցման հարցը արագ կընդունի բարեհաջող ավարտ»¹⁴:

Համաձայն նախապես ծրագրված մարտավարության (կամ ռազմական տերմինաբանությամբ՝ պաշտպանության մտահղացման), ինքնապաշտպանության ուժերը 1920 թ. մարտի 23-ին դուրս չարտեցին ադրբեջանցի զավթիչներին և ազատագրեցին ռազմաստրատեգիական նշանակություն ստացած Ասկերանը՝ ինչպես Ադդամից ադրբեջանական զորքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու, այնպես էլ կենաց մահու պայքարում Շուշիի ու Խանքենդի պաշտպանների թիկունքն ապահովելու համար: Այս առումով, Խանքենդի ադրբեջանական զորքերի շրջապատումն էլ իր հերթին Ասկերանի և Շուշիի թիկունքն ապահովելու խնդիրն էր հետապնդում: Հենց ինքնապաշտպանությունից բխող այս քայլերն են ադրբեջանցիները նենգափոխել «ապստամբություն» հասկացությամբ, մի կողմից իրենց ոճրագործությունները «արդարացնելու», իսկ մյուս կողմից ցեղասպանությունն ուրանալու, ապա և՛ ժխտելու նպատակով:

Փաստը մնում է փաստ, որ թուրք-ադրբեջանցիներից ու քրդերից կազմված ավազակախմբերի ու կանոնավոր զորքերի հարձակմանը հայերը պատվաբանել են ինքնապաշտպանությամբ, ինչը Ադրբեջանի քաղաքականությանը ներկայացրել է որպես ապստամբություն, հետևանքը պատժառի նենգափոխելու միջոցով միջազգային հանրությանը մոլորեցնելու և երբեմնի ծաղկուն Շուշի քաղաքի ավերումն ու հայ բնակչության ոչնչացումն արդարացնելու նպատակով:

Այս միտքը զարգացնելիս մենք հենվել ենք 1915 թ. Հայոց մեծ եղեռնի, 1918 թ. Բաքվի սեպտեմբերյան ոճրագործությունների, 1919 թ. ամռանը Շուշիի մերձակա բնակավայրերի հայ բնակչության բնաջնջման, 1920 թ. նախկին Ելիզավետպոլի նահանգի հայության էթնիկական զտման, 1988 թ. սումգայիթյան, 1990 թ. Բաքվի, 1992 թ. ապրիլի 10-ին Մարաղայի բաղբարոսություններին, և, ընդհանրապես, ԼՂՀ-Ադրբեջանի հակամարտությանը թուրք-ադրբեջանական ցինիկ գնահատականների ու «հակափաստարկների» համադրման ու վերլուծության արդյունքների վրա, այդ երկար շղթայի մի օղակը դիտելով նաև Շուշիի 1920 թ. մարտյան ողբերգությունը...

«Ապստամբության» առասպելը և իբր «դրան ի պատասխան հայերի բնաջնջման» սցենարը թուրքերը գործադրում են հնուց ի վեր: Անգամ Հայոց մեծ եղեռնը, որին զոհ է գնացել ավելի քան 1,5 միլիոն մարդ, նրանք ցինիկաբար փորձում են ներկայացնել որպես հայերի ըմբոստության ու ապստամբության պատասխան: Մինչդեռ, ապստամբությունները, եթե եղել են, և, ընդհանրապես, հայ ժողովրդի ազատագրական պայքարը ուղղված են եղել թուրքերի հայափախած, ազգային, կրոնական, մշակութային, տնտեսական ճնշումների ու բռնությունների դեմ, երբ ծայրահեղ ու օրհասական վիճակի հասցված մարդկանց այլ բան չէր մնում, քան վերջին հուսահատ փորձը ձեռնարկել դանդաղ մահվանից փրկվելու համար: Հենց այդ հրահրված, սադրված, ինչու չէ՝ պարտադրված ընդվզումն էլ թուրք ոճրագործներն առիթ էին դարձնում վաղուց ծրագրված ցեղասպանության քաղաքականությունը կենսագործելու՝ հայ ազգաբնակչությանը ֆիզիկապես բնաջնջելու համար:

Արցախի ոստան Շուշիի կործանումը, ինչը հարցականի տակ դրեց ողջ Հայոց արևելից կողմերում հայ էթնոսի գոյությունը, լայն արձագանք գտավ ու գայրույթի պոռթկում առաջացրեց հայ և այլազգի առաջադեմ մտավորականների շրջանում, որոնց բողոքներն ու ցասումի խոսքերը մնացին որպես «ծայն բարբառ յանապատի»:

Իհարկե, խոսքերով չէ, որ պետք է հետ բերեին Շուշին, այլ գենքի միջոցով ու արյան գնով, ինչը հաջողվեց 1992 թ. մայիսի 8-9-ին, մեր ազգի լավագույն զավակների բազկի ու ոգու շարժի շնորհիվ:

¹⁴Տես *Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, док. 153, с.238.*

РЕЗЮМЕ**Мгер Арутюнян****Проявление турецкой политики
геноцида армян в Шуши**

Несмотря на то, что история Нагорного Карабаха 1918-1920 гг. всесторонне исследована, однако оценки, данные историографией, особенно трагедии Шуши, неоднозначны и неудовлетворительны.

Параллельно происходившим 95 лет назад трагическим событиям, так называемая, Азербайджанская демократическая республика пустила в оборот вымышленную гипотезу о восстании армян, тем самым пытаясь представить организованное им же преступление как последствие отчаянного сопротивления. К сожалению, на эту приманку попались многие армянские авторы и превратили данную гипотезу в средство для обвинения своих политических противников, не осознавая, что в действительности льют воду на мельницу пропагандистской машины врага. Между тем мы имеем дело с политикой геноцида, спланированной Турцией и на государственном уровне организованной и проводимой Азербайджаном.

Фактически на наступление турецко-азербайджанских и курдских регулярных войск и бандформирований армяне ответили самообороной, что азербайджанская пропаганда представила как мятеж для введения в заблуждение международное сообщество и оправдания разрушения некогда цветущего города, уклонения от ответственности и уничтожения армянского населения Шуши.

SUMMARY**Mher Harutyunyan****Manifestation of the Turkish
Policy of Genocide of Armenians in Shushi**

Although the history of Nagorno Karabakh of 1918-1920 has been thoroughly studied, the assessment of especially the Shushi tragedy by historiography is not univocal and sufficient.

The so-called Democratic Republic of Azerbaijan (henceforth DRA) put into circulation false information about the rebellion of the Armenians, thus trying to present the tragic events of nineteenfive years' prescription as the result of the desperate revolt of the Armenians. Unfortunately, a number of Armenian authors took the bait and made it a subject of blaming their political adversaries, without realizing that in reality they played into the hands of the enemy's propaganda machine. Meanwhile, we deal with a policy of genocide planned by Turkey and organized and realized by the DRA on the official level.

The fact is that the Armenians just defended themselves against the Turkish-Azerbaijani and the Kurd gangs of bandits and regular forces, but the Azerbaijani propaganda presented it as a revolt, trying to pervert the real reason, thus deluding the international community and declining the responsibility for destroying once flourishing Shushi and annihilating the Armenian population.

Մ.գ.դ., պրոֆեսոր՝ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.
դոցենտ՝ ԼԻԼԻԿ ՀԱՎՈՐՅԱՆ.
«Գրիգոր Նարեկացի» համալսարան

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1996-2014թթ.)

20-րդ դարի 90-ական թվականների սկզբին անկախ պետականություն կերտող Հայաստանի, Արցախի տնտեսական, մշակութային, կրթական և քաղաքական համակարգի վերափոխումն առաջադրում էր նաև համալսարանական կրթության բովանդակային հարստացման հրամայական պահանջ այն առումով, հանրակրթությունը, արտադրությունը և տնտեսական համակարգի այլ ոլորտներ, զինվի լայն ընդգրկումով տեխնիկական, տնտեսագիտական և հումանիտար բազա ունեցող որակյալ մասնագետներով՝ ունակ դիմակայելու ժամանակակից շուկայական տնտեսության մրցակցային պահանջներին: Հայաստանի և Արցախի անկախ պետական կարգավիճակը, բնականաբար, նոր խնդիրներ առաջադրեց բարձրագույն կրթության բնագավառում:

Հայաստանի և Արցախի բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումների առաջին փուլում (1991-1996թթ.) առաջ եկան նաև ոչ պետական՝ պետական արտոնագրված և պետական հավատարմագրված ուսումնական հաստատություններ: Ոչ պետական կրթական հաստատությունները տնտեսապես զարգացած երկրների մեծ մասում հանդիսանում են մասնագետների պատրաստման համակարգի կարևոր բաղադրամասը: Հայաստանում, Արցախում դրանց երկարատև գոյությունը ապացուցել է, որ բարձրագույն կրթության ոլորտում այլընտրանքային կրթական կառույցները լիովին կենսունակ են և կարող են հաջողությամբ լուծել ամենաբարդ սոցիալ-տնտեսական խնդիրը: Եթե պետական ուսումնական հաստատության հիմնադիրը հանրապետության կառավարության կամ պետական համապատասխան լիազորված մարմին է, ապա ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիրը կարող է լինել ֆիզիկական և իրավաբանական անձիք: Ոչ պետական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպչական իրավական ձև¹: Պետական և ոչ պետական բուհերի իրավական կարգավիճակի հիմնական տարբերությունը պայմանավորված է նրանց լիցենզավորման ատեստավորման և հավատարմագրման գործընթացով: Հայաստանում և Արցախում այդ տեսակի ուսումնական հաստատությունները իրավահավասար են պետական բուհերին և լիցենզավորում, հավատարմագրվում են Հայաստանի և Արցախի Հանրապե-

¹ Գ. Բալայան, Բարձրագույն կրթության իրավունքի երաշխավորման ու ապահովման հիմնախնդիրները, Երևան, 2011, էջ 82-83:

տության օրենքներով: Ոչ պետական բուհերը, կրթական ծրագրերը կարող են իրականացնել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ եթե բավարարում է հետևյալ պահանջները.

- . հիմնական մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմ,
- . լաբորատոր բազա և ուսումնական տարածք,
- . ուսումնամեթոդական ապահովում,
- . գրադարանային-տեղեկատվական համակարգ,
- . ուսումնաարտադրական պրակտիկայի բազա և այլն:

Իսկ ինչպիսի պայմաններում է հիմնադրվել «Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարանը, և տարեգրության շրջափուլերում ձևավորված ավանդույթները, ժամանակակից բուհի պահանջներին համահունչ իրականացված բարեփոխումներն ու ձեռք բերված հաջողությունները ուսումնագիտական կրթօջախը դարձրել են ԼՂՀ և Հայաստանի ճանաչված ու առաջատար ուսումնական հաստատություններից մեկը:

Ուսումնասիրելով Հայաստանում գործող ոչ պետական առաջին բուհերի («Գլաճորի» համալսարան, 1990թ. սեպտեմբեր): «Պրոգրես» տնտեսագիտական համալսարան, 1990թ. հոկտեմբեր, հիմնադրման նախապայմաններն ու գործունեության փորձը՝ պրոֆեսոր Վարդան Հակոբյանը մեծ ջանքերով նախապատրաստական որոշակի աշխատանքներ տարավ նորաստեղծ Արցախի Հանրապետությունում առաջինը հիմնադրելու ոչ պետական բուհ և ամեն բան սկսեց զրոյից, երբ դեռ հանրապետությունում պատկերացում անգամ չկար, թե ինչ բան է մասնավոր կրթություն կոչվածը: Հեշտ չէր, բայց ռեկտորը կարողացավ ձեռնամուխ լինել այդ ազգաշահ առաքելության և 1996թ. դեկտեմբերի 16-ին հիմնադրեց (ԼՂՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարության կոլեգիայի նիստի թիվ 3 որոշման համաձայն) Սուրբ «Գրիգոր Նարեկացու» անունը կրող պետական արտոնագրված համալսարան:

Ուսումնագիտական կրթօջախը սկզբնական շրջանում իր գործունեությունը սկսեց Ստեփանակերտի թիվ 2 դպրոցում՝ (1996-1997թթ.) վարձակալական հիմունքով: Այնուհետև թիվ 2 մանկապարտեզի երկհարկանի մասնաշենքի մի մասը վերանորոգվեց, ձևավորվեց և հարմարեցվեց ուսումնական գործընթացին: Շատ կարճ ժամանակահատվածում (1998-1999 թթ.) բուհի ռեկտորը հաղթահարելով բազում դժվարություններ, ստեղծեց իր սեփական ուսումնական բազան, ձեռք բերվեց երկհարկանի ավերված, քարուքանդ եղած մասնաշենք, և անձնական ֆինանսական միջոցներով (այդ ժամանակ ուսանողների քանակը շատ քիչ էր) ձևավորվեցին և հարմարվեցվեցին ուսումնական պարապմունքների արդյունավետ կազմակերպման գործընթացներին: Այդ տարիներին խոսք անգամ չէր կարող լինել ուսումնական նոր մասնաշենքի կառույցի մասին՝ իր կաբինետներով, լաբորատորիաներով, փոքր մարզադահլիճով և հարմարավետ լսարաններով: Բայց ռեկտորը որոշեց, որ ավերված քաղաքի համար (այն ժամանակ Ստեփանակերտի տարածքի մեծ մասը դեռ ավերված էր ագերիների հրթիռակոծության հետևանքով) պետք է մի լավ գործ ձեռնարկել, իսկ ամենակարևոր գործը երիտասարդ սերնդի արժանապատիվ կրթությունն է՝ հարմարավետ ուսումնական շենքային պայ-

մաններում: Նորակառույց ուսումնականության բազան զգալիորեն բարելավվեց առաջին ուսումնական շենքում և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար ստեղծվեցին հարմարավետ պայմաններ՝ կահավորված լսարաններ, ուսումնական կաբինետներ, լաբորատորիաներ և կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք հագեցած են ժամանակակից սարքավորումներով: Համալսարանի գործունեության տարիներին (1996-2000թթ.) ստեղծվեց նաև հարուստ գրադարան, ընթերցասրահ, նիստերի փոքր դահլիճ, ուսանողական սրճարան, պատճենահանման, համակարգչային կաբինետ, ստոմատոլոգիական պոլիկլինիկա և այլ հարմարություններ, որոնք, անշուշտ, նախապայմաններ են ստեղծել ուսումնական պարապմունքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

Ուսումնագիտական կրթօջախի տարեգրության առաջին փուլում (1996-2000թթ.) գիտակրթական համակարգում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ: Հիմնադրման առաջին ուսումնական տարում ռեկտորի նախաձեռնությամբ մշակվեց նորաստեղծ համալսարանի կանոնադրությունը, որտեղ հստակորեն նշված են այն սկզբունքները, որոնց հիման վրա կազմակերպվելու և գործելու էր այն: Կանոնադրության համաձայն սահմանվում է համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի, ուսանողների, իրավունքներն ու պարտականությունները, կարգապահության կանոնները, ֆակուլտետների, ամբիոնների աշխատանքների պլանավորումը, յուրաքանչյուր կուրսում կուրսղեկների նշանակումը՝ ուսանողների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների պլանավորումը և այլ հարցեր:

«Գրիգոր Նարեկացի» համալսարանի հիմնադրման և նրա գործունեության սկզբնական շրջանում ամենալուրջ դժվարությունը համապատասխան մասնագիտական որակավորում և տեսական պատրաստություն ունեցող դասախոսական կազմի ապահովումն էր և՛ ուսանողության համակազմի հավաքագրումը: Ուսումնագիտական կրթօջախի ղեկավարությունը ուսումնական աշխատանքները վերակառուցելու միտումով ձեռնարկեց մի շարք միջոցառումներ: Այսպես՝ ԼՂՀ ԿԳ նախարարության «Համալսարանական կրթության կրթական գործունեության արտոնագիր» թիվ 2 հրամանի համաձայն, 1996-1997 ուսումնական տարում կազմակերպվեց առաջին ընդունելության քննությունները՝ «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա», «Իրավագիտություն», «Լրագրություն», «Ստոմատոլոգիա», «Տնտեսագիտություն», «Ատամնատեխնիկա» մասնագիտություններով (արտոնագիր 10 տարի ժամկետով)²:

Նորաստեղծ համալսարանի գիտխորհրդի որոշմամբ ձևավորվում են ամբիոնները՝ Հայոց լեզվի և գրականության, մանկավարժության և հոգեբանության հետազայում վերանվանվեց տարրական կրթության մեթոդիկայի, իրավագիտության, որոնք կազմեցին՝ հումանիտար ֆակուլտետը:

Համալսարանի ռեկտորի ձեռնարկումներից մեկն էլ եղավ ՀՀ Ազգային

² Տես «Նարեկ» 2006 (9-10):

Ակադեմիայի գրականության ինստիտուտի, և առաջատար բուհերի (ԵՊՀ, ՀՊՄՆ և այլն) վաստակաշատ գիտնականներին՝ ակադեմիկոսներ Սերգեյ Սարինյանին, Սևակ Արզումանյանին, ՀԳԱԱ թղթակից անդամ Ալեքսանդր Մանասյանին, դոկտոր, պրոֆեսորներ Ազատ Եղիազարյանին (գրականագետ), Գառնիկ Սաֆարյանին (իրավագետ), Վիկտոր Մելքունովին (բժշկ. գիտ. դոկտ.), ինչպես նաև ԱրՊՀ-ի փորձառու դասախոսներին աշխատանքի հրավիրելը:

Տարեգրության առաջին փուլում (1996-2000թթ.) համալսարանը արդեն ուներ՝ 2 ֆակուլտետ (հումանիտար և բնագիտական), 46 դասախոս, որից 2 ակադեմիկոս, 1 թղթակից անդամ, 3 դոկտոր պրոֆեսոր, 9 գիտ. թեկնածու, դոցենտ, 3 դոցենտ, 4 ավագ դասախոս, 14 դասախոս, 6 ասիստենտ, 532 ուսանող, որից 62-ը՝ Հայաստանի Գորիսի, Սիսիանի, Զերմուկի և այլ շրջաններից, նոր տիպի ուսումնական շենք, 5 ուսումնական կահավորված կաբինետներ, 16 հարմարավետ լսարաններ, Ստոմատոլոգիայի կենտրոն և ուսանողական ընթերցարան: Տարեգրության առաջին փուլում՝ (1998-1999 ուսում. տարում), համալսարանը տվել է առաջին շրջանավարտները «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության գծով 7 հոգի, 1999-2000 ուս. տարում 15՝ «Իրավագիտություն» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների գծով³: Նշված մասնագիտությունների գծով 9 ուսանող ավարտել են առաջին կարգի դիպլոմով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2000-2010 թվականներին, «Գրիգոր Նարեկացի» համալսարանը թևակոխել է զարգացման նոր փուլ, որն արմատապես տարբերվում է նախորդ շրջանից՝ ամենից առաջ մասնագիտությունների պետական հավատարմագրման ուսուցման բովանդակության կատարելագործման (ուսումնական պլանների, ծրագրերի նորովի մշակման ու իրականացման), մասնագետների պատրաստման որակի բարձրացման, ինչպես նաև ներհամալսարանական կյանքում կատարված կառուցվածքային փոփոխությունների ոլորտում: Ուսումնագիտական կրթօջախը իր հնարավորությունների առավելագույն է ներդնում ժամանակակից բուհին ներկայացվող պահանջներին համապատասխան բարձրագույն կրթության մասնագետներ պատրաստելու գործում: Հենց այդ շարժառիթներն էլ հիմք դարձան Նարեկացի համալսարանի համար՝ հանրապետության մասնավոր բուհական համակարգում առաջինը ունենալ բարձրակարգ չափանիշներ, և արժանանալ ԼՂՀ ԿԳ նախարարության 2001թ. հուլիսի 1-ի փորձագիտական հանձնաժողովի եզրակացության բարձր գնահատականի: Հիմնավորենք փաստերով:

Համաձայն ԼՂՀ կառավարության 2001թ. մարտի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման, ինչպես նաև միջին մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգերը հաստատելու մասին» թիվ 52 որոշման՝ ԼՂՀ ԿԳ նախարարությունը 2001թ. ապրիլի 10-ին կոլեգիայի նիստում կարգ է սահմանել ոչ պետական բուհերի հավատարմագրման և լիցենզավորման համար, և

³ Տես, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ղեկավարի հաշվետվությունները, արխիվային նյութերը, գ. 8

դրա հիման վրա նախարարությունում ստեղծվել է հատուկ փորձագիտական հանձնաժողով, որի նպատակն էր ստուգումներ կատարել ոչ պետական բուհերում: Հանձնաժողովի փորձագիտական եզրակացություններն էլ հիմք են հանդիսացել ԿԳ նախարարության կողմից հանրապետությունում գործող ոչ պետական 12 բուհերի կրթական գործունեության լիցենզիաների վերանայման մասին հրամանի արձակման համար, որով 2001թ. հուլիսի 1-ից 9 ոչ պետական բուհերի գործունեությունը դադարեցվել է: Այդ բուհերում չէին պահպանվում հիմնական աշխատողների 50%-ի հաստիքացուցակը, դասախոսական կազմի գիտական աստիճանը, գրադարանը, ընթերցասրահը և բուհին անհրաժեշտ այլ հարմարանքներ: Հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը հաստատել է, որ ժամանակակից բուհի ներքին կյանքին առնչվող իրավական անհրաժեշտ փաստաթղթերը, պատշաճ մակարդակով դասապրոցեսի կազմակերպումը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսումնական շենքային պայմանները, ուսանողների հաճախումը, ուսման որակը, ուսումնանյութական բազան համեմատաբար բարվոք վիճակում էին «Գրիգոր Նարեկացի» պետական արտոնագրված համալսարանում: Եվ այդ նպատակով էլ, ուսումնագիտական կրթօջախը պետական հավատարմագրման իրավունք է ստացել:

ԼՂՀ ԿԳՆ 2001թ. հունիսի թիվ 01 հրամանի արտոնագրով վավերացվել է համալսարանի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն իրականացնելու իրավունքը՝ իրավագիտություն, բանասիրություն (ժուռնալիստիկա-լրագրություն) ստոմատոլոգիա, տնտեսագիտություն, տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա, ատամնատեխնիկա, անգլերեն լեզու մասնագիտությունների գծով՝ տասը տարի ժամկետով: Նկատի ունենալով համալսարանի գիտակրթական համակարգում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը, մասնագետների պատրաստման որակը, ԼՂՀ ԿԳՆ-ը 2002թ. հուլիսի 11-ի թիվ 48-ի հրամանով իրավունք է վերապահում՝ համալսարանի «04-04-Ստոմատոլոգիա» (Բարձրագույն) և «0416-ատամնատեխնիկական գործ» (միջին մասնագիտական կրթություն) իրականացվող մասնագիտությունները համարվել պետական հավատարմագրված:

ԼՂՀ ԿԳՆ 2003թ. հունիսի 18-ի թիվ 91 (452) հրամանով համալսարանի «Իրավագիտություն», «Հայոց լեզու և գրականություն», «Լրագրություն», «Տարրական կրթություն, մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունները համարվել են պետական հավատարմագրված⁴: Այդ նույն հրամանով պետական հավատարմագրված է համարվել համալսարանը՝ հիմք ընդունելով, որ նրա 6 մասնագիտությունները պետական հավատարմագրված են: Իսկ դա նշանակում է, պետական կարգավիճակ, այսինքն՝ շրջանավարտները կստանան պետական նմուշի դիպլոմ, կօգտվեն բոլոր այն արտոնություններից ու առավելություններից, որոնք տրվում են պետական բուհերին: «Գրիգոր Նարեկացի» համալսարանի պետական հավատարմագիր հանձնելու առթիվ իր շնորհավորանքի

⁴ Այդ մասին տես, «Գր. Նարեկացի» համալսարանի արխիվային փաստաթղթերը, Գ. 4,5,6,7...

խոսքն է ասել՝ ԼՂՀ ԿԳ նախարար Արմեն Սարգսյանը, փոխ. նախարար Սլավա Ասրյանը, Երևանի ՄԽ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի օրթոպեդիկ ստոմատոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, բժշկ. գիտ. դոկտոր Վիկտոր Մելքունովը և ուրիշներ:

Ինչպես նշեցինք, բակալավրիատի մասնագիտությունների (6) պետական հավատարմագրման գործընթացը ավարտվեց 2003թ., իսկ 2004թ. փետրվարի 18-ին թիվ 18-ի հրամանով «Գրիգոր Նարեկացի» համալսարանի արտոնագրված մասնագիտությունների ցանկում ավելացվել է «0601-տեսական տնտեսագիտություն» և «0207 պատմություն» մասնագիտությունները, 2005 թվականին՝ «Նախագորակոչային պատրաստություն և ֆիզկուլտուրա» մասնագիտությունը:

Հարկ է նշել նաև, որ 2005թ. հունիսի 27-ին տրված թիվ 02 հավատարմագրով իրավունք է վերապահված «0601-տեսական տնտեսագիտություն» մասնագիտության գծով ամփոփիչ ատեստավորում անցկացնելու և շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմներ տալու:

Այդ ժամանակահատվածում, և հետագայում, համալսարանի կառուցվածքային և ծրագրային համալիր վերափոխումների հիմքը դարձավ պրոֆեսոր Վ. Հակոբյանի նախաձեռնությամբ մշակված բուհի զարգացման հայեցակարգը և գլխավոր պլանը (Համալսարանի աշխատանքների պլանը ըստ ուսումնական տարիների և զարգացման հեռանկարային պլանը՝ 2001-2010թթ.), որում նախատեսվում է բուհի գործունեության զարգացման հիմնական ուղղությունները.

. Մասնագիտական կրթությանը և պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջների փոփոխությունները ընդհանուր կրթության զարգացող համակարգում,

. կրթության ոլորտի մասնագետների պատրաստման որակի բարձրացում,

. երկաստիճան կրթական համակարգի՝ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերի իրականացում՝ հումանիտար և բնագիտական ուղղություններով.

. նոր ուսումնական շենքի կառուցում, հարմարավետ լսարանների, կահավորված մարզադահլիճի, առարկայական ուսումնական կաբինետների կահավորում և այլ հիմնախնդիրներ:

Միջազգային չափանիշներին համապատասխան Հայաստանի բուհերում իրականացվող երկաստիճան (որոշ բուհերում եռաստիճան) կրթական համակարգի փորձը ձեռք բերեց համակարգային նշանակություն, և նրանց օրինակին հետևեցին նաև ԼՂՀ բուհերը: ԼՂՀ Ազգային ժողովում հաստատված «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքում⁵ նախատեսվում է հանրապետության բուհերի պարտադիր անցում երկաստիճան համակարգի՝ սկսած 2005 թվականից:

Ինչպես տեսնում ենք, իր հիմնադրման օրից «Գրիգոր Նարեկացի» համալսարանում բարեփոխումները հիմնականում օրենսդրական կարգավորման բնույթ է կրել: Տասը տարվա ընթացքում (1996-2006թթ.)՝ նո-

⁵ ԼՂՀ օրենք, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին, 25 մայիսի, 2005թ.

րանկախ Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական, մշակութային զարթոնքին, ու վերակառուցումներին համընթաց ուսումնագիտական կրթօջախը որակական մեծ փոփոխություններ ու զարգացումներ է կրել: Նվաճումներն ակնհայտ են: Տասը տարի առաջ գրոյական մակարդակից սկսած հաստատությունը այդքան մեծ հաջողություններ ու ձեռքբերումներ ունեցավ շնորհիվ ռեկտորի՝ պրոֆեսոր Վարդան Հակոբյանի եռանդուն գործունեության: Ձեռք բերված նվաճումներն ընդհանրացվեցին համալսարանի տասնամյա պատմությանն նվիրված հոբելյանական տարում՝ 2006թ. դեկտեմբերի 16-ին: Իրենց ելույթներում շնորհավորանքի խոսք ասացին ԼՂՀ ԿԳՄՆ Կամո Աթայանը, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը, ՀՀ ԳՄ նախագահ Լևոն Անանյանը, գրող, հրապարակախոս Հրաչյա Բեգլարյանը և շատ ուրիշներ⁶:

Համալսարանը 10-ամյա գործունեության տարիներին, միջբուհական գիտական կապեր է ունեցել ոչ միայն Արցախի և Հայաստանի, այլև արտերկրի նշանավոր համալսարանների գիտնականների հետ, որը նպաստել է գիտակրթական համակարգի զարգացմանն ու պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական գիտական աշխատանքների կատարելագործմանը: Հայաստանի և արտերկրի բուհերի հետ համագործակցելը, նրանց փորձի հիման վրա միջազգային կառույցներին ինտեգրումը, այդ կառույցներին համապատասխան կրթական համակարգի ձևավորումը դյուրին դարձրեց համալսարանում մասնագետների՝ շարժունությունը և կրթության որակի միասնացումը: Եվրոպական կրթական համակարգի ինտեգրումը, Բոլոնիայի գործընթացի իրականացումը՝ հնարավորություն են ստեղծում (Հայաստանի և Արցախի բուհական համակարգում) անցումը ուսուցման կրեդիտային համակարգի:

2006-2007թթ. «Գրիգոր Նարեկացի» համալսարանում որոշակի աշխատանք է կատարվել՝ բարձրագույն կրթության համաեվրոպական միասնական տարածքում ինտեգրվելու, Բոլոնիայի հռչակագրի դրույթների ներդրման ուղղությամբ: 2008-2009 ուս. տարվանից համալսարանի առաջին կուրսերում ուսումնական գործընթացը կազմակերպվել է ուսուցման կրեդիտային համակարգով՝ համալսարանի գիտխորհրդի որոշմամբ, ուսումնական մասը, դեկանատը և ամբիոնները առավել ուշադրություն դարձրին ուսումնական գործընթացի կատարելագործմանը, նոր ժամանակների ու պահանջների ոգով ուսուցման կրեդիտային համակարգին համապատասխան ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի ստեղծմանն ու վերամշակմանը: Բակալավրի և մագիստրական ծրագրերով արմատավորվեց ուսանողների գիտելիքների գնահատման վարկային համակարգ (20 միավորանոց), որը երկրորդ ուսումնական տարում մագիստրատուրայում ներդրվում է նաև հետազոտողի ծրագրում: Համալսարանում ուսուցման կրեդիտային համակարգի կիրառումը և նորովի ներդրված ընթացիկ հարցումները, որոնք կենտրոնացնելով ուսանողին, ստիպում են համաչափ աշխատել ուսումնառության ողջ ընթացքում: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ երկու ուսումնական

⁶ Տե՛ս, «Նարեկ», 2006, 1 (9-10), էջ 2-3:

տարում (2008-2009, 2009-2010 ուս. տար.), ընդհանուր առմամբ արձանագրվել է առաջադիմության աճի միտում:

Տարեգրության երրորդ փուլում (2010-2014թթ.) «Գրիգոր Նարեկացի» համալսարանը մեծ զարգացում է ապրել, հասել է նշանակալից հաջողությունների, ունի բարձր վարկանիշ մեր հանրապետության և Հայաստանի տարածքի բուհերի շրջանում: Համալսարանն արդեն դարձել է գիտական, կրթական մտքի կենտրոն, և մեծ դեր ունի մեր հանրապետության հասարակական, տնտեսական, մշակութային, գիտական կյանքում: Կարևորում ենք նաև նշել, որ հանրապետության կրթական համակարգի և մյուս ոլորտների համար բարձրագույն ու միջին մասնագիտական բարձրակարգ մասնագետների պահանջարկը լիովին բավարարելու նպատակով ռեկտորի ազգաշահ առաքելությունն եղավ նաև 2010-2011 ուս. տարում համալսարանին կից հումանիտար մասնագիտությունների գծով քոլեջի հիմնումը: Միջին մասնագիտական այս կրթօջախի հիմնադրման անհրաժեշտությունն առաջացավ 2006թ., երբ «Գրիգոր Նարեկացի» համալսարանը իր գործունեության տասնամյակի կապակցությամբ իրականացրեց իր անցած ճանապարհին հանգամանալից վերլուծությունը: Բացահայտված խնդիրների մեծ մասը վերաբերում էին դպրոցական ոչ լիարժեք ուսումնառությանը: Սովորում էին դպրոցում, բայց գիտելիք ստանում էին մասնավոր պարապմունքներում: Որոշվեց ստեղծել մասնավոր պարապմունքների համարժեք գիտելիքներ տվող ուսումնական կենտրոն, որը վերածվեց կրթական գործընթացը քոլեջի առաջին կուրսից հիմնավոր կերպով սկսելու և մինչև բարձրագույն գիտական մակարդակ ապահովող կրթահամալիրի: Համալսարանի քոլեջը մասնագետներ է պատրաստում և որակավորումներ շնորհում 13 մասնագիտությունների գծով առկա ուսուցման տեղությամբ:

Համաձայն ԼԴՀ կառավարության և ԼԴՀ ԿԳՆ որոշման (2014թ. թիվ 4) քոլեջի սովորողները ստանում են միջին մասնագիտական կրթություն, իսկ քոլեջը գերազանց կամ լավ գնահատականներով ավարտելուց հետո, շրջանավարտներն առանց լրացուցիչ քննությունների կարող են բարձրագույնում երկրորդ և երրորդ կուրսերից շարունակել իրենց ուսումը համալսարանում՝ համապատասխան մասնագիտությունների գծով: Եթե առաջին ուսումնական տարում քոլեջի խմբերում սովորում էին 112 հոգի, ապա տարեցտարի ավելանում է դիմորդների քանակը, կայանում են մասնագիտական խմբերը, սովորողների թիվը այսօր հասնում է 450-ի, որից 92-ը սովորում են «գերազանց» գնահատականներով:

Համալսարանի տարեգրության այդ ժամանակահատվածում անչափ կարևորվում են Հայաստանի բուհերի հետ միջազգային համագործակցության ծրագրերը: Իրականացվել և շարունակում են իրականացվել 8-ից ավել (բակալավորիատի) և 7 (մագիստրոսական) կրթական, գիտական և խորհրդատվական ծրագրեր, որոնց շրջանակներում հնարավոր դարձավ հանրապետության և Հայաստանի բուհերի շարքում, որպես առաջատար՝ սկսել և իրագործել կրթական բարեփոխումներ, վերանայել, վերանշակել ժամանակակից պահանջներին համապատասխանեցնել ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը: Դրանցից առավել ծավալուն և արդյունավետ են Հայաստանի առաջատար բուհերի (ԵՊՀ,

ՀՊՄՀ, ԵՊՃՀ, ԵՊՏՀ և այլ բուհերի) հովանավորությամբ իրականացվող ծրագրերը՝ գիտական հետազոտությունների կատարումը, համալսարանի պաշտոնական կայքի բացումը և գործունեությունը, որի միջոցով կարելի է լիարժեքորեն ծանոթանալ բուհում տեղի ունեցող ուսումնամեթոդական գործընթացներին, գիտահետազոտական նորամուծություններին, միջազգային գիտաժողովների կազմակերպմանը, դասախոսների վերապատրաստմանը, մասնագիտական խորհուրդներում թեկնածուական, դոկտորական ատենախոսությունների պաշտպանության, ուսանողների, մագիստրանտների կրթության, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության կազմակերպմանը Հաստատանի և արտերկրների բուհերում և այլն:

Ուսումնագիտական կրթօջախում գլխավոր իրադարձությունն արդեն շուրջ տասը տարի առաջ (2001-2010թթ.) սկսված և մինչև օրս շարունակվող բարեփոխումներն են, որոնք նախանշված են Բոլոնիայի հռչակագրով և ունեն գլխավոր նպատակ, այն է՝ Մայր Հայաստանի բուհերի հետ Եվրոպական միասնական կրթական տարածքի ձևավորում, ուսանողների ազատ տեղաշարժի հնարավորություն և աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակության ապահովում:

Կրթական բարեփոխումների իրականացման ընթացքում «Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարանը, հաշվի առնելով կրթական համակարգի բնույթը, ղեկավարվել է հետևյալ սկզբունքով, ցանկացած նորույթ ներդնել միայն խորը ուսումնասիրության, փորձարկման և առկա պայմանները հաշվի առնելու դեպքում՝ պահպանելով ավանդական կրթահամակարգի արդյունավետ տարրերը:

ԼՂՀ ԿԳ նախարարության հետ համատեղ մշակվել ու հաստատվել է համակարգի ներդրման քառամյա ծրագիր, սահմանվել «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռազմավարական զարգացման հայեցակարգը, որտեղ մեծ տեղ է հատկացված համակարգի բարեփոխումներին և զարգացումներին՝ նպատակ ունենալով 2011-2012թթ. ավարտել՝ Հայաստանի բուհերի հետ, Եվրոպական միասնական կրթական տարածքին ինտեգրվելու նախապատրաստական բոլոր աշխատանքները: Համալսարանում կրեդիտային համակարգով կրթության կազմակերպումը բարեփոխումների ամբողջ համալիր կարևոր բաղադրիչներից մեկն է:

Համալսարանի տարեգրության այս փուլում (2010-2014թթ.) կրթական բարեփոխումների իրականացման կարևորագույն նպատակը կրթության որակի ապահովումն ու աշխատաշուկայում բարձրակարգ մրցունակ կադրերի պատրաստումն է:

Որակյալ կադրեր պատրաստելու համար համալսարանն այսօր ունի համապատասխան պայմաններ և նյութատեխնիկական բազա՝ նորակառույց երկրորդ մասնաշենք 30 հարմարավետ լսարաններով, 9 կահավորված առարկայական ուսումնական կաբինետներ ու 2 լաբորատորիաներ (քիմիա-կենսաբանություն և մաթեմատիկա-ֆիզիկայի), տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների լայնածավալ և համակողմանի օգտագործման հնարավորություն, նորակառույց գրապալատ, մարզադահլիճ, պոեզիայի և գիտական նիստերի դահլիճ, և անհրաժեշտ հարմարություններ:

Նշվածից բացի, կրթության որակի ապահովման գործում մեծ է միջհամալսարանական համագործակցության (Հայաստանի և Ռուսաստանի դաշնության բուհերի հետ) դերը, միայն այդ շփումների արդյունքում է հնարավոր անընդհատ հղկել, կատարելագործել և զարգացնել համալսարանի գիտակրթական համակարգը:

Համալսարանում բարձրորակ կադրեր պատրաստելու միտումով, ռեկտորը հատկապես մեծ ուշադրություն է դարձնում գիտական կադրերի պատրաստման գործին, որը հիմնականում իրագործվում է ասպիրանտուրայի միջոցով: Վերջին երեք տարում (2011-2014թթ.) համալսարանի 3 դասախոսներ Հայաստանի բուհերում ձևակերպվել են հայցորդներ, ասպիրանտներ, և պաշտպանել թեկնածուական ատենախոսություններ (Տաթև Սողոմոնյան, Լուսինե Թովմասյան, Ժաննա Բեգլարյան), 2 դասախոսներ (Զարինե Սառաջյան, Ռենա Մովսիսյան), գտնվում են նախապաշտպանության շեմին, իսկ Ամալյա Գրիգորյանի ատենախոսության թեման հաստատվել է ՀԳԱԱ գրականության ինստիտուտի մասնագիտական խորհրդում:

Համալսարանում որակյալ մասնագետների պատրաստման զուգընթաց տարվում են նաև ծավալուն գիտահետազոտական ուսումնասիրություններ: Հատկապես մեծ են պրոֆեսորադասախոսական կոլեկտիվի հաջողությունները վերջին տասնամյակում (2004-2014թթ.) ուսումնագիտական մասի գծով պրոռեկտոր, դոցենտ Իրենա Հակոբյանի նախաձեռնությամբ գիտական աշխատանքներ են կատարվում ուսումնագիտական մասում, ամբիոններում, ուսումնական մասում, դեկանատում, ուսանողական գիտական ընկերությունում (ՌԻԳԸ-ում): Գիտական հետազոտությունները հիմնականում ունեն երկարաժամկետ և համալիր բնույթ և սերտորեն կապված են ավանդական գիտական ուղղությունների հետ: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կոլեկտիվի գիտական ուսումնասիրությունների արդյունքները ընդհանրացվել են երեք տասնյակից ավել գիտական աշխատություններում, համալսարանի «Նարեկ» գիտակրթական հանդեսում, «Նարեկ», «Դպրատուն» գիտական հոդվածների ժողովածուում, ինչպես նաև ԱրՊՀ, Հայաստանի բուհերի գիտական տեղեկագրերում, ամսագրերում: Ուշագրավ է, որ տարեցտարի ավելանում է գիտությամբ զբաղվող երիտասարդ դասախոսների թիվը:

«Գրիգոր Նարեկացի» համալսարանը իր գործունեության տարիներին (1996-2014թթ.) աստիճանաբար տարածաշրջանում ձեռք է բերել ճանաչված գիտական կենտրոնի համբավ: Ասվածը վերստին հաստատում է ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը՝ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպման ժամանակ (16-ին սեպտեմբեր 2013թ.) «Գրիգոր Նարեկացի» համալսարանն իր գործունեության տասնյոթ տարիների ընթացքում հասել է նվաճումների: Վաղուց արդեն համալսարանն ունի պետական կարգավիճակ, ամրապնդվել է նյութատեխնիկական բազան, շահագործման է հանձնվել նորակառույց շենք՝ իր անհրաժեշտ հարմարանքներով, գրադարանով, լաբորատորիաներով, համացանցային կապով, մարզադահլիճով, ռազմագիտության կաբինետով, միջոցառումների դահլիճով, լուսավոր լսարաններով: Ժամանակի պահանջներին համահունչ բարելավվում է համալսարանի պրոֆեսորադա-

սախտական կազմը՝ համալրվելով նոր և երիտասարդ գիտնականներով: Լավագույն մասնագետներ են հրավիրվում նաև մայր Հայաստանից և արտերկրից: Համալսարանի շրջանավարտներն իրենց տեղն են գտնում կյանքի տարբեր ոլորտներում: Եվ, բնական է, այս ամենը նպատակաուղղված է երկրի համար բարձրակարգ մասնագետներ պատրաստելուն՝ բուհի առավել գեղեցիկ ապագայի»⁷:

Համալսարանի ռեկտորը ներկայացնելով ուսումնագիտական կրթօջախի 17-ամյա արգասավոր գործունեությունը, մատնանշեց, «Հիմնադրման օրից, Սուրբ Նարեկացու անունը կրող համալսարանը, հավատարիմ լինելով գիտակրթական հիմնարկ կոչվելու պատվաբեր առաքելությանը, կարողացել է կարճ ժամանակում հաստատուն տեղ գրավել Արցախի բարձրագույն կրթական համակարգում: Համալսարանի դռները միշտ էլ բաց են եղել Արցախի, Հայաստանի և արտերկրի ուսումնաստենչ հայ երիտասարդների առաջ, իսկ բուհի շրջանավարտներից շատերը մասնագիտական համապատասխան որակավորում ստանալով այսօր արդեն լուրջ դերակատարություն ունեն ԼՂՀ և ՀՀ տարբեր բնագավառներում իրականացվող պետականաշեն աշխատանքներում»⁸:

Անշուշտ, «Գրիգոր Նարեկացի» համալսարանն բարձրագույն դպրոցի բարեփոխումների նոր փուլում ապրում է կրթական և գիտական համակարգերի բարեփոխումների բուռն զարգացման շրջանը, որն իհարկե լի է դժվարություններով, և պահանջում է բազմաբնույթ խոչընդոտների հաղթահարում, ջանքերի լարում: Այստեղ գլխավորը բարեփոխումների ճիշտ ուղղությունը ընտրելն է, ինչպես նաև բարեփոխումների իրականացման արդյունավետ եղանակներ կիրառելը: Այդ դեպքում միայն հնարավոր կլինի հասնել բաղձալի նպատակին, Հայաստանի առաջատար բուհերի շարքում գրավելու ուրույն արժանավոր տեղ: Տասնութամյա պատմություն ունեցող համալսարանի կոլեկտիվի համար սա լոկ երազանք չէ, այլ իրական ծրագիր: Կյանքի ու ժամանակի հրամայականով համալսարանը շարունակում է իր դինամիկ բարեփոխումները, որոնց արդյունքից էլ մեծապես կախված կլինի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գիտության, կրթության, մշակույթի և այլ ոլորտների համար բարձրորակ մասնագետներ պատրաստելու ապագան: Համալսարանի անցյալն ու ներկան համոզում են, որ նա այսուհետ էլ լինելու է ազգային կարևոր արժեքների բարձրակարգ մասնագետների պատրաստման դարբնոց:

Հարկ ենք համարում նշել, որ գիտակրթական արգասավոր գործունեություն ունեցող «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ամբողջական 20-ամյա պատմությունը կներկայացվի առանձին աշխատությունում, իսկ սույն գիտական հոդվածում բնութագրվում են տարեգրության պատմությանն վերաբերող համառոտ տեղեկություններ:

⁷ Տե՛ս, «Նարեկ», 2013, 1 (16), էջ 12:

⁸ Նույն տեղում, էջ 3:

РЕЗЮМЕ

**Григорий Арутюнян
Лилик Акопян**

**Научно-образовательная деятельность
университета "Григор Нарекаци" (1996-2014гг.)**

В научной статье кратко изложены пути развития научно-образовательной системы истории университета "Григор Нарекаци" в периоде с 1996-2014 года на основе исследования фактического материала и историко-сопоставительного анализа. Характеризуются также структурные изменения, связанные с основанием и деятельностью средне-специального учебного заведения — колледжа, действующего при университете.

SUMMARY

**Grigoriy Haroutunyan
Lilik Hakobyan**

**Scientific Educational Activity of
"Grigor Narekatsy" University (1996-2014)**

The article presents briefly the ways of development of scientific educational system of "Grigor Narekatsy" University in the period of 1996-2014 on the basis of factual material and comparative historical analysis. Structural changes connected with the formation and activity of secondary specialized educational establishments-colleges are also characterized.

ՎԱՀՐԱՄ ԱՌԱՆԵՍՅԱՆ

ԱրՊ համալսարան

ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Պարսկաստանն ի սկզբանե հանդուրժողական էր հայոց քրիստոնեական դարձի հանդեպ, ինչ-որ տեղ նույնիսկ խրախուսում էր, քանի դեռ Հայաստանում նոր հավատի սպասավորների մեծագույն մասն ասորիներ էին, որոնց կարելի է համարել «պարսկական ազդեցության գործակալներ»։ Հայոց գրերի գյուտով, Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ Պարսից արքունիքը կորցրել էր Հայաստանի հոգեւոր կազմակերպվածությանը ներազդելու կարելիությունը՝ «ասորի գործակալների» ներկայության, լծակը։ 5-րդ դարի Պարսկաստանը դավանանքի առումով միասնական երկիր չէր։

Եթե վերացարկվենք Մաշտոցի մասին կրոնաառասպելաբանական պատումներին, ապա կտեսնենք, որ նա ազնվական չի եղել, հետեւաբար չի պատկանել «ազատ»-ների դասին։ Այլ բան, որ 428 թ.-ից, այն է՝ Արշակունյաց հարստության վերջնական բարձունից, հետո շատ հնարավոր է, որ նախկին պալատական Մեսրոպը, մնալով պետական ծառայությունից դուրս, կարող էր ձեռնադրվել եւ հոգեւորականի սքեմ հագնել։

Վիրքում եւ Աղվանքում պատիվներով ընդունվելու, նրա տրամադրության տակ այդ երկրների վերնախավի կողմից «ուշիմ երեխաներ» եւ միջոցներ դնելու մասին մեր պատմագրության վկայությունները, կարծես, հակասում են Մաշտոցի՝ աստանդական քարոզիչ եղած լինելու մասին պնդումներին։ Նման պատիվների կարող էր արժանանալ միայն Արշակունյաց Հայաստանի «դեսպանը», ուստի ինչու՞ չընդունել, որ Մաշտոցը Վիրքում եւ Աղվանքում ոչ այնքան հոգեւոր-մշակութային, որքան որ քաղաքական առաքելություն էր իրականացնում։

Հայ պատմագրությունն, իհարկե, նման եզրահանգման գալու համար մեզ ստույգ նշումներ չի անում։ Բայց եթե համարձակվենք Աղվանքում եւ Վիրքում Մաշտոցի գործունեության մասին հիշատակումներից վերցնել կրոնական քողը, ապա կմնա այն, որ դրացի ժողովուրդների համար եւս գիր ստեղծելու ձգտումը ոչ այնքան «բարեգործական», որքան որ այսպես ասած՝ «միասնական դիմադրողական դաշտ» ձեւավորելու նպատակադրվածության դրսեւորում էր։

Այն, ինչ չունեն 4-րդ դարի Հայաստանը՝ հոգեւոր-մշակութային ինքնուրույնության հսկայական ներուժը եւ ինչը երկրի քաղաքական ողբերգության բուն պատճառն էր, սաղմնավորվել էր գրերի գյուտով, իսկ Աղվանքում եւ Վիրքում Մաշտոցի գործունեությամբ դա կարող էր ազդել նաեւ այդ երկրների ներքին իրավիճակի վրա, մի բան, որ Պարսկաստանում, անշուշտ, համարվելու էր սպառնալիք։

Պատմահայրն ասում է, որ Պարթեւ Սահակն իր փեսայի՝ Համագասպ Մամիկոնյանի համար խնդրել է սպարապետի պաշտոն, իսկ Աղվանից երկրի պատմիչի ասելով՝ խնդրանքը վերաբերել է թռռանը՝ Վարդանին, Հայաստանի մարզպանի պաշտոն տալուն Այստեղ ուզում ենք մի նկատառում էլ անել։ Բանն այն է, որ, ի տարբերություն Բուզանդի, Խորենացին Մամիկոնյան նախարարական տունը չի ձանաչում որպես Հայոց

սպարապետության պաշտոնի ժառանգական տեր: Համենայնդեպս, Պապ թագավորի օրոք տեղի ունեցած Զիրավի ճակատամարտի մասին խոսելիս Պատմահայրը Հայոց սպարապետ է անվանում Սմբատ Բագրատունուն՝ ի տարբերություն Բուզանդի, ով այդ ծառայության մեջ տեսնում է Մուշեղ Մամիկոնյանին: Խորենացին չի հիշատակում նաեւ Մուշեղի հորը՝ Վասակ Մամիկոնյանին՝ որպես Արշակ թագավորի օրոք սպարապետի: Եւ, ընդհակառակը, վկայում է, որ Պարթեւ Սահակը Համագասպ Մամիկոնյանի համար խնդրել է Հայոց սպարապետի պաշտոնը: Ի՞նչ է սա նշանակում: Մի՞թե Մամիկոնյաններն իրոք ժառանգաբար Հայոց սպարապետ չեն եղել եւ այդ գործակալությանն արժանացել են միայն Արշակունյաց հարստության անկումից հետո:

Արշակունյաց Հայաստանում ոչ միայն կաթողիկոսությունը, այլեւ հոգեւոր ծառայությունն էլ մեծ մասով ժառանգական էր: 428թ.ին, Լուսավորչի աթոռին տիրելու ժառանգական իրավունքի վերացմամբ, ամենայն հավանականությամբ, եկեղեցին կորցրել է սեփականատիրոջ բացարձակ ինքնուրույնությունը: Ու՛մ է տրվել Արշակունիների եւ Լուսավորչի տան սեփականությունը: Զգուշորեն կարող ենք եզրակացնել, որ Վարդանանց ապստամբության պահին Արշակունիների եւ Լուսավորչի տան «հարքունի բռնագրավված» նախկին տիրույթները գտնվել են մարզպանի՝ Վասակ Սյունեցու կառավարչական ենթակայության տակ:

Մարզպանական Հայաստանում եկեղեցին գրկված էր նախկին տնտեսական հզորությունից: Շատ հավանական է թվում, որ իրենց հերթին որոշ նախարարական տներ նույնպես պիտի հավակնեին Արշակունիների եւ Լուսավորչի աթոռի նախկին տիրույթներին: Իսկ եթե համարենք, որ մարզպանական Հայաստանի երկրորդ ազդեցիկ՝ սպարապետության, պաշտոնն ունենալով՝ Մամիկոնյանները կարող էին նման հավակնություններն իրենց համար նույնիսկ օրինական համարել՝ որպես եւ ազդեցիկ, եւ Լուսավորչի հետ արյունակցական կապ ունեցող իշխանական տուն, ապա ինչու՞ չասել, որ Վարդանանց ապստամբության հիմնական դերակատարները եկեղեցին եւ Մամիկոնյան տունն էին:

Եղիշեն վկայում է, որ Հազկերտի «թղթի» քննարկմանը Վարդանը ոչ միայն ներկա է եղել, այլեւ շատ որոշակիորեն ուղղորդել է «մերժման պատասխանի» ձեւակերպման գործը: Ի պաշտոնե Քուշանքուն մնալու՝ Վարդանի պարտավորվածության եւ Հազկերտի «թղթի» քննարկման պահին նրա Հայաստանում եղած լինելու հանգամանքների համադրումից ծագում է տրամաբանական եզրահանգում, որ Վարդանը Հայաստան է հասել ավելի վաղ, քան՝ Հազկերտի «թուղթը» բերող սուրհանդակը:

Ըստ երեւոյթին, քուշանա-պարսկական պատերազմը Պարսկաստանի ուշադրությունը զգալիորեն շեղել էր Հայաստանի գործերից: Զի բացառված՝ այն չափով, որ մարզպան Վասակ Սյունեցին շատ որոշակի ինքնուրույնություն էր ձեռք բերել: Եւ, ուրեմն, հայկական նեղ շրջանակներում կարող էր քննարկվել թագավորական իշխանության վերականգնման հարցը: Ո՞ր շրջանակներում՝ ահա հարցի «աղը» դա է: Նախարարակն տներից ո՞րը կհավակներ արքայատոհմ դառնալուն: Ըստ ակնհայտի՝ մարզպան Վասակ Սյունեցին եւ Վարդան Մամիկոնյանը: Վերջինիս՝ որպես Լուսավորչի տան հետ արյունակցական կապ ունեցողի, հավանաբար, պետք է որ պաշտպաներ նաեւ եկեղեցին: 4-րդ դարի պատմական իրադարձությունների մասին մեր առաջին պատմիչների հիշատակումներն ակնհայտորեն չեն խոսում եկեղեցու եւ Սյունյաց իշխանական տան միջեւ Ավարայրի նախօրեին դաշինքի հավանականության օգտին: Դա

փոխանցվել է նաեւ հետագա հեղինակներին, ովքեր ավանդույթի ուժով Սյունիքը համարել են «հերձվածողների բույն»:

Տրամաբանական է պատկերվում, որ Վարդանը հենց Հայաստանից ստացած լինի Վասակի քաղաքական հավակնությունների մասին գաղտնի տեղեկատվություն: Քուշանաց երկրում հանուն Պարսից գահի կռվող Հայոց այրուծին պահպանվում էր Հայաստանի ծախսերով, ուստի կապը երկրի եւ անապատներում արյուն հեղող զինվորականության միջեւ մշտական պիտի լիներ:

Եւ ինչու՞ չենթադրել, որ, առնելով Վասակի «թագավորական» մտադրությունների մասին լուրը, Վարդանն շտապել է հասնել Հայաստան, որպեսզի եկեղեցու օգնությամբ կանխի քաղաքական մրցակցի հետագա ձեռնարկումները: Ահա այս համատեքստում շատ դժվար է Վարդանանց ապստամբության գաղափար տեսնել «հանուն մշակութային ինքնավարությունը»՝ ինչպես ընդունված է ասել: Ավելի հավանական է ենթադրել, որ Պարսկաստանի թուլացմամբ գորացած՝ Սյունյաց իշխանական տունը փորձում էր մարգալանական Հայաստանի ներքին խնդիրների կարգավորման գործն իր ձեռքը վերցնել եւ հանդիպում Մամիկոնյանների՝ քաղաքական մրցակիցների, եւ եկեղեցու՝ «քրիստոնեական համայնքի» գաղափարախոսի միացյալ դիմադրությանը: Ահա այստեղ է պետք փնտրել Ավայրայրով պարտված՝ 450-51թթ. իրադարձությունների բուն իմաստը: Դա երկու նախարարական տների՝ Մամիկոնյանների եւ Սյունյաց, միջեւ մրցակցություն էր, որտեղ առաջինն ուներ եկեղեցու աջակցությունը:

Պակասը լրացնում է Փարպեցին, ում մատուցմամբ՝ Վարդան Մամիկոնյանը նախապես ապստամբության գործին որել է մասնակցություն չի ունեցել, գնացել-մեկուսացել էր իր կալվածքում՝ Տայքում, որտեղից նրան հորդորով Արտաշատ է հրավիրել... Վասակ Սյունեցին: Պատմիչի այս վկայությունը ոչ ոք չի հերքել, այդ թվում եւ՝ ժամանակակից ուսումնասիրողները, բայց այն, միեւնույն է, չի էլ կարելի դրսև գոնե իբրեւ լրացուցիչ փաստ, անգամ՝ հանգամանք, որը կարող է լինել 451թ. ապստամբությունը հնարավորինս ընդգրկուն լուսաբանելու միջոց:

Վերջին տարիների որոշ հանրամատչելի ուսումնասիրություններում, որոնց գիտականությունը ստույգ համարել դժվար է, արժարծվում է Վասակին՝ «քաղաքագետ», իսկ Վարդանին «անհավասարակշիռ զինվորականի» վարք վերագրելու գաղափարը: Մենք հեռու ենք այդ մտայնությունից այն պատճառով, որ 5-րդ դարի հայ ազնվականությունը միաժամանակ եւ զորական էր, եւ դիվանագետ, եւ կառավարիչ: Իսկ եթե գնահատականները վերաբերում են Վարդանի եւ Վասակի անձնական որակներին, ապա դրա համար պատմագիտական բավարար նյութ չկա: Եւ տպավորություն է ստեղծվում, որ այդ «տեսությունը» մեր ժամանակի իրողությունները 5-րդ դարի վրա տարածելու ոչ այնքան հիմնավոր ձգտում է:

Ասել, թե Վասակը նախանձախնդիր էր «դիվանագիտական» միջոցներով Հայաստանի թագավորությունը վերականգնելուն, իսկ Վարդանն ընտրել էր զինված ապստամբության՝ մինչեւ վերջ չհաշվարկված, տարբերակը, թվում է անհիմն: Այսպես, թե այնպես՝ Պարսից արքունիքը մարգալանական Հայաստանի ներքին խնդրումները վերահսկելու, ազգային ինքնուրույնության շարժումը կասեցնելու նպատակ անապայման ունեցել է:

Ըստ երեւույթին, Պարսից արքունիքն ինչ-որ տեղ թերագնահատել է թագավորությունից զրկված Հայաստանի ներքին դիմադրողականության ներուժը, ձեռնարկել նախարարական իքնուրույնությունը սահմանափակող այնպիսի քայլեր, որ հայ ազնվականությունը մտմտացել է այս կամ

այն ձեռով նախկին արտոնությունները վերականգնելու կամ նույնիսկ ազգային թագավորական իշխանությունը վերականգնելու հնարավորությունը: Եւ այդ գաղափարով վարակվել են եւ Վասակը, եւ Վարդանը, բայց այդպես էլ չեն կարողացել ընդհանուր հայտարարի գալ:

450-51թթ. ապստամբությունն, ինչ խոսք, Հայաստանի եւ հատկապես հայ ազնվականության համար աղետալի հետեւանքներ է ունեցել: Ավարայրում տարած «բարոյական հաղթանակի» մասին հետագայի պնդումները նման են ընդամենն ինքնասպանության: Այդ ճակատամարտում հայ ազնվականության մեծ մասը զոհվել է: Տխուր վախճան են ունեցել նաեւ նրանք, որ չեն մասնակցել զինված ապստամբությանը, Պարսից արքունիքը նրանց դատել եւ ծանրագույն պատիժների է ենթարկել, երկիրն ընկել է պարսից պատժիչ զորաբանակի կրակի տակ: Փրկվածները հեռացել, ապաստանել են իրենց լեռնային անմատչելի ամրոցներում:

Մեկուկես հազարամյակի հեռվից մենք, գուցե, իրավունք ունենք հարցնելու՝ «իսկ արժե՞ր երկիրն ազնվականությունից զրկելու գնով Ավարայրում ճակատամարտ տալ», բայց, ինչպես ասում են՝ «պատմությունը պայմանական եղանակ չի հանդուրժում»: Արձանագրենք միայն, որ Ավարայրի ճակատամարտից ավելի շատ օգուտներ քաղեցին Աղվանքը եւ Վիրքը. զոհված, Պարսից արքունիքի կողմից մահվան կամ աքսորի տաժանակրության դատապարտված հայ ազնվականության մի մասի, նրանց, ում կալվածքները սահմանակից էին Աղվանքին եւ Վիրքին, տիրույթներն անցան այդ երկրների առանձին իշխանությունների: Ավարայրից հետո է, որ Պարսից արքունիքը կատարել է տարածքային վերաբաժանումներ, որոնց հետեւանքով մարզպանական Հայաստանի սահմանները դարձել են ավելի անծուկ:

Ավելին, Ավարայրից հետո հայ եկեղեցու ազդեցությունն Աղվանքում եւ Վիրքում սկսեց արագորեն թուլանալ: Հետեւանքն այն էր, որ Վրաց եկեղեցին հետագայում որդեգրեց ուղղափառության դավանանք եւ լիովին հունական կողմնորոշում ընդունեց, մի հանգամանք, որ խզեց հայ-վրացական հոգեւոր ընդհանրությունը՝ դրա քաղաքական եւ այլ, մինչ օրս իրեն զգացնել տվող, հետեւանքներով հանդերձ:

5-րդ դարի վերջին տասնամյակները նշանավորվեցին նոր հակապարսկական ապստամբությամբ, որի արդյունքները հայտնի են «Նվարսակի համաձայնություն» անվամբ: Դա, ինչ խոսք, կարեւորագույն իրադարձություն էր, բայց ուսումնասիրողների ձնշող մեծամասնությունը հակված է երեւույթը բացատրել ոչ այնքան նոր ապստամբության ավելի հզոր կազմակերպվածությամբ, որքան՝ Պարսկաստանի անհամեմատ թուլությամբ, որը հետեւանք էր Անդրկասպյան ցեղերի դեմ հյուժիչ պատերազմի:

Պատմությունն իմաստավորվում է քաղաքական նշանակությամբ: Այս իմաստով, գուցե, 450-51թ.թ. հակապարսկական ապստամբությունը դիտվի «ժամանակավրեպ» կամ հայ-պարսկական մի ընդհանուր դաշինք կազմելու եւ այդպես Արեւելքից եկող սպառնալիքը դիմագրավելու հնարավորության կորուստ: Նախաավարայրյան մարզպանական Հայաստանը, որքան էլ որ չունեւ Արշակունյաց ժամանակների զորությունը, այնուամենայնիվ, ավելի հզոր էր, քան՝ 5-րդ դարավերջին, երբ կողմերը, հանգամանքների եկան «ընդհանուր հայտարարի»:

Բայց դա «թուլերի» դաշինք էր արդեն, այնքան, որ Պարսկաստանն ստիպված էր հաշտվելու մարզպանական Հայաստանի մի զգալի մասը Հունաստանին անցնելու փաստի հետ: Հետեւանքներն զգացնել էին տալու գրեթե մեկ դար հետո, երբ երկուսին էլ պատուհասելու էր արաբական

սպառնալիքը:

Արաբական արշավանքն, ըստ էության, 5-րդ դարի հայ մշակութային հեղափոխության համար փորձաքար էր: Եւ Հայաստանի հոգեւոր ինքնակազմակերպվածության գրեթե անխաթար պահպանումն այն չափազանց զորեղ ապացույցն է, որ եթե 4-5-րդ դարերի սահմանագծին գրեթե գյուտը չլինէր, չծավալվէր Մաշտոցի իրոք լուսավորչական գործունեությունը, ապա մենք, գուցե, նույնպես կուլ գնայինք իսլամականության արշավին:

Ի վերջո, Մաշտոցի ջանքին ենք պարտական նաեւ Բագրատունյաց իշխանապետության զարթոնքի եւ Հայաստանի մի մասի վրա ինքնուրույն թագավորություն վերականգնելու բացառիկ հաջողված քաղաքականության համար: Ինքնիշխան նպատակներ ձեւավորվում են այնտեղ, որտեղ դրանք իրացնելու հոգեւոր եւ քաղաքական կազմակերպվածություն լինում են: Իսկ այդ ինքնությունը պահպանվել է շնորհիվ ազգային գրով վերաիմաստավորված՝ հոգեւոր-մշակութային ինքնագիտակցության: Մաշտոցի «կերտած» հոգեւոր Հայաստանն է սնուցել ինքնուրույն թագավորության վերականգնման քաղաքական նպատակը:

РЕЗЮМЕ

Ваграм Атанесян

Идеология духовной Армении и вызовы современности

В статье делается попытка рассмотреть восстание Вардананц 5-ого века с политической позиции. Постулатом служит понятие "духовная Армения", которое, по мнению автора, созданием армянской письменности и формированием культурной сущности, параллельно с просвещением, приобрело политическую значимость в концепции восстановления независимой государственности в армянской действительности.

SUMMARY

Vahram Atanesyan

The Ideology of Spiritual Armenia and the Challenges of Modernity.

In the article an attempt is made to examine Vardanants revolt of the 5th century from the political viewpoint. The notion "spiritual Armenia" serves as a postulate which, according to the author, in parallel with education acquired a political significance in the concept of recovery of independent statehood in Armenian reality through the creation of the Armenian alphabet and the formation of cultural essence.

ՏԱԹԵՎ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ
«Գրիգոր Նարեկացի» համալսարան

ԱՆԵՐԵՎԱԿԱՅԵԼԻ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սփյուռքահայ գրականության և մանավանդ սփյուռքահայ արձակի գերխնդիրը կորսված եզերքի ոգեկոչումն է: Եղեռնը վերապրած տարբեր գրողների կողմից ստեղծված այդ գրականությունն անվանվեց կարոտի գրականություն: Նրանց հիմնական նպատակը կորուսյալ արևմտահայ գյուղի, մարդկանց, նրա բարքերի, կենցաղավարության, բնաշխարհի ոգեկոչումն է, միտում, որը նպատակ ունի սերունդը փրկել ուժացումից, անցյալը վկայակոչել, հային հայ պահել, վերադարձի երազը՝ տեսանելի:

Այս գրականության լավագույն արտահայտություններից մեկը Հակոբ Տեմիրճյանն է, (հետագայում հայերենի լեզուների Մեծուրի անունն ընտրեց որպես գրական կեղծանուն): Նա իր բացառիկ տաղանդով ու անդավաճան նվիրվածությամբ դարձավ կարոտի գրականության մեծ երախտավորը, ներկայացուցիչը այն գրականության, որ ստեղծվեց հայության մի ողջ հատվածի ոչնչացումից հետո:

Քսանութամյա Մեծուրին եղեռնի խորշակից հրաշքով փրկվեց: 1914-ի օգոստոսին Պոլիս գնալու պատճառը նշագեղծերի բորբոքումն էր, բայց կար մի ավելի կարևոր առիթ՝ պետք է Արտաշես Հարությունյանին ցույց տար իր ձեռագիր վեպը:

Փրկվեց՝ կորցնելով կնոջն ու երեխաներին, հարազատներին, համագյուղացիներին, մի ամբողջ հեքիաթային եզերք, որը հետո պիտի օր առ օր, դեմք առ դեմք կենդանարար նրա արձակում:

«Մեծուրու հետ վատթարագույնը եղավ,-գրում է Հր. Մաթևոսյանը: Մեռնողները մեռան, ազատվեցին, թերակղզու սահմաններից հեռու՝ ապրողների հոգին ոխից սևացավ-Մեծուրուն վիճակված էր ոչ մեռնողների մեջ լինել, ոչ էլ իրենց երևանյան, փարիզյան, ամերիկյան, արաբական հեռուներից ատամներն անգոր սեղմողների մեջ: Դրա հնարավորությունը Մեծուրին չունեցավ և նույնիսկ ավաղ քաշելու հնարավորություն չունեցավ»¹:

Մեծուրին գիտակցական կյանքի մեծ մասն անցկացրեց Ստամբուլում, զբաղվում էր հացագործությամբ, գրագրությամբ: Ութսունամյակը բոլորեց Պոլսի հայկական եկեղեցում մոմ վաճառելով: Պոլսահայ գրող Ռոբերտ Հատտեճյանը առանձնակի խանդավառությամբ է խոսել Մեծուրու մասին՝ նշելով, որ նա գրական հավաքություններին հյուր չէր լինում, ապրում էր ինքնամփոփ, ինքնասույզ կյանքով: Երբ խոսում էր ցեղասպանությունից՝ կծկվում էր, շուրթերը դողում էին, կորցնում էր խոսելու կարողությունը: Ապրեց՝ անդավաճան մնալով իր արմատներին, իր Արմտանին, դարձավ ինքնատիպ, ապրող ու ապրեցնող, անընդհատ վերադարձող արվեստագետ:

¹ Մեծուրի Հ., «Երկեր», Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 531:

Իսպանացի հանրահայտ արձակագիր Գարսիա Մարկեսն իր հարցազրույցներից մեկում ընդգծել է, որ յուրաքանչյուր գրող միայն մի գիրք է գրում՝ չնայած այն լույս է տեսնում բազմաթիվ հատորներով և տարբեր անվանումներով: Այս բնորոշումը վերաբերում է Մնծուրուն ևս:

Գրականագետ Գեղամ Սևանը գրել է. «Հակոբ Մնծուրու երկու հարյուր հիսունի սահմաններին հասնող պատմվածքները օղակներ են, ենթագլուխները մի ամբողջական վեպի, որ գտել են իրենց հարազատ «մեծագույն» հեղինակին, որպեսզի այն դառնա ավելին՝ վեպ Արմտանի մասին, կամ ինչպես Շահան Շահնուրն է ենթավերնագրել իր «Նահանջը առանց երգի» երկը՝ «պատկերազարդ պատմություն հայոց», այսինքն՝ Մնծուրու պարագայում՝ «պատկերազարդ պատմություն արևմտահայ գյուղի, նաև՝ «պատկերազարդ պատմություն գյուղացու և գյուղի», որը մեծացնելով ազգայինի սահմանները, այդ «վեպին» տվել է համամարդկային հնչեղություն»²:

Յոթանասուն տարվա ընթացքում Մնծուրին գրել է 225 պատմվածք, 75 ժամանակագրություն, 26 հայրենական գյուղանկար, 12 հեքիաթ, որոնք մի ամբողջական վեպ են՝ ծոնված կորսված հայրենիքին և խելված սերնդին: Իր անձով, իր գրական ժառանգությամբ և ռճական առանձնահատկություններով Մնծուրին յուրահատուկ երևույթ է հայ գրականության մեջ:

Պատմվածքների առաջին ժողովածուն վերնագրել է «Կապույտ լույս» (1958), երկրորդը՝ «Արմտան» (1966), երրորդը՝ «Կռունկ, ուստի՞ կուզաս» (1974), հայրենի եզերքն ու նրա կորուստը խորհրդանշող վերնագրեր: Նրա գրքերի ցանկն ամբողջանում է «Երկրորդ ամուսնություն» (1991) վիպակով, որին հեղինակը մեծ կարևորություն չի տվել և հետմահու տպագրված «Տեղեր, ուր ես եղել եմ» (1983) փոքրիկ գրքով:

Ե՛վ նախաեղեռնյան Արմտանը, և՛ պոլսահայ կյանքը նկարագրող պատմվածքներում Մնծուրին դրսևորել է իրապաշտ գրողի նուրբ դիտողականություն, նա տեսել և վերակերպավորել է Պոլսի գաղթօջախի կենսակերպը, քաղաքի բարքերը, նաև՝ գաղթօջախի քայքայումը, սակայն նրա տաղանդն իր բարձրակետին հասավ հատկապես գյուղը պատկերող գործերում:

Նա ինքն իր հայրենի Արմտանն է, նրա պատմվածքները սյուժետային օղակներով լրացնում են իրար՝ ամբողջացնելով, կենդանացնելով մի ողջ երկիր: Գրելով, «դատապարտված լինելով ընթերցող չունենալ», նա ինքն իրեն ապրեցնում է իր հերոսներով, գրություն նրանց հետ, հիշում, հուշերով ամբողջացնում երկիրը, ինքն ամբողջանում:

Մնծուրին բացառիկ ու անկրկնելի արձակ է ստեղծել, որը, ցավոք, իր շարունակությունը չունեցավ սփյուռքահայ գրականության մեջ:

²Սևան Գ., Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր, (1946-1985) Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, էջ 49:

«Դժվար է բացահայտել Հակոբ Մնձուրու պատում-պատկերների մտերիմ, տաք շունչն ու շնչառությունը, նահապետական գեղեցկությունն ու գրավչությունը,-գրում է Ստ. Կուրտիկյանը,-որովհետև դրանք արշալույսների ու վերջալույսների բոլոր գույներն ունեցող լեռնանկարներ ու դաշտանկարներ են, պետք է տեսնել և զգալ այդ հմայիչ գույների գեղեցկությունը, զգալ հոգեպես»³:

Մնձուրին խորապես ճանաչել է գյուղը, մասնակցել գյուղական իրադարձություններին, այդ պատճառով նրա ստեղծագործությունները չափազանց իրատեսական են՝ բնական հանճարով ստեղծված, մնձուրիական պարզ, անպաճույճ բանարվեստով: Մնձուրու գրական նախասիրությունը արձակ պատումն է՝ նովելային լուծումով: Պատմվածքի ավանդական կառուցվածքից միանգամայն հեռու նրա պատումները մի նոր դուռ են դեպի ավետյաց երկիր: Ամեն մի բացվող դուռ նոր հոգեբանական վիճակ է պատկերում, նոր մանրամասներով հանդես են գալիս գյուղի մարդիկ, մայրերը, հարսները, շինականները, անասունները, քարերը, լեռները, աղբյուրները՝ յուրաքանչյուրը մի խոսուն հերոս: Վկա եղածի մանրամասնությամբ և ազգագրական ճշտությամբ նա «ճմռված պատահիկներից» ամբողջացնում է հայրենի եզերքի դիմագիծը:

Գրականագետ Գեղամ Սևանը Մնձուրու հերոսները համակարգում է եռանկյունու մեջ, որի երեք կողմերն են Ա-մարդիկ, Բ-անասուններ (կենդանական աշխարհ), Գ-բնություն: Մինչ Մնձուրին այսպիսի երևույթ չկար հայ գրականության մեջ: Նրա կերտած հերոսներն իր նման պարզ են, միամիտ, հայրենի հողին կապված: Նրանք նաև ցայտուն ընդգծված բնավորություններ են, որոնք հայ գրականության մեջ մնացին որպես հայ գյուղացու կերպարն ամբողջացնող անհատականություններ:

Մնձուրու կերպարներն այնքան կենդանի են, որ երկար ժամանակ մնում են հիշողության մեջ՝ իրենց լավ ու վատ, ծիծաղելի և ողբերգական նրբերանգներով: Նրա հերոսները, մայրերն ու հարսներն են (հարսիկ ասելով նրանք մայր էին հասկանում, մայր ասելով՝ տատիկ, մեծ մայր), որոնք իրենց ուսերին մի ամբողջ գերդաստանի ծանրություն էին տանում, երբ տան տղամարդը դարիբության մեջ էր, իսկ դա հաճախ էր պատահում («Մեծ մայրերը», «Նազար», «Ըստամբուլ», «Սիլա»): Աղջիկներին հաճախ ամուսնացնում էին իրենցից տարիքով փոքր, դեռ չհասունացած տղաների հետ, որովհետև տանն աշխատող ծեռք էր պետք («Իմ տղայությանս»): «Իմ տղայությանս իմ գավառիս, ինչպես՝ իմ գյուղիս մեջ փոքր տարիքով տղաքը կարգելը հաճախադեպ էր: Իմ երկրացիներս շատ բնական կգտնեին այս կարգի ամուսնությունները»⁴: Նուրբ հումորով նա փաստում է, որ տղա կարգելն այս պարագայում ընտանիքի պահպանման, բանող ծեռքի ապահովման պատճառ էր, ոչ թե նոր ընտանիք ստեղծելու և սերունդ ունենալու միտում, դա կատարվում էր ավելի ուշ: «Գալենց Բահար մամային թոռը՝ Աղվորը, ինչ էր: Բա-

³Գարուն, 1979, N6, էջ 43-44:

⁴Մնձուրի Հ., «Երկեր», Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 208:

նի՞ մըն էր: Ինք ծնած չէր, որ հայրը մեռեր էր՝ կպատմեին: Ան ինձմե ալ պզտիկ էր: Ես մայրենի լեզու կկարդայի, ան հեգարան կկարդար, երբ մամը, հորքուրները, մորքուրները, ժողովեցան ու կարգեցին»⁵:

Մնծուրին պատմվածքի հերոս է դարձել նաև գյուղի աղաներին, վաշխառուներին՝ պատկերելով նրանց անհոգի և անխիղճ վերաբերմունքը: Անարդար անտարբերության մասին են «Կուզիկ», «Քեմը», «Մարտո» ստեղծագործությունները: Երբեմն նրանց հանդգնությունը հասնում է անբարոյության: («Երկար թևերով Նշանը»):

Պանդխտության թեման շատ է շոշափվել Մնծուրու արձակում, այս համատեքստում նա սոցիալ-հասարակական հարցեր է առաջ քաշում: Մնծուրին շատ լավ ծանոթ էր պանդխտության պատճառներին և ականատես՝ հետևանքներին: Սա անխուսափելի երևույթ էր արևմտահայերի համար: Պանդխտության առկայության փաստն այսպես է բնութագրել Զր.Մաթևոսյանը. «...Կառավարությունը չէր կարող հարկերը մասնաբերելով ժողովել, երկիրը ճանապարհներ չուներ, եթե ժողովելու լինի՝ լեռնուտ երկրի չորս արահետները այդքան մթերքը ծովափ քաշել, հարկերը դրամով էին գանձվում, իսկ գավառը դրամ չուներ, որովհետև գնորդ չուներ: Այդ դրամի ետևից գյուղն իր տղամարդուն քաղաք էր դրկում՝ Պոլիս, Եվրոպա, Օդեսա, հեռավոր Ամերիկա»⁶:

Քաղաքներում նրանք քաղաքացի չդարձան, իսկ հայրենիքը հեռու էր, կարոտախտը՝ թանձր, անմարսելի: Որպես մխիթարություն մնում էին հայրենակիցների երբեմնի հանդիպումները, կցկտուր հարցուփորձերը և տուն ուղարկած դրամն ու նվերները: Թեմայով հեղինակը նաև բարոյահոգեբանական հարցեր է բարձրացնում՝ նկարագրելով սեռական առողջ, չքողարկված բնագոյների արթնացումը: Սա տղամարդկանցից դատարկված գյուղերի տիպական ցավն ու ողբերգությունն է: Ենթատեքստում Մնծուրին նուրբ ու դիպուկ կերպարներ է բերում, որոնց՝ մշակութային կյանքից և հասարակական հետաքրքրությունից հեռու լինելը երբեմն տեղի է տալիս սեռական բնագոյների դրսևորմանը («Բոբիկ ուտքերով Մկրտիչը», «Հաց ուզելու պես», «Էյուլա աղան», «Երեկ ու՞ր էիր», «Գարնան ճանփով», «Ցորնիկին Գրիգորը», «Քեռիին տունը», «Երկայն բեխերով Ազիկը», «Երկայն թևերով Նշանը», «Գյուղի տղայություն»):

Սիրո փիլիսոփայությունը ազգային սովորությունների առանցքում. այս մասին է «Փշատին ծաղիկը» պատմվածքը: Ավանդապաշտ մոր համար անընդունելի է նշանված աղջկա հանդիպումը սիրածի հետ:

«Աղջի դուն ինտո՞ր հետը կերթաս, կնստիս: Թող նշանածդ ըլլա, մինչև որ չպսակվիս՝ քու ինչդ է, քու էրիկդ է: Դուն ինտո՞ր գացիր, չալուններուն մեջ նստար: Վաղը մահանա մը ընե, քեզ չառնե, ի՞նչ պիտի ընես: Ծամերուդ մեջ փշատին ծաղիկն, որ չտեսնե՝ իս պիտի խաբեիր, շիտակը պիտի չըսեիր»⁷:

⁵ Մնծուրի Զ., «Երկեր», Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 209:

⁶ Նույն տեղում, էջ 523:

⁷ Նույն տեղում, էջ 234:

Մնծուրին չի փորձում իր հերոսներին ուղղորդել, դաստիարակել, մի զարմանալի անկողմնակալ վերաբերմունք ունի, որն ավելի առիթն է դարձնում նրա արձակը և անգամ բացասական երևույթի հանդեպ կարոտն ավելի շատ է, քան ատելությունը: «Արձակագիրը, գրում է Ստ. Կուրտիկյանը, - հոգեբանական խորացումների չի ձգտում, ինչպես, ասենք, Համաստեղը, որ վարպետի խնամյալ ոճով աստիճան առ աստիճան վերլուծում, բացահայտում է կյանքի հոգսերով տառապող արևմտահայ գյուղացու հոգեկան խոր ապրումները՝ պատմվածքը հասցնելով արվեստի անթերի, բարձր մակարդակի»⁸:

Նրա հերոսները հաճախ պատկերված են նախնադարյան մարդկանց հոգեվիճակով, վարք ու բարքով, սակայն նրանք զարմանալիորեն բնական են: Տարբեր բնավորությունների միախառնումից ստեղծվում է մի զարմանալի կարոտ արևմտահայ մարդու հանդեպ: Այդ մարդկանց հիշել մեր օրերում նշանակում է շարունակել նրանց, շարունակել նրանց կիսատ թողած կյանքը:

Միայն հայերի մասին չի խոսել Մնծուրին, նա գրականություն է բերել թուրք, քուրդ, ղզրլպաշ, ասորի, հույն կերպարներ՝ իրենց սովորություններով, ավանդություններով, ծեսերով՝ «Ծիկառան», «Էլիֆ», «Ամնան», «Եյուլպ աշան», «Դուռուշայցիները», «Ես կրսեմ այս մարդը հայ չէ» և այլն՝ սրանով անգնահատելի նպաստ բերելով հայ ազգագրությանը: Նրա «Կռունկ, ուստի՞ կուգաս» ժողովածուի երեսունմեկ պատմվածքները արևմտահայ գյուղի ազգագրական-տոհմագիտական հանրագիտարաններ են:

Վավերականացնելով ոչ հեռու անցյալը՝ արձակագիրն էջ առ էջ պահպանում է կորսված հայրենիքի յուրաքանչյուր երևույթ, պատկեր-կերպար:

Հիացնումքով է խոսում հայրենի երկրի սովորությունների, կերակրատեսակների, տոնախմբությունների, հարսանիքների կազմակերպման, անգամ թթուների պատրաստման մասին («Մենք ի՞նչ կիազնեինք», «Մեր ժամը», «Ոսկի տեղաց Ելբակյանի հարսանիքին»): Տալիս է կենցաղավարության մանրամասներ:

Մինչ Հակոբ Մնծուրին հայ գրականության մեջ ոչ ոք այսքան մանրամասնորեն չի խոսել հայրենի բնաշխարհի, քարերի, ծաղիկների, ձորերի, կենդանական աշխարհի մասին: Նրանից հետո էլ այս գրելաոճը ոչ ոք չշարունակեց: «Բնության մնծուրիական գյուղականարները», «Վրնձահարումների» նման են, հիշեցնում են Վան Գոգին կամ Մարտիրոս Սարյանին, որովհետև բնությունը հասարակաց շատ կոդներ ունի, արևով շիկացած ժայռերի ու արտերի վրա՝ լինի դա Միջերկրականի ափին, ծովեզրի գյուղ ու դաշտերում, թե Հայաստանի բարձրաբերձ լեռներում կամ Արարատյան դաշտավայրում, կամ էլ Արևմտյան Հայաստանի «անցյալի» Արմտանում⁹, - նշում է Գ. Սևանը:

Կորսված հայրենիքի դիմագիծն ամբողջական պահելու համար Մնծուրին դիմել է յուրօրինակ ժանրաձևի՝ ստեղծել է հայրենական

⁸ Գարուն, 1979, N 6, էջ 44:

⁹ Սևան Գ., Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր, (1946-1985), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, էջ 51:

գյուղանկարներ: Հետագայում նա գրել է՝ «Աչքերս լեցուցի բոլոր տեսածներովս, բոլոր լսածներովս, զոր գրեցի և պիտի գրեմ»:

Նրա պատկերած աշխարհն այսօր չկա: Բայց կա կարոտաբաղձ մի գրականություն, որտեղ միշտ ապրում են Մնձուրի ծովագուլն լեռնաշղթան, Արմտանը, Կավին դարը, Ակնը, Տիվրիկը, Երզնկան, Արաբկիրը, Չմշկածագը, Կապուտուլուն լեռնաշղթան:

Արձակագիրը «քարտեզագրել է» (Հր. Մաթևոսյան) այս ամենը, բնաշխարհի մանրամասները և սա միայն բնաշխարհին չի վերաբերում, այլ՝ արևմտահայ մարդու ողջ կենսակերպին: Տեղանունների հիշատակումը տոհմածագունաբանական միտումից բացի մի այլ կարևոր նպատակ ևս ունի. Մնձուրին շեշտում է, որ այդ վայրերը հայկական և հայաբնակ են եղել, կենդանի, «համարյա թե երեկ տեսածի պես»: Մարդը, կենդանին, բնությունը միաձուլված են Մնձուրու արձակում: Դրա վկայությունն են «Մեր կարմիր եզը», «Սուրբ Գևորգ», «Բարի լույս, Սարգար աղա», «Տյուկե մամու եզը» ստեղծագործությունները:

Հակոբ Մնձուրու պատմվածքներն ընթերցելիս հանդիպում ես մի զարմանալի հակադրության. եղեռն ապրած, հարազատներին, կնոջը, ընտանիքը կորցրած հայր չի խոսում ջարդի մասին: Գրականություն բերած նրա պատկերները մեծամասամբ նախաեղեռնյան հայրենիքի մասին են: Ցավ, տառապանք, մահվան տագնապ, կորուստ, ահասարսուռ տեսարաններ նա չի նկարագրել և սա բխում է մեծ գեղագետի ցավի, զգացմունքի ինքնատիպ արտահայտությունից՝ առանց այդ ցավի մասին խոսելու:

«Մնձուրու գործերում եղեռնը հանդես է գալիս յուրովի խորքային լռությամբ, որը կարելի է անվանել լռության ճիշ: Այն չի ցուցադրվում և կամ նկարագրվում: Այդ գրականությունը «խոհի ու խոկունի գրականություն է», որում ամեն ինչ ասվում է տողատակով ու տողամեջով, և հեղինակային ասելիքը պետք է տեսնել բառերի սահմանից այն կողմ չասվածի մեջ, ավելի ստույգ՝ ասվածի, բայց չգրվածի մեջ, իսկ էլ ավելի ստույգ՝ այդ գրականության իմաստը պետք է տեսնել ոչ թե կարդացածի, այլ զգացածի մեջ»¹⁰:

Գրականության մեջ չի ճչացել, սակայն «Մարմարա» թերթում տպագրված հարցազրույցներում նա այսպես է արտահայտվում. «Իմ պարագաս բացառիկ է գրականություններու պատմություններում մեջ: Ես կրպատմեմ տեղե մը, ուր այլևս չկան իմ անձերուս ու անոնց շարունակությունը: Իմ պատմվածքներս միայն պատմությունն չեն: Իմ անձերուս և տեղերուս ազգագրությունն է, ազգային պատմությունն է... Անոնց պանթեոնն է»¹¹:

Հակոբ Մնձուրու կյանքը բզկտված արևմտահայ մարդու խորհրդանիշ է, նա կորցրեց հայրենիքը, ապրելու կենսավիշը և, թվում է, շատ շատերի նման պիտի չդիմանար, բայց ապրեց՝ դառնալով կորսված մի ամբողջ եզերքի կենդանի, զվարթ վկայակոչողը, որով անխաթար է պահել հուշը, երկիրը, մարդկանց: Նա այդ ամենը դարձրել է ներկա՝ իր համար, ընթերցողների համար, իսկ սերունդների համար՝ աներևակայելի իրականություն:

¹⁰ «Գրական թերթ», 31.08.2014թ.:

¹¹ «Մարմարա», 1967, ապ. 25:

РЕЗЮМЕ

Татев Согомонян Невообразимая реальность

В статье рассматриваются произведения талантливого прозаика армянской диаспоры Акопа Мндзури, его эстетические склонности и мастерство в создании образов.

Писатель вводит в литературу целый потерянный край со своим бытом, человеческими характерами и природой, выбирая темой для своих произведений Артман и жизнь Западной Армении.

Писатель, переживший геноцид, не упоминает о геноциде, однако описанный им край настолько красив и естественен, что читатель чувствует боль потери, слышит крик молчания, скрытый между строками.

SUMMARY

Tatev Sghomonyan Unimaginable Reality

The article investigates the works of the talented prose writer of the Armenian diaspora Hakob Mndzuri, his aesthetic inclinations and skills for creating images.

The writer introduces lost region with its way of life, human characters and nature, choosing the theme of his works Artman and Western Armenian life.

Writer, the genocide survivor, makes no mention of the genocide, but the region described by him is so beautiful and natural that the reader feels the pain of loss and hears the cry of silence hidden between the lines.

ԶՈՒՆՐԱ ԵՐԿԱՆՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՈԳՈՒ ՄԱՔՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՍՔԵՐ (ԳԱՆՇՈՅԱՆԻ «ԱՆԹԵՂԱԾ ՈԳԻ» ԵՎ «ՕՐԻՈՐԴ ՄԱՐԻ» ԱԿՆԱՐԿՆԵՐԸ)

«....Եթե յուրաքանչյուր սպանված հայի համար գեթ մի մոմ վառվի՝ այդ մոմերի ցուքը լուսնի լույսից վառ կլինի»¹:

Աբրամ Այլիսլի (ազերի գրող)

1960-ականներին, երբ «մի փոքրիկ ձեռք բացվեց սովետական երկրում մտքի ու խղճի առջև, ու Հայ հայը Հայաստանի ամեն քունջ ու պուճախում հայկական միտք էր հայտնաբերում»², նոր շեշտադրումներ են հաստատվում թե՛ գեղարվեստական, թե՛ հրապարակախոսական գրականության գործառնությունների մեջ: Ազգային ոգու հաղթանակն ավելի ազատորեն է մուտք գործում գրականություն. այն գրողների ներքին դաշտ է մտնում և հնարավորություն տալիս նոր հոգեբանություն ձևավորելու և բարոյապես վայելելու ազգային զարթոնքի իրողության գաղափարը: Այդ գրողներից էր նաև **Մուշեղ Գալշոյանը**, որի գեղագիտական աշխարհում բարձրագույն արժեքների շարքում իրենց հիմնարար տեղն ունեն կորուսյալ հայրենի եզերքն ու նրա եղեռնահար զավակները, որոնցից ողջ մնացածները «աշխարհի դեմքին դաշված խճճված կածաններով» մի օր հասել են Արաքսի այս ափը և «շաղ տված մի բուռ կորեկի պես» ամեն տեղ ընկել-մնացել: Նշանավոր փիլիսոփա Լիխտենբերգի միտքը, թե՛ «Մահը մշտական մեծություն է, իսկ ցավը՝ փոփոխական, որ ընդունակ է անվերջ աճելու»³ իր կենսական հավաստումը կարող է ստանալ մեզ հայերիս, վկայաբերումով. այդպես Մեծ եղեռնի ցավն է մեզ համար դարձել «անվերջ աճող». դրանից էլ ածանցված՝ ազգի քաղաքական ճակատագրի մեկնաբանության խնդիրների գեղարվեստական մեկնակետերն են անընդհատ նոր որակներ ձեռք բերում: Մուշեղ Գալշոյանը իր արձակով դարձավ այդ նոր որակների գոյավորողներից մեկը արևելահայ գրականության էջերում: Եվ քանի որ նրա ներքին կյանքի անփոփոխականներից էին *էրզրի ու էրզրացների* կորստյան ցավի պատմական և կարոտի կենսաբանական հիշողությունները, ուստի և օրինաչափորեն նրա հերոսների բարոյական աշխարհը կարգավորող գերակա սկզ-

¹ Այլիսլի Ա., Քարակերտ երազներ (թարգմ.՝ Դ. Սողոմոնյանի և Լ. Գալստյանի), Երև. պրինտ, Եր., 2013 թ. էջ 144:

² Այվազյան Ա., Երկրի վրայի զբաղմունքը, «Նաիրի» հրատ., Եր., 1993 թ. էջ 126:

³ Լիխտենբերգ Բ.Գ., «Աֆորիզմներ», Երևանի համալսարանի հրատ. 1979, էջ 151:

բունքներից մեկն էլ հազարավոր սասունցիների նահատակության ողբերգության ոգեղենացումն էր:

Մուշեղ Գալշոյանի արծակի հետաքրքրական էջերից են գեղարվեստական ակնարկները, որոնց համար հիմք դարձած նախադրյալները նա քաղել է ինչպես իրական, կենսական միջավայրից, որտեղ ձևավորվել են նրա հերոսների ինքնակերպ աշխարհընկալումներն ու բնավորությունները, այնպես էլ ջարդ ու կոտորածի, գաղթի տեսական պատկերացումներից: Հաճախ է գրողը այս կամ այն ակնարկում (կամ պատումի մեջ ներթափանց) ներկայացնում մեկ այլ չափումով ժամանակի ու տարածության մեջ տեղի ունեցող իրադարձություններ ու դեպքեր, որոնք վերհուշի միջոցով գոյավորվում են գիտակցական դաշտում: Նման ակնարկներում, որոնք իրենց տեսակով ավելի շատ միտվում են դեպի նորավեպի սեռը, հեղինակը լավագույնս իրականացնում է իր գաղափարագեղագիտական ծրագիրը: Այդ առումով, մեր կարծիքով, առավել ուշագրավ են «Անթեղված ոգի» և «Օրիորդ Մարի» ակնարկները, որոնք մարդկային ներաշխարհի խոր ու նուրբ վերլուծություններով, գեղարվեստական տարբեր հնարանքներով բովանդակության հուզականությունը ծայրաստիճան լարված պահող բարձրարվեստ գործեր են:

«Անթեղված ոգի» ակնարկը հայ մամիկի աներևակայելի ոգու՝ հզոր շեշտադրումներով մի փառերգություն է, որում արվեստավոր խոսքի մեծ գործւթյամբ տեսանելի է դառնում ցեղասպանության պատմական ճշմարտությունն իր սոսկալի էությամբ: Եվ դա արվում է ճիշտ ընտրված գեղարվեստական հնարքի, ստեղծագործական վարպետ հնարանքի գործադրմամբ՝ իրական ժամանակի ու տարածության մեջ ներթափանց քրոնոտոպի ստեղծմամբ:

Ակնարկի փոքր տարածքում ասելիքը ծավալվում է խորաշերտերով: Ոգու գեղարվեստականացման ուղին սկսվում է սահմնկեցուցիչ խոսք-պատկերով, որի սկիզբը՝ «Գիշերը պատանքեց մորթված գյուղը»⁴, ընթերցողի մտային տիրույթ է թափանցում իր ամբողջ չարագուծությամբ՝ արթնացնելով ժառանգաբանական (գենետիկական) մակարդակում պահպանվող այն ցավը, որ զուտ հայկական է, որից հայ մարդը չի ճնշվում, չի ընկճվում, այլ համակվում է զորավոր մի զգացողությամբ, որ տակուվրա է անում վրեժխնդրության անթեղը:

Գյուղի տիրազուրկ տները կան, թոնիրները կան... Գյուղը կա, և մարդու կողմից ստեղծված այդ համատարած *կայի* մեջ արծակագիրը մեծ վարպետությամբ ընդգծում է տիրոջ՝ արարչաստեղծ մարդու *չկայության* ողբերգությունը. ճիշտ մեծ Րաֆֆու խոսքով՝ «Միայն մարդը չկար»:

Բնություն-պատկեր տիրույթում ակնարկագրի գրիչը հասնում է

⁴Գալշոյան Մ., Քեզ վերևից չպետք է նայել, «Նաիրի» հրտ., Եր., 1990 թ., էջ 198: Այսուհետև այս ժողովածուից մեջբերումները կտրվեն շարադրանքում միայն էջանշումով:

բարձրարվեստ գեղարվեստականության. ոճագործության վկայերինքը «սևերես» է, երկնքի մի բուռ ձերմակ ամպն անգամ բզկտված ու հալածված է... Մորթված գյուղը լցվել է գիշատիչ աչքերով, ագռավների կռինչով ու շների կաղկանձով: Չարագործության ահազանգերը սաստկանում են. «Կրակեցին կաղկանձող շների վրա, մարագների պատերին մլավող կատուների վրա: Շունչ չափի մնա, շունչ» [198]: Գյուղը («Ուր մարդու գործից գա՛լն էլ է նողկում»⁵) մորթվել էր, խեղդվել արյան մեջ: (Ջարդ ու կոտորածի, նրանց հետևանքների պատկերները հայ գրողների գործերում (արձակ թե չափածո) ցնցող են, գիտակցական ու զգացական մակարդակներում խորապես ողբերգական: Զուգադրական նպատակներով անգամ հնարավոր չէ իրար կողքի բերել օրինակներ: Թերևս թեմատիկ հարազատությունը նկատի առնելով՝ Ա. Բակունցից մեջբերենք. «Ամպերի փոխարեն քարափների վրա նստեց այրվող գյուղերի մուխը: Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և սերմ, և՛ սերմնացան»⁶, «Մարութա սարի գլխին գալարուն պար բռնեցին արնագույն բոցերը» [198]):

Գյուղը համրացել էր. «Հովիվները «ծեն-ծենի» չտվեցին: Արշալույսը գնդակահարել էին, արնոտել դեմքը: Գյուղի ժամացույցը կանգ էր առել», մամիկը «հոգու խորքում ճչաց, իսկ չորացած շուրթերի վրա նվազեց ճիչը» [198]: (Ներհայեցողական վիճակներ արտացոլող **լռություն-համրությունը**՝ Գալշոյանի ակնարկներում հաճախ դառնում է հոգեզգացական ապրումների խտացում, երբեմն էլ՝ անձնացվում-անհատականացվում՝ արտահայտելով երևույթի տիպական բովանդակությունը. «**Լռությունը երկյուղի պես սողաց հոգու մեջ, ծնկները ծալվեցին**» [199], «Աչքերի առջև՝ Արթենի հացատան բրգաձև կտուրը, երդիկի վրա՝ կտոտված օձի նման **լռությունը...**», «**Երդիկին շուրջպար բռնած չարք-լռությունը խեղդվեց**» [200], «**Ջսպված մի լռություն կա՝ ներշնչված պահի պես, որ հետո պիտի ճիչ դառնա**» [272]...):

Համատարած համրության մեջ հեղինակն անսպասելի ձայնախազեր է մտցնում. հանկարծ մի դուռ է ձռնչում, վիրավոր գլխով մի մամիկ է դուրս գալիս, աղոթարանի սալաքարի վրա չորքում ու հառաչում ճիչ-մրմունջով՝ Աստված կա՞... Սա սոսկ ցավի հառաչանք չէ, ցավի ճիչ չէ. սա անգոր ցասման խեղդված մռնչյուն է: Նման հոգեցունց ապրումի շատ դիպուկ բնորոշման ենք հանդիպում ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկու տողերում. «Այն զգացումը, որով համակված կանգնում ես ջարդ ու ավերմունքի վայրում, ոչ մի բանի հետ չի կարող համեմատվել վշտի և ցավի ուժով: Անուղղելի չարիք, անջնջելի խայտառակություն, անգոր ցասում մարդկային հոգուն հասցված անարգանքի համարե՞: **«Անգոր ցասում մարդկային**

⁵Շիրազ Դ., Ընտիր երկեր, 5 հ-ով, հ.1, («Հայոց դանթեականը»), «Շուշան» հրտ., Եր., 1992, էջ 15:

⁶Բակունց Ա., նշված աշխ., էջ 200:

⁷Գորոդեցկի Ս., Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Եր., 1980, էջ 39:

հոգուն հասցված անարգանքի համարե. ասես Գաշոյանի կերտած ծեր մամիկի ապրումն է բանաձևված, և էլի քանի՝ հարյուր հազար մամիկների...

Իրականության պատկերի ցնցող արձագանքը հերոսի հուզաշխարհում, ինչպես և հերոսի ապրումներն ու զգացմունքները այնքան խորն են տիպականացված, այնչափով են դուրս գալիս նեղանձնական շրջանակից, որ ընդամենը չորսուկես էջանոց պատումը վերածվում է ընթերցողի խոհերն ու զգացմունքները գերլարված պահող քնարական ծավալուն զեղումի: Հայ օջախը վառ ու շեն պահող կնոջ կերպարը մարմնավորող մամիկի չորսբուրդ մորթված, զարկված հարազատներն ու համագյուղացիներն էին: Երբ նրանց մեջ տեսավ Լուսիկ հարսնուկին, որ երեկ նույն ժամին թոնիրն էր վառում, մի խենթ ցանկություն «վրնջաց մամիկի հոգում»։ Նա որոշեց վառել գյուղի երեք հարյուր ծխի երեք հարյուր թոնիրները: Փիթեր Բալաթյանը իր «Ճակատագրի սև շունը» հուշագրության մեջ գրում է. «Եղեմնից հետո մահվան սարսափը տարբերվում է մահկանացու լինելու մտահոգությունից»: Մահվան սարսափը սառել թաղվել էր եղեմնահար գյուղի պատկերի մեջ. փոխվել էր մամիկը. մահն առել էր ոտքերի տակ և վերջին ձիգերը հավաքելով՝ վառել գյուղի բոլոր թոնիրները: «Երդիկներից բարձրացած ծուխը լիզում էր տների կտուրները, տների փոշոտ քարերը, Մարութա սարից իջած հովի պես շոյում արևի տակ անթաղ մնացած մարդկանց» [202]: Իսկ դիմացի սարին հայտնված ասկյարները սարսափահար էին եղել՝ տեսնելով գյուղի «կենդանացումը»:

Գալշոյանի այս գործը անհատականացված գեղարվեստական պատկերների միջոցով եղելության, իրական երևույթների պատրանքի ստեղծումով գրված լավագույն ակնարկներից է:

Ոգու գեղարվեստականացման ուղու ավարտը, որ ամփոփված է ստեղծագործական մտածողության մեջ, մամիկի՝ թոնիրները վառելու գիտակցական ձգտումը ենթագիտակցական շերտում վերածում է թուրք հավաքականության անբարոյ էության դեմ ցասման և ընթոստության պոռթկման: Վերջինս, անշուշտ, հենց նույն՝ ենթագիտակցական ոլորտում էլ ոգու մաքրագործմամբ պարզվում է բարոյական հաղթանակի բերկրանքը: Թերևս դրանով է փրկվում մամիկը (այս դեպքում՝ հայրենագրված և եղեմնահար եղած մարդկանց ընդհանրացված կերպարը) ցնորությունից ու խելագարությունից, որոնցից այլ պարագայում խուսափումը համարյա անհնարին է, քանի որ «խվածներն են անչափելի, ցավն է անչափելի.... վշտի կշիռն է անչափելի, դիպեմենտն են հայոց անչափելի, Հայոց եղեմնն է անչափելի....» (< Շիրագ):

Կորստի, ցավ ու վշտի այդ համատարած անչափելիության պայմաններում հերոսի ապրած ողբերգության գիտակցումը ընթերցողին նախապատրաստում է նրա հոգեբանական կործանմանը, այնինչ ականատեսն է դառնում նրա աներևակայելի վերհառնմանը, ապրել-ապրեցնելու գերիզոր ձգտմանը: Այդ հզոր բնազդը մարդուն հաշտեցնում է «ամեն ծանր կորստի հետ» և սովորեցնում մաքա-

ռել՝ արհամարհելով ճակատագրի սահմանած բոլոր դժվարությունները («Չկա այնպիսի ճակատագիր, որը հնարավոր չլինի հաղթահարել արհամարհելով»,- գրում է Ա. Քամյուն)⁸:

Հայ գրականության մեջ, հատկապես արձակ գործերում իրենց բաժին հասած ճակատագրերն արհամարհելով ապրող ու մաքառող հայ մայրերի ու մամիկների ոգեղենացված կերպարները բոլոր ժամանակներում առանձնացել են իրենց կոթողայնությամբ: Գեղարվեստական գրականության զարգացման ժառանգորդական կապի դիտարկումով տարբեր հեղինակների գործերում նման հուզիչ պատումների, հոգեցնցող պատկերների, ոգու հզորության ու անպարտելիության դրսևորումներով հարուստ դրվագների օրինակներ կարելի չատ նշել: Հիշենք հենց միայն Մեծ Վարպետի՝ Ավետիք Իսահակյանի «Անպարտելի ոգին» պատմվածքը, որի ընդամենը երեքէջանոց պատումում ներկայացվում է «հավերժ ողբալի սպանդից զերծած՝ մի քանի տասնյակ» հայերի՝ ծերերի, կանանց ու մանուկների ողբերգական կյանքի ցնցող պատկերը. «Ցերեկները վայրի բեղվիներն էին գալիս գաղտագողի՝ հածում և հոտվտում տաղավարների շուրջը, առևանգելու համար վայրագ թուրքերի աչքից ճողոպրած գեղեցիկ աղջիկները, իսկ գիշերները անապատի մեռելային լռության մեջ բորենիներն էին ոռնում արյան և դիակի անհագ ծարավից»⁹: Եվ այս մարդիկ, որոնց «հայացքների մեջ մշտական սարսափն էր սառած», այնուամենայնիվ, անպարտելի էին իրենց ոգով. նրանք, աչքերում «անմեռանելի հույսի մի կայծ» պահած, անապատի շեկ ավազի վրա ցուցամատով տառեր գծելով, հայերեն գրել-կարդալ էին սովորեցնում «ցնցոտիներով ոսկրացած մերկությունը» ծածկած իրենց երեխաներին, որոնց շատերի համար անապատի այդ ավազները դարձան «պատանք ու գերեզման, անխաչ և հավիտյան կորած ու անհայտ...»:

Առաջին հայացքից թվում է, թե թեմատիկ հարազատություն չունեն Իսահակյանի՝ օրինակ բերված պատմվածքն ու Գալշոյանի «Անթեղված ոգին»: Բայց այս երկու բարձրարվեստ գործերը ավելի քան հարազատ են ոչ միայն վերնագրերի ոգեղենությամբ, այլև այն առնչություններով, որոնք բացահայտվում են իրար մոտ, իրար հետ համընկնող երևույթների ներքին միասնության ու ընդհանուր օրինաչափությունների զուգահեռ քննության դեպքում: Երկուսում էլ հայ կանայք (ամեն մեկը յուրովի) իրենց ոգեպահպան գործն են անում՝ ձեռնոց նետած դաժան իրականությանն ու թուրքական ցեղասպան քաղաքականությանը. ծեր մամիկի արարքը հայոց տան՝ օջախի կրակի անթեղը անհանգչելի պահելու խորհուրդն ունի, իսկ գիր սովորեցնող մոր արարքը՝ հոգևորի պահպանման. ըստ էության՝ երկու այդ գորավոր արժեքներով միասնականացված գոյն է ազգի լինելիության գրավականն ու հարատևելու երաշխիքը:

⁸Քամյուն Ա., Սիզիփոսի առասպելը, Եր., 1995, էջ 137:

⁹Իսահակյան Ա., նշվ. ժող., էջ 340:

Գալշոյանը լրագրողական իր ճանապարհներին հանդիպած սովորական, իրենց դժվարին օրերն ապրող գաղթականների մեջ գտել է առանձնահատուկը, իր ամենատես աչքով նկատել նրանց մարդկային ազնիվ ու գեղեցիկ տեսակը, զգացել հայրենակորույս այդ մարդկանց վերապրելու ձգտման զորությունը և գեղարվեստորեն գոյավորել դրանք իր ակնարկներում:

Բովանդակության դրամատիզմով, կենսական նյութի գաղափարական մեկնաբանությամբ ու պատումի հյուսվածքով առանձնացող գործերից է «Օրիորդ Մարի»-ն: Այս ակնարկը, որպես գեղարվեստական խոսքի բարձրարվեստ արտահայտություն, անկրկնելի է հատկապես բարոյահոգեբանական ապրումների խորաշերտերով: Բովանդակային իմաստով այն գրողի կենսափիլիսոփայության արտահայտությունն է, նրա արձակին հատուկ պոետիկայի ու գեղագիտության խտացումը:

Ակնարկի պատումում եղեռնագարկ մարդկանց բազում ողբերգություններից ցավոտ մեկն է առանձնանում. դա հերոսուհու՝ տարիների հետ խորացող միայնության ու անտերության զգացողության անանց ողբերգությունն է: «Արդեն շատ էր որբ: Շատ, շատ: Ախր որբությունն էլ իր տարիքն ունի: Ինչ-որ ժամանակ դուրս են գալիս որբությունից»¹⁰: Սակայն օրիորդ Մարիի որբությունը տարիք չառավ, նրան չլքեց, դարձավ նրա անբաժան ուղեկիցը, «պոկ չեկավ իրենից, չուլավեց-մնաց»: Պատկերի միջոցով արձակագրին հաջողվել է անձնացնել, անհատականացնել որբության գաղափարը՝ այդպիսով արտահայտելով երևույթի տիպական բովանդակությունը:

Ջարդ ու կոտորածի դաժանության ամբողջ ծանրությունն զգում ենք օրիորդ Մարիի «ծերացած ալբոմի» էջերում ծվարած «ճամպուկավորված ճամփորդ» հուշերից: Աշխարհահեռակ աստղագետ Գրիգոր Գուրգադյանը, մարդուն՝ որպես տիեզերական մարմիններից մեկը, մնացածից առանձնացնում է մի ամբողջ շարք ինքնատիպ և ուրույն հատկություններով՝ առանձնաշնորհություն տալով դրանցից հատկապես երկուսին՝ որոշում կայացնելու ունակությանն ու հիշողությանը: Ահա ինչպես է բնորոշում մարդու հիշողությունը. «Այդ հատկությունը կառավարում է նրա վարքագիծը. դա մի ամբողջ աշխարհ է, նրա ողջ էությունը: Հանք հիշողությունը, և մարդը մարդ չի լինի այլևս»¹¹: Օրիորդ Մարիի հետեղեռնյան կյանքի ամբողջ ընթացքը, նրա միկրոաշխարհը, «նրա ողջ էությունը» և վարքագիծը, իրոք, կարգավորվում ու կառավարվում են անցյալից իրեն անդալաճան մնացած հիշողություններով: Նա գաղթական հայերի այն սերնդից է, որն օտար երկրներում երկար թափառելուց, անտերության տառապանքն ու ողբերգությունը ապրելուց հետո էր հասել Հայաստան:

¹⁰Գալշոյան Մ., Ի տեղ բաց նամակի, «Նաիրի» հրտ., Ե., 1994, էջ 291:

¹¹Գուրգադյան Գ., Մի սիրտ պատմություն, «Ձանգակ-97» հրտ., Ե., 2004, էջ 93:

Ակնարկի առանձնահատկություններից է պատումի ներքին դրամատիզմը, որի հիմքում ընկած են անցյալի դաժան իրականության վերապրումները, հերոսուհու հոգեկան-զգայական լարվածությունը, կրած զրկանքների, տառապանքների ու դառն հուշերի թանձրացումները, որ մշտապես անբացակա են հերոսուհու ներաշխարհից: Անցյալում մնացած դեպքերն ու դեմքերը, անցած օրերի հուշերն ու վերհուշները՝ հազեցած կարոտի կանչով ու թախիծով, զգացմունքային նախահիմքն են այն քնարական ապրումի, որից արտածվել է գալշոյանական ստեղծագործությունների մեծ մասը: Ակնարկի թեման, ըստ էության, պատմական իրողության խոր, ցավագին ընկալման, կենսականորեն վավերական փաստերի համադրություններով հյուսված մի պատմություն է:

Անցյալի որոշ դրվագների ներհյուսումը պատումի մեջ նպատակային է. գրողը ցանկանում է դրանց արթնացումով, հուշի կերպափոխումով միշտ նորոգ պահել հայրենակորույս մարդու էթնիկ ոգին:

Ակնարկի պատումի կենտրոնակետը օրիորդ Մարիի՝ սնդուկի մեջ՝ քաթանե ճամպուրկում, պահվող ալբոմն է, որում պահված լուսանկարների մեջ են ծրարված նրա բոլոր հուշերը: Խորհրդանշական է մի պատկեր՝ ավեր վանքի մի նկար էր այն էջի վրա, որտեղ իրենց ընտանիքի խբովի լուսանկարը պիտի լիներ. այդպիսի լուսանկար այդպես էլ չունեցան. հոր, մոր, Օնիկ եղբոր միասին լուսանկարն էր միայն և թափառ ճանապարհներին հարազատացած մարդկանցից ու մեկ էլ որբանոցի իր սաներից մնացած լուսանկարների տեսքով հուշի կտորներ՝ ցաքուցիր, ինչպես իրենց տերերը, որը՝ գաղթի ճանապարհներին մնացած, որը՝ ֆրանսիաներում, որը՝ ամերիկաներում և այլուր («Օրիորդ Մարիի ալբոմում աշխարհի ճամփաները իրենց որբ ու որբուհի ճամփորդներով խճճվում են»): Հերոսուհու կերպարն իր ողբերգականությամբ ամբողջականացվում է հոգեզննական մի պատկեր-եզրակացությամբ. որբանոցից հեռացած և կյանքում իրենց ճանապարհը գտած որբերը օրիորդ Մարիին էին թողնում իրենց լուսանկարներն ու որբությունը, ու ավելի էր մեծանում վարժուհու որբությունը. ժամանակի հետ նա «ավելի շատ էր որբանում»:

Յուրաքանչյուր ժողովրդի ձակատագրական պահերին ավելի ընդգծում են դառնում անհատների ներաշխարհային տեղաշարժերը: Երկրից գաղթած մարդիկ կեցության, գոյաբանական տեղաշարժերի դժվարությունների հաղթահարման թե՛ սոցիալական, թե՛ հոգեբանական լուրջ խնդիրներ ունեին, որոնք գալշոյանական հերոսների անբաժանելի ուղեկիցն են նոր աշխարհաքաղաքական միջավայրում ինքնահաստատման մաքառումների դժվարին ճանապարհին: Ականայից ցանկություն առաջացավ կրկնելու Կոստան Ջարյանի խոսքը՝ *որքան դժվար է հայ լինելը*: Իսկ ինչքան պիտի որ դժվար լինի տնից-տեղից, հայրենի եզերքից զրկված հայ լինելը... Մարին՝ որպես տնագուրկ ու հայրենագուրկ հայերից մեկը, տիպական կերպար է Գալշոյանի ակնարկաշարում:

Սովորաբար գաղթահայությանը վերաբերող ակնարկների կենտրոնական դեմքերը տղամարդիկ են, որոնց կերպարներով ցուցադրվում են հայոց ազգային բնավորության տոհմիկ գծերը. նրանց հուշերով ու նրանց հուշերում ենք տեսնում նաև մեծ ողբերգության ավերմունքը: Իսկ այս ակնարկում (ինչպես և «Անթեղված ոգի»-ում) կնոջ ապրումներով ենք տեսնում կոտորածն ու գաղթը, տառապալից թափառումներն ու կյանքի քառուղիներում կորցրածների անչափելիությունը: Եվ պատահական չէ, որ անցյալի մտապատկերների կենտրոնակետը լուսանկար-հուշեր իր մեջ ամփոփող ալբոմն է:

«Օրիորդ Մարի» և «Անթեղված ոգի» ակնարկների դիպաշարային ենթաշերտերում ամփոփված ասելիքին, կիզակետային միջուկին անդրադառնալիս ավելի է տեսանելի դառնում ցեղասպանության ողջ հրեշավորությունը: Ընթերցողը ոչ միայն կոտորածի ու գաղթի տեսլականից է ցնցվում, այլև կենսականորեն զգում է տառապյալ մարդկանց կսկիծն ու ժառանգում նրանց կարոտի ցավի անթեղը: Իրողության մեկնաբանում-բանաձևումը ավելի լավ չենք ասի, քան սերբ անվանի բանաստեղծուհի Լյուբիցա Միլետիչն է ասում իր «Մի փոքրիկ արև» բանաստեղծության մեջ. «Դու ինձ ասացիր նահատակների արյունը հողում // Ջորավոր է քան դիվաբախ դահձի կեղծիքն անպատկառ»:

Գալշոյանը՝ որպես իր գեղագիտական աշխարհի առանցքը կազմող սասնահայերի հոգևոր արժեքների ժառանգորդ, հայրենի եզերքի նկատմամբ տածած իր անսահման սիրով վարակում է ընթերցողին, համակում այն մեծ ու ցավոտ կարոտով, որ մշտապես արթուն է պահում հայ մարդու ականջականչերը՝ ելած կորսված աշխարհի սար ու ձորերից, կիրճ ու քարանձավներից, Դեր-Ջորի արնամած ավազուտներից:

Սա արծակագրի գեղագիտական հիմնարար ձեռքբերումներից է, թերևս ամենախոսունը:

Բանալի բառեր՝ եղեռնահար, չկայության, անթեղ, դիվաբախ, ականջականչեր:

¹Բանաստեղծությունը Լյուբիցա Միլետիչի «Արարատի հողմերը» («Åàððîââ Åðàðàðà» ժողովածուից է՝ տպագրված «Գրական թերթում» (6 հունիսի, 2014, թիվ 19 (3208), էջ 4):

РЕЗЮМЕ

Зухра Ервандян

**Сказания освещения духа
(очерки Галшояна
"Покрытый пеплом дух" и "Барышня Мари")**

В исследовании выражены наблюдения автора о реалиях сотворения Мушегом Галшояном идейно-художественной программы освещения национального духа.

Мушег Галшоян, в числе внутренних жизненных субстанций которого были воспоминания исторической боли утраты и биологической тоски Эргира и эргирцев, в отмеченных очерках могучей силой художественного слова делает видимым несоизмеримость потерь, мучительных скитаний, резни и миграции, и историческую истину ужасной сущности геноцида.

SUMMARY

Zukhra Yervandyan

**Stories of Spirit Illumination
(Galshoyan's Essays "Ash Covered Spirit"
and "Miss Mary")**

The research depicts the observations of the author concerning the reality of creating ideological and aesthetic program of illumination of national spirit by Mushegh Galshoyan.

Mushegh Galshoyan, the inner existential substances of which include the memories of historical pain of loss and biological nostalgia of Ergir and people of Ergir, in the mentioned essays by means of strong power of a fiction word has made visible the incommensurability of losses, agonizing wanderings, massacre and migration, as well as the historical truth of genocide in its horrible essence.

ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱրՊ համալսարան

ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՐՁԱԿԻ
ԼԵՋՎԱՍՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Գրականությունը արվեստի այն տեսակն է, որը կայանում է միմյայն խոսքի, լեզվի միջոցով: Ուստի լինելով խոսքի արվեստ, մանավանդ գեղարվեստական գրականության համար, պարտադիր անհրաժեշտություն է պատկերավոր մտածողությունը: Որքան արտահայտիչ, ինքնատիպ է լեզուն, նույնքան մեծ է տվյալ ստեղծագործության հաջողության գրավականը: Եվ սխալ է այն կարծիքը, թե գրավիչ վերնագիրը, հետաքրքիր սյուժեն բավարար են լավ ստեղծագործության համար:

Արցախի խորհրդային տարիների գրականության շատ երկերի այսօր դժվար ընթերցվելու պատճառներից է նաև լեզվի խնդիրը, որը, մեր կարծիքով, ժամանակին, մեղմ ասած, չի կարևորվել հեղինակների կողմից: Արդյունքում ունենք հիմնականում միանման պատմվող տարբեր սյուժեներով պատմություններ, ինչն էլ իր հերթին նման է միաձայն երգ-չախմբի ելույթի: Ուստի գրականության լեզվի պատկերավորման յուրահատկությամբ է հեղինակը հասնում անհատականության: Ի վերջո, բարձրագույն տեխնոլոգիաների մեր ժամանակներում ապրող յուրաքանչյուր մարդ կարող է շարադրել հետաքրքիր, ինչու՝ ոչ, նաև՝ հուզիչ սյուժեով պատմություն, սակայն այդ շարադրանքը դեռևս գեղարվեստական ստեղծագործություն չէ, եթե բացակայում է պատկերավոր մտածողությունը, հեղինակային խոսքի ինքնատիպությունը, նաև գեղարվեստական բազմաթիվ այն արտահայտչամիջոցները, որոնցում առկա են հեղինակի մտածելակերպը, բառի հանդեպ ունեցած կուլտուրան, վերաբերմունքը, բառախորքը տեսնելու հմտությունը և այլն, որոնցով ստեղծագործությունը դառնում է տպավորիչ ու ինքնատիպ:

Ինչպես նկատել է գրականագետ Էդվարդ Ջրբաշյանը. «Գրականության ազգային յուրահատկության կարևորագույն գծերից մեկն էլ լեզուն և արտահայտչական միջոցներն են, որոնք անմիջաբար կրում են ազգային գեղարվեստական մտածողության կնիքը: Դրանով է, առաջին հերթին, որոշվում գրական ստեղծագործության ազգային նկարագիրը»¹:

Քանի որ գրողը գործ ունի միմյայն բառի հետ, իսկ բառը նման է խեցու/խեցին բացելով կարելի է կորզել մարգարիտը, բառն էլ ընթերցվելիս է դրսևորում իր էությունը/, յուրաքանչյուր հեղինակ պարտավոր է բառը ճիշտ նպատակով և ճիշտ տեղում գործածել՝ այն պարզ պատճառով, որ բառերով նա ոչ միայն իր մտքերն է շարադրում, այլև բառերով նկարում է ընթերցողի համար, ինչպես գեղարվեստիչն է անում ներկով: Եվ եթե կտավում վրձնված ֆիգուրի ճշմարտանման լինելը չէ առաջնայինը, որքան՝ բացահայտված ինքնատիպ գուներանգը, այդպես էլ գեղարվեստական գրականության մեջ ընտրված պատմությունը ինքնատիպ պատկերներով ներկայացնելն է կարևորը: Սակայն սա չի նշանակում, որ պակաս կարևոր է ստեղծագործության գաղափարը, որի շուրջն էլ, կամ որի վրա էլ կառուց-

¹ Ջրբաշյան Էդ., Դ. Մախչանյան «Գրականագիտական բառարան» Երևան, 1980թ. էջ 8:

վում է տվյալ գեղարվեստական պատմությունը՝ հեղինակի կողմից օգտագործվելով մի քանի հարյուրից մի քանի հազար բառ՝ իբրև «հյուսվածք», որը, սակայն, միատարր ու միանախշ չէ: Գաղտնիքն էլ հենց այդ «նախշերի» բազմազանության ու բազմաբանականության մեջ է, «հյուսվածքի» ինքնատիպության ու նրբության մեջ: Գրողն իր մտահղացումը, որպես գեղարվեստական ստեղծագործություն, իրացնելիս միանգամայն ազատ է, և ունի լայն հնարավորություն ու գեղարվեստական բազմաթիվ արտահայտչամիջոցներ, նայած թե իր ստեղծագործական ներուժը որքանով է ի վիճակի դրանք կիրառելու:

Անկախության շրջանի արցախյան արձակը առանձնանում է իր լեզվամտածողությամբ: Արցախյան արձակում կարելի է հանդիպել ժողովրդական ասույթների, դարձվածքների, խոսակցական լեզվում կիրառվող հազվագյուտ արտահայտությունների, բարբառային բառերի և այլն: Կարծում ենք՝ այս երևույթն արցախյան արձակում (նաև խորհրդային շրջանի) առանձնապիսի տեղ ունի դարձյալ այն պատճառով, որ երկրամասը տասնամյակներ շարունակ կտրված է եղել մայր հայրենիքից, և իր գրականության զարգացմանը զուգահեռ կամ գրականության միջոցով, ջանացել է պահպանել իր դիմագիծը, իր նիստուկացը, իր լեզվամտածողությունը (արդյունքում հայի իր տեսակը) այլ կերպ ասած՝ արցախահայության պահպանումը եղել է գրականության գերխնդիրը, ի վերջո, արցախցի հեղինակների (հատկապես խորհրդային տարիների, որոնց գրքերը հրատարակվում էին Բաքվում ու սպառվում Ադրբեջանի հայաշատ վայրերում) ընթերցողների հիմնական զանգվածը հենց արցախաբնակ հայերն էին:

Հայապահպանման նույն գերխնդիրը կարելի է տեսնել նաև համշենահայ գրողների ստեղծագործություններում, քանի որ այնտեղ ևս եղել ու մնում է ուժացման վտանգը:

Մայր Հայաստանում ստեղծվող գրականության համար, իհարկե, այդպիսի խնդիր գոյություն չի ունեցել, ուստի, բացառությամբ մի քանի հեղինակների, որոնք ժողովրդական բառ ու բանին դիմել են միայն ստեղծագործության մեջ անհրաժեշտ կոլորիտ ստեղծելու համար, ժամանակակից հայ արձակի լեզուն գրականն է: Եվ քանի որ հայ գրողների հիմնական մասը բնակվում է Երևանում, իսկ ստեղծագործության մեջ գերազանցապես մերօրյա մարդն է, արդի կյանքը, ժամանակակից գեղարվեստական գրականության մեջ (լինի պոեզիա, թե արձակ) միտում է նկատվում, հատկապես երիտասարդ գրողների երկերում, երևանյան խոսակցական, նաև որոշ ժարգոնային արտահայտությունների թափանցում գրական լեզու: Օրինակ, այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ իմ համար, քո համար, մի քիչ ուշոտ, մենակով և այլն, այսօր այնքան հաճախ են հանդիպվում գեղարվեստական ստեղծագործության մեջ, որ այլևս փորձում են իրենց հաստատուն տեղն ունենալ գրական լեզվում:

Անկախության շրջանի արցախյան արձակում Մ. Հովհաննիսյանի ստեղծագործությունը առանձնահատուկ տեղ ունի նաև իր լեզվամտածողության շնորհիվ: Նա կարողանում է այնպես պատմել՝ օգտվելով բառամթերքի յուրահատուկ շտեմարանից, որ ընթերցողը անվերապահորեն հավատում է նկարագրվող իրադարձությունների հավաստիությանը, Եվ դրան Մ. Հովհաննիսյանը կարողանում է հասնել ճշգրիտ բառի կիրառման շնորհիվ, ինչը գրողի խոսքը դարձնում է պատկերավոր, կենդանի, հոգեբանորեն համոզիչ: Ահա մի օրինակ. «Գոտկատեղից ցածր» պատմ-

վածքից: Սումգայիթյան ջարդի օրերն են. «Սամեդն ուզում է Վարդանուշին (հարևանուհին է- Հ.Մ.) ու նրա երկու անտիրական աղջիկներին փողոց հանել, դրսում եռացող խուժանի բերանը տալ:

-Գնացեք մեր հողից, գնացեք ձեր խարաբա երկիրը»²: Ընթերցողի մտապատկերում մնացողը, ինչ խոսք, մեջ բերված հատվածի վերջին նախադասությունն է, հատկապես՝ «խարաբա (ավերակ- Հ.Մ.) երկիրը» արտահայտությունը: Սակայն, կարծում ենք, ոչ պակաս պատկերավոր, դիպուկ, բազմաշերտ է նաև նախորդ միտքը: Մ. Հովհաննիսյանը չի ասում «խուժանի ձեռքը տալ», ասում է՝ աղջիկներին խուժանի բերանը տալ, ինչը տեսարանը դարձնում է սարսափազդու, քանզի ամբոխից բզկտվելու, լկվելու, խժռվելու ակնարկն ունի: Եվ ապա. թուրքը չի ասում՝ գնացեք մեր երկրից, ինչը մեծ հաշվով հոմանիշ է մեր հողից արտահայտությանը, բայց հենց այս՝ մեր հողից բառակապակցությունն է, որ զորացնում է հեղինակային խոսքը՝ նոր դուռ բացում ասելիքի առջև: Թուրքի սկսած ջարդը հողի համար է, տարածքի համար է, բայց ոչ՝ երկրի: Եվ այս միտքը ցայտուն երևում է նույն նախադասության շարունակության մեջ՝ «գնացեք ձեր խարաբա երկիրը»: Այստեղ էլ թուրքերեն ասված խարաբա խոսքն է տրանսֆորմացնում հեղինակի ասելիքը: Խարաբա բառի տեղին օգտագործմամբ Մ.Հովհաննիսյանը և միջավայրն է ընդգծում, և ի ցույց է դնում հայերի հանդեպ տվյալ թուրքի վերաբերմունքը, նաև թուրքի՝ մշտապես փայփայվող երազանքը՝ հայոց աշխարհը տեսնել ավերակ:

Արձակագիր Արտաշես Ղահրիյանը ժողովրդական բառ ու բանը, խոսակցական լեզվի բառամթերքը օգտագործում է յուրովի: «Գյուղամեջ» պատմվածքում գրում է. «Մարդկությունը,- բարձր-տիրական սկսեց Վադին, որ փոքր-մոքր մարդ է և պագած տեղը մի հափուռ է երևում,-աշխարհի ողջ հասարակությունը,- ինքն իրեն եռանդավորեց,- որ վերցնես, է՛, մեկ-մեկ խելքները պտռես, հարյուրից, չէ, հազարից, հլա միլիոնից մեկը կլինի, որ...»³ Վադիին բնութագրելու և զուգահեռաբար իր վերաբերմունքը արտահայտելու համար, իսկ դրանում առկա է սարկազմը, Ա. Ղահրիյանը Վադիի խոսքից առանձնանել է առաջին, կարևոր բառը՝ մարդկությունը՝ ընթերցողին ընծեռելով զուգահեռ տանելու հնարավորություն, և դա անում է ոչ թե փոքր-մոքր մարդ է, այլ պագած տեղը մի հափուռ է երևում արտահայտությամբ: Ըստ որում պատկեր-համեմատությունը ցայտուն է դարձնում հափուռ բառը: Հափուռը գրական հայերենով բուռն է: Սակայն, մեր կարծիքով, ներկա դեպքում, եթե հեղինակը գործածեր բուռը, նախ չէր ունենալու անհրաժեշտ կոլորիտը, այդ բառը արդեն իսկ որոշակի ինտելեկտ է ապահովում, և Ա. Ղահրիյանի հերոսը էլ տելեվիզոր ունեցող չկա՝ի փոխարեն ստիպված պիտի ասի՝ էլ հեռուստացույց ունեցող չկա, արդյունքում պատկերվող գյուղական տեսարանը կներկայանա իր բնականությունից զրկված, արհեստածին և ապա՝ որ ամենակարևորն է, բուռ բառապատկերում ընկած է նախ՝ փակ-ի, կիսափակ-ի ընկալումը, հետո նոր՝ փոքր-ի, չնչին-ի: Մինչդեռ հափուռ ասելիս առաջին բանը, որ ընկալում ենք, դա նսեմացուցիչ փոքրն է: Ու տողատակից հեղինակի ասելիքը ստացվում է՝ մարդկության մասին դատողություններ է անում իրենից ոչինչ չներկայացնող մեկը: Եվ հեղինակի ասելիքը լավագույնս դրսևորվում է մեկ-մեկ խելքները պտռես արտահայտությամբ, որտեղ մեր կարծիքով պտռես բառը կատարում է յուրատե-

² Հովհաննիսյան Մ., «Երկեր» հ.2, Ստեփանակերտ-2006, էջ:

³ Ղահրիյան Ա., «Լեռան հուշ», Ստեփանակերտ, 2002, էջ 4:

սակ կատալիզատորի գործառույթ: Պտուհս-ին հոմանիշ են փնտրել, տնտղել, ստուգել բառերը, բայց դրանցից և ոչ մեկը չունի այն գունեղանգը, որն իր մեջ կրում է պտռել բառը:

Անկախության շրջանի և խորհրդային ժամանակների արցախյան արձակի ցանկացած ստեղծագործություն քննելու դեպքում նկատելի է այն բացահայտ առաջընթացը, որ առկա է արցախյան ժամանակակից արձակում և այն անհամեմատելի առավելությունը, որ ունի այսօրվա արցախցի գրողը: Խոսքը միայն թեմայի ընտրության, այդ թեման, «Բացելու» գաղափարական տեսանկյունին չի վերաբերում, այլև անկախության համար պայքարի, պատերազմի բովո՞վ անցած գրողի մտածումին, ներքին ազատությանը, ինչը նաև արտացոլվում է լեզվամտածողության մեջ: «Գյուղամեջ» պատմվածքում Ա. Ղահրիյանը գործածում է նաև այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք անտարակույս, գռեհիկ են, անհարիր գեղարվեստական խոսքի տիրույթին: Հեղինակն, անշուշտ, գիտի դա, բայց և այնպես, երբ խոսքը վերաբերում է դարաբաղյան հիմնախնդրին, իսկ դա յուրաքանչյուր հայի, արցախցու աքիլեսյան գարշապարն է, այն բանից հետո, երբ համագյուղացի Միսակն ասում է.

«- ՕՕՆ-ը, արա, «Վրեմյայով» որոշեց, որ Ղարաբաղը Ադրբեյջանինն ա» հեղինակը հերոսներից մեկի բերանով ասում է.

«-Տեսնեմ ՕՕՆ-ի որոշման վրա ո՞վ ա տռում»⁴ Ներկա դեպքում հեղինակը, դիմելով գռեհկաբանության, կատարել է իր խնդիրը: Շեշտել է հասարակ գյուղացու հաստատականությունը, պաշտամունքի հասնող սերը Արցախի նկատմամբ, միևնույն ժամանակ ի ցույց դրել Ղարաբաղցի գյուղացու կորստի ցավ ապրած հոգու մրմուռը, այդ հոգու ընդվզումը: Ուստի. վերոհիշյալ արտահայտությունը այնքան ներդաշնակ է ու ներխուսված նկարագրվող տեսարանին, որ ընթերցողը այն չի ընկալում որպես գռեհկաբանություն:

Գրականության մեջ (ընդհանրապես արվեստում) նմանատիպ օրինակներ շատ կան՝ Հ. Միլլեր, Է.Հեմինգուեյ, Վ.Շուկշին, Ա.Մորավիա, Գ. Մարկես և այլք: Արվեստագետը միանգամայն ազատ է իր արտահայտամիջոցների ընտրության հարցում: Դրանք մերժելի են միայն այն դեպքում, երբ գործածվում են ինքնանպատակ, չեն նպաստում կամ ծառայում ստեղծագործությունը ամբողջ խորքով ներկայացնելուն: Դ. Դեմիրճյանը «Վարդանանքում», օրինակ, նկարագրելով ծեծված Կողակին, գրում է. «Նայեց կրակին (Կողակը- Հ.Մ.), որ համառ փռփռում էր, և հանկարծ ինչ-որ սուր մտքից վեր թռավ, մոտեցավ կրակին, բարձր դրեց, բարձրացավ ու միգեց կրակի վրա»⁵: Տեսարանը տպավորիչ է: Եվ դա շնորհիվ այն արտահայտչամիջոցի, որ Դեմիրճյանն է ընտրել: Եթե նա ասորուշանի հանգցնելը ներկայացներ ցանկացած այլ եղանակի կիրառմամբ, ընդամենը արձանագրած կլիներ Կողակի կողմից կատարված փաստը: Մինչդեռ մեջ բերված հատվածում (կրակը միգելով հանգցնելը) փաստ լինելուց բացի, որպես գործողություն լավագույնս է արտահայտում Կողակի վերաբերմունքը, ատելությունը, արհամարանքը, ցասումը պարսկական սրբազան կրակի հանդեպ:

Գեղարվեստական ստեղծագործության մեջ հեղինակային խոսքը գրական երկի գործողությունը առաջ մղող ուժն է, որին ապավինելով է ընթերցողը մասնակցում նկարագրվող իրադարձությունների զարգացմանը:

⁴ Ղահրիյան Ա., «Լեռան հուշ», Ստեփանակերտ, 2002, էջ 3:

⁵ Դեմիրճյան Դ., «Վարդանանք», «Լույս» 1987թ., էջ 227:

Ուստի հեղինակային խոսքում ցանկացած վրիպում, լինի ոչ ճիշտ արտահայտություն, հոգեբանորեն անհամոզիչ պատկեր և այլն, ի գործ է ապօրինի ամբողջ ստեղծագործության տպավորությունը՝ ընթերցողին հանելով «հիպնոտիկ» վիճակից, վերադարձնելով ռեալ իրականություն: Մինչդեռ, ինչպես Օ. Գաստեն է հիշեցնում. «Հեղինակը պետք է ստեղծի անպատուհան ու անձեղք ինքնապարփակ տարածություն՝ այնպես որ ներսից չնշմարվի իրականության հորիզոնը»⁶:

Եթե արցախյան պատերազմի արհավիրքներն ապրած հեղինակը գրում է. «Եվ Ահարոնյան Միերը եկավ, դրան /պատերազմը – Հ. Մ./ դիմավորեց Լեսոյում...» /Ն. Գասպարյան, «Խաչ» էջ 6/ իմաստ չունի ընթերցանությունը շարունակելը, քանի որ դիմավորել բառի խորքում արդեն կա ցանկալի, սրտամոտի, սպասվածի գաղափարը, իսկ մարդը իր էությանը լինելով պատերազմին հակոտնյա, երբևէ չի կարող ունենալ պատերազմ դիմավորելու ցանկություն: Ավելին, այդ մի հատիկ բառի գործածությամբ հեղինակը ընթերցողի վստահությունն է կորցնում որպես նկարագրվող դեպքերին ականատես պատմող, և նրա պատմությունն այլևս դադարում է հավաստի ու հետաքրքիր լինել, քանի որ պատերազմում կորստի ցավ ապրած, զրկանքների միջով անցած մարդու բառապաշարում, մտածողության մեջ պիտի բացակայեր դիմավորել բառը, երբ խոսքը պատերազմին է վերաբերում:

Գեղարվեստական գրականությունը քանի որ գրավոր խոսք է, արտաքուստ շատ նման է վիմագրության, փոփոխվող ժամանակի մեջ ինքը մշտապես մնում է անփոփոխ: Ուստի անհրաժեշտ է, որ հեղինակը տեքստի մեջ գործածի ամենակարևոր, ամենաճիշտ բառը, քանի որ իր ընտրած բառն է խոսելու ժամանակի հետ, ուստի բառը պիտի կարողանա բավարարել նաև ապագայի գեղագիտական պահանջները:

Ժամանակակից հայ արձակի համապատկերում անկախության շրջանի արցախյան արձակը ակնհայտորեն առանձնանում է իր բառամթերքով: Այլ կերպ ասած՝ արցախյան արձակի լեզուն, որ բնականաբար, գրական հայերենն է, անպայմանորեն համեմված է այնպիսի բառերով, որոնց շնորհիվ հեղինակի պատմողականությունը մոտենում է խոսակցական լեզվին: Թերևս միայն արցախյան արձակում կարելի է հանդիպել մթնժողել, թաղկուճվել, իծաշարուկ, գիրթ, քարկեծ, լափու տալ, հափուռ ու էլի մի շարք նմանատիպ բառերի, որոնք ինչքան որ ակտիվ են բանավոր խոսքում, նույնքան էլ գործնական են արցախյան արձակում: Մի կողմից այս երևույթը լավ է, քանի որ հեղինակային խոսքը դարձնում է շատ կենդանի, թրթռուն, կասես գործ ունես բանավոր գրույցի հետ, այլ ոչ՝ գրավոր տեքստի, մյուս կողմից էլ, սակայն, մեր կարծիքով վնասում է ստեղծագործությունը՝ ընթերցողի վրա թողնելով այնպիսի տպավորություն, կասես զրուցակիցդ գրական լեզվով խոսել ցանկացող գավառացի է: Ժամանկին Գ. Սունդուկյանի, Ռ. Պատկանյանի ստեղծագործությունները, որոնք մասսայականություն էին վայելում, այսօր, մեր կարծիքով, տուժում են առաջին հերթին լեզվական խնդիրների պատճառով: Յուրաքանչյուր գրող իր ժամանակի տարեգիրն է, և իր ժամանակն է տարեգրում հենց իր ժամանակի լեզվամտածողությամբ: Այդուամենայնիվ, հեղինակային խոսքը, մեր կարծիքով, պիտի ձգտի մշտապես լինել գրական լեզվի տիրույթում: Չենք անտեսում բարբառի, խոսակցական լեզ-

⁶ Գաստեն Օ., «Մտքեր վեպի մասին», Երևան, 2011, էջ 440:

վի հիմքի վրա նոր բառաստեղծումը հեղինակի կողմից, ինչը միայն նպաստում է գրական լեզվի հարստացմանը: Խնդիրն այն է, որ ժամանակի մեջ գրական լեզուն մեծ փոփոխությունների ենթակա չէ, մինչդեռ փոփոխվող ժամանակի հետ, անտարակույս, փոխվելու են պահանջներն ու ընկալումները ներկայիս խոսակցական լեզվի գործածական բառամթերքի նկատմամբ, այնպես, ինչպես որ մեր վերաբերմունքն է 19-րդ դարի հայ գրողների լեզվամտածողության, ստեղծագործությունների պոետիկայի նկատմամբ:

Գեղարվեստական գրականության մեջ ոչ պակաս կարևոր է գործող անձանց անհատականացման խնդիրը, ինչի համար էլ հեղինակը նախ և առաջ ձգտում է առանձնացնել իր՝ հեղինակային խոսքը գործող անձանց լեզվամտածողությունից, բառապաշարից, արտահայտվելու եղանակից, և այլն: Հակառակ դեպքում ստեղծագործությունը ունենալու է գործող անձինք, որոնք սակայն ընթերցողին չեն ներկայանալու իբրև կերպար, այնինչ հենց կերպար կերտելն է հեղինակի գերխնդիրը: Ահա մի օրինակ. «Մեր գյուղում առաջինը Նաբին հայտնվեց: Երբ նա, հսկայական ոչխարենու բրդոտ փափախը գլխին, յաբու ձին հեծած, ունեցած-չունեցածը երկվարից կախած խուրջինի մեջ ամփոփած, երեխան մեջքին՝ մանկամարդ կինը հետևը գցած, երևաց շենամեջում, Տիրայր ուսուցիչը, որն ինչ-որ բան էր պատմում դարավոր թեղու շուրջբոլորը նստոտած ծերունիներին, վայրկյանական լռեց ու խոժոռված արտաբերեց.

-Պահո՛, ժողովուրդ, մորեխը մեզ էլ կապվ:

-.....

-Անունդ մեզ չես բախշի՞, - եկվորին դառավ Սահակենց քառը՝ ձեռքն ականջին հովանի արած:

-Նաբի:

-Չլինի՞ դաչաղ Նաբին ես, - հեգնեց ուսուցիչը:

-Ի՞նչ ես ասում այ բալամ, ես տավարած մարդ եմ:

-Քո խելքով էդ անվանակիցդ իբր ի՞նչ էր»⁷:

Այստեղ հեղինակային խոսքը ներկայացնում է պատմվածքի գործող անձանցից մեկը, ինչն էլ ապահովում է նկարագրվող դեպքերի վավերականությունը, պատումը դարձնում առավել անմիջական, իսկ գործող անձինք՝ իրական, հատկապես որ նրանցից յուրաքանչյուրը առանձնանում է իրեն բնորոշ բառ ու բանով: Օրինակ, խուլին յուրահատուկ է լսելիս՝ ձեռքը ականջի մոտ պահելը, և անունը մեզ չե՞ս բախշի արտահայտության մեջ չե՞ս բախշի-ն շատ տիպական է լսողության խնդիր ունեցողի համար: Հեղինակը սեղմ տարածքում՝ կարողացել է ուրվագծել կենդանի պատկեր, որը, իբրև երկխոսություն՝ զարգանալով, ոչ միայն ընդլայնում է իրադարձությունների տարածքը, այլև ընթերցողի առջև բաց է անում պատմական խորքեր: Չլինի՞ դաչաղ Նաբին ես արտահայտությունը պատմվածքի հեղինակը միտումնավոր է հնչեցնում ուսուցչի շուրթերից, քանի որ նա՝ կարող է, որպես մտավորական, տեղյակ լինել դաչաղ Նաբիի «գործունեությանը»: Ուստի և ուսուցիչը հարցը տալիս հեգնում է, որովհետև տեղյակ է նաև դաչաղի վախճանին, միևնույն ժամանակ հեգնանքի մեջ իր վերաբերմունքն է արտահայտում ավագակի նկատմամբ: Ուսուցչի՝ ականարկը չհասկացած թուրքն ասում է. «Ես տավարած մարդ եմ», ինչին հաջորդում է ուսուցչի ոչնչացնող ծաղրը. «Քո խելքով անվանակիցդ իբր ի՞նչ էր»: Այ-

⁷ Գասպարյան Ն., «Վերջին գնդակը», Ստեփանակերտ, 2005թ., էջ 68:

սինքն մի չորան էլ նա էր, մեծ ճանապարհի ավագակ էր, թալանչի, թեպետ թուրքերը նրան ազգային հերոս են համարում՝ ձոնելով երգ ու լեզենդ:

Գեղարվեստական գրականության մեջ շատ կարևոր է կերպարի անհատականացման գեղարվեստական միջոցների կիրառումը, դրանց ինքնատիպ ու անսովոր լինելու չափ թարմությունը: Խոսքը մեծամասամբ վերաբերում է կիրառվող համեմատություններին, քանի որ հեղինակները հիմնականում համեմատությունն են օգտագործում որպես կերպավորման միջոց: Գրքերից ծանոթ համեմատությունների հանդիպելը ընթերցողի համար նույն նշանակությունն ունի, ինչպես որսորդի համար՝ հրացանի փուստ տալը վճռական պահին: Մինչդեռ դիպուկ, ասելիքով լի համեմատությունը ստեղծագործության ոչ միայն տվյալ տեսարանն է դարձնում կենդանի, պատկերավոր, այլև բացահայտում է հոգեբանական շերտեր, դառնում տպավորիչ ու հավաստի, նամանավանդ՝ երբ ընթերցողը իր կյանքում տեսել, զգացել, ապրել է նույն բանը, ինչը հիմա գրողը դարձրել է համեմատության նյութ: Այս դեպքում համեմատությունը ընթերցողի համար դառնում է անմոռանալի, մեծացնում է հետաքրքրությունը ընթերցվող ստեղծագործության նկատմամբ, նաև բարձրացնում հեղինակի վարկանիշը՝ ընթերցողի մտահայեցողության մեջ:

Համեմատությունը ստեղծագործության մեջ հեղինակի կողմից կիրառվում է ոչ միայն համեմատելու համար այս կամ այն առարկան, երևույթը կամ գործող անձի որևէ արարքը, այլև հեղինակը պատկեր է ստեղծում՝ բացահայտելով իր հերոսի բնավորության որևէ կողմը, հոգեբանության որևէ շերտը, նաև ստեղծում է կոլորիտ, ինչը ոչ միայն տվյալ տեսարանին ու տեսարանի ներկայացրած միջավայրին պիտի լինի ներդաշնակ, այլև ողջ ստեղծագործությանը: Մինևնույն ժամանակ համեմատությունը հեղինակին ընծեռում է սյուժեի զարգացման հնարավորություն: Հետևաբար համեմատությունը պիտի ծնվի տվյալ տեսարանի հոգեբանությունից, ստեղծված իրավիճակից, և իր մտածողությամբ, բառապաշարով պետք է հոգեհարազատ լինի իրեն ծնած միջավայրին: Արցախյան արդի արձակույն, ցավոք սրտի, հեղինակներից շատերը անտեսում են վերևում հիշատակվածը՝ համեմատության պահանջները: Ահա մի օրինակ. «Մարդիկ գյուղի փողոցներով առվակ-առվակ հոսեցին, միացան ու խուժեցին ձորն ի վար: Չնայած ուսին առած պարկը ծանր էր, ջանում էր /Գևորգը – Հ. Մ./ ետ չմնալ ամբոխից»⁸:

Այստեղ հեղինակը տարվել է տեսարանի արտաքին նկարագրությամբ, այն էլ՝ անհաջող, քանի որ տեսարանը, որ կառուցվել է համեմատության վրա, իր մեջ չի կրում տեղահանվող գյուղի հոգեբանությունը, դրամատիզմը: Հոսել բառը, հատկապես զուգորդվելով կրկնակ առվակ-ի հետ, ստեղծում է խաղաղ, հանգստաբեր և ոչ՝ վերահաս վտանգով լի, լարված իրավիճակ: Իսկ խուժել բառը ներկա տեսարանում որևէ աղերս չունի տեղահանվողի հետ, քանի որ վերջինիս հակառակ բևեռն է: Եվ ապա. խուժեցին ձորն ի վար..., այսինքն՝ արագ, սրընթաց գնացին, այն դեպքում, որ տեղահանվողները հիմնականում կանայք են, ծերունիներ, երեխաներ, ինչը, մեղմ ասած, համոզիչ չէ տեսարանի թե արտաքին, և թե հոգեբանական տեսանկյունից: Բացի այդ, ամբոխ բառի խորքում կա ծավալի, շրջանագծի պատկեր, մինչդեռ ձորն ի վար ընթանալ կարելի է մի-

⁸ Գասպարյան Ն., «Վերջին գնդակը», Ստեփանակերտ, 2005թ., էջ 106:

այն իծաշարուկ, այսինքն՝ քարավան կազմած: Ուստի ճիշտը՝ քարավանն է. «ջանում էր ետ չմնալ քարավանից /բայց ոչ՝ ամբոխից/, հատկապես որ քարավան բառի մեջ էլ կա մի տեղից մեկ այլ վայր տեղափոխվելու գաղափարը, որն ունի նաև դրամատիկ շերտեր, քանի որ հեռանալու, բաժանվելու միտքն է կրում իր մեջ: «Տղամարդը» պատմվածքում հեղինակը խոսելով իր հերոսի սեռական անկարողության պատճառների մասին, գրում է. «...» Եվ դա, պարզվում է, չափից ավել տքնելուց է, եզան նման ամբողջ օրը գութանը քաշելուց...»⁹: Կարծում ենք այստեղ էլ համեմատությունը անհաջող է ստացվել նախ այն պատճառով, որ բարձր տեխնոլոգիաների մեր ժամանակներում, երբ խոսվում է ժամանակակից մարդու մասին, այսօրինակ համեմատությունը ուղղակի անհեթեթ է հնչում: Ուստի և չի կարող ընթերցողի վրա տպավորություն թողնել, ավելին, որպես համեմատություն, գործածված լինելով ոչ տեղին, վանող զգացողություն է առաջացնում ընթերցողի մոտ տվյալ պատմվածքի հանդեպ: Եթե, որպես պատկերավոր խոսք կիրառելի է՝ եզան նման բանել (տանջվել, տքնել և այլն) արտահայտությունը, քանի որ մեր ընկալումներում եզը վաղուց ի վեր դարձել է անխոնջ աշխատանքի խորհրդանիշ և այսօր էլ շարունակում է պահպանել իր գործառույթը, ապա ներկա դեպքում հեղինակը պատմվածքում ներկայացնելով արդի իրականությունը և իր հերոսին զուգահեռելով եզան հետ, միայն նվաստացնող երանգ է հաղորդում իր հերոսի կերպարին, և դա գութանը քաշելուց... բառակապակցության պատճառով:

Մեկ հոդվածի սահմաններում չենք անդրադառնում լեզվի պատկերավորման մյուս միջոցներին, քանի որ մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վիճակն և մակդիրի, և փոխաբերության, և այլաբանության ու խորհրդանիշների գործածության դեպքում: Ամփոփելով կրկնենք, որ յուրաքանչյուր ստեղծագործող միանգամայն ազատ է մաքուր թղթի առաջ և ունի արտահայտչամիջոցների հզոր զինանոց, որից կարող է լի ու լի օգտվել, սակայն խելամտորեն՝ հիշելով թունանյանի պատգամը բառի աշխարհաչափ տարողունակության մասին: Լեզվի պատկերավորման միջոցների կիրառումը ոչ միայն նպաստում է գեղարվեստական լիարժեք ստեղծագործության ստեղծվելուն, այլև ընթերցողին է ներկայացնում տվյալ հեղինակ -գեղագետի դիմանկարը, ուր ներառված են նրա ինտելեկտը, աշխարհընկալումը, կենսափիլիսոփայությունը և այլն:

Պ.Սևակը, նկատի ունի նաև վերևում արված մեր դիտարկումը, ասում է, երբ «... արվեստը ոչ այլ ինչ է, քան արվեստագետի ինքն իր մեջ ունեցած ներհակությունների արտահայտություն, հոգեկան մի վիճակ, երբ ստեղծագործողը պատրաստի հասարակական հողի վրա, լայն ընդգրկումների հնարավորության մեջ կարող է կամ անկարող է դրսևորել իր վերաբերմունքը տիրապետող միջավայրի, հասարակական մտայնության և այլնի հանդեպ»¹⁰:

⁹Գասպարյան Ն., «Անավարտ խաղ», Երևան, 2004թ. էջ 150:

¹⁰Պ.Սևակ, հ.6, Երևան, Հայաստան, 1976թ., էջ 295:

Ստեղծագործողը, անկախ ներկայացվող նյութից (թեման կլինի պատմական, թե գիտաֆանտաստիկ) տարեգրում է իր ժամանակը: Ուստի իր ապրած ժամանակը հեղինակը վավերացնում է ոչ միայն ներկայացվող նյութի (պատմվածք, վեպ, վիպակ, բանաստեղծություն, կտավ, քանդակ և այլն) միջոցով, այլև՝ օգնությամբ, այլև լեզվամտածողությամբ: Ֆրանսիացի գրող Ալֆոնս Դոդեի օրինակը, կարծում ենք, տիպական է. նա իր ստեղծագործություններից մեկն անվանել է «Նամակներ իմ հողմադացից», ինչից էլ ընթերցողը կտեսնի, որ գործունի առնվազն 19-րդ դարի գրողի հետ, քանի որ հողմադաց բառը հուշում է նրա ապրած ժամանակաշրջանը:

Այսպիսով՝ ժամանակակից արցախյան արձակը նաև լեզվի պատկերավորման միջոցների կիրառման վերանայման խնդիր ունի, քանզի օտարազգի ընթերցողին մեր արձակը հետաքրքրել, գրավել կարող է միայն այն դեպքում, եթե ընթերցանության միջոցով նա իր համար բացահայտումներ անի մեր ազգային (ներկա դեպքում՝ արցախահայության) մտածողության, տարածաշրջանի նիստուկացի, կյանքի, երևույթների մեկնաբանության յուրահատկության մեջ:

Օրտեգա ի Գասետը իրավացիորեն նկատել է, որ դիմելով այն հին վեպերին, որոնք դիմացել են ժամանակի փորձությանը և սա այսօր հաճելի են ընթերցողին, անխուսափելիորեն եզրակացնում ես, որ մեր ուշադրությունը շատ ավելի գրավում են հենց հերոսները և ոչ թե նրանց արկածները¹¹: Այսինքն՝ ընթերցողին ոչ այնքան պիտի զարմացնի ներկայացված ստեղծագործության սյուժեն, որքան՝ գրավի այդ սյուժեում ընդգրկված մարդը, ում որակական հատկանիշների հետ ընթերցողը իրեն համադրելու հնարավորություն կունենա, առավել ևս, որ արվեստի, գրականության կոչումը մարդերգությունն է:

¹¹Պ.Սևակ, հ.6, Երևան, Հայաստան, 1976թ., էջ 295:

РЕЗЮМЕ

Гамлет Мартиросян

**Несколько вопросов относительно языкового
мышления в арцахской прозе периода независимости**

В статье рассматривается ряд особенностей языкового мышления арцахской прозы периода независимости на основе конкретных примеров из прозы М. Ованесяна, А. Кагрияна и Н. Гаспаряна.

SUMMARY

Hamlet Martirosyan

**Some Issues on Linguistic Thought
in Artsakh Prose of the Period
of Independence.**

The article deals with some features of linguistic thought in Artsakh prose of the period of Independence based on examples from M.Hovhannisyana, A. Ghahriyan and N. Gasparyan's prose.

ԶԱՐԻՆԵ ՍԱՌԱԶՅԱՆ

«Գրիգոր Նարեկացի» համալսարան

**ՆՈՐԻ ԵՎ ԱՎԱՆՂԱԿԱՆԻ
ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄՈՍ ԱՎՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ**

Նորը սովորաբար խարսխվում է ավանդականի վրա: Հայ գրականության մեջ ավանդականի ու նորի հարաբերությունը միշտ էլ կենսունակ է եղել: Այս առումով խիստ առանձնանում է Համո Սահյանի քնարերգությունը: Նրա «Երգի հինն ու նորը» բացատրվում է հակադրամիասնությունների այն ինքնատիպ ներդաշնակությամբ, որը պոետական խոսքի մեջ վերածվում է գեղարվեստական որակի: Գրողը ստեղծագործաբար է յուրացրել հայ և համաշխարհային գրականության հարուստ ավանդույթները, նրա միտքը սնվում է մեր ազգային ու ժողովրդական մտածողության անսպառ ակունքներից, հայրենի հողից, անկրկնելի բնությունից, մեր դասականների հարուստ փորձից... Ահա թե ինչու «շեփորն ու սրինգը», հայոց գողթան երգիչների անլռելի մեղեդիները, Սասնա ծռերի իմաստուն խենթությունն ու բակունցյան պարզությունը, թումանյանական աշխարհի խորությունը միահյուսվում են նրա երգում: Հիրավի, «Հ. Սահյանը եղավ Բակունցով թումանյանական գծի յուրացնողն ու իր հերթին կամուրջ կապեց դեպի 20-րդ դարավերջի բնապաշտությունը»¹:

Ժամանակին հետաքրքիր խոստովանություն է արել Տերյանը՝ նշելով, որ Թումանյանից ու Իսահակյանից հետո դժվար է բանաստեղծություն գրել: Սակայն «դժվարության» այս գիտակցումը կրկնակի «անհաղթահարելի» դարձավ Տերյանից հետո: Երկու դեպքերում էլ վճռորոշ դերակատարությունը «ստանձնում» է ստեղծագործական սխրանքը, և Սահյանը ներկայանում է նոր խոսքով ու պոետական խոսքի նոր խորքով՝ հարազատ մնալով իր դավանած գեղագիտական սկզբունքներին: Բանաստեղծն իր հերթին դիմում է խոստովանության.

*Կա տերյանական մի ելելէջ,
Որ քեզ չի լքում այսքան տարի.
Ուրախ մի վիշտ կա քո երգի մեջ,
Եվ ուրախություն մի վշտալի:*

*Ինչ է ավանդել Տերյանը քեզ,
Իր հիվանդ հոգու մորմոքը հին...
Հյուծախտավոր ես Տերյանի պես,
Բայց ծաղկավոր է երգիդ ուղին²:*

Իհարկե, Սահյանի «հիվանդ հոգի», «հյուծախտավոր» բառերը բա-

¹ «Գրական քերթ», մայիսի 8, 2009թ., էջ 6:

² Սահյան Դ., հ. 2, «Սովետական գրող» հրատ., Եր. 1984, էջ 155:

նաստեղծական կապերի մեջ միանգամայն օտարված են իրենց բառա-
րանային իմաստից և ներկայացվում են այլ բովանդակության համա-
տեքստում՝ ներքին շեշտադրությունները կրելով ժամանակի և իրակա-
նության սոցիալական շերտերի մեջ: «Հյուծախտավորի» մեջ ուղիղ գծով
տանում է դեպի չարենցյան «թոքախտավորը», այս դեպքում, սակայն,
«թափանցիկ, մարմնի պես երագի» պատկերները ստեղծում են բոլորո-
վին ուրիշ իրադրություն ու վիճակ, տեղի է ունենում «բառերի ալքիմիա»,
ուր և բաղադրություններն են փոխվում, և ասելիքի էությունը:

Պատկերավորության միջոցները Սահյանի մոտ գունափմաստային կի-
րառության ուրույն լուծումներ են ստանում: Եվ «ուրախ վիշտն» ու «ու-
րախությունը տխրալի» բառակապակցություններն իրարամերժության
մեջ հաստատում են մեկը մյուսին՝ ավելի ամբողջական դարձնելով գրո-
ղի ասելիքը: Սա, անշուշտ, սահյանական պոեզիայի կարևոր առանձնա-
հատկություններից մեկն է, որով և պայմանավորվում է նրա գեղագիտա-
կան վերաբերմունքը «ծաղկավոր երգի ուղու», իր արվեստի հանդեպ,
որը և ներքին աղերսներ ունի տերյանական (ոչ ուղղակի իմաստով) սկզ-
բունքի հետ. «Թեթև է արվեստն իմ ու խնդուն»: Միանգամայն ինքնատիպ
է Սահյանի գեղագիտությունը, այն աշխարհի ընկալման ու վերարտադր-
ման ուրույն մեկնակետ ունի: Ահավասիկ. «կա գրող, որ ժողովրդին տա-
լիս է այն, ինչ արդեն ավանդույթ է դարձել: Կա, որ հակառակն է անում՝
որքան կարելի է տարօրինակ, արտակարգ թվացող ձևեր է ընտրում:
Երկուսն էլ հավասարապես անընդունելի են: Առաջինի ստեղծածը կոչ-
վում է կեղծ ավանդականություն, երկրորդինը՝ կեղծ նորարարություն:
Մինչդեռ իսկական գրողը, այսինքն՝ մարդ, որ հարգում է իր գրիչն ու թուղ-
թը եւ ինքն իրեն, երբեք չի կրկնում նախորդներին: Ըստ էության, ամեն
ստեղծագործող, եթե իսկական է, նոր է եւ կարիք չունի այդպիսին ձեւա-
նալու»³. այսպիսին է Սահյանի բանաձեւումը նորի ու ավանդականի վե-
րաբերյալ, որը բխում է ճշմարիտ արվեստագետի նրա համոզմունքնե-
րից ու մտածողությունից: Գրողը ոչ միայն ասում է ճշմարտությունը, այլ
հաճախ ինքն է ստեղծում այդ ճշմարտությունը:

Համո Սահյանի նորարարությունն առաջին հերթին նրա մտածողու-
թյան մեջ է: Նա մտնում է բնության մեջ այնպես, կարծես ինքն իրեն վե-
րագտնում է եւ բնության մեջ պեղում է այն, ինչն իր մեջ կա: Այդ ամենը
վերարտադրվում է պատկերների միջոցով, հաճախ այնպիսի զուգահեռ-
ներով, որոնք առաջին հայացքից, թվում է, թե կապ չունեն միմյանց հետ.
այնուհանդերձ, այստեղ կա այն հավասարակշռությունը, համաչափու-
թյունն ու ռիթմը, որն ամբողջացնում է ստեղծագործության գեղագիտա-
կան կողմը:

**Պատահում է սիրտդ լցվում
Ու չի լալիս ժամանակին,**

³Զ. Դովնաթան, *Խոսում, խոսեցնում է Զամո Սահյանը*, «Հայաստան» հրատ., Եր. 2014, էջ 17:

**Ամպը անձրեւ է խոստանում
Ու չի տալիս ժամանակին,
Շտապում է կամ ուշանում,
Ու այդպես էլ գլխի չընկանք,
Թե մեր ուզած ժամանակը
Երբ է գալիս ժամանակին ⁴:**

«Պոեզիան,-գրում է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը,-կյանքի ու ժամանակի փիլիսոփայությունն է թանձրացնում եւ գեղագիտական ու իմացաբանական այս սկզբի վրա է սահման գծում կոնկրետ պատմական իր դերն ու անհրաժեշտությունը...»⁵: Կյանքի ու ժամանակի փիլիսոփայության թանձրացումն ենք տեսնում նաեւ Սահյանի պոեզիայում, հատկապես բնապաշտական երկերում:

Բանաստեղծը անհաշտության մեջ է ժամանակի, իրականության հետ, ժամանակը մերթ շտապում է, մերթ՝ ուշանում, պոետը ժամանակի որոնողն է: Լցված սիրտը զուգահեռվում է անձրեւելուն պատրաստ ամպի հետ. առաջին հայացքից միմյանց հետ կապ չունեցող երեւույթների միջոցով բանաստեղծը պատկերում է իրականության անալոգիան, եւ տիեզերքի մեջ տիեզերք մարդու հոգին բնության պես անկանխատեսելի է, քանի որ ինչպես ամպն ու անձրեւը, այնպես եւ մարդկային սիրտն ու հոգին, արցունքը գոյություն ունեն որպես բնության տարր, որպես տիեզերքի մի հյուլէ: Ժամանակները գալիս, անցնում են, իսկ պոետը սպասում է իր ժամանակին, այն ժամանակին, երբ իդեալի ու իրականության խզումը կմոտենա նվազագույնի կամ իսպառ վերացած կլինի:

Յուրաքանչյուր բանաստեղծի ստեղծագործություն ծնվում է նրա աշխարհընկալումից: Աշխարհայեցությունը դառնում է նրա ներհայեցողության խմորիչը ու պոեզիայի գեղարվեստական հատկանիշը:

Սահյանը ավանդական մտածողությանը բերեց նորը. նրա մոտ միտքը գնում է դեպի ինտելեկտուալ խորություն, եւ այստեղ է, որ բանաստեղծի խոսքի քնարականությունն ու դատողական վերաբերմունքը ներհյուսվում են՝ տեսանելի ու անտեսանելի թելերով շաղկապելով նորն ու ավանդականը, երբեմն նաեւ թույլ չտալով տարանջատել այդ սահմանը.

**Մեկն ասում է՝ հին է,
Մեկն ասում է՝ նոր է:
Իսկ ինձ համար մեկ է...
Երբ որ մեջը վերք է
Եվ քո ապրած օրն է,
Երգն, իսկապես, երգ է,
Հինն ու նորը ո՞րն է ⁶:**

⁴Սահյան Յ., Երկեր, հ. 1, «Սովետական գրող» հրատ., Եր. 1984, էջ 327:

⁵Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, Գիրք 4, Եր., 2004, էջ 518:

⁶Սահյան Յ., հ. 2, «Սովետական գրող», Եր. 1984, էջ 55:

Այստեղ բանաստեղծի ասելիքը դառնում է ժամանակի սահմանումներից դուրս, քանի որ, բանաստեղծությունը տիեզերական երեւոյթ է, բառը՝ տիեզերք:

Յուրաքանչյուր բանաստեղծություն սոցիալական արմատներ ունի, որովհետեւ ոչ մի ստեղծագործող չի կարող իր մեջ չկրել սոցիալական միջավայրի ազդեցությունը, արտաքին աշխարհից ստացած ազդակները եւ չի կարող իր ապրած դարաշրջանից դուրս լինել:

«Պոեզիայի աշխարհում ժամանակը կանգնում է, քանզի քերթողական արվեստն իդեալապես ժամանակի ոչնչացման ակտ է,-նշում է մեքսիկացի բանաստեղծ, էսսեիստ, մշակութաբան Օկտավիո Պասը:-Առօրեական խոսքի բառերը, ինչպես ծառի տերեւները, պարբերաբար չորանում ու թափվում են՝ տեղը զիջելով նորերին. մեռնում են նաեւ դրանք սնուցող ծառերը՝ լեզուները, բայց բանաստեղծության մեջ բառն ամրակայվում է հավետ, որովհետեւ մեծագույն արվեստը, որքան էլ այն հին լինի, անխամրելի է եւ հավերժ արդիական. այն «ընդմիշտ գալիք անցյալն է, ցանկացած պահի պատրաստ ներկա դառնալու»⁷: Այսինքն, մի կողմից բանաստեղծությունը դառնում է ժամանակի բարձրագույն մարմնավորումը, մյուս կողմից՝ ժամանակի տիրակալը:

Սահյանի պոեզիայում ժամանակը ներկայանում է նաեւ մեկ այլ կատեգորիայով՝ պատմական ժամանակի բնութագրումով: Հատկանշական են նրա բանաստեղծական ժողովածուների ու բանաստեղծությունների վերնագրերը, որոնք մի ամբողջ պատմական ժամանակաշրջան ու պատմական կենսագրություն են խորհրդանշում՝ «Հայաստանը երգերի մեջ», «Նաիրյան դալար բարդի», «Որոտանի եգերքին», «Երգ Հայաստանի», «Հայ ժողովրդին», «Արաքս» եւ այլն:

«Հայաստանը երգերի մեջ» բանաստեղծությունը մարմնավորում է Հայաստան երկրի պատմությունը՝ անցյալ, ներկա եւ ապագա ժամանակներում՝ այսինքն՝ Հայաստանը հինավուրց, նորօրյա եւ դեռ չգրված երգերի մեջ. հինավուրց երկիր, տարագիր հայի հոգու բաղձանք, պանդխտության ճամփաներ, որբերի սիրտ, որդեկորույս մայրեր, թափառական անտունի, հորովել քաղցրահնչուն, խրախճանքներ, այսպիսին է Հայաստանը հինավուրց երգերում: Մի քանի տողի մեջ Սահյանը գծագրում է հազարամյա պատմություն ունեցող ժողովրդի կենսագրությունը ու արտացոլում ժամանակը՝ ժողովրդի կենսածեւով ու կենսատարածությամբ, բնավորությամբ ու հոգեկերտվածքով.

*Մի Վարդանի սրի շառաչ,
Մի Ֆրիկի արդար բողոք,
Մի Սասնա տան թուր-կայծակի
Դավթի հզոր ձեռքերի մեջ.-*

⁷Պաս Օկտավիո, Մենության լաբիրինթոսում: Բանաստեղծություններ, էսսեներ, եր., Գրական էտալոն, 2012, էջ 149:

**Այսպիսին է Հայաստանը
Մեր հինավուրց երգերի մեջ:**

Ապա բանաստեղծը գծում է նորօրյա Հայաստանի փառավոր ու հաղթանակած, հույս առաքող պատկերը. ժամանակն այստեղ ամենավեհն է փառքերի մեջ.

*Արարատյան երկնքի տակ
Իր ոստանը սրբագործել,
Ամեն մի քարն իր երազի
Արելով է ոսկեզօծել,
Ի հեճուկս նրանց, ովքեր
Մեր Արարատն առան գերի,
Իր հանճարի բռնկումով
Կերտել է Տունն իր երգերի,
Կերտել է նոր մի Արարատ
Երկինք մտած շենքերի մեջ.-
Այսպիսին է Հայաստանը
Մեր նորօրյա երգերի մեջ:*

Հայաստանը հավերժ է, ժամանակն ու մահը անգոր են կենսահաստատ ժողովրդի առջև:

Պատմական ժամանակը Սահյանի ինչպես այս, այնպես էլ շատ ու շատ ստեղծագործություններում կենտրոնական թեմաներից է: Պատմական ժամանակը ստատիկ վիճակ չի ձանաչում, այն ապրում է բնության հետ համահունչ՝ ծնունդ, կյանք, մահ, անմահություն: Բնությունը Սահյանի պոեզիայում դառնում է պատմության արտահայտություն: Բնությունը պատմություններ չգիտի, բայց բնության մեջ ապրում են ներկայի անցյալի եւ գալիքի բոլոր ոճերը⁸:

*Այստեղ սարեր կան սարերի վրա,
Եվ ձորերի մեջ ձորեր կան մթին,
Ես չեմ հավատում իմ մայրամուտին,
Այստեղ սարեր կան սարերի վրա:
Այս իմ աշխարհն է, եւ ես եմ նրա
Քարերից բուսած բանաստեղծ որդին,
Այստեղ սարեր կան սարերի վրա,
Եվ ձորերի մեջ ձորեր կան մթին:
Ես չեմ հավատում իմ մայրամուտին ⁹:*

Սահյանի աշխարհում բնությունն անմահ է, ասել է թե՛ ժամանակն անվերջանալի է, պատմությունը հավերժ է ու հարաշարժ: Մարդկային կյանքի պատմությունը մայրամուտ չունի, այսինքն՝ բանաստեղծն անմահ

⁸Պաս Օկտավիո, Մենության լաբիրինթոսում: Բանաստեղծություններ, էսսեներ, եր., Գրական էտալոն, 2012, էջ 80:

⁹Սահյան Դ., Հայաստանը երգերի մեջ, «Հայպետհրատ», Եր. 1962, էջ 58:

է իր աշխարհում, որովհետեւ նա բնության մի տարրն է, ինչպես քարի վրա մամուռն է բուսնում ու քարի վրա դիմավորում արեւածագն ու մայրամուտը եւ նորից արեւագալը եւ նորից ու կրկին...բնության հարաշարժության մեջ պատմությունն ու ժամանակն արտացոլվում են, նույնականանում ու մշտափոփոխվում կրկնությամբ նորովի ծնվում՝ չհավատալով մայրամուտին, ժամանակի վախճանին...

Խոսելով Սահյանի բանաստեղծական արվեստի մասին՝ գրականագետ Վարդան Հակոբյանը հետաքրքիր զուգահեռներ է անցկացնում Համո Սահյանի ու Մարտիրոս Սարյանի ստեղծած աշխարհների միջեւ եւ ընդգծում Սահյանի նորարարությունը հայ քնարերգության մեջ. «Սահյան բանաստեղծի եւ Սարյան նկարչի արարած աշխարհների միջեւ մեծ հոգեհարազատություն ու հոգեւոր աղերսներ կան: Սարյանի գույներ բառ է, Սահյանի բառը՝ գույն: Համո Սահյանի ստեղծածն աննախադեպ նորարարություն է ոչ միայն մերօրյա, այլեւ ընդհանրապես հայ քնարերգության մեջ: Նա բնապաշտական իր մտածողությամբ անմրցակից է մեր պոեզիայում եւ նոր հուն ու ակոս է բացում... Եւ ոչ միայն ինքն է ներսից բացում երեւոյթը, Սահյանի բերած ամենամեծ նորություններից մեկը, այլեւ այնքան է երեւոյթին կենսունակություն տալիս, որ նա ինքն է իրեն բացում՝ բացելով նաեւ իր ծովվածքում մշտագո բանաստեղծին»¹⁰:

Պատկերի հիմքը ներքին կոնֆլիկտն է, հակասությունը: Պոետները մեծ են այնքանով, որքանով ոչ թե իրար նման են, այլ՝ որքանով իրարից տարբեր են: Յուրաքանչյուր պոետ իր նորությամբ է բերում: Բանաստեղծը պարզ ու անզարդ խոսքերով իր բախտն է երգում, իր դարը: Եվ բանաստեղծության մեջ առաջնայինը դառնում է ճշմարտացիությունն ու ընթերցողի հետ անկեղծ ու ազնիվ լինելը, այլ ոչ թե՝ հինն ու նորը: Սահյանը յուրացրել է այն, ինչ ստեղծել է մարդկային միտքը: Յուրացրել եւ կարողացել է այն արտահայտել անձնականացված: Եվ եթե տառապանքը խորն է, այդ տառապանքից ազնիվ երգ է ծնվում:

Հ. Սահյանը ստեղծեց իր ճշմարիտ աշխարհը, տիեզերական միտքը շնչավորելով իր բանաստեղծական նոր շնչով, ոգով, եւ հանրագումարի բերելով դասականների մտքերը, ստեղծեց իր բանածելը. «Սարյանն ասել է՝ մարդու մի տեսակ կճանչընամ՝ երեխա: Տերյանը սահմանել է իր ձեւակերպումը. «Մենք բոլորս, բոլորս մանուկներ ենք որք»: Չարենցը գրում է. «Մանկությունս հիշելիս սիրտս դառնում է գինով...»: Շիրազին հանձար եւ մեծ մանուկ ենք ասում: Ո՞վ չի երագել երեխա մնալ, մեծանալ, այո, բայց մեջը երեխան պահել: Ուրեմն՝ բոլորս նույն բանն ենք ասում. նորը մարդուս շունչն է ու շնչառությունը: «Մենք բոլորս, բոլորս մանուկներ ենք որք» /Վ. Տերյան/: Ո՞վ չի ասել ու չի ասում, որ մարդս լավ ու բարի պիտի լինի: Թումանյանն էլ է ասել. «Երնեկ նրան, ով մարդ կգա ու մարդ կերթա անարատ»: Ասել ու վերջացրել է: Այլոք կգան ու նույն

¹⁰ Հակոբյան Վ., Երկեր Ե, «Դիզակ պլյուս» հրատ., Ստեփ., 2008, էջ 289:

բանն այնպես կասեն, որ լսողին նոր կթվա, ի վերջո, բոլորս նույն բանն ենք ասում»¹¹:

Բոլոր ժամանակներում էլ բանաստեղծը ճշմարտություն որոնող է: Ասելիքը նույնն է, փոխվում են ասելիքի ձևերը, որով էլ բնութագրվում է բանաստեղծի անհատականությունը, նրա ստեղծագործությունների ոճական առանձնահատկությունը, բերած նորույթը: Հ. Սահյանն ավանդականի կողքին բերեց իր բանաստեղծական նոր մտածողությունն ու աշխարհընկալումը, որն առաջին հերթին բնութագրվում է մարդ-բնություն յուրահատուկ, չնկատված ու չբացահայտված հարաբերությամբ:

Բանաստեղծը հիմն ու նորը համադրում է, սինթեզում: Նրա բերած նորույթը նաեւ այն է, որ նա հայ գրականության մեջ նոր նյութ ընտրեց: Նրա նյութը՝ ամպը, զամպը, քարը, ծառը, քարափը, գետն է, եւ այս նյութի մեջ նա վերարտադրեց, արտացոլեց մարդուն: Շիրազը մարդու մեջ մանուշակ բերեց, իսկ Սահյանը՝ մանուշակի մեջ մարդ բերեց: Սահյանի բերած բնությունը մտածում է, խորհում է, մարդեղենացած է, որը բխում է բանաստեղծի ինքնատիպ բնապաշտական զգացողությունից եւ այդ զգացողության հետաքրքիր ու յուրատիպ դրսեւորումից:

Համո Սահյանի բանաստեղծական աշխարհը ժամանակային ու տարածական անսահմանությամբ է ներկայանում: Եվ աշխարհն ու տիեզերքը նա տեսնում է իր տողի ու բառի դիտակետից, բառ, որը տիեզերք է:

Համո Սահյան երեւոյթը ամեն անգամ նորովի է ընկալվում, որովհետեւ երեւոյթն այդ դեռ չբացված շերտեր ունի, որ ինչքան էլ բացենք, դարձյալ խորհրդավոր է, բազմաշերտ ու բազմատարր, բացելու ենթակա, թունանյանական բանաձեւմամբ՝ աչքի պես պարզ ու աչքի պես բարդ:

Սահյանի ստեղծագործությունների գեղագիտական հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրությունը կարծես թե լուծում է նույն այդ հիմնախնդիրը՝ բնության ու դրանից ածանցվող սոցիալական գործոնների ներդաշնակությամբ: Այս երկու գործոնների փոխազդեցությամբ թերեւ բացահայտվում է սահյանական պոեզիայի գեղագիտության բացառիկ կողմը: Այն է՝ գեղագիտական կատեգորիաները բացահայտվում են նաև աշխարհի գեղագիտական յուրացման այն բազմակողմանիության մեջ՝ տխրությամբ ու զրկվածությամբ իմաստավորված կյանք կամ իրականություն, բնության ներդաշնակության մեջ ծնունդ առած երանության վիճակ և այլն, որն արտահայտվում է Սահյանի պոեզիայի գեղագիտության կոնտեքստում: Սահյանի ստեղծագործություններում ևս օրինաչափորեն գեղագիտական կոնտեքստը պայմանավորված է տվյալ դարաշրջանի սոցիալ-պատմական պայմաններով: Դրսևորելով իր ընդդիմությունը սոցիալական այս կամ այն երևույթների նկատմամբ, որն արտահայտված է տխրության ու տառապանքի ձևով, Սահյանը բնության իր իդեալում է գտնում այն ստեղծագործական հարմոնիան, որով ձևավորվում է գեղագիտական կոնտեքստը:

¹¹ Հ. Հովնաթան, *Խոսում, խոսեցնում է Համո Սահյանը, «Հայաստան» հրատ., Եր. 2014, էջ 16:*

РЕЗЮМЕ

Зарине Сараджян

**Сочетание нового и традиционного
в поэзии Амо Сагяна**

Новое обычно основывается на традиционном. В армянской литературе отношение традиционного и нового всегда было актуальным. В этом плане выделяется лирика Амо Сагяна. Писатель творчески усвоил богатые традиции армянской и зарубежной литературы, его мысли питаются неиссякаемым источником национального и народного мышления, родной земли, неповторимой природы, богатого опыта наших классиков. Писатель сочетает, синтезирует старое и новое.

SUMMARY

Zarine Sarajyan

**The Combination of the New and
Traditional in Hamo Sahyan's Poetry**

The new is usually based on the traditional. In the Armenian literature the relation between the traditional and the new was always actual. In this regard the lyric poetry of Hamo Sahyan is distinguished. The poet acquired creatively the rich traditions of the Armenian and foreign literature, his thoughts are enriched with inexhaustible source of the national thinking, native land, unique nature, rich experience of our classics. The writer combines, synthesizes the new and the traditional.

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
«Գրիգոր Նարեկացի» համալսարան

ԱՋԱՏԱՄԱՐՏԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՌԻՎԱԳԻԾԸ

Ազատամարտի արցախյան պոեզիայի ակունքները սկիզբ են առնում 20-րդ դարի 20-ական թվականներից: Այս տեսակետից բացառիկ նշանակություն ունի Գրիգոր Ներսիսյանի (1887-1937) գրական գործունեությունը: Կենսագրական հանգամանքների բերումով դեգերելով այլևայլ վայրերում, նա 1926-ին վերադառնում է հայրենի Արցախ և ձեռնամուխ լինում ինքնավար մարզի մտավոր-գրական կյանքի կազմավորմանը: Ծնունդով շուշեցի, նա դառն կսկիծով ականատես է լինում երբեմնի բարգավաճ քաղաքի վառված փլատակներին և բանաստեղծական իր խոսքը ուղղում բարբարոսական արարքի մեղսակիցներին:

*Խելացնոր թմբիր է իջել հիմա հիվանդ իմ հոգում,
Ասես անկյանք շիրիմների խենթ երգիչն եմ, որ էլի
Լքած աշխույժ աղմուկները կենսաթոթիռ ժխորի՝
Հետ եմ դարձել գերեզմանված այս քաղաքը հայրենի...¹
(«Ավերակներում»)*

Ապա բանաստեղծը սարսռեցնող տեսարաններ է ներկայացնում «մահասարսուռ դամբարաններում» թաղված նահատակներին, որտեղ «հին գեհեների գավակները լեշ են լափում, մարդկային միս, արնաշաղախ մանկան միս», ինչպես ողջակիզվող սև գեհե՛նում: «Հեռու տարեք ինձ այս ավեր ու անմռունչ քաղաքից», ասում է բանաստեղծը, քանզի անկարող է ականատես լինել «խելացնոր իր սիրո» հիշատակների «մոխրածածկ դիերի» փոշիացած բեկորներին: Այս բանաստեղծությունը իրավամբ կարելի է համարել հայոց եղեռնապատումի առաջին արձագանքներից մեկը:

«Ամբաստանագիր» բանաստեղծությունում Ներսիսյանը դիմում է աշխարհի դատավորներին, որոնք սոսկ «օրենքի, ձևականության ծառաներն են» և «շուքով դատում են» գողություն, բռնաբարություն և այլ զանցանքներ, պարտավոր են դատելու եղեռնի նենգ, խարդախ դեերին, որոնք մոխրակույտի են վերածել քաղաքը և «օրհներգել ու երկնել են զագիր այս արյունի ծովը»:

*Դատեցեք անդարձ... Ես դատախազն եմ
Ձեր ահեղ դատի...
Թողեք ձեր խոսքը անողոր լինի*

¹Ներսիսյան Գ., Վերջին երգից առաջ, Ստեփանակերտ, 2013, էջ19:

*Այս դահիճների ոհմակի համար,
Թողեք ձեր խոսքը դարերի ձեռքում
Անսասան զնդան, անկործան մի մուրձ,
Մի կռան լինի սրանց հուշերը,
Սրանց հետքերը հավիտյան ցրող...*

Սակայն հայրենի քաղաքի ավերակները չեն կասեցնում բանաստեղծի ձգտումները երկրամասի մտավոր կյանքի նորոգության ուղղությամբ: Հայրենիքը և հայրենասիրությունը դառնում են նրա ստեղծագործության գլխավոր մոտիվը: Այս տեսակետից ուշագրավ է Ներսիսյանի «Վերադարձ» պոեմը: Պոեմը ներկայացնում է Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի»-ի հերոսի վերադարձը հայրենիք: Հուշագիրները վկայում են, որ Իսահակյանը կարդացել է պոեմը և ասել՝ «Աբու-Լալային ես այնպես եմ ուղարկել, որ այլևս ոչ ոք չի կարող նրան վերադարձնել», և ապա բնութագրել Ներսիսյանին՝ որպես «հզոր բանաստեղծ... պարզապես ժամանակը կերավ նրան, ինչպես և նրա նման շատ շատերին: Եթե նրան թողնեին ապրել, գիտե՞ս ինչ գործեր կստեղծեր»²: Իրավացի է Վարդան Հակոբյանը՝ նշելով, որ «Վերադարձ» պոեմում զգալի է ինքնակենսագրական շեշտը՝ «պարզապես ինքը «փոխարինեց» Աբու-Լալա Մահարուն՝ վերցնելով նրա ցուպը»:

Վերադարձի իմաստը հայրենիքի գաղափարն է, հայոց բնաշխարհը, հայոց պատմական հայրենիքը, որ թեև օտարված, բայց որպես մասունք սրբագործվում է ազգային հոգեբանության մեջ: Այլ կերպ, քան անձնական զգացմունքի ներշնչանքով են հնչում հետևյալ տողերը. «Շքեղ հայրենիք, գեղ ազատության վայր իմ հարազատ, հյուրընկալ եղիր հեռու ավերում անամոք վշտի գրկի մեջ խամրած քո որդու համար...

Որքան եմ ցավում, որ քեզնից հեռու եմ ապրել այնքան տարիներ, որ ես չեմ տեսել քո հզորացման չքեղ փրկության արշալույսը գեղ»:

Միանգամայն թափանցիկ են նաև բանաստեղծի հավատի խոսքերը հայրենիքի գոյության ու մաքառման վերաբերյալ. «Ողջույն քեզ քաղաք, մարդկային կամքի դու շքեղ զնդան, դարբնոց վիթխարի, հավետ պայքարող ու հավետ հաղթող կռվի դու մարտիկ արի...»:

Գրիգոր Ներսիսյանի տաղանդի փայլն ու ազգային ոգու նվիրումները չէին կարող չչարժել անկիրթ ու գրեհիկ տիրապետողի քենն ու նախանձը, նացիոնալիզմի ու հակակուսակցական օպրոհ-ցիաներին հարելու մեղադրանքով նրան չղատապարտել մահվան:

Նույն ճակատագիրն էր վիճակվելու նաև դարաբաղյան պոեզիայի տաղանդավոր բանաստեղծ, «ներքին աքսորյալ» Թաթուլ Հուրյանին (1912-1942), եթե չգոհվեր Հայրենական պատերազմի ռազմաճակատում: Ասում ենք նույն ճակատագիրը, քանզի արդեն

²Ներսիսյան Գ., Վերջին երգից առաջ, Ստեփանակերտ, 2013, էջ 5, Վարդան Հակոբյանի առաջաբանից:

նրան նույնպես հետապնդում էր ազգայնականության պիտակը:
Իսկ բանաստեղծի խոհերում իրոք ամօքայծում էր հայ հանճարի
ազգային ոգին.

*Մենք դարերով կերտել ենք մեր արվեստի տունը
Եվ գիշերները անքուն, և ցերեկները բազում,
Բոլոր ջանքերով մաքրել ենք մեր երգերի հունը,
Որ ջրերը պարզ հոսեն, եթերի պես լազուր:³*

Հաճախ պոտորել են հայրենի երգերի հունը կամ պսակագրծել
նրա կանգուն սյունը, բայց մշտապես ճառագել է հայ արվեստի
հանճարը և դիմադիր եղել «չարամիտ հողմերի» նզովքին:

Ապրելով բաքվում՝ Հուրյանի հայացքը մշտապես ուղղված է
եղել դեպի Ղարաբաղը և նրա ճակատագրի մեջ տեսել է հայոց ճա-
կատագրի վերելքներն ու անկումները: «Իմ հայրենի երկրից չկա
չքնաղ ու ջերմ վայր», ասում է բանաստեղծը և դեղձենու ծաղկուն-
քին հակադրում իր հոգու թախիծը.

*Շղթա են դրել իմ մտքին, լեզվին,
Սիրտս կարոտ է հնչյունի, ձենի,
Հոգուս գետերը կելնեն, կհուզվեն,
Սիրուն դեղձենի, ծաղկուն դեղձենի*

*Այս խավար բանտում, խավար աշխարհում
Այսպես շղթայված ես մնում քանի,
Ցերեկ չեմ քնում, գիշեր չեմ քնում,
Սիրուն դեղձենի, ծաղկուն դեղձենի:⁴*

Բանաստեղծի հուշերում հայոց պատմությունը ներկայանում է
թշվառության էջերով, մեր հայրենիքը բանտի է նման, «իսկ մենք
գերիններ, խեղճ վտարանդի», մեր բազուկներին շղթա է դրված, մեր
լեզվի վրա փականքներ, «մինչև երբ մնանք օտարի գերին», մինչև
երբ կրենք օտարի լուծը: Այլ ելք չկա, քան դիմադիր կամքը և պայ-
քարի ոգին.

*Տնքում է ցավից երկիրը բոլոր,
Սուր է հարկավոր մեր ժողովրդին,
Խաչի փոխարեն սուր է հարկավոր:*

Այս հավատով Թաթուլ Հուրյանը մասնակից եղավ հայրենական
պատերազմին և զոհվեց Ղրիմի ռազմաճակատում, անավարտ թո-
ղած երգեր ու երազներ.

*Բանաստեղծն է ահա ձեր փեշերին կանգնած՝
Ձեռքին նռնակներ ու սրտի մեջ կրակ:
Նա թողել է տունն իր և իր մանկանց սիրած,*

³Հուրյան Թ., Լուսապսակ, Երևան, 1982, էջ 22:

⁴Նույն տեղում, էջ 81:

**Նա երգեր է թողել անավարտ ու անտիպ,
Ձեր փեշերին, լեռներ, անվախ ու կրծքաբաց
Մարտ է մղում բոլոր ոսոխների հայրենի...**

(«Մեկենգկյան լեռներում»)

«Արցախյան գրականությունը ստեղծվել է դժվար, անասելի դժվար պայմաններում և նվիրյալ գրական մարդկանց ազնիվ ջանքերով և զոհողություններով... որովհետև նրանցից առաջինները իրոք զոհվել, զոհ են դարձել խարդավանքներին, որոնց մշտական հեղինակները թուրք- ազերիներն են», -իր հուշերում գրում է Բոգդան Ջանյանը և ակնարկում, թե «ղարաբաղյան գրողների բաժանմունքը» ադրբեջանական օրգանների համար միջոց է եղել «նացինալիստներ որսալու համար»:

Այս ճակատագիրն է վիճակվել նաև անվանի բանաստեղծ Բոգդան Ջանյանին(1917-2007): «Բոգդան Ջանյանը,- բնութագրում են Հրաչյա Բեգլարյանը և Վարդան Հակոբյանը,-Արցախի գրական օջախի նահապետն է, այն գրողներից մեկը, որի ջանքերով 40-ականներին դժվարությամբ վերականգնվեց 37-ի դառնությունները լիովին «վայելած» Ղարաբաղի գրողների միությունը»⁵: Ընդհատումը տեղի ունեցավ Գրիգոր Ներսիսյանի եղբրական վախճանից և ապա Հայրենականի տարիների արհավիրքներից հետո: 1945-ին զորացրվելով բանակից Ջանյանը կարգավորում է Գրողների միության մարզային բաժանմունքի ձևավորման ընթացքը, սակայն 1948-ին նացիոնալիզմի մեղադրանքով աքսորվում է Սիբիր: 1954-ին վերադառնալով աքսորից՝ Ջանյանը ակտիվորեն մասնակցում է մարզի մտավոր-գրական կյանքի տեղաշարժերին: Օրերի հետ ավելի ու ավելի են սաստկանում ադրբեջանական գաղութատիրական ճնշումները ինքնավար մարզի հայկական ազգային ոգու արթնացումների դեմ՝ բռնության ու հալածանքի մթնոլորտ ստեղծելով հայրենասեր մտավորականների հանդեպ: Խուսափելով վերահաս վտանգից՝ Ջանյանը 1968-ին թողնում է հայրենի եզերքը և փոխադրվում Երևան:

Ջանյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս է տեսել 1948 թվականին «Իմ լուսաբացը» վերնագրով: Կարելի է ասել, որ այստեղ գտավ պոետական այն մոտիվն ու միջավայրը, որին հավատարիմ մնաց ստեղծագործական հետագա տարիներին: Դա իր հայրենի Տումին է, Տրտու գետը, աշխարհ Ղարաբաղն իր բնաշխարհով, լեռներով, անտառներով, արահետներով և այլն: «Իմ բերածը» բանաստեղծության մեջ Ջանյանը այդ ամենի միասնության մեջ խորհրդանշում է Արցախ երկրամասը և նրա կերպարի բացահայտման մեջ որոնում պոետական իր կոչումը:

⁵Տե՛ս Ջանյան Բ., Գեղացած հեռուներ, Ստեփանակերտ, 2007, էջ 7, «Պոետական նվիրում» առաջաբանում:

Իմ բերածը
 Մի կտոր է այս աշխարհից,
 Որ ասում են Հայոց Արցախ,
 Մի Տումի է լեռների մեջ
 Ու լեռներին թառած մի վանք,
 Մի խոր, կանաչ Իշխանաձոր,
 Մի աղմկոտ Իշխանագետ,
 Ոտքի կարոտ մի հին կածան,
 Որ կարոտիս նման անվերջ
 Պտտվում է շուրջը նրանց
 Եվ մնում է միշտ նրանց հետ:

«Հայոց Արցախ» արտահայտությունը պատահական վերադիր չէ, այլ հայրենիքի ըմբռնում՝ ի հակադրություն Ղարաբաղ անունը շահարկող տիրապետողի գաղութահար հավակնությունների:

Ես հող ունեի, որ ինձնով էր հող,
 Ես հող ունեի, որ իմն էր դարեր,
 Հողս խլեցին, հողիս տեր դարձան,
 Բայց հողս մնաց առանց ինձ անտեր:⁶

(«Տարագիր»)

Տարագիր բանաստեղծը խորն է վերապրում հեռացումի հոգեբանական տագնապները: Գերի դարձած Արցախի ճակատագիրը նույնացնում է իր ճակատագրին՝ կարծես կորցնելով վերադարձի արահետները:

Այս հանգամանքը թախծի ու հուսահատության երանգներ է հաղորդում նրա պոետական զգացողություններին՝ անվերադարձ կարոտի վիշտը հանգեցնելով բողոքի ու ընդվզման տարերքի:

Աչք բացի և քեզ խլված տեսա,
 Սևակնած տեսա քո բախտը, Արցախ,
 Քո գույների մեջ սևը շատ տես,
 Եվ սևը սրտիս սև ցավը դարձավ:

Եվ բախտդ, Արցախ, իմ բախտը դարձավ
 Եվ իմը դարձավ պատիվդ հնչեղ,
 Թե քեզ զրկել են, զրկել են և ինձ,
 Թե տանջել են քեզ, ինձ էլ են տանջել:

Իմ ունեցածը դու ես մնացել,
 Իմ ունեցածը շատ էր, խլեցին,

⁶ Զանյան Բ., Դեռացած հեռուներ, Ստեփանակերտ, 2007, էջ 31:

**Չլինի՞ վերջին կորուստս դառնաս
Եվ քեզ հետ փչեն իմ շունչը վերջին: ⁷**

Բանաստեղծի տազնապար կենսագրական բնույթ ունի և համեմատությունը ավելի է սրում տազնապար արցախյան գոյամարտի օրերին, թե ինչ է սպասվում կրակի արցանի մեջ առնված ժողովրդին: Նույն թշնամին է՝ նենգ ու դավադիր, որ մոխրակույտի էր վերածել գեղատեսիլ Շուշին և այժմ փորձում է ոչնչացնել հայոց տարրը՝ պանթուրքիզմի գիշատիչ ախորժակով: Ջանյանի պոետական խառնվածքին անհարիր են մարտակոչի խոսքերը, սույն հեռվից նա սրտի դողով էր հետևում իրադարձությունների ընթացքին, ցավագնորեն վերապրում արցախյան գունեղ դաշտերի մոխրացումը.

**Հիմա, երբ կռվի բոցերի մեջ ես,
Ծուխ-բոց է շնչում երկինքն էլ քո հետ,**

**Բոցը արշավում՝ մոխիր է թողնում.
Հող էիր, կարծես դարձել ես մոխիր...**

**Մոխիր են դարձել և ծաղիկ, և ծառ,
Ամեն տեղ այրում, բոց ու այրում է,
Բոցը լափել է գույներդ բոլոր
Եվ թողել միայն արյան թեժ գույնը: ⁸**

Ազատության գաղափարն անբաժանելի է հայրենի օջախի և ազգային ինքնության գիտակցությունից: Առավելապես այս տեսակետից է գնահատելի Ջանյանի արցախյան պոեզիան: Իր բանաստեղծությամբ նա կազմավորեց հայրենի եզերքի աշխարհագրությունը՝ բացահայտելով նրա ֆիզիկական ու հոգևոր ինքնության արժեքները: Եվ հատկանշական է, որ հայրենիքի խորհրդանշաններից նա հատկապես նախասիրում է անտառը, քանզի անտառը հավերժական է, առասպելական ու անպարտելի: Անտառը ճանապարհ է, արահետ, բնության իմաստուն արարողություն, կյանք է, շարժում և հավերժական նորոգություն: Բանաստեղծը սուզվում է անտառի լռության մեջ, և լռությունը նրան պատմում է հեքիաթ կյանքի ու գոյի մասին: Ջանյանի պոեզիայում հայրենի եզերքը առավելապես ներկայանում է հուշերի մեջ, երանելի վերհուշեր անցած օրերի մասին, և այդ վերհուշերում թանձրամած մի թախիծ կա, որ նույնիսկ անփարատ է մնում հաղթանակից հետո: Վերայցելությունը հայրենի բնօրրան նույնպես թաթախվում է թախծի մշուշով, որովհետև անորոշ է մնում Արցախի ճակատագիրը դարավոր թշնամու ռիսկալ ձգտումների օղակում:

⁷Ջանյան Բ., Դեռացած հեռուներ, Ստեփանակերտ, 2007, էջ33:

⁸Նույն տեղում, էջ233:

Երբ հեռուներից անջատումներից
Կարոտիս կանչով ես ետ եմ դառնում,
Միշտ ոտք եմ դնում այն ճամփին նորից,
Որ ինձ, ոտքերիս Արցախ է տանում:

.....
Լռած ու անցած ծայներ եմ լսում
Եվ նրանց մեջ էլ բարձր ավելի
Ու ավելի պարզ որոտն եմ լսում
Իմ Տրտու գետի ցասկոտ ջրերի:

.....
Լսում եմ, խորհում և տխրում նաև,
Որ Տրտու գետիս կռիվն անվերջ է,
Այսքան տարիներ դեռ չի խաղաղվել,
Հիմա էլ Տրտուս դեռ կռվի մեջ է:

(«Դեռ կռվի մեջ է...»)

Ժամանակակիցները վկայում են, որ Հայրենական պատերազմի տարիներին առանձնապես բացահայտ ջերմությամբ էր հնչում դարաբաղյան թեման ժողովրդի հայրենասիրական զգացողություններում: Շրջիկ գուսաններն ամենուրեք արտասանում էին «Ինչ սիրուն է Ղարաբաղը» երգը, և գրեթե երգումի պես էր հնչում դարաբաղյան սիրո բայաթին.

Ես աշուղ եմ վարդի թաղը,
Շաքին, Շիրվանն է շարմաղը,
Այստեղ եթե ոսկի դառնա,
Չեմ մոռանա Ղարաբաղը:⁹

⁹Տե՛ս Սարինյան Ս., Ի հեճուկս, Ստեփանակերտ, 2006, էջ 37-38:

РЕЗЮМЕ

Амалия Григорян

**Исторический силуэт освободительной
борьбы в арцахской поэзии.**

В статье рассматриваются истоки арцахской поэзии, которые сформировались в 20-ых годах 20-го века. Проведен литературный анализ произведений Григора Нерсисяна, Татула Гуряна и Богдана Джаняна, участвовавших в арцахской освободительной борьбе.

SUMMARY

Amalya Grigoryan

**Historical Highlights of the
Liberation Struggle in Artsakh Poetry**

The article deals with the sources of Artsakh poetry which were formed in the 1920s of the 20th century. The works of Grigor Nersisyan, Tatul Guryan and Bogdan Janyan, who took part in Artsakh liberation struggle, are analysed literally.

ՆԱՆԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ
Արդ համալսարան

ՀԱԿՐԲ ԿԱՐԱԴԵՆՑԻ «ԱՐԳԱՐ ԱՄՈՒ ՕՏԱՐ ՀԱՐՍԸ» ՊԱՏՄՎԱԾՔԸ

Հակոբ Կարապենցը սփյուռքահայ է (ինքնատիպ արձակագիրներից մեկն է՝ 1925թվականին)¹ սփյուռքահային հատուկ բարդ, հակասական ու դրամատիկ ապրումներով: Հայի՝ էթնիկ ոգուն հատուկ ինքնատիպությամբ Կարապենցը գրում է. «Շատերը հորդորում են ինձ անգլերեն գրել: Սակայն ամերիկյան գրականության մասը կազմելու համար ամերիկացի պետք է լինել: Ես հայ եմ, սփյուռքահայ, որը յուրահատուկ մի արարած է աշխարհի պատմության մեջ: <...> Հոգեպես կապված եմ Հայաստանին, սակայն իմ տունը Նյու Յորքն է: Թեև երկար տարիներ Ամերիկայում եմ ապրել, սակայն ամերիկացի չեմ: Այդուհանդերձ, իմ հայությունն իմ ինքնատիպությունն է, իմ վկայագիրը՝ քայլելու ամբոխների միջից և զգալու, որ տարբեր եմ»²:

20- ըրդ դարասկզբի մեծ ողբերգությունը վերապրածների տագնապների, նրանց հետնորդների հոգեբանության մեջ կատարված անխուսափելի փոփոխությունների, բարեկեցիկ կյանքի որոնման ճանապարհին ազգային արժեքների խեղաթյուրման ու կորստի ցավով էլ Կարապենցը հնչեցնում է ահագանգի կոչնակներ: Նրա արծարծած մի շարք հարցեր ու երևույթներ այսօր էլ օրախնդիր են ինչպես մայր հայրենիքում, այնպես էլ սփյուռքում (ազգային դիմագծի, ոգու և հավատի պահպանում, մայրենի լեզվի և մշակութային արժեքների անաղարտություն, մայր հայրենիքում, հարազատ ժողովրդի գրկում ապրելու անփոխարինելի երանություն):

Կարոտի գրականությունն իր բազմաձյուղ ու բազմաշերտ դրսևորումներն ունեցավ Կարապենցի գեղարվեստական համակարգում: Նրա հերոսները համազգային ողբերգության արյունոտ ճանապարհն անցած, հայրենի եզերքից բռնազաղթած, օտար ափերում ապաստանած հայերի մի քանի սերունդներ են: «Նրա հերոսները հողի և աշխատանքի մարդիկ են, եկած կրակների, ծխի, վառողի դաժան բովից՝ իրենց բազուկներով և հայրենական հիշատակներով մաքառում են ձակատագրի դեմ: Աշխատանքի և դեգերումների ընթացքում, երազների և հույսերի մեջ տարագիր հոգիները դրսևորում են նաև տիտանական ինչ-որ բան, որոշ առումով մոտենում են ժողովրդական էպոսի հերոսներին»²:

Կարոտի և հուշի նախակարապենցյան շրջանի գրական հերոսները գլխավորապես կորուսյալ հայրենիքի հիշատակներով ապրող հայեր են: Կարապենցը նորարար եղավ նաև այս ասպարեզում: Նա գրականություն է բերում ձակատագրից հալածված, քաղաքական, սոցիալական զանա-

¹ Կարապենց Գ., Անկատար և այլ պատմվածքներ, Նյու Յորք, «Ոսկետառ» հրատ., 1987, էջ 205- 206:

² Թամրազյան Գ., Գրական դիմանկարներ, հոդվածներ, Երևան, «Նաիրի» հրատ., 1998, էջ 180:

զան հանգամանքների բերումով հայրենի եզերքից հեռացած, աշխարհաքաղաքացի դարձած հակասական ու բարդ ներաշխարհով ժամանակակից մարդուն՝ առանց ազգային խտրականության: Այս առումով նրա արձակն ունի համամարդկային հնչեղություն: Հայի՝ վիրավորված ազգային արժանապատվությունը վերականգնելու, վերածնվելու և վերահաստատվելու գերմարդկային ճիգեր են գործադրում եղեռնազարկ ժողովրդի բեկորները՝ Կարապենցի հերոսները:

Կարոտի գրականության տեսլականը երևում է Համաստեղի, Մնծուրու, Շահան Շահնուրի, Վազգեն Շուշանյանի և ուրիշ սփյուռքահայ գրողների երկերում: Եթե նախորդ շրջանի գրողներն իրենց գործերում առավելապես արծարծել են օտար ափերում կորուսյալ հայրենիքի հիշատակներով ապրող հերոսների հոգեկան վայրիվերումները, հայրենիքի քաղաքական կացությունից բխած անկանխատեսելի հետևանքները, ապա՝ Կարապենցի գեղագիտական համակարգում այս խնդիրներին զուգահեռ արծարծվում է հայապահպանման հարցը, գրողը մատնանշում է սպիտակ ջարդից խուսափելու հերոսների իր կենսակերպը: Քաղաքական իրադարձությունների հորձանուտում հայտնված անհատի դրաման Կարապենցը բացահայտում է յուրովի: Նրա ստեղծագործություններում հաճախ են հետեղեռնյան տարիների դժվարություններն ու կորուսյալ հայրենիքի հանդեպ ունեցած կարոտը հաղթահարող, նաև՝ պահանջատիրության այլ եղանակ ընտրող, կյանքի գնով անգամ ուժացման վտանգից իրենց զավակներին ու թոռներին հեռու պահող, ազգային արժեքներն ու մայրենի լեզուն աշխարհի տարբեր ծագերում պահպանող հայրենակարոտ աշխարհասփյուռ հայեր: Կարապենցն իր հերոսների հոգու ներքին ծալքերը բացահայտում է վարպետորեն, փորձում արդարացնել դաժան ճակատագրի ու անխուսափելի իրականության դեմ հանդիման միայնակ հայտնված Աբգար ամու արարքը: Ընթերցողն զգում է, որ անխուսափելի է ինչպես պայքարը, այնպես էլ՝ համակերպումը:

Կարապենցի արձակն աչքի է ընկնում ընդհանրացման մեծ ուժով, հոգեբանական ներթափանցումներով ու անկաշկանդ անկեղծությամբ: «Կարապենցի տաղանդը մտածողի ու գեղագետի մի բացառիկ միասնություն է ներկայացնում, միասնություն՝ որպես ներքին ձևի հատկանիշ: Այստեղ է կազմավորվում սյուժեի ավարտվածությունը, որ ներդաշնակություն է տալիս մեր ցաք ու ցրիվ զգացողություններին և պատճառում ճանաչման հաճույքը՝ «փորձում են կերպարանք տալ իմ ներքին քաոսին, ապա՝ իմ շրջապատի քաոսին»: Մտածողի ու գեղագետի բարձր համադրությամբ Կարապենցն ընդլայնում է հայ գրականության աշխարհայացքը»³, - գրում է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը՝ «Հակոբ Կարապենցի դասերը» հոդվածում:

Կարապենցն անձամբ ճաշակել է տեղահանության ու տարագրության դառը պտուղները՝ հոգու մեջ վառ պահելով հայրենի բնօրրանի կենդանի պատկերները: Նրա ստեղծագործություններում ջարդի, կոտորածի

³Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, Գիրք չորրորդ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2004թ., էջ 319- 320:

մասին ակնարկվում է հպանցիկ: Անցյալի մոծավանջային տեսարանները վերակենդանանում են հերոսների վերհուշի միջոցով: Կարապենցի հերոսներն օժտված են բուռն կենսասիրությամբ, նրանք հոռետես չեն, ցավն ու վիշտը նրանց մեջ՝ էլ ավելի են բորբոքում ապրելու, արարելու, մայրենի լեզուն ու հայրենի հավատն ամուր պահելու չխամրող կրակը: Արծակագիրը, ոգեկոչելով անցյալը, շեշտը դնում է աշխարհի տարբեր ծագերում հայտնված գաղթահայության ծանր ու դժվարին կյանքի, նրանց պայքարի, ազգայինը պահելուն զուգահեռ՝ նոր հասարակության օրենքներին ու բարքերին հարմարվելու, օտար ավերում ազգային ինքնագիտակցությունը բարձր պահելու, բարոյահոգեբանական մարտահրավերներին դիմակայելու առաքելության վրա: «Նա գնում է դեպի մեծ կյանք, հաշվի է նստում անխուսափելի իրողությունների հետ՝ վերացնելով որոշ պատմեշներ: Ավելի ճիշտ՝ արվեստագետը ձգտում է գտնել այն տեղը, որ գրավում են հայկական սերունդները ամերիկյան իրականության մեջ, հետևում է կյանքի ընթացքին ու վերափոխումներին, բնականաբար, նաև նորագույն խաչաձևումներին»⁴:

Ասելիքի թարմությամբ, արժարժած խնդիրների հրատապությամբ ու արդիականությամբ աչքի է ընկնում Կարապենցի «Աբգար ամու օտար հարսը» պատմվածքը: «Աշխատանքի մարդիկ էին այդ արաբկիրցիները, համառ, ինքնամփոփ, անտաշ մարդիկ, որոնք սև բազուկներով հող էին քանդում, բլուրները տեղահան անում և նրանց տեղ բնակարաններ շինում Ջեֆերսոնի արվարձաններում»⁵: Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից, այս դեպքում՝ Արաբկիրից մագապուրծ գաղթած մի գերդաստանի կյանքի առօրյա ու անխուսափելի փաստի մեջ գրողը մեծ կենսափոխություն է տեսնում: Ընտանիքի ամենատարեց անդամը՝ ութսունհինգի դռները ծեծող Աբգար ամին ապրում էր հայրենի Արաբկիրի հիշողություններով, անգամ հեռավոր Ջեֆերսոնում իր որդիների ու դուստրերի, ապա՝ նաև թոռների համար փնտրում և գտնում էր միմիայն արաբկիրցի կողակիցներ՝ հայի գենը մաքուր պահելու, սերունդներին հայեցի ոգով դաստիարակելու, ազգային պատկանելիությանն ամուր կառչելու միտումով: Հպարտ, համառ ու աշխատասեր, քարից հաց քանող, մի իսկական հողի մարդ էր Աբգար ամին: Գերդաստանի նահապետը մեղվի աշխատասիրություն ու միասնություն էր սերմանում նաև մեծ ընտանիքի յուրաքանչյուր անդամի մեջ: Գարակյոզյան գերդաստանը մեծ հեղինակություն էր վայելում Ջեֆերսոնում: Ընտանիքը համատեղելու նպատակով Աբգար ամու հրահանգով գերդաստանն ապրում էր Ֆրանկլին փողոցի հինգ հարկանի բազմաբնակարան մի շենքում և ամեն երեկո միասին էր ճաշի նստում: Աստծու ողորմածությունը մշտապես հայցող հավատավոր հայի կերպարն առավել դիպուկ ու բազմակողմանի է բացահայտվում ընթրիքից առաջ երկնավորին դիմող Աբգար ամու փառաբանական աղոթքում:

⁴Թամրազյան Յ., Գրական դիմանկարներ, հոդվածներ, էջ 176:

⁵Կարապենց Յ., Երկեր, Գիրք առաջին, Երևան, 1995, էջ 212:

Արտաքուստ՝ աննշան, ներքուստ՝ մահվան աստիճան խոցելի մի հանգամանք, սակայն, խախտում է գերդաստանի առօրյա կյանքն ու հանգիստը: Աշխուժությունն իր տեղը գիջում է մեռելային լռությանը: Գեղարվեստական կառուցվածքում նուրբ հոգեբանական անցումներով գրողը բացահայտում է իր հերոսների ներաշխարհը, օգնում գտնել հաշտեցման եզրեր, ազգային պատկանելիությունից առավել բարձր գնահատում մեծատառով մարդ լինելու կոչումը:

Դեռևս 1898 թվականին լույս տեսած Շիրվանզադեի «Քաոս» վեպում մեծահարուստ Մարկոս Ալիմյանը չի կարողանում հոգին հանգիստ ավանդել: Ծանր վիշտը՝ որդու՝ «օտար» աղջկա հետ ամուսնանալու դառը իրողությունը, անգամ մահվան մահճում, տանջում է ծերունուն: «Անիծվի՛ այն օրը, երբ նա թույլ տվեց ի՛ր Սմբատին գնալ ուրիշ երկիր՝ ուսումը շարունակելու, անիծվի նա, որ կորցեց իրենից իր որդուն...»⁶: Կարապենցի հերոսը՝ Աբգար ամին, նույնպես մորմոքում է. «Ուտքը կոտրվեր, ուսումնարանի երես չտեսներ, որ Աբգար Գարակյոզյանին այս օրին չհասցներ»⁷: Եվ Մարկոս Ալիմյանը, և՛ Աբգար ամին խայտառակություն են համարում այլազգի աղջկա հետ ամուսնությունը, այն որակում որպես դավաճանություն՝ մայրենի լեզվին, հայրենի հավատին ու ազգային ավանդույթներին: Բայց եթե Մարկոս Ալիմյանը վերջին շնչում օրհնության փոխարեն անեծքի ահեղ սպառնալիք է հնչեցնում. «Անիծվի՛ս, եթե վերջին կամքս չես կատարի՛լ...»⁸, պատվիրում՝ բաժանվել օտարազգի կնոջից և ամուսնանալ հայ աղջկա հետ, ապա՝ Կարապենցի հերոսը համակերպվում է անխուսափելի իրողության հետ: Ավանդապահ նահապետը ևս շատ ծանր է տանում թոռան՝ Վահանի այլազգի աղջկա հետ ամուսնանալու հանգամանքը: Ծանր հարվածից շշմել, քարացել էր Աբգար ամին. ծեր առյուծը ուզում էր պատեպատ տալ իրեն, որ թույլ էր տվել թոռանը ուսումնարան գնալ: Աբգար ամին փակվել էր իր առանձնասենյակում, կինը՝ Բալասանը կղզիացել էր խոհանոցում, դադարել էին երեխաների ուրախ ձիչերը, աղմուկն ու աղաղակը: Ամոթից Գարակյոզյանները ամեն առավոտ լարվում էին, բղավում միմյանց վրա: Սակայն Մերիլինի բարության, հեգության ու վճռականության առաջ տեղի է տալիս ավանդական հասկացողություններով ու պապենական օրենքներով հասակ առած մի ողջ գերդաստան: Աղջկա թե՛ ներքին, թե՛ արտաքին արևաշող գեղեցկության առաջ աստիճանաբար սկսում է հալչել Գարակյոզյանների միասնական զարկերակով բաբախող սիրտը: Անդրդվելի էր միայն Աբգար ամին: «Աբգար ամին, պարտված ալևոր գորավարի պես, հայացքը պատի ծաղկանկարներից չէր հեռացնում: Ամբողջ մի կյանք պայքարել էր, կոտորած ու ավերից էր անցել, սերունդներ էր հասցրել, հարազատներ թաղել, չար ու բարի տեսել, բայց միշտ հարգել էր իր պապերի հիշատակը, նրանց թողած սրբազան ավանդությունը և ամեն բանից առա-

⁶ Շիրվանզադե Ա., Հատոր 1, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 14:

⁷ Կարապենց Դ., Երկեր, Գիրք առաջին, Երևան, «Նաիրի» հրատ., 1995, էջ 213:

⁸ Շիրվանզադե Ա., Հատոր 1, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 15:

վել՝ վեր պահել Արաբկիրի պատիվը: Ո՛չ, Աբգար Գարակյոզյանն այդ չի ների: Կգերադասի օձի հետ պատառ կիսել և մենակության մեջ վերջին շունչը փչել, քան տեսնել իր անառակ թռռան և օտար հարսի երեսը»⁹: Բամբասանքներն ու նախանձի ալիքն աստիճանաբար խամրում, հետզհետե սկսում են մարել նաև համայնքում՝ իրենց տեղը գիջելով համակրանքին ու սիրուն: «Մերիլինն ամեն տեղ էր... Մերիլինը դարձել էր բոլորի սիրելին: Այնքան նրա նվիրվածությունը չէր, որքան հայախոսությունը, որ հմայել էր համայնքին»¹⁰:

Պատմվածքում ավանդապահ հայ կնոջ կատարելատիպ է մայր Բալասանը: Ամենքը սիրում, հարգում ու ենթարկվում էին նրան: Մայր Բալասանի կանացիության ու հնարամտության շնորհիվ էլ վերանում է խորթությունը, վերականգնվում է ընտանեկան անդորրը, «օտար» հարսի լույս աշխարհի բերած հրաշամանուկը շարժում է Աբգար ամուսրտի ամենանուրբ լարերը, Մերիլինին դարձնում ավանդապաշտ ընտանիքի լիիրավ անդամ:

Անդրադառնալով Կարապենցի գեղարվեստական ժառանգության լեզվական և ոճական առանձնահատկություններին՝ գրականագետ Սերգեյ Սարինյանն ընդգծում է. «Կարապենցն իսկական նորարար եղավ հայ գեղարվեստական արձակի լեզվաոճական տիրույթում: Ազատ, անկաշկանդ, հանդիսավոր խոսքի գեղեցկությամբ ու պատկերավորությամբ նա թարմություն ներարկեց գեղարվեստական մտածողությանը, բառերին վերադարձրեց իրենց նախաստեղծ ֆիզիկական հատկությունն ու հոգևոր զգայական էներգիան»¹¹: Հ. Կարապենցն իր արձակի պոետիկայով մի նոր երանգ է հաղորդում հայ ու կարոտի գրականությանը:

⁹Կարապենց Դ., Երկեր, Գիրք առաջին, Երևան, «Նարի» հրատ., 1995, էջ 217-218:

¹⁰Կարապենց Դ., Երկեր, Գիրք առաջին, Երևան, «Նարի» հրատ., 1995, էջ 218-219:

¹¹Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, Գիրք չորրորդ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., էջ 320:

РЕЗЮМЕ**Нанар Симонян****Рассказ Акопа Карапенца §Чужая невеста дяди Абгара:**

В данной статье анализируется и оценивается рассказ знаменитого писателя армянской диаспоры Акопа Карапенца "Чужая невеста дяди Абгара", который входит в серию рассказов "Старые сеятели нового мира". В статье посредством описания жизни династии Гарагезянов, проживающих в Америке, ставится цель просвещать повседневную борьбу за выживание армян-мигрантов, проживающих в различных диаспорах.

Вождь династии дядя Абгар, чудом спасенный от геноцида, делает все для сохранения национального достоинства, воспитания детей и внуков, чтобы они стали достойными наследниками древней Армении и армянского народа.

SUMMARY**Nanar Simonyan****"Uncle Abgar's Foreign Bride" by Hakob Karapents**

This article analyses and values the series of novel of the Armenian writer Hakob Karapents "The Old Seed- men of the New World". One of the works is "Uncle Abgar's Foreign Bride". The article describes the lives of thousands of Armenian immigrants who immigrated to America. Among them were the Karagozyans, whose aim was to reveal the sufferings of the Armenians who lived in diaspora.

Uncle Abgar did everything to keep national dignity and bring up his children who would become the heirs of ancient Armenia and Armenian people.

ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու

**ՄԱՐՏԻՐՈՍ ՈՐՆԻ ԵՐԿԵՐԻ
ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ձանգեզուրում ծնված և կյանքի մեծ մասն Արցախում ապրած ու նրան անմնացորդ նվիրված Մարտիրոս Որնը (Համլետ Մարտիրոսյան) ժամանակակից հայ գրականության ինքնատիպ դեմքերից է: Մարդկային հոգեբանության հմուտ գիտակ և խոսքի վարպետ Որնը կերտում է կենդանի պատկերներ՝ դրան հասնելով բառօգտագործման իր արվեստով ու պատկերավորման միջոցների չափազանց դիպուկ կիրառությամբ:

Իր մտորումներից մեկում Մ. Որնը գրում է. «Քանի որ գրողը գործ ունի միմիայն բառի հետ, իսկ բառը նման է խեցու (խեցին բացելով կարելի է կորզել մարգարիտը, բառն էլ ընթերցվելիս է դրսևորում իր էությունը), յուրաքանչյուր հեղինակ պարտավոր է բառը ճիշտ նպատակով և ճիշտ տեղում գործածել՝ այն պարզ պատճառով, որ բառերով նա ոչ միայն իր մտքերն է շարադրում, այլև բառերով նկարում է ընթերցողի համար, ինչպես գեղանկարիչն է անում ներկով: Եվ եթե կտավում վրձնված ֆիգուրի ճշմարտանման լինելը չէ առաջնայինը, որքան՝ բացահայտված ինքնատիպ գուներանգը, այդպես էլ գեղարվեստական գրականության մեջ ընտրված պատմությունը ինքնատիպ պատկերներով ներկայացնելն է կարևորը» [1,162]:

Իր խոսքին հավատարիմ՝ Մ. Որնը մեծ վարպետությամբ է կերտում կենդանի պատկերներ: Դրանում նրան մեծապես օգնում են փոխաբերությունները՝ նոր և չափազանց իրատեսական:

Այսպես՝ -Որոշ ժամանակ կասես երկուսով լսում էին *անծրկի տանիք կտցահարելը, բուխարու ձմկոտելը* չոր փայտի երբեմնակի չրթոցներով...[2,46]: Բուխարում *կրակը սկսել էր նիրհել, անծրկը* պատուհանի տակ *ծուլուլ է թափում* [2,47]: *Կրակը* բուխարում արդեն *քնով է անցել* [2,52]: *Արեգակն* այդ կապույտ պատուհանից մտերմիկ *ժպտում էր* արդեն...[2,57]: *Անտառը* իրիկնային երանից պչրուհու պես *խունջիկ-մունջիկ էր լինում*...[2,79]: Պահակաաշտարակից *լուսարծակները* արդեն *հոտոտում էին* գաղութի ստվերոտ անկյունները...[2,81]: Տանիքին թառած *լուսարծակը աչքը չբել էր* ամայի պլացի վրա [2,82]:

Լ. Եզեկյանը փոխաբերությունը սահմանում է իբրև «այլաբանության տարատեսակ, խոսքի պատկերավորման, ոճավորման այնպիսի միջոց, որի հիմքում ընկած է երկու առարկաների կամ երևույթների նմանությունը, և դրա շնորհիվ գրողը (կամ խոսողը) նրանցից մեկի անունը փոխարինում է մյուսի անվամբ կամ նրանց բնորոշ որևէ հատկանիշով» [3,345]:

Փոխաբերությունների՝ այսքան դիպուկ հիմքերի ընտրությունը թույլ է

տալիս անդելու, որ հեղինակը հրաշալի պատկերացնում է մարդկանց, իրերի ու երևույթների բնությունը: Մ. Ուրնի փոխաբերություններում զգացմունքներ են ամփոփված, ամեն ինչ մարդեղեն է, ապրող ու շնչող:

Ճշգրիտ ընտրված հատկանիշները տեսանելի ու իրական են դարձնում պատկերները:

Այսպես՝ Շրջվելով՝ մնաց ծառին հենված. *ծրագիր էր ծամում* (ակնարկվում է ծրագրի՝ երկար մտորվելը) [2,65]: Եվ բոլոր *խոսքերն էլ* ազատության, կյանքի, լավ կյանքի, ապրելու շուրջն *էին ուստոստում* (խոսքերի կցկտուր լինելը, ամբողջական պատկեր չկազմելը) [2,43]: Չիկին մի քանի փայտ տվեց բուխարուն՝ *ծամելու...* (դանդաղ այրվելը համեմատվում է ծամելու գործընթացի հետ) [2,46]: *Մառախուղը* այդ ընթացքում ասես սանդերքի վրա *գզգզվել էր...* (մառախուղի նոսրանալը, որի դեպքում տեղ-տեղ երևում է երկինքը, համեմատվում է սանդերքի վրա գզգզվելուն, իսկ համեմատությունը հաստատվում է *ասես* բառի միջոցով) [2,54]: ...Շիկահեր ծառերի կատարները գրեթե *խուզելով* անցավ *զնաց ուղղաթիռը...* (ծառերին՝ խուզվել-ջարդվելուց փրկում է *գրեթե* բառը) [2,56]: Վրեժը *փուլ եկավ* հարմար մի կոճղի վրա... (հոգնածությունից ու վիրավոր ոտքի պատճառած անհարմարությունից միանգամայն իրական ու հարմար է *փուլ գալը*) [2,58]: Մտքում *մաղում էր* արված *առաջարկությունները* (մաղելը առաջացնում է ընտրելու, տարբերակելու զուգակցումներ) [2,60]: *Լույսը սմբեց...* (աղոտանալու, թուլանալու, փոքրանալու հատկանիշն է) [2,123]:

Խիստ պատկերավոր ու իրատեսական են նաև համեմատությունները՝ հեղինակի ինքնատիպ մտածողության ու աշխարհընկալման դրսևորումները:

Այսպես՝ ...Աղջիկը ո՛նց էր ծիծաղում...*Ոնց որ աղբյուրից ջուր թափվի* [2,8]: *Թառից ընկած սավանի պես* թուխպը փռվել էր աշնանային անտառի վրա [2,34]: Ութն էին: Ութն էլ *արևածաղկի սերմերի պես* միանման, կալանավորի հագուստով, և ութն էլ բռից թափված *արևածաղկի սերմերի պես* շաղ էին եկել աշխատատեղից փախչելուց հետո [2,34]: Եվ յուրաքանչյուրն իր հերթին ընդարմացնող թթօղին կոնծելուց առաջ մի երկու խոսք էր ասում *ճնճղուկի պոչի պես կարճ* [2,43]: Անտառում միայն հատուկենտ ծվեններ կային, *ինչպես ցաքի վրա մնացած ոչխարի բուրդ* [2,54]: Երկինքը կաթնագույն մեզից լրիվ մաքրվել էր, *ինչպես օձառաջրով լվացված պատուհան...* [2,57]: Հոգուս մեջ նաև անանուն նստվածք էր մնացել, *ինչպես սուրճ վայելելուց հետո մրուրն է մնում* գավաթի տակ... [2,291]: Լինգի հարվածից կարծեցի գլուխս բացվեց՝ *ձաքած նռան պես...* [2,297]: Արեգակը վաղուց էր մայր մտել, մինչդեռ *վայրի մեղրի նման՝ դառնահամ*, ծլլում էր թախիծը... [2,354]:

Ինչպես նշում է Լ. Եզեկյանը. «Համեմատությունները, բացի երկու առարկաների միջև եղած ընդհանրությունները մատնանշելուց, միաժամանակ արտահայտում են հեղինակի (խոսողի) վերաբերմունքը համեմատվող առարկայի կամ անձնավորության նկատմամբ» [3,340]:

«Համեմատությունը,-նշում է Պ. Պողոսյանը,-տարբեր առարկաների կամ երևույթների միջև եղած ընդհանուր հատկանիշի հիման վրա մի առարկան կամ երևույթը տվյալ պահի ու հանգամանքների պահանջով

մյուսին նմանեցնելու, հավասարեցնելու կամ նույնացնելու երևույթն է, որին դիմում ենք առարկային կարևորություն տալու, նրա գեղագիտական արժեքը բարձրացնելու նպատակով: Միմյանցից հեռու և անհամատեղելի առարկաների ու երևույթների մեջ ընդհանրություն գտնելը և դրանք զուգակշռելի դարձնելը ոչ միայն նուրբ ճաշակի, սրամտության և բանաստեղծական շնորհքի, այլև իմացության արտահայտություն է» [4,10]:

Մ. Ռբնի համեմատությունները իրերի և երևույթների խորքը թափանցելու արդյունք են: Դրանք միաժամանակ հեղինակի՝ դիտողունակ մտքի, նայելու և տեսնելու արտահայտությունն են:

Լեզվի բառապաշարն իրեն ծառայեցնելու՝ գրողի կարողությունը լավագույնս դրսևորվում է մակդիրների կիրառության մեջ:

«Ինքնատիպ մակդիրների ընտրությամբ արտահայտվում են ոչ միայն հեղինակի կամ որևէ կերպարի ընկալումն ու պատկերացումները կյանքի առանձին երևույթների, իրականության նկատմամբ, այլև ներկայացվում նրանց համապատասխան վերաբերմունքն ու գնահատականն այդ իրողության կամ անձնավորության նկատմամբ տվյալ իրավիճակում [3,337]:

Մ. Ռբնի մակդիրները խոսում են, անսպասելի և իրավիճակին միանգամայն համապատասխան՝ *ցողանման* արցունքներ [2,13], *այծեպոզ հյուսքերով* դատրիկ [2,26], *կանչող* ծուխ [2,35], *քերծին ուսված* արեգակ [2,74], *սոսնձված* թիվ [2,74], *վազող* կոյաջուր [2,83], *փախչող* լույս [2,94], *կծան* ցուրտ [2,95], *ծխախանձ* ձայն [2,111], *զարմանքախառն* վախ [2,113], *ծլլացող* անձրև [2,158], *ճպռոտ* լույս [2,159], *օդը թրատող* չչակներ [2,227], *վարդե* հայացք [2,246], *տաք* մեղմություն [2,247], *երկնքի թևատակը* մտած քաղաք [2,275], *կողոպտված* սեր [2,300], *փնջված* լույս [2,342], *կպչուն* թախիծ [2,346], *պապանձ* լռություն [2,346], *օձ գալարեցնող* հայացքներ [2,380]:

Խոսքի պատկերավորման միջոցներից է շրջասությունը (շրջասույթ), երբ որևէ առարկա կամ երևույթ ուղղակի անվանելու փոխարեն տրվում է նրա ավելի ծավալուն, նկարագրական բնութագրությունը:

Շրջասույթի միջոցով հեղինակն արտահայտում է իր անձնական, երբեմն նաև կամայական վերաբերմունքը տվյալ իրողության նկատմամբ, ինչպես նաև խոսքին հաղորդում որոշակի հնչեղություն և պատկերավորություն [3,349]:

Մ.Ռբնը կերտում է թեմայից բխող շրջասություններ, որոնց իմաստը բացահայտվում է համատեքստում:

Այսպես՝ *Փեշք վեր քաշած կնանոց* (թեթևաբարո-Լ.Ս.) համար վիզ էին ջարդում...[2,12]: *Հատակին բոխչայվածը* (հարվածից ուշաթափված և միառժամանակ գետնին ընկածը)...անզոր տնքաց...[2,40]: Առաջին բանը, որ նա զգաց այդ *երկաթե աղիքի* (խողովակի) մեջ...սառնությունն էր [2,83]: -Դու ասա մեր բախտից *փարավոնները* (ոստիկանները) դրանց շուտ չճանկեն...[2,43]:

Մ.Ռբնի գրիչը ձկուն է ոչ միայն պատկերավորման միջոցների, այլ նաև նոր բառերի ու բառածների ստեղծման ոլորտում: Առանձնապես ուշագրավ են գոյականից, թվականից, մակբայից ածանցված բայերը: Ռբնին հաջողվում է նաև վերաիմաստավորել եղած բառերը:

Այսպես՝ Մի պահ երկուսով ականջ դարձան ու միասին էլ, *կացինվող*

ծառի տաշեղների պես թռան աջուծախ [2,56]: Դարպասի ուղեփակոցը *արագիվում էր*՝ ներս թողնելով նրանց...[2,74]: Իսկ այդպես մարմինն ավելի էր լարվում՝ *կրկնակելով* չարչարանքը...[2,84]: ...Հոգու մեջ անսպասելի *սեպված*...անունից էր պրծնել ուզում [2,89]: Դռան բախոցը *երկրորդեց* [2,132]: Ներսից նկատելի *տազնապեց* կանացի մի ձայն [2,132]: ...Քարը *լնգեցի*, որ շուռ տամ...[2,144]: Բայց երբ մոտենում եմ...ինձ է նայում...տեսնում...արցունքներից *ցեխալողոց* երեսս...[2,180]: Տղերքը մի անկյունում ավտոմատները *խրծեցին* պատն ի վեր [2,224]: Իմ *լինգաթակ* գլխում նույն միտքը շարունակ դողանջում էր [2,299]: Ասում եմ ու...տեղս *ծյուրվում* [2,309]:

Իր հերոսների խոսքը ոճավորելու, նրանց էությունը բացահայտելու համար հեղինակը դիմում է բավականին բնական հնչող ռուսաբանությունների. սա ավելի անբռնազբոսիկ ու հավաստի է դարձնում խոսքը:

Այսպես՝ ...Իմն հիմնականում մեր *սպեցն* (համազգեստ) [5] է եղել, -ասաց իր թաց շորերը բոխչայելով...[2,24]: Տես, որ սնվելու գործն էլ *շիկ* (շքեղ, ճոխ) է [2,42]: Ուտելիքը *ցելոֆանե* (պոլիէթիլենային) տոպրակում կոլուլած, Խանը խոթեց ծոցը...[2,52]: -Չէ, ոնց որ տեսնում եմ դու *կարցերի* (պատժախուց) կարոտն ես քաշում [2,59]: -Է՞ժի+ձ (կարձ ասած), ինչքան հնարավոր է ես քեզ կտանեմ...[2,61]: Սրանից լավ *կոնտինգենտ* (քանակակազմ) չես ճարի...[2,76]: -Չէ հա քնել եմ, մտել եմ *պաղվալները* (նկուղներ)... [2,164]: *Կամանդիր* (հրամանատար), մի բան ասա...[2,170]: *Վեշերը* (բեռներ) թողեք առայժմս *մաշինում* (ավտոմեքենա) մնան [2,192]: ...Ձեր *պոեզը* (գնացք) ա՛յ էն կողմից ա գալու...[2,193]: Ինչ-որ մեկը լվացքն էր հավաքում...ճռռացնելով *ռոլիկը* (անվիկ, գլանիկ) [2,308]: Տղամարդը միացրեց *մագնիտաֆոնը* (ծայնարկիչ) [2,335]: ...Առատ քրտինք էինք թափում՝ պարտվող թիմից մեկական շիշ լիմոնադ ու *կորժիկ* (քաղցրաբլիթ) ստանալու համար [2,338]: Գուցե միայն *սիլուետն* (ուրվապատկեր) էր ձյունների մեջ սևին տալիս... [2,344]:

Խոսքի ոճավորման տեսակետից առանձին ուսումնասիրության է արժանի ժողովրդախոսակցական բառապաշարի գործածությունը Մ. Ռբնի հերոսների խոսքում, որոնց միջոցով խոսում և ապրում է ինքը՝ հեղինակը: Լեզվաոճական այս միջոցին անդրադարձ կկատարվի ավելի ուշ:

Այսպիսով՝ Մ. Ռբնը՝ գրողի իր ինքնատիպ լեզվամտածողությամբ, հայերենի հարուստ բառապաշարի և լեզվաոճական հնարքների վարպետ գործածությամբ հասնում է իր իսկ հիշատակած պատկերավորությանը, բացելով բառերի էությունը՝ հասցնում դրանք ընթերցողին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարտիրոս Որն, Երկեր, երեք հատորով, հ. 2, Ստեփանակերտ, 2013:
2. Մարտիրոս Որն, Երկեր, երեք հատորով, հ. 1, Ստեփանակերտ, 2012:
3. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Երևան, 2006:
4. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Երևան, 1990:
5. Ղարիբյան Ա., Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1977:

РЕЗЮМЕ

Лиана Сантрян

Ряд лингвостилистических особенностей в произведениях Мартироса Вобна

Мартирос Вобн-один из уникальных современных арцахских прозаиков. В своих произведениях он умело и своеобразно применяет богатый словарный запас армянского языка и стилистические приемы. Особенно точны и образны его метафоры, сравнения, эпитеты и перифразы. Для стилизации речи персонажей он обращается к русизмам и к народной речи, тем самым придавая повествованию живость и достоверность.

Своим уникальным языковым мышлением, умелым употреблением богатого армянского словарного запаса и стилистических приемов М. Вобн достигает образности, тем самым раскрывая сущность слов и доводя их до читателя.

SUMMARY

Liana Santryan

Some Linguostylistic Peculiarities in Martiros Vobn's Works

Martiros Vobn is one of the unique modern prose writers of Artsakh. In his works he uses skillfully the rich Armenian vocabulary and stylistic devices. Especially exact and vivid are his metaphors, similes, epithets and periphrases. To stylize characters' speech he uses Russian loanwords and folk speech giving the narration vividness and accuracy.

Due to his unique language thinking and skillful use of the rich Armenian vocabulary and stylistic devices Martiros Vobn reaches imagery, thus revealing the essence of words and bringing them to the reader.

ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ
«Գրիգոր Նարեկացի» համալսարան

**ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ-ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ
ԲԱՐԲԱՌԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՐՑԱՆԻ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՐՈՂՆԵՐԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Յուրաքանչյուր լեզվի մեջ ապրում է մի ժողովրդի հոգեբանություն: Ազգի մտածողությունը ճանաչվում է հատկապես դարձվածներով, որովհետև դրանք ժողովրդական լեզվի ու երևակայության մեջ մշակման ու վերափոխման արդյունքն են: Դարձվածների ուսումնասիրությունը կարևորվում է նաև իմացաբանական լեզվաբանության տեսանկյունից, որովհետև դարձվածները տեղեկություն են տալիս լեզուն կրող ժողովրդի բարքերի, սովորությունների, բարոյական արժեքների և ընդհանրապես կենսափիլիսոփայության մասին:

Անփոխարինելի է նրանց դերը նաև գեղարվեստական գրականության մեջ՝ խոսքի պատկերավորման ու ստեղծագործության ժողովրդականացման, ինչպես նաև խոսքին սեղմություն, դիպուկություն հաղորդելու գործում: Գրողները, կենդանի խոսքի արտահայտչականությունն ու ջերմությունը պահելու և հերոսներին տիպականացնելու նպատակով, հաճախ են գործածում ժողովրդախոսակցական ու բարբառային դարձվածներ:

Լինելով ժողովրդական մտածողության ծնունդ՝ դարձվածքներն իրենց ծագմամբ հիմնականում պատկանում են խոսակցական լեզվին ու բարբառներին և ապա այնտեղից թափանցում գրական լեզու:

Ղարաբաղի բարբառում ևս գործածվում են մեծ թվով դարձվածքներ, որոնցում արտահայտվում են ղարաբաղցու հոգեբանության ու աշխարհընկալման բնորոշ կողմերը:

Արցախի և Ջանգեզուրի գրողներն առատորեն գործածել են բարբառային դարձվածքներ՝ դրանց միջոցով ստեղծելով Արցախի բներանգային պատկերներ և ստեղծագործություններին հաղորդելով ժողովրդականություն:

Առհասարակ, լեզվաբանական գրականության մեջ «դարձվածք» եզրույթը կիրառվում է լայն ու նեղ առումներով: «Լայն առումով դարձվածքը, վերջին հաշվով, կայուն բառակապակցությունն է՝ հայերենի համար առանձնացված չորս դրսևորումներով՝ բուն դարձվածք, դարձվածային արտահայտություն, հարադրական բայ, բաղադրյալ անվանում»¹:

Բուն դարձվածքները մասնագիտական գրականության մեջ դասակարգվում են տարբեր սկզբունքներով: Հիմք ընդունելով հայ և օտար լեզվաբանության մեջ ընդունված սկզբունքները՝ Շ. Մինասյանը Ղարաբաղի բարբառի դարձվածքները ևս դասակարգել է ըստ դարձվածը կազմող

¹Բեդիրյան Պ. , Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 5:

բաղադրիչների սերտության աստիճանի և ըստ կառուցվածքաինաստաբանական բնութագրության: «Ելնելով դարձվածի ընդհանուր իմաստի և դարձված կազմող բառ-բաղադրիչների իմաստների ծուլվածության աստիճանից՝ ճիշտ ենք համարում դարձվածների բաժանումը երեք տիպի՝ դարձվածային սերտաճում, դարձվածային միասնություն և դարձվածային կապակցություն»²:

Հատկանշական է, որ Արցախի և Ջանգեզուրի գրողները շատ են գործածել բարբառային դարձվածային սերտաճումներ, որոնք հասկանալ կարող է միայն տվյալ ժողովրդի սովորությունները լավ իմացող, նրա աշխարհընկալմանը լավ ծանոթ ընթերցողը: Այսպես՝ *խոսք օգիլ* (խնամախոսության գնալ) (11, էջ 13), *վրժտան տակ քանդել* (վատություն անել) (7, էջ 245), *յուզվան լաց օտել* (բամբասանքից տուժել) (5, էջ 233), *ռեխը ման ածել* (վավաշոտ լինել) (4, էջ 352) և այլն:

Նշված խմբի մեջ են մտնում նաև *սըրտ* բառով կազմված հետևյալ դարձվածները. *սըրտը կտրել* (վշտացնել) (11, էջ 7), *սըրտեն փոշը տուս օնել* (ուրախացնել) (5, էջ 240), *սըրտումը տինիլ* (շատ սիրել), *սըրտեն մերանն ու մայան* (սիրելի մարդու մասին) (5, էջ 238), *սըրտումը կրակ անել* (սիրել տալ), որտեղ արտահայտվում է մեր ժողովրդի զգացմունքայնությունը.

Պատկերավոր մտածողության ծնունդ են նաև *քեթը ցեց* (գոռոզ), *թակ օտել* (ծեծվել) (11, էջ 10), *օնքեն թուխպերը ետ տանել* (տխրությունն անցնել), *խըլքը կտրել* (հասկանալ) (11, էջ 6), *խոսք քաշիլ* (զաղտնիքը փորձել իմանալ) (11, էջ 7), *պերանը կարել* (լռեցնել) (4, էջ 192), *կուպար անել* (շատ գնալ-գալ) (11, էջ 6) դարձվածային միասնությունները:

Ուսումնասիրության առարկա դարձած ստեղծագործություններում մեծ թիվ են կազմում դարձվածային կապակցությունները (սրանք իմաստային առումով ավելի թույլ միացություններ են, այսինքն՝ դարձվածի ընդհանուր իմաստը բխում է կապակցություն կազմող բաղադրիչների բառային իմաստների գումարից): Ինչպես՝ *ուրան թափ տալ* (լիցքաթափվել) (4, 134), *խելքը տեղը չինիլ* (խենթ լինել) (11, էջ 10), *յուս յուսանալ* (հաջողություն գալ) (7, էջ 230), *խոսքը տըղավը տանել* (նպատակին հասնել) (11, էջ 12) և այլն:

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածներն ըստ կառուցվածքաինաստաբանական առանձնահատկությունների բաժանվում են երկու խմբի՝ անվանական դարձվածային միավորներ և հաղորդակցական դարձվածային միավորներ:

Ինչպես գրական հայերենում, Ղարաբաղի բարբառում ևս ոչ հաղորդակցական դարձվածային միավորները կարող են փոխաբերաբար արտահայտել առարկա կամ երևույթ, առարկայի կամ գործողության որակական հատկանիշ, գործողություն, կամ նշել խոսողի գնահատողական վերաբերմունքը առարկայի կամ երևույթի նկատմամբ՝ այդ առումով հաբերակցվելով համապատասխան գոյական, ածական, բայ, մակբայ և

²Մինասյան Շ., Ղարաբաղի բարբառի դարձվածները, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, էջ 28:

վերաբերական խոսքի մասերին: Այս առումով Ղարաբաղի բարբառի դարձվածային միավորները ենթարկվում են հետևյալ դասակարգման՝ գոյականական, ածականական, բայական, մակբայական և եղանակավորող դարձվածային միավորներ³:

Բառակապակցության կառուցվածք ունեցող բարբառային դարձվածների իմաստային վերոնշյալ բոլոր խմբերին պատկանող դարձվածներ կարելի է հանդիպել մեր ուսումնասիրության նյութ դարձած Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում: Այսպես՝

ա) գոյականական են *հալալ ծծկեր* (ազնիվ մարդ) (1, էջ 360), *պեց ըշկերավ արագ* (ցանկալի իրականություն, *օխտը պորտը* (ամբողջ տոհմը) (8, էջ 470) և այլն:

բ) Ածականական. *շելակը ծանր* (հոգսաշատ), *սրբոր լեն* (մեծահոգի), *գյուլի պատառ* (շատ գեղեցիկ) (1, էջ 545), *ռանդա տված* (համաչափ, նաև՝ բարեկիրթ) (9, էջ 404) *մեծացած-պուճուրացած* (մեծի նման՝ ասվում է երեխաների մասին) (9, էջ 275), *մամայի բալա* (փափկասուն՝ դժվար իրավիճակներին անընտել) (9, էջ 180), *աղու տանձ կծած* (դառնացած) (9, էջ 355), *տափու եկած* (անամոթ, անզգամ) (13, էջ 306), *մաղ կապողեն սիմ տվող* (անամոթ, աներես) (9, էջ 373) և այլն:

գ) Բայական. *թարթափն ընգնել* (մեկի փորձանքին ենթարկվել), *խոսքը պեց անել* (զրույց սկսել), *ծերք մեկնել* (օգնել), *խոսքը ետ տալ* (մերժել), *պորտը* (ինչ-որ տեղ) *վեր ընգնել* (այդտեղ ծնվել) (7, էջ 243), *պռոշը կախել* (դեմքին դժգոհ արտահայտություն տալ) (9, էջ 185) *զինքը կոտորել* (խիստ հուզվել) (12, էջ 53), *նամուսը տափը կոխել* (անպատվել, պատվազրկել) (9, էջ 359), *կգո-մգո անել* (1.այրել, 2.գործը դժվարացնել) (9, էջ 129), հոնքը փոթ քցել (մռայլվել, տխրել) (9, էջ 8), աչքին (աշկին) թոզ փչել (չնչին բաներով հրապուրելով՝ խորամանկությամբ խաբել) (13, էջ 96), չափարը ճոռել (չափն անցնել) (10, էջ 160), *կապը քաշել* (հնազանդեցնել) (9 էջ 359):

դ) Մակբայական. *ռեխին լայեղ* (իրեն վայել, արժանի) (9, էջ 371), *հիտի կապած* (մի գծով, իրար ետևից) (9, էջ 316), *քոռի ժամը* (մութն ընկած) (10, էջ 48), *քոռ ու փոշման* (փոշմանած) (11, էջ 8), *երկու պերան* (քիչ խոսելու մասին են ասում) (11, էջ 8), *աշկեն տակավը* (զաղտագողի նայել), *մտքեն դոնն ընկած* (մտախոհ), *ջհանդամի տակին* (13, էջ 202):

ե) Եղանակավորող. *մատաղ ինիմ, բոյիդ մատաղ* (բարեմաղթանքներ՝ ուղղված թանկ մարդու), *աշկիս վրա* (8, էջ 169):

Իրենց բովանդակային ընդգրկունությամբ առանձնանում են հաղորդակցական դարձվածային միավորները (սրանք ունեն նախադասության կառուցվածք, հետևապես նախադասությանը հատուկ հետևյալ հատկանիշները՝ ստորոգում, հնչերանգ, մտքի ավարտվածություն): Սրանք «ժողովրդախոսակցական լեզվում ունեն մեծ գործածություն և առանձնապես վառ են արտացոլում նրա կառուցվածքային և զգացական առանձնահատկությունները»⁴:

Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործած-

³Տես՝ Մինասյան Շ., Ղարաբաղի բարբառի դարձվածները, «Դիզակ պլյուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, էջ 33:

⁴ Մինասյան Շ., Ղարաբաղի բարբառի դարձվածները, «Դիզակ պլյուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, էջ 66:

վել են մեծ թվով հաղորդակցական դարձվածային միավորներ՝ իրենց գործառական, կառուցվածքային և իմաստային բազմազանությամբ: Ինչպես՝ տանա դերին օրինյալ չկա (մտերիմից օգուտ չկա) (9, էջ 312), *վեջը չի* (անտարբեր է) (9, էջ 240), *քաջալը ճար անող լինի*, *իր գլխին ճար կանի* (որևէ պակասություն ունեցողը, եթե հնարավորություն ունենա, իր պակասությունը կվերացնի) (13, էջ 271), *քոն իլ, եր կաց բախտ օգե* (ասում են անբան մարդու մասին), *հրթնաշորս ծալին ա* (պատրաստվում է ամուսնանալ), *կըլխավղ շոռ տամ* (խիստ հոգատարության արտահայտություն), *ինքնա վեր կա* (անփոխարինելի է), *շոնն էլ յոր չոնել* (անտանելի է), *քիզանա հինչ կեղիմ* (վկայում է անկեղծության մասին), *ճաքետըրաքե* (հագիվ) (11, էջ 3), *արևը կծեմ* (իմ) (մեկին շատ սիրելու արտահայտություն) (6, էջ 108), *շեն կենաս* (օրհնանք) (6, էջ 254) և այլն:

Ժողովրդական խոսքն ու բարբառները ժամանակակից հայերենի դարձվածների հիմնական աղբյուրն են: Դարձվածը բարբառից գրական հայերենին է անցնում հիմնականում գրականացմամբ: Գրական հայերենի ազդեցությամբ բարբառային դարձվածներն այս կամ այն չափով գրականանում են՝ կրելով բառային և քերականական որոշակի փոփոխություններ և ձևավորելով դարձվածային տարբերակներ: «Սովորաբար դարձվածային տարբերակներ են համարվում նույն իմաստը և բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմ ունեցող այն դարձվածքները, որոնց բաղադրիչները նույն բառի քերականական տարածներն են կամ բարբառային, և կամ էլ փոխառյալ համագործերն ու համանշանակները»⁵:

Ելնելով դարձվածային տարբերակի սահմանման այս սկզբունքից՝ կարող ենք ասել, որ բարբառային դարձվածքի բաղադրիչի գրականացմամբ ձևավորվում են բարբառային դարձվածքների տարբերակներ: Այդ երևույթը հատկապես երևում է գեղարվեստական գրականության մեջ, որտեղ դարձվածքը հանդես է գալիս գրական համատեքստում: Այստեղ դարձվածի գրականացմանը նպաստում են ինչպես դրանց՝ գրական համատեքստում հանդես գալը, այնպես էլ գրողի՝ երկը հասկանալի դարձնելու նպատակը:

Դարձվածների գրականացումն արտահայտվում է ինչպես դարձվածը կազմող բաղադրիչների՝ գրական համարժեքներով փոխարինվելով, այնպես էլ քերականական վերջավորությունների գրականաձև կիրառությամբ: Այսպես՝ Դարաբաղի բարբառը *շողոքորթել*, *խորամանկել* իմաստով գործածում է *հնքին բուլի-բուլի անել* դարձվածքը:

Մ. Հովհաննիսյանը, *հնքի* բարբառային բառը փոխարինելով *պոչ* գրական համարժեքով, կիրառում է դարձվածի *պոչը բուլի-բուլի անել* տարբերակը: *Անուշ կնիկ, նախ և առաջ աղվես, աղվեսի տղա Սերգուն ասա թող պոչը բուլի-բուլի չանի*: (9, էջ 227)

Արձակագիրն այս կերպ մասնակիորեն գրականացրել է նաև բարբառային *հափըռումը չօփ տինիլ* (մեկին գերազանցել, հնարամտությամբ

⁵Եզեկյան Լ., *Հայոց լեզվի ոճագիտություն*, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2007, էջ 188:

մեկին խաբել), լեմիշին լավը չաղալը կօտէ (լավ բանը անարժանին է բաժին ընկնում), ընթեր չըրչարել (շատախոսել), փօխկումը փըթաղ ինիլ (մեղավոր լինել, թերություն ունենալ), քօռ կապեկ չմծի (1.անարժեք է, 2.ոչ մի նշանակություն չունի), խըյարը ծօռ փսնել (գործը ծախողվել, հակառակ ընթացք ստանալ), վըսկեն չօփավ պիցըրցնել/պըրանել (շատ հարուստ լինել) և այլ դարձվածներ՝ ընդգծված բաղադրիչը փոխարինելով գրական համարժեքներով: Օրինակ՝ Բա՛, Հեղուշ կասեն, Հերսիկի բռի մեջ չոփ դրեց: Խեղճ, խեղճ Հերսիկ, դժբախտ աղջիկ դուրս եկավ: (9, էջ 156) Ջոիրաբը մտքում ասաց՝ պա փողքումը փըթաղ կա, մտածեց՝ իր վրա ծանր շալակ ունի դնելու: (9, էջ 404) Երկուսը միասին մի քոռ կոպեկ չարժեն: (9, էջ 195) Գեներալ Մադաթովի ցեղից է, չի անի, մարդու տղան ոսկին չոփով է բարձրացնում: (9, էջ 294) Այս բանում մենք Շահենի ու Արտաշի բռում չոփ կոնենք: Բայց ինչքան էլ աշխատում ենք, օր օրի նրանք մեզնից ավելանում են: (9, էջ 181) Իգնատը՝ գրո, կամ Իգնատը, կամ աղոթած էշը: Նրանը ակումբում ռեխը չարչարելն է: (9, էջ 359) Օրենք է՝ սեխի լավը չաղալը կուտի,-բորբոքվում է Աղվանը: (9, էջ 239)

Բարբառային բազմաթիվ դարձվածների այսպիսի գրականացված տարբերակների հանդիպում ենք նաև Սերո Խանգաղյանի, Սարգիս Աբրահամյանի, Համլետ Մարտիրոսյանի, Վարդան Հակոբյանի, Արտաշես Ղահիրյանի, Վազգեն Օվյանի, Գուրգեն Գաբրիելյանի և այլոց ստեղծագործություններում: Օրինակ՝ Դոնմագն էլ կնոջն անվանեց «աղվես», իսկ նրա հորը՝ «բեղից ընկած բրինձ»: (1, էջ 384) Այդ աղմուկից մարդու ներվեր է ուտվում, ականջ է խլանում: (9, էջ 23) Աստված ձեր հակին պինդ նստած է: Եվ նա եղջերվապոզերը Ռուսաստանից բերեց, ամրացրեց տան ճակատին: (10, էջ 54) Վանեսյան, դու կտրվես, Ջոիրաբը քո կաշին դաբաղխանից է ճանաչում. քո մյուս ասածից պարզ եղավ քո կանչելու և իր գալու իմաստը: (9, էջ 404) Իբր Վանուն բարեկամ է՝ քրոջ ամուսնու փեսան՝ էշը աղբահարում թավալ է տվել: (9, էջ 285) Այ սատկես դու, հա... գելի փայ դառնաս: (12, էջ 66) Նա ախար մեր տուն էր գալիս, ինչպես չարքաշ ու սիրտը լեն աստված: (10, էջ 36) Կտեսնես, որ սաղ աշխարհիս ցիլավը հացի ձեռքումն է: (1, էջ 461) Դու էլ կեցցես: Լավ գլխի ընկար, որ եղը մածնիցն է լինում: (1, էջ 519) Եկել են՝ բարով են եկել, նեղված է՝ բան չկա, սիրտը լեն լինի: (9, էջ 278) Կնանիքը՝ կնանիք, ամա դե՛ ասված խոսք է, որ էծը էծի համար լավ է. բան հազար ոչխարը: (1, էջ 494) Սև օձից վախեցածը սև չաթվից էլ է վախենում. մեկ էլ հանկարծ սիրտը նորից բռնվեց: (9, էջ 278) Դուք ձեր պլոկված ձիտը չարչար օրվան դեմ արած սատկեք, ես կանեմ՝ ինչ սիրտս է ուզելու: (10, էջ 11) –Ուեխդ փակիր,-պատասխանեց միջանցքում հայտնված Կրոմվելը և կրկին սուզվեց վարագույրից ներս: (12, էջ 22) Պոզերդ հանեցիր, չէ դե պարզ ասա, որ որոշել ես ինձ Կուսաբերդից քշել: (1, էջ 175) Չկանգնի՛ ու խնդրի՛. «Այ ժողովուրդ, ախր, գիտեք, իմ հայ-հայր գնացել. վայ-վայն է մնացել, եկեք մեկ ուրիշին ընտրենք»: (1, էջ 288) Քաչալը ճար անող լինի. իր գլխին ճար կանի: (13, էջ 271) Չէ, լավ են ասում, մարդ որ մեծանում ա, գլխի ծեղը պակասում ա: (1, էջ 295) Տափից մինչև երկինք շնորհակալ եմ: (1, էջ 402) –Չենդ փորդ գցի,-գոչեց մայրը, էլ բերանդ միջից երկու չանես, խաղբ-խայտառակ կդառնանք սաղ աշխարհում: (6, էջ 105) -Սպասի՛, հալբաթ

մեր գլխի տերը կգա մի օր ու ու կաղ Օհանջանի բլին կչոքի: (6, էջ 4)

Ընդգծված դարձվածքները Ղարաբաղի բարբառի հետևյալ դարձվածների մասնակի գրականացված տարբերակներն են. *բեղա վեր ընգած պըրհինձ* (անպատիվ, հարգանքից զրկված), *ներվերը օտել* (դիտավորյալ մեկին ջղայնացնել), *Աստուծ հակէն նըստել* (Աստված օգնական լինել), *կաշին դաբաղխանումը ճընանջիլ* (մեկի բացասական, վատ հատկություններից տեղյակ լինել), *էշը ըխպըհարումը (մոխրումը) թավալ ա տըրվալ* (չեղած տեղից ազգական է ներկայանում), *կիւլիւ փայ տըննալ* (անտեղի կորչել, վատնվել), *սըրտը լեն* (սրտաբաց, մեծահոգի), *ջիլավը ծըրքումն ա* (իշխանության տակ է), *յըղը մածնան ա ինում* (ճշմարտություն է, ապացուցելու կարիք չկա), *էժը էժին հըտէ լիվա, կանց մին սուրու վըխճարը* (յուրաքանչյուրն իրեն համապատասխան մարդու հետ, ավելի լավ է զգում), *սըվ օխժ տեսածը սըվ չաթվան կվախէ* (մի բանից տուժածը զգուշանում է այն հիշեցնող բոլոր առարկաներից), *պլոկված ճիտը չարչար օրվան տէմ ըրած* (տանջված), *ըռէխը կապել* (լռել, պապանձվել), *պօզէրը տուս օնէլ* (ըմբոստանալ), *հայ-հայը քինիլ, վայ-վայը մնալ* (երիտասարդությունը՝ լավ օրերը անցնել, ծերութունը՝ վատ օրերը հասնել), *քաչալը վըր ճար անօղ ինի, ուրան կըլխէն ճար կանէ* (որևէ պակասություն ունեցողը, եթե հնարավորություն ունենա, իր պակասությունը կվերացնի), *կըլխէն ծէթը պըկասէլ* (հիմարանալ), *տափան մընչըէվ յէրգ-յինք* (խիստ շատ), *սնսը փօրը քըցիլ* (սսկվել, պապանձվել), *պըկէն չօքել* (1.ստիպել, հարկադրել, 2.նեղել):

Այս օրինակներում, ինչպես տեսնում ենք, բարբառային դարձվածների ոչ բոլոր բաղադրիչներն են գրականացվել, դրանց կազմում շարունակում են մնալ բարբառային բառաշերտին պատկանող բառեր (բեղ, ներվ, հակ, դաբաղխանա, քաչալ, ջիլավ, ծէթ, չաթու, էժ և այլն), որոնք վկայում են այդ դարձվածքների բարբառային լինելու մասին:

Ավելի տարածված է դարձվածքների այնպիսի գրականացումը, երբ փոփոխվում են քերականական վերջավորությունները, այսպես օրինակ՝ Արցախի բարբառն ունի *վախէ լըղարան, փախէ ճըղարան* (զգուշացիր նախանձ և խորամանկ մարդկանցից) դարձվածը, որը Մ. Հովհաննիսյանն օգտագործել է *վախեցիր լղարից, փախչի ճաղարից* տարբերակով՝ գրականացնելով *լըղար, ճաղար* բառերի բացառականի վերջավորությունը (-ան բարբառայինը փոխարինելով –ից գրականով) և վախենալ բայի հրամայականի վերջավորությունը, նույն հեղինակի մոտ *էրալ չի, մըրկալ ա* (տարբերությունը մեծ չէ, ասում են բացասական երևույթի մասին) բարբառային դարձվածը գործածված է *էրած չի, մրկած է* ձևով՝ գրականացնելով երկրորդ բաղադրիչ նախադասության հանգույցը: Երկրորդական բառահարաբերական ձևայինների գրականացմամբ են ձևավորվել նաև հետևյալ նախադասությունների մեջ ընդգծված դարձվածները. Գնա Վանեսանց ցեղից պտկածին հավատացրու, որ էդ բոլորը *ռեխները ճղած* հարարեցիների հնարածն է: (9, էջ 342) Սերգու գործն է, մտքում որոշում է Բուդին և հաստատ վճռում նրա *վիզը բոռ չինով* կտրել: (9, էջ 129) Պետունց ազգի *պատիվը տափովը չտաք*: (13, էջ 44) *Տափի տակից էլ լինի*, ամենաքիչը երկու հավ պիտի գտնես: (1, էջ 345) Զոհրաբը, շարունակելով խաղալ Ազդունի հետ, պատասխանեց. - *Կամ աղն*

է պակաս, կամ մաղը: (9, էջ 400)

Ընդգծված դարձվածների անփոփոխ բարբառային ձևերն են՝ *ռըխ-նեն ճղած* (1.անգաղտնապահ, բացբերան, 2.վայրահաչ, շատախոս), *վը-՛գը քօռ չինավ կըտրել* (տանջամահ անել), *պաղէվը տափավը տալ* (պատվագրել), *խըլքու տոպրակ* (1.շատ խելոք, գրագետ, իմաստուն, 2.հեզն. հիմար, տխմար), *տափէն տական էլ ա* (որտեղից էլ լինի), *կամ աղն ա պակաս, կամ մաղը* (որևէ հոգս, խնդիրք ունի) և այլն:

Ինչպես տեսնում ենք, այս դարձվածներում էլ գրականացվել են հոգնակիակազմ, հոլովակազմ վերջավորությունները, վերջին դարձվածում էլ՝ է հանգույցը:

Դարձվածային միավորների գրականացման մի յուրօրինակ ձև է բարբառային բայական դարձվածների գրականաձև խոնարհումը: Օրինակ՝ –Պուճուր հարս, *պըռշս ճաքում է* մի ստաքան չայի համար: (1, էջ 490) Սակայն մուկ բռնող Փառավունի աղջիկն *աղու տանձ է կծել*: (9, էջ 278) *Չանան ծռում է*, թե՛ ես ձեր «ընտանեկան գործերին» չեմ խառնվում: (1, էջ 432) – Վանի, *չափարը ճմռում ես*, –նախագահն ուզում է բարկանալ, բայց Վանին գիտի, որ «ներկա պայմաններում» դրա իրավունքը չունի: (9, էջ 114)

Այստեղ բարբառային *պըռռջը ճաքել* (1.սաստիկ վախենալ, 2.շատ կարոտել), *չանան ծռել* (ստորանալով խնդրել, աղերսել), *չափարը ճմռել* (պաշտաճ սահմանից դուրս գալ, կարգը խախտել, ծայրահեղության հասնել) դարձվածները խոնարհվել են գրականաձև. գրականացվել են թե ձևաբայերի վերջավորությունները, թե օժանդակ բայերը:

Այսպիսով՝ բարբառային և ժողովրդախոսակցական դարձվածները ժողովրդի իմաստնության բովում դարերով թրծված կառույցներ են՝ ձևավորված բարբառին հատուկ բառային ու քերականական օրենքներով: Դրանք մեծ հարստություն են մեր լեզվի համար, սակայն պաշտպանության կարիք ունեն: «Կարծում ենք նոր բան ասած չենք լինի, եթե շեշտենք, թե մեր լեզվական, ընդհանուր ազգային մշակույթի համար ինչ արժեք ունի դրանք մեկ առ մեկ կորստից փրկելը»⁶:

Եվ անհրաժեշտ է ի հաշիվ դրանց հարստացնել գրական լեզուն և մասնավորապես գեղարվեստական գրականության լեզուն, մասնավանդ, որ լեզվի հաղորդակցական բնույթն այլ զարգացում է ենթադրում. «Դարձվածքային տարբերակները գրական լեզվում կիրառական ոլորտների ընդարձակման և բարբառների գործառական սահմանափակման պայմաններում աստիճանաբար պակասում են: Այս երևույթը պայմանավորված է լեզվի հաղորդակցական բնույթով: Բառային տարբերակները ևս անցնում են նույն ուղին: Եթե նույն հասկացությանը ծառայում են մեկից ավելի տարբերակներ (բառային կամ դարձվածային), ապա դա ինչ-որ չափով ավելցուկային կարգ է, որը միտում ունի վերանալու, կամ տարբերակներից մեկն ու մեկը վերածվում է հոմանիշի (ըստ անհրաժեշտության)»⁷:

⁶ Բեդիրյան Պ., *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 5:

⁷ Ջահուկյան Գ.Բ., Աղայան Յ.Բ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ. Ա., *Հայոց լեզու*, «Լույս» հրատ., Երևան, 1980:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Արահամյան Ս., Սերունդների հետ, «Ամարաս» հրատ., Երևան, 2008, 595 էջ:
2. Ալվազյան Ս., Խիղճը, Հայպետհրատ, Երևան, 1957, 267 էջ:
3. Ավետիսյան Ն., Սիտի կայծեր, Ստեփանակերտ, 2013,
4. Գաբրիելյան Գ. «Արցախյան նվագախմբի», «Զանգակ-97» հրատ., Երևան, 2002, 193 էջ
5. Գաբրիելյան Գ., Ընտրանի, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, 255 էջ:
6. Խանգադյան Ս., Երկերի ժողովածու, հ. 6, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1983, 606 էջ:
7. Հակոբյան Վ., Երկեր, հ.դ, ԼՂՀԳՄ «Վաչագան բարեպաշտ» հրատ., Ստեփանակերտ, 2008, 655 էջ
8. Հակոբյան Վ., Զատիկը ջրավազանի հատակին, «Դիզակ պլուս», Ստեփանակերտ, 2010, 655 էջ:
9. Հովհաննիսյան Ս., Երկեր, հ. 1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփանակերտ, 2005, 468 էջ:
10. Ղահիրյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1983, 248 էջ:
11. Մանասյան Ա., Արցախյան սիրո հեքիաթ կամ Արա, պա ըստի պեն կին, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2010, 30 էջ
12. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, ՀԳՄ հրատ., Երևան, 2007, 94 էջ
13. Օվյան Վ., Կապույտ տարիներ, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, 565 էջ:

РЕЗЮМЕ

Рена Мовсесян

Идиоматические диалектизмы в произведениях арцахских и зангезурских писателей

Анализ и изучение диалектных единиц является важным не только с точки зрения диалекта, но и истории культуры, философского мировоззрения данного языка и народа, способствуя времени формирования диалектов, конкретизации отношений между литературным языком и диалектом.

В этом плане идиоматические диалектизмы содержат большую информацию о Карабахе и карабахце. Широко употребляясь в художественной литературе, они усиливают ее экспрессию.

В арцахской литературе используется большое количество идиом.

SUMMARY

Rena Movsesyan

Idiomatic Dialectisms in Artsakh and Zangezur Writers' Works

The analysis and study of the dialectal units is important not only from the point of view of dialects but also the history, culture, philosophy of the given language and people, promoting the relations of the literary language and dialect.

From this position the dialectical idioms contain sufficient information about Kharabakh and Karabakh people. Having been used in fiction they enlarge the expressive abilities of the language.

Artsakh literature is rich in idiomatic dialectisms.

ՍՈՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Արդ համալսարան

ԼՂՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԽՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ /ԶԱՆԱԶԿԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ/

2006 թվականի դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը համաժողովրդական հանրաքվեով ընդունեց իր Սահմանադրությունը: Անկախության հռչակումից ու հանրաքվեի անցկացումից հետո դա հերթական իրավաբանական նշանակության և քաղաքական ինքնահաստատման քայլն էր Արցախի ժողովրդի համար: Համապատասխանելով ժողովրդավարական պետության չափանիշներին՝ Սահմանադրությունում հռչակվում են իշխանության տարանջատում, գաղափարախոսական բազմակարծություն, մարդու և քաղաքացու բնական և դրական իրավունքների սահմանում և երաշխավորում, սեփականության ձևերի բազմազանություն և այլ հիմնարար իրավունքներ ու ազատություններ: Մնում է միայն միջազգային ճանաչումը:

Հիմնարար բառեր. Սահմանադրություն, չճանաչված պետություն, սահմանադրաիրավական կարգավիճակ, անկախության հանրաքվե, միջազգային իրավունքի սկզբունքներ, ինքնիշխանություն, միջազգային իրավական ճանաչում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական հանրապետություն է¹:

Սահմանադրության 1-ին հոդվածը հռչակում է, որ հայ ժողովուրդը հիմնադրելով հայոց պետականությունը՝ նրա հիմնարար ու անփոփոխելի սահմանադրական բնութագրեր է հաստատում հանրապետությունը, ինքնիշխանությունը, ժողովրդավարական, սոցիալական ու իրավական պետությունը: Որպես սահմանադրական ամրագրում ունեցող հիմնարար սկզբունքներ՝ դրանք առավել ընդհանուր ու ելակետային են, որոշում են պետության կազմակերպման ու գործունեության մյուս սկզբունքները, ինչպես նաև պետության սոցիալական էությունը և առաքելությունը, պետության կազմակերպման ու գործունեության ելակետային, հիմնական հարցերը /գործառույթները, կառուցվածքը, լիազորությունները և այլն/²:

ԼՂՀ Սահմանադրության առաջին հոդվածն ավելի շատ նորմ-սկզբունք ու նորմ-նպատակ է, քան առկա իրողություն: Այն հռչակում ու կոչ է անում մեր երկրի ներկա ու ապագա սերունդներին՝ ղեկավարվել այդ

¹ Տես՝ ԼՂՀ Սահմանադրության 1-ին հոդված /ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 10-ին/

² Տես՝ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ. Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, «Իրավունք» 2010թ. էջ 40.

սկզբունքով:

Համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունելով Սահմանադրությունը, որը համարվում է օրինականության ու ժողովրդավարության ամենից բարձր մակարդակը, Արցախի ժողովուրդը այդ կերպ իրականացրել է ինքնիշխան պետությանն հատուկ իր իրավունքը:

Դեռևս 1991թ. սեպտեմբերի 2-ին ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային եւ Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը /ԼՂՀ/՝ նախկին ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի սահմաններում: Ընդունվեց ԼՂՀ անկախության մասին հռչակագիրը /դեկլարացիա/: ԼՂՀ հռչակման մասին հռչակագրում շեշտված է, որ այն ընդունվել է «ազատության, անկախության, իրավահավասարության և բարիդրացիության ձգտումով, ղեկավարվելով քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային ոլորտների զարգացման խնդրում ամբողջ բնակչության շահերով, բնական և օրինական, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան համարելով հայ ժողովրդի միասնության ձգտումը, որոշում է ընդունել ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և սահմանակից Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակման մասին հռչակագիրը»³:

Այդպիսով իրականացվեց մի իրավունք, որն արտացոլված էր այն ժամանակ գործող օրենսդրության մեջ, մասնավորապես 1990թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքում, որը նախատեսում էր ազգային ինքնավարություններին իրավունք տրամադրել ինքնուրույն կերպով որոշելու սեփական պետաիրավական կարգավիճակը ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում⁴:

Դրան հաջորդեց անկախության հանրաքվեն՝ 1991 թ. դեկտեմբերի 10-ին, որին մասնակցեցին ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների 82.2 տոկոսը, որի 99.89 տոկոսը հանդես է եկել Ադրբեջանից անկախանալու օգտին⁵: Իսկ այնուհետև՝ նույն թվականի դեկտեմբերի 28-ին, ԼՂՀ Գերագույն խորհուրդը ընդունեց «Հռչակագիր ԼՂՀ պետական անկախության մասին» իրավական ակտը: Դրանով օրենսդրորեն ամրագրվեցին ինչպես հանրաքվեի արդյունքները, այնպես էլ իրավական փաստաթղթերի հաջորդականությունը, որոնք ապահովում են քաղաքական կարգավիճակի ինքնուրույն որոշման ԼՂՀ ժողովրդի իրավունքը: Այսքանով հանդերձ, ՄԱԿ-ի անդամ պետություններից և ոչ մեկը չձանաչեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ:

³ Տես՝ «Հռչակագիր ԼՂՀ հռչակման մասին» բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ՝ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանի որոշումը՝ 1992թ. սեպտեմբերի 2:

⁴ Տես՝ ԼՂՀ Արտգործնախարարության պաշտոնական կայքէջը՝ <http://www.nkr.am/>

⁵ Տես՝ նույն տեղում:

Այս ամենին անմիջականորեն հաջորդած՝ իրեն հարկադրված պատերազմում հաղթելուց հետո, ԼՂՀ պետական-հասարակական համակարգն իր գործունեությունն ուղղեց երկիրը հետպատերազմյան վիճակից հանելու, տնտեսությունը զարգացնելու, ինչպես նաև սեփական օրենսդրական դաշտը ստեղծելու խնդիրների լուծմանը: Դրանում իր վիթխարի ներդրումն ունեցավ Հայաստանի Հանրապետությունը: Պետք է նշել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը չճանաչված այն եզակի պետություններից է, որն ունի սերտ տնտեսական, քաղաքական, իրավական ու մշակութային կապ ինքնիշխան, ճանաչված, ինչպես նաև միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ հանդիսացող պետության հետ՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության: Չճանաչված երկրներից և ոչ մեկը չունի նմանատիպ ուժեղ գործընկեր ու հովանավոր երկիր, ինչպիսին ունի Արցախի Հանրապետությունը: Սա բացատրվում է նրանով, որ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը կազմում են միևնույն՝ հայ ազգը, եւ Արցախը մշտապես եղել է Հայոց աշխարհի անբաժան երկրամասերից մեկը:

ՀՀ՝ ԼՂՀ գլխավոր գործընկերը, ձգտում է միավորվել եվրոպական հանրությանը, եւ այդ կապակցությամբ բարեփոխումներ է կատարում երկրի իրավական, քաղաքական, տնտեսական, կրթական, սոցիալական և հասարակական-քաղաքական կյանքի այլ ոլորտներում՝ եվրոպական չափանիշներին համապատասխանելու նպատակով: Ու քանի որ այդ բարեփոխումների մի մասը վերաբերում է օրենսդրական դաշտին, իսկ Լեռնային Ղարաբաղն իր նորմատիվ-իրավական ակտերը ընդունում է գրեթե նույն տեսքով, ինչ որ Հայաստանի Հանրապետությունը, կամ էլ ՀՀ օրենքը ԼՂՀ-ում կիրառման մասին օրենք ընդունելու միջոցով, ապա կարելի է ասել, որ ԼՂՀ իրավական դաշտը որակական տեսակետից առավել համապատասխանում է եվրոպական չափանիշներին, քան թե այլ չճանաչված երկրների օրենսդրությունները: Ավելին, ԼՂՀ դատական որոշումների հիմքում դատավորները հաճախ դնում են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հանրաճանաչ փաստաթղթերի դրույթները, հղում կատարում այդ ակտերին:

2006 թվականի դեկտեմբերի 10-ին համաժողովրդական քվեարկությամբ ընդունվեց ԼՂՀ Սահմանադրությունը /դեկտեմբերի 10-ը ԼՂՀ-ում նշվում է ոչ միայն որպես Սահմանադրության, այլև Մարդու իրավունքների միջազգային օր եւ Անկախության հանրաքվեի անցկացման օր/: Սահմանադրության ընդունման օգտին քվեարկել է 77279 մարդ, կամ քվեարկության մասնակիցների 98.58 տոկոսը, դեմ է քվեարկել 554 մարդ կամ քվեարկության մասնակիցների 0.7 տոկոսը⁶:

Սահմանադրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԼՂՀ-ն, ըստ կառավարման ձևի իրենից ներկայացնում է կիսանախագահական հանրապետություն, ըստ տարածքային-քաղաքական կառուցվածքի՝ միատարր պետություն է, իսկ ըստ պետական ռեժիմի՝ ժողովրդավարական: Սահմանադրության նախաբանից ու սահմանադրական կարգի հի-

⁶ Տես՝ ԼՂՀ Դատախազության պաշտոնական կայքէջը՝ <http://www.genprocnr.am/2011-02-18-09-01-02>

մունքներին հաջորդում է Մարդու իրավունքների վերաբերյալ բաժինը, ապա՝ անդրադարձը պետական իշխանության թևերին: Սահմանադրությամբ նշվում է, որ մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները ճանաչվում են որպես անօտարելի ու բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք: ԼՂՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա⁷: Օրենսդրական հիերարխիայում /աստիճանակարգում/ Սահմանադրությունն ունի գերակա ուժ, մնացած նորմատիվ-իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, որի նորմերը գործում են անմիջականորեն:

Ներկա դրությամբ աշխարհում հաշվվում է մոտ երկու տասնյակից ավելի չճանաչված կամ մասնակի ճանաչված պետություն: Դրանց թվին են դասվում Աբխազիայի Հանրապետությունը, Հարավային Օսեթիայի Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետությունը, Կոսովոյի Հանրապետությունը, Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը, Վազիրիստանը, Տայվանը, Սոմալիլենդը, Տամիլ-Իլամը, Պունդիչենդը և այլն: Որոշ տեղեկատվական աղբյուրներ նույնիսկ տալիս են 60-ից ավելի նմանօրինակ տարածքների անուններ, որոնք ունեն պետության համար անհրաժեշտ տարրերը՝ տարածք, սահմաններ, բնակչություն, սակայն ունեն կախվածություն որևէ երկրից և իրենցից «քվազի» պետություն են ներկայացնում⁸:

Նշենք, որ այժմյան գոյություն ունեցող չճանաչված պետություններից ամենից հինը Թայվանն է /պաշտոնապես՝ Չինաստանի Հանրապետություն/, որի բաժանումը մայրցամաքային Չինաստանից տեղի է ունեցել 1949 թվականին: Թայվանը նաև չճանաչվածների մեջ տարածքով ու բնակչությամբ ամենից մեծն է իր 22.6 մլն բնակչությամբ: Սա թերևս բացառություն է կազմում չճանաչված երկրների ցանկում, քանի որ մնացած չճանաչված պետությունները տարածքով ու բնակչությամբ անհամեմատ փոքր են: Մեծությամբ հաջորդը Կոսովոյի Հանրապետությունն է իր 2 մլն բնակչությամբ: ՄՄՀ-ի բնակչությունը կազմում է 250 հազար մարդ, Հարավային Օսեթիայինը՝ 70 հազար մարդ, Աբխազիան՝ 250 հազար մարդ: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ Աբխազիայի 250 հազար բնակչությունից 200 հազարը հանդիսանում են Ռուսաստանի քաղաքացիներ, Հարավային Օսեթիայի 70 հազարից՝ 50 հազարը, իսկ ՄՄՀ-ի 250 հազա-

⁷ Տես՝ ԼՂՀ Սահմանադրության 2, 3, 6 -րդ հոդվածները /ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 10-ին/

⁸ Այդ մասին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ հետևյալ կայքէջերում՝ http://www.spravo4niki.com/skolko.php?id=26&zavisimie_teritorij_mira, http://geo.koltyrin.ru/strany_mira_zavisimye.php

րից 100 հազարը նույնպես Ռուսաստանի քաղաքացիներ են⁹: 2010 թվականի դրությամբ ԼՂՀ բնակչությունը կազմում է 141.400 մարդ, տարածքը՝ 11.458 կմ²,¹⁰ իսկ բնակչության ճնշող մեծամասնությունը ազգությամբ հայերն են:

Չճանաչված պետությունների սահմանադրական և ընթացիկ օրենսդրության վրա մեծ ազդեցություն են թողել այնպիսի միջազգային-իրավական ակտեր, ինչպիսիք են ՄԱԿ-ի Կանոնադրությունը, 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. կոնվենցիան, 1966թ. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, 1966թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, 1978թ. Հելսինկյան եզրափակիչ ակտը և այլ միջազգային-իրավական ակտեր, որոնք ունեն առաջնահերթ նշանակություն ժողովրդավարական-իրավական պետության կայացման և զարգացման համար:

Չճանաչված երկրների Սահմանադրությունների սահմանադրական կարգի հիմունքներում սահմանվում են միջազգային հանրությանը հայտնի այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են պետությունը ժողովրդավարական հռչակելը, մարդուն հասարակության և պետության մեջ բարձրագույն արժեք դիտելը և նրա հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանադրական ամրագրումը, ժողովրդաիշխանությունը, իշխանությունների տարանջատման սկզբունքն, իրավական պետության ձգտումը, պետական կյանքի բոլոր ոլորտներում օրենքի գերակայությունը, սեփականության ձևերի բազմազանությունը, քաղաքական բազմակարծությունը /պլյուրալիզմ/, պետական իշխանության սոցիալական ուղղվածությունը, պետության աշխարհիկ բնույթը:

Չճանաչված երկրների Սահմանադրությունների մեծ մասը ամրագրում է պետության ինքնիշխանությունը և ժողովուրդը հռչակում որպես իշխանության միակ աղբյուր /ԼՂՀ Սահմանադրության 3-րդ, Կոստովոյի՝ 2-րդ, ՄՄՀ-ի՝ 1-ին հոդված, Աբխազիայի՝ 2-րդ, Հարավային Օսեթիայի՝ 1-ին հոդվածները և այլն/: Նրանք առանձնահատուկ են նշում իրենց ինքնիշխանության մասին, քանի որ այդ ժողովուրդների մեծ մասը նախկինում չունեին իրենց սեփական անկախ ինքնիշխան պետությունը:

Ճանաչում չունեցող պետություններից շատերը Հիմնական օրենքում արտաքին քաղաքականությունների հարաբերությունների ոլորտում նույնպես հռչակում են պետական ինքնիշխանության սկզբունքը: Հիշատակված երկրների Սահմանադրություններում ուղղակի կամ անուղղակի կերպով ընդգծվում է, որ նրանք հանդիսանում են միջազգային իրավուն-

⁹Տես՝ <http://www.politex.info/content/view/413/> А.Г.Большаков. Непризнаваемые государства постсоветского пространства в системе российских национальных интересов.

¹⁰Տես՝ Վիքիպեդիայի՝ ազատ հանրագիտարանից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (Արցախ) [http://hy.wikipedia.org/wiki/Լեռնային_Ղարաբաղի_Հանրապետություն_\(Արցախ\)](http://hy.wikipedia.org/wiki/Լեռնային_Ղարաբաղի_Հանրապետություն_(Արցախ))

քի լիարժեք սուբյեկտ և նրանց արտաքին քաղաքականությունը կառուցված է պետությունների ինքնիշխան հավասարության, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, սահմանների անխախտելիության, միջազգային վեճերի խաղաղ լուծման, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, պետության տարածքային ամբողջականության, ինչպես նաև միջազգային իրավունքի այլ հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի հիման վրա: /Այս դրույթը առաջնային է նաև ԱՊՀ երկրների Սահմանադրություններում/¹¹: Այսպես, համաձայն Աբխազիայի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի, «Աբխազիայի Հանրապետությունը միջազգային իրավունքի սուբյեկտ է, պայմանագրային հարաբերությունների մեջ է մտնում այլ պետությունների հետ»:

Գրեթե բոլոր չճանաչված երկրների սահմանադրություններն ամրագրում են իրենց պետության սոցիալական բնույթը: Դա նշանակում է, որ Սահմանադրությունը պետությանը պարտավորեցնում է ապահովել սոցիալական արդարությունը և երկրի բնակչության բարեկեցությունը, ինչպես նաև իրականացնել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որն ուղղված է մարդու սոցիալական պաշտպանվածությանը: Նշված երկրների Սահմանադրությունները պետության բյուջեից սոցիալական աջակցություն են նախատեսում ծերության, հիվանդության կամ գործունակության կորստի, կերակրողին կորցնելու և այլ դեպքերում:

Ինչպես աշխարհի գրեթե բոլոր երկրների, այնպես էլ չճանաչված երկրների Սահմանադրությունները հռչակում են սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանություն: Նրանք ամրագրում են սեփականության բոլոր տեսակների և ձևերի իրավահավասարությունը, երաշխավորում են դրանց հավասար պաշտպանությունը և զարգացման միատեսակ պայմանները: Սահմանադրությամբ արգելվում են սեփականության բռնագրավումը, բացառությամբ դրա՝ անօրեն ձեռք բերելու և միայն դատարանի որոշման հիման վրա կայացող դեպքերի: Դրա հետ մեկտեղ մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող բաժնում մի շարք սահմանադրություններ սեփականության իրավունքի երաշխավորման հետ մեկտեղ օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում թույլատրում են սեփականության օտարումը պետական կարիքների համար՝ դրան համարժեք փոխհատուցման պայմանով: Այսպես, ԼՂՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3 և 4-րդ կետերը սահմանում են. «Սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում: Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք

¹¹ ԱՊՀ երկրների սահմանադրական իրավունքի մասին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ - Конституционное право зарубежных стран. Под общей редакцией М. В. Баглая, Ю. И. Лейбо, Л. М. Энтина, Учебник для ВУЗов, 2-е издание. Издательство НОРМА Москва, 2006 стр. 828:

փոխհատուցմամբ»:

Մի շարք երկրներում սահմանադրական մակարդակով հռչակում են գաղափարախոսական բազմակարծությունն ու բազմակուսակցականությունը, ինչպես նաև պետական որևէ գաղափարախոսության արգելքը:

Ըստ կառավարման ձևի, չճանաչված երկրների մեծ մասը /կարելի է նույնիսկ ասել գրեթե բոլորն/ իրենցից նախագահական կամ կիսանախագահական հանրապետություններ են ներկայացնում: Սա հավանաբար բացատրվում է նրանով, որ անցումային փուլում գտնվող երկրների համար, որոնցից շատերը առաջին անգամն են իրենց անկախ պետականությունը ստեղծում, գտնվում են տնտեսական եւ ռազմա-քաղաքական դժվար պայմաններում, եւ պահանջվում է գործող, ազդեցիկ ու հեղինակավոր նախագահական իշխանություն: Այդ կապակցությամբ սահմանադրությունները նախագահին իշխանության բոլոր թևերում օժտում են բավականին լայն լիազորություններով:

Այն, որ Սահմանադրությունը երկրի իրավական-քաղաքական փաստաթուղթ լինելուց բացի իրենից ներկայացնում է նաև պատմական փաստաթուղթ, ևս մեկ անգամ հաստատում է այն իրողությունը, որ յուրաքանչյուր երկրի Սահմանադրությունում նշմարվում է իր պատմության արտացոլանքը: Այսպես, Կոսովոյի Սահմանադրությունը պարբերաբար անդրադառնում է մունիցիպալ իշխանությունների, ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանության ու գենդերային հավասարության խնդիրներին: Համաձայն Աբխազիայի Հանրապետության Սահմանադրության, այդ երկրի նախագահի թեկնածուն պետք է անպայման լինի աբխազ ազգի ներկայացուցիչ: Աբխազիայի և Հարավային Օսեթիայի Սահմանադրություններն իրար շատ նման են նաև այն պատճառով, որ երկուսն էլ անկախացել են միևնույն երկրից՝ Վրաստանից:

Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունները զարգացման ժամանակակից փուլում հանդիսանում են տարածաշրջանային և միջազգային քաղաքականության ինքնուրույն խաղացողներ: Նրանց ազդեցությունը համաշխարհային քաղաքականության վրա զգալի է, եթե հաշվի առնենք նրանց մշտական համագործակցությունը մի շարք պետությունների, միջազգային հանրության հետ:

Չճանաչված պետությունների ի հայտ գալը համընկել է համաշխարհայնացման /գլոբալիզացիա/ հիմնահարցերի շուրջ գիտական քննարկումների ակտիվացմանը: Բայց չճանաչված պետություններ գոյություն են ունեցել նաև ժամանակակից գլոբալիստական գաղափարների երևան գալուց շատ առաջ: Գլոբալիզացումը ընդամենը ստեղծել է լրացուցիչ հնարավորություններ չճանաչված երկրների երկարատև գոյության համար, որոնք համշխարհային քաղաքականության համար աստիճանաբար սովորական երևույթ են դառնում: Չճանաչված պետությունների համագործակցությունը որոշակի տարածքների, ազգային պետությունների, միջազգային հանրության վերազգային կառուցվածքների, միջազգային

կազմակերպությունների, չկայացած պետական կազմավորումների հետ հանդիսանում է ժամանակակից աշխարհում նրանց գոյության գլխավոր ռեսուրսը: Շատ պետություններ իրենց կայացման շրջանում ճանաչում չունեին, եւ այդ ժամանակահատվածը երբեմն երկար տասնամյակներ էր տևում: Միջազգային իրավունքի համակարգում ազգերի ինքնորոշման սկզբունքի և տարածքային ամբողջականության սկզբունքի հակասությունը մշտապես հնարավորություն է ստեղծում նոր չճանաչված պետությունների ի հայտ գալուն:

Իսկ ինչ վերաբերում է կոնկրետ սահմանադրաիրավական կարգավիճակին, ասենք, որ գրեթե բոլոր չճանաչված երկրներն ունեն պետությանն անհրաժեշտ հիմնական բաղադրատարրերը՝ տարածք, բնակչություն, ինքնիշխանություն, իշխանության տարանջատում, Սահմանադրություն, պաշտպանական բանակ, ֆինանսավարկային ինքնուրույն քաղաքականություն: Նրանք հռչակում են մարդու և քաղաքացու մի շարք կարևոր, բնական և դրական իրավունքները, տնտեսական հարաբերություններ ունեն միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող բազմաթիվ պետությունների հետ, և այլ էական քաղաքական ձեռքբերումներ, մնում է միայն իրավաբանական ճանաչումը, ինչը, վերջին հաշվով, պետության սուբյեկտիվ գնահատականն է մեկ այլ պետության նկատմամբ:

РЕЗЮМЕ

Соси Алексанян

**Конституционно-правовой статус НКР
/сравнительный анализ опытов
непризнанных государств/**

10 декабря 2006 г. Нагорно Карабахская Республика всенародным референдумом приняла свою Конституцию. После провозглашения независимости и проведения референдума это очередной шаг юридического значения и политического самоутверждения. Соответствуя стандартам демократического государства, в Конституции провозглашаются такие принципы как разделение властей, политический плюрализм, гарантия естественных и позитивных прав человека и гражданина, разновидности формы собственности и другие основные права и свободы. Остается только международное признание.

SUMMARY

Sosi Alexsanyan

**Constitutional and Legal Status of the NKR
/Comparative Experiences of Unrecognized States/**

On December 10, 2006 the Republic of Nagorno Karabakh adopted its Constitution by national referendum. After declaration of independence and referendum it was the next step of the legal significance and political self-affirmation. Corresponding standards of a democratic state the Constitution proclaimed such principles as separation of powers, political pluralism, the guarantee of the natural and positive human rights, varieties of forms of property and other fundamental rights and freedoms. It remains only to international recognition.

ՌԻՏԱ ԱՌՈՒՄՏԱՄՅԱՆ

Արդ համալսարան
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ՈՒ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՂՀ անկախության հռչակումից հետո հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման բնագավառում ուսումնասիրությունների ձևավորումն ու զարգացումը ընթանում էր հայրենական իրավական համակարգի ձևավորմանն ու կատարելագործմանը զուգընթաց:

Չնայած հայրենական գիտնական-իրավաբանների որոշակի ներդրմանը՝ այդ բարդ և բազմակողմ հիմնահարցերի ամբողջական մշակման մեջ¹ մի շարք տեսակետներ կարիք ունեն հետագա ուսումնասիրության: Մասնավորապես իրավական նորմերի որոշակի ամբողջության՝ ինստիտուտի, ճյուղի, ամբողջությամբ իրավունքի համակարգի՝ հասարակական հարաբերությունների վրա յուրահատուկ ներգործության բացահայտմանը զուգահեռ, արդյունավետ է և մարդկանց կոնկրետ վարքի իրավական կարգավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը (իրավունքի կոնկրետ գործողության մեխանիզմը, նրա հիմնական փուլերը, ձևերն ու փոխգործողության կարգավորման միջոցները և այլն): Ինստիտուտով, ճյուղով, ամբողջությամբ իրավունքի համակարգով հասարակական հարաբերությունների կարգավորման մակարդակում իրավունքի գործողության առավել կարևոր ցուցանիշ է հանդիսանում կարգավորվածության, կարգավորվող հասարակական հարաբերություններում համաձայնեցվածության և կապերի պահպանումը: Դրան զուգահեռ, էական օրինաչափությունները կարող են բացահայտել այս կամ այն տեսակի(տիպի) հասարակական հարաբերությունների բովանդակությամբ հանդես եկող սուբյեկտների կոնկրետ վարքի (փոխգործողության) իրավունքի կարգավորման մակարդակում: Այստեղ առաջին պլան են մղվում իրավական կարգավորման այլ ցուցանիշներ՝ սուբյեկտներին իրավական բնույթի իրավունքներով և պարտավորություններով օժտելը (չօժտելը), դրանց իրականացման պայմաններն ու իրական լինելը, իրավունքի սուբյեկտների կապերի բնույթը:

Թեև դիտարկվող տեսակետները (մակարդակները) դիալեկտիկորեն փոխկապակցված են, հազիվ թե թույլատրելի է դրանք մեխանիկորեն նույնացնելը: Ցուցանիշները, որոնք «հանվում են» ամեն մի նշված մակարդակի վրա, նույնիսկ դրանց ըմբռնողական արտահայտությունը, կարող են էականապես տարբերվել: Ըստ երևույթին, հայտնապես դրա հետ են կապված դժվարությունները, մե-

¹Տե՛ս Сафарян Г. А. Механизмы правового регулирования и его структурные элементы.-В кн.: Апян Н.А., Апян С. Н., Сафарян Г. А. Проблемы теории права.-Ереван: Издательство Ереванского университета, 2003, с. 190-193; Азарян А. Определение сферы правового регулирования.- "Сборник научных трудов". Гавар, 2003, N 6, с. 429-439, խաչատրյան Ս. Ս. Իրավունքի էֆեկտիվությունը: Երևան, «Ձանգակ-97», 2003, էջ 84-132:

թողի, իրավական կարգավորման առարկայի, դրանց դերի՝ որպես անհրաժեշտ պայմանի (հայրենական իրավունքի ճյուղի ձևավորման չափանիշի) հասկացության մեջ լրիվ համաձայնության ձեռքբերմանը: Այդպիսի մոտեցման թույլատրելիությունը և նպատակահարմարությունը պայմանավորվում են ոչ միայն տվյալ դեպքում տիպային հասարակական հարաբերությունների տեսքով հանդես եկող (այլ ոչ թե հասարակական հարաբերությունների համակարգի) իրավական կարգավորման առարկայի առանձնահատկություններով, այլև նրանով, որ այս տեսանկյունից դիտարկվող իրավական կարգավորումը առավել «զգալի է», հստակորեն երևում է իրավունքի իրացման ձևերում:

Հայրենական իրավունքի իրականացման հիմնահարցը մինչև այժմ համարվում է բանավիճելի, թեև գնալով ավելի շատ գիտնականներ են թեքվում նրան, որ այն հնարավոր է և իրավահարաբերություններից դուրս²: Դա բացատրվում է նրանով, որ ինքը՝ իրավական իրականությունն է տալիս բազմաթիվ համապատասխան օրինակներ: Եվ բանը ոչ միայն և ոչ այնքան տարբեր նորմերն իրականացնելու մեջ է, որքան իրավունքով յուրակերպ արտահայտվող սոցիալական գործունեության ձևերի տարատեսակության մեջ:

Հասարակության մեջ մարդկանց գործունեությունը (փոխգործողությունը) ուսումնասիրվում է շատ գիտություններով:

Տարբեր է և այդպիսի ուսումնասիրման ուղղվածությունը՝ պայմանավորված այս կամ այն գիտության առարկայի ուրույնությամբ:

Իրավաբանական գիտության համար առավել էական է ներկայանում հասարակական կապի և հասարակական հարաբերության՝ որպես մարդկանց պրակտիկ գործունեության կարևոր ձևերի (նախադրյալների և արդյունքի) ուսումնասիրությունը: Եվ հասարակական կապը, և հասարակական հարաբերությունը ձևեր են, որոնցից դուրս մարդկային գոյությունն անհնարին է: Դրանում է նրանց միասնությունը: Միաժամանակ տվյալ երևույթները հարկավոր է տարբերել: Իրավական հասարակական հարաբերությունը՝ հնարավորություն է ստեղծում երկու կոնկրետ կողմերի փոխգործողության համար, որոնցից ամեն մեկը կարող է ներառնել մի քանի անհատականացված մասնակիցներ: Դա փոխգործողության հաստատուն ձև է, որտեղ հարաբերության մասնակիցները և պետությունը իրապես և որոշակիորեն նախատեսում են գործընթացն ու վերջինիս արդյունքները: Ընդ որում իրավունքով կարգավորված հասարակական հարաբերությունների սուբյեկտները հենվում են փոխադարձ աջակցության վրա և, միաժամանակ, հեղինակության, երաշխավորության և պետության կողմից փոխգործողության հարկադրելու հնարավորության վրա:

Բայց ժամանակակից հասարակության մեջ մարդը կարող է և ինքնուրույնաբար այս կամ այն արարքը կատարելու հույսն ունենալ, այսինքն՝ հենվելով երկրորդ կողմի անմիջական օժանդակու-

²Տե՛ս Դեգորկյան Ա.Ս. Понятие права. - В кн.: Основы государства и права. - Ереван: ՀԼԿԻ, 1998, с.45-47; Акопян Дж.А. Понятие современного права. - В кн.: Апиан Н.А.,; Акопян Дж.А., Проблемы Закономерности права (новое учение о праве), Ереван. §Зангак-97, 2003, с.130

թյան (կամ վերահսկման) վրա, հասարակական հարաբերությունից (իրավահարաբերությունից) դուրս: Եվ հասարակությունը նրան այդ հնարավորությունը որոշակի դեպքերում ներկայացնում է, իսկ պետությունը՝ երաշխավորում ու պահպանում: Այդպիսի վարքը կարգավորվում է հասարակական հարաբերությունների իրավական շրջանակներում: Մասնավորապես, ԼԴՀ Սահմանադրությունը յուրաքանչյուրի համար ամրագրում է աշխատանքի, տեսակի ընտրության (հոդ.34), խղճի ազատության (հոդ.26), անձեռնմխելիության (հոդ.19) իրավունքը և այլն: Իրականացնելով դրանք անհատը ոչ մեկի հետ իրավահարաբերության մեջ չի մտնում, սակայն բոլորի հետ գտնվում է իրավական կապերի մեջ խոսքը գնում է այս կամ այն պաշտոնը զբաղեցնելու, մասնագիտություն ստանալու և այլն ընտրության հնարավորության մասին: Երբ անհատի հնարավորությունը որոշված է, նշված իրավունքների հետագա իրականացումը ընթանում է իրավահարաբերությունների շրջանակներում: Արգելքների առաջացման դեպքում նույն իրավունքները հենց սկզբից կարող են իրացվել կոնկրետ իրավահարաբերությունների մեջ: Գործունեության իրականացումը իրավական կապերի շրջանակներում երաշխավորվում է և պահպանվում պետության կողմից: Բայց ուրույնությունն այստեղ նրանում է, որ այդ երաշխավորությունը, առաջին՝ արտահայտվում է անհատների ինքնուրույն վարքի նախանշված հնարավորության մեջ՝ հասարակական կապերը որպես իրավականներ ամրագրելու ճանապարհով, երկրորդ՝ գործողության եղանակն ու նրա արդյունքները մանրամասնվում ու վերահսկվում են ոչ այնքան մանրախնդրորեն, ինչպես իրավական հասարակական հարաբերություններում:

Հասարակական հարաբերությունը իրավաբանորեն նշանակալի է դառնում և այն պատճառով, որ շնորհիվ նրա ձևավորվում են հասարակական իրավական: Ամրագրելով իրավական կապերի այս կամ այն կառուցվածքը, իրավունքը՝ արտացոլելով կապերը այդպիսի կառույցներում, որպես իրավական, ապահովում է դրանց հիման վրա իրավաբանական բնույթի հասարակական հարաբերությունների առաջացումը:

Այսպիսով, հետազոտելով իրավական կարգավորման առարկան՝ հարկավոր է հաշվի առնել, առաջին, որ հասարակության մեջ առաջանում են ոչ միայն հասարակական հարաբերություններ, այլև հասարակական կապեր: Հասարակական կապը իրավաբանորեն նշանակալի է՝ ա) որպես ձև՝ ապահովող որոշ սուբյեկտիվ իրավունքների (իրավական պարտականությունների) իրացման հնարավորությունը իրավահարաբերություններից դուրս, և բ) որպես իրավական հարաբերությունների ստեղծման հիմնական նախապայման: Եվ եթե հասարակական կապի առաջին հատկությունը կարող է վիճարկվել իրավահարաբերություններից դուրս իրավունքի իրացումը մերժող իրավաբան-գիտնականների կողմից, ապա երկրորդը, հավանաբար, անվիճելի է: Դա տեղ ունի այն ժամանակ և այնքանով, երբ և որքանով հասարակական կապերի ամրագրումը իրավունքով ձուլում է տարբեր իրավական կառույցներ կազմավորելու մեջ (հասարակության, պետության, ընտանիքի, մարմնի և այլն): Այդպիսի կառույցները հանդիսանում են կարգավորման անհրաժեշտ փուլ՝ ապահովող գործունեության (իրավասության) հետագա իրականացումը

հասարակական հարաբերությունների պայմանակարգում:

Երկրորդ՝ ոչ բոլոր հասարակական հարաբերություններ են հանդես գալիս որպես իրավական կարգավորման առարկա: Դրանցից մի քանիսը մատչելի են իրավական կարգորոշման, բայց չեն կարգավորում այս կամ այլ պատճառներով: Օրինակ՝ իրավունքի համար նշանակություն չունեն կամ էլ նրանց իրավական ձև տալը աննպատակահարմար է: Մյուսները չեն կարող կարգավորվել իրավունքով շնորհիվ այն բանի, որ նրանց հնարավոր է տալ համընդհանուր պարտադիր բնույթ, այսինքն՝ ապահովել նրանց իրականացումը հարկադրական կարգով, երբ փոխգործողությունը շեղվում է նախատեսվածից (անձնական, ինտիմ հարաբերությունները): Որոշ հարաբերություններ թույլ չեն տալիս իրենց նկատմամբ հավասար չափի, մասշտաբի կիրառություն և այդ պատճառով իրավունքով չեն կարգավորվում: Իրավական կապերի այս կամ այն կառույցի ամրագրման իջոցով օրենսդիրը կարող է ուղղորդել, խթանել անհրաժեշտ հասարակական իրավական հարաբերությունների առաջացումը, հասկանալի է, այն չափով և սահմաններում, որի մեջ իրավական կառույցի ամրագրումը համապատասխանում է քաղաքացիական հասարակության զարգացման օբյեկտիվ օրինաչափություններին:

Երրորդ՝ ժամանակակից հասարակական պատկերացումները օբյեկտի և առարկայի մասին, ելնելով նշված հասկացությունների ընդհանրությունից, միաժամանակ չեն բացառում դրանց սահմանազատման հնարավորությունը: Օբյեկտի տակ սովորաբար հասկացվում է սուբյեկտին շրջապատող իրականությունը, որի տարբեր կողմերը կարող են դառնալ արտացոլման, այդ թվում նրանց վրա մարդու (հասարակության) ներգործության, և վերափոխման առարկա: Ըստ այդմ՝ առարկա օբյեկտի կոնկրետ բնագավառներն են, կողմերը, տարրերը, որոնք առանձնացվում են որպես անմիջականորեն արտացոլվողներ և վերափոխվողներ, այսինքն՝ առարկա հասկացությունը նեղ է օբյեկտ հասկացությունից: Առարկան մեծ չափով կապված է մարդկանց իրականության, հասարակական կեցության իրական հնարավոր վերափոխման կոնկրետ պատմական դրսևորումների (ձևերի) հետ: Այդ ընդհանուր գիտական պատկերացումներն անհրաժեշտ է օգտագործել իրավագիտության մեջ, իհարկե, իրավական իրականության հաշվառմամբ: Մասնավորապես արդյունավետ է թվում իրավական կարգավորման օբյեկտի տակ հասկանալ հասարակական կապերը: Այդ դեպքում առարկայով կընդգրկվի հասարակական հարաբերությունների շրջանը (ոլորտը), որոնք մատչելի են իրավական կարգավորման³: Հնարավոր է իրավական կարգավորման առարկայի ավելի մեծ կոնկրետացում՝ հասարակական հարաբերությունների, որպես բարդ երևույթի առանձին տեսակի, կարգորոշումը առանձին տարրերից կազմվորվող իրավունքով:

Դրանք հարաբերության **սուբյեկտներն են** (այստեղ կարևոր են սոցիալ-հոգեբանական բնութագրումները՝ արժեքային կողմնորոշումները, փաստարկային կառույցները, որոնք պայմանավորում են, որոշակի չափով, հնարավոր վարքի բնույթը), հարաբերության **բո-**

³Տես Լազարև Բ. Բ. *Правовое регулирование.* - В кн.: *Теория права и государства. Учебник. Под ред. проф. Б. В. Лазарева.* - М.: *§Право и закон*., 2001, с. 121-124.

վանդակությունը, որի տակ վերջերս շատ հաճախ (այդ թվում և ընդհանուր գիտական գրականության մեջ) հասկանում են հարաբերության սուբյեկտների վարքը, հարաբերության **ձևը**, այսինքն՝ փոխգործողության իրականացման կարգն ու պայմանները⁴:

Ինչպես էլ որ մեկնաբանվեն իրավական կարգավորման նպատակները, վերջնականը հանդիսանում է այն, որ վերջինս ուղղված է առաջին՝ իրավաբանական միջոցներով հասարակական հարաբերությունների ու կապերի ամրագրմանը՝ արդեն հասարակության մեջ ձևավորված քաղաքական, տնտեսական, բարոյական և այլ գործոնների ազդեցության տակ: Երկրորդ՝ համապատասխան հարաբերությունների և կապերի հետագա զարգացման խթանմանը: Երրորդ՝ սոցիալ-վնասակար կապերի և հարաբերությունների դուրս մղմանը: Սակայն այսպիսի ընդհանուր ուրվագիծը պետք է լրացված լինի իրավաբանական կարգորոշման ուղղվածության, փուլերի ու նպատակների մասին կոնկրետ պատկերացմամբ:

Եղած ուսումնասիրությունները թույլ են տալիս տարբերել իրավական կարգավորման երկու հիմնական մակարդակ: Այդ մակարդակներից յուրաքանչյուրի վրա տեղ ունի իրավունքի իրականացումը, թեև իրավունքի իրացման համատարած հասկացությունը, որպես քաղաքացիների կողմից օրենքի ուժով նրանց պատկանող սուբյեկտիվ իրավունքների իրականացում և իրենց իրավաբանական պարտականությունների կատարում նրանցից առաջինի նկատմամբ, ոչ միշտ է ընդգծվող և ճիշտ: Անվանված մակարդակը ամբողջապես կապված է իրավունքի համակարգի գործողության հետ: Նրա շրջանակներում կարելի է խոսել իրավական կարգավորման երկու ելակետային (ընդհանուր) փուլերի մասին:

Առաջինում ամրագրվում են իրավական գործունեության (փոխգործողության) ընդհանուր նախադրյալները:

Դա ապահովվում է՝ ա) անհատների պետական ճանաչման միջոցով՝ հասարակության ելակետային կառույցի հաստատման և նրանց միջև իրավական կապերի ամրագրման հաշվին, ավելի ճիշտ, առկա կապերի՝ որպես իրավականների արձանագրմամբ: Իրավաբանական պլանով դա նշանակում է սահմանադրությունից ելնող քաղաքացիության, իրավունակության, ինչպես նաև ընդհանուր (միասնական) իրավունքների և իրավաբանական պարտականությունների հաստատում (մասնագիտության ազատ ընտրության, կրթության, արժանապատվության իրավունք և այլն): Այսպիսով՝ սահմանվում է. ա) բոլոր անհատների համար քաղաքացու հավասար իրավական կարգավիճակ, որի բաղադրիչ տարրերն են հանդիսանում քաղաքացիությունը, իրավունակությունը և ընդհանուր (սահմանադրական) իրավունքներն ու պարտականությունները՝ պատկանող «բոլորին և յուրաքանչյուրին», բ) սոցիալական կառույցի՝ պայմանավորված հասարակական արտադրության մեջ այս կամ այն սոցիալական խմբի տեղով, ինչը իր հերթին որոշարկուն է նրա տեղը քաղաքա-

⁴Կարծում ենք, որ արդյունավետ է իրավական կարգավորման հիմնահարցերի ուսումնասիրումը մարդկանց վարքի իրավաբանական կարգորոշման օրինաչափությունների ճանաչման մակարդակում: (Տե՛ս Кудряцев В. Н. Право и поведение.-М., 1978; его же: О правопонимании и законности.-§Государство и право., 1994, N 3).

կան և այլ կառույցներում: Իրավական պետության մեջ իրավական կարգավորումը ամբողջ ժողովրդի շահերի իրավաբանական արտահայտությունն է, գ) դաշնային կառույցի, որի հիմնական նպատակը ժողովուրդների և ազգերի միջև հարաբերությունների հավասարության ապահովումն է, ազգային արժանապատվությունը հարգելը և այլն:

Այդ կառույցները սովորաբար ամրագրվում են բարձրագույն իրավաբանական նորմատիվ-իրավական ակտերով, և, որպես կանոն, ձևավորվում են հասարակության ու պետության զարգացման «բեկումնային» փուլերում: Օբյեկտի և իրավական կարգավորման առարկայի առաջարկվող սահմանազատման տեսակետից տվյալ փուլում իրականացվում է հասարակական կապերի իրավական միջնորդավորումը (իրավական կարգավորման օբյեկտը):

Երկրորդ փուլում (առաջին մակարդակի), կազմակերպված հասարակական կապերի (իրավական կառույցների) շրջանակներում, իրացվում են որոշ ընդհանուր իրավական նորմեր՝ ամրագրող համընդհանուր իրավունքներն ու իրավաբանական պարտականությունները (սեփականության իրավունքը, անձեռնմխելիության իրավունքը և այլն): Իսկ այստեղ տեղի է ունենում այնպիսի համընդհանուր իրավունքների իրականացում, ինչպիսիք են՝ աշխատանքի, կրթության իրավունքը և այլն (աշխատանքի տեսակի և տեղի, մասնագիտության ընտրությունը): Բայց այդպիսի իրավունքների իրացումը տեղ ունի իրավական կարգավորման մակարդակի շրջանակներում:

Դրա հիմնական առանձնահատկությունը նրանում է, որ հասարակական հարաբերությունների տարբեր տեսակներն այստեղ կարգավորվում են տարբեր ձևով, այսինքն՝ իրավական կարգավորումը նպատակ չի հետապնդում իրավական իրավունքներով օժտել բոլորին և ամեն մեկին (ամրագրել իրավաբանական պարտականությունները):

Երկրորդ մակարդակում նույնպես կարելի է առանձնացնել երկու փուլ. ա) պակաս գլոբալ (առաջին մակարդակի համեմատությամբ) և այդ պատճառով ամալել կոնկրետ կառույցների (այս կամ այն մարմնի, կոլեկտիվի և այլն) կազմակերպումը, բ) իրավական հարաբերություններում տարբեր իրավունքների և իրավաբանական պարտականությունների իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը (ներառյալ որոշ համընդհանուր իրավունքների և պարտականությունների վերջնական իրացումը): Այսպիսի կարգավորման ընթացքում իրավունքի սուբյեկտներն օժտվում են կոնկրետ իրավունքներով, ապահովում են դրանց հարկ եղած օգտագործման պայմանները՝ իրավաբանական պարտականությունների ճիշտ կատարման համար: Այն կարող է շոշափել սուբյեկտների իրավունքների լայն շրջան կամ հասարակական հարաբերությունների խիստ որոշարկված և նեղ բնագավառը, ինչը պայմանավորվում է մի շարք գործոններով՝ նրանց դերով և տեղով նյութական միջոցների արտադրության մեջ, դրությամբ տնտեսության կոնկրետ ճյուղում, քաղաքական կառույցում, աշխարհագրական միջավայրում (կլիմայական պայմանները, հեռավորությունը) և այլն: Միաժամանակ այստեղ կարող են ամրագրվել հասարակության (պետության) կոնկրետ ենթակառույցները և կազմակերպական նրանց առանձնացումը ինչ-

պես ամբողջությամբ (օրինակ, տնտեսության ճյուղերը, ձեռնարկության, մարմնի, կոլեկտիվի), այնպես էլ առանձին տարրերի մակարդակով, տարրերի դասավորման կարգը և դրանց փոխադարձ կապերը: Դրա հետ միասին ամրագրվում են իրավական ոլորտում համակարգերի և դրանց տարրերի գործելու կոնկրետ դատավարական սկզբունքները՝ իրավունքով հաստատված պարտականությունների կատարման կարգն ու պայմանները, սուբյեկտիվ իրավունքների օգտագործման և իրավասությունների իրականացման ընթացակարգը:

Իրավական մակարդակների ուսումնասիրությունը ունի ոչ միայն ճանաչողական, այլև գործնական նշանակություն: Ընդ որում շատ կարևոր է օգտագործել կոմպլեքսային մոտեցումը:

Կոմպլեքսային մոտեցման կարևորությունն ու անհրաժեշտությունը, օրինակ, մեր հասարակության մեջ դեռևս տեղ ունեցող իրավախախտումների դեմ պայքարում բազմիցս ընդգծվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նստաշրջաններում: Դրանից է ելնում միասնականության պահանջը իրավական կարգավորման անվանված ոլորտում, քանի որ կոմպլեքսային մոտեցումը իրավախախտումների հետ պայքարին ենթադրում է մի ամբողջ շարք սոցիալ-տնտեսական միջոցառումների իրականացում, որոնց ապահովումը հիմնված է հայրենական օրենսդրության ամբողջ համակարգի գործողության վրա:

Դրանով հանդերձ հազիվ թե համապատասխանի ժամանակակից գիտությունների մակարդակի իրավական կարգավորման կոշտ շաղկապվածությունը միայն գործող իրավական համակարգի ճյուղերի սահմանազատման (առանձնացման) հետ, նախևառաջ տվյալ ճյուղով կարգավորվող հարաբերության ուրույնության բացահայտմամբ: Գիտական մշակումների գոյություն ունեցող մակարդակը թույլ է տալիս վերլուծությունից անցնելու համադրության, ճյուղային իրավական կարգավորման առանձնահատկությունների որոնումներից իրավունքի համակարգի գործողության օրինաչափությունների՝ որպես ամբողջական արտակարգ երևույթի, պարզաբանմանը:

РЕЗЮМЕ

Рита Арустамян

Правовое регулирование, основные вопросы и суждения

В данной статье исследуется предмет правового регулирования, нужно учитывать, что в обществе устанавливаются не только правовые отношения, но и общественные связи.

Следует отметить, что цель правового регулирования в первую очередь направлена на то, чтобы с помощью правового механизма закрепить общественные отношения и связи и исключить социально-опасные связи и отношения.

SUMMARY

Rita Arustamyan

Legal Regulation. Issues and Judgments

Exploring the subject of legal regulation we should take into account that there are not only legal relations in society, but also social connections.

It should be emphasized that the aim of the legal regulation is to strengthen social relations and connections and to exclude socially dangerous ones.

ՏԱԹԵՎԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱրՊ համալսարան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունված է ասել, որ իրավունքը, իրավական կարգավորումը իրենցից ներկայացնում են սիստեմային կարգի երևույթներ: Ինչպես և ցանկացած համակարգ, դրանք հանդես են գալիս որպես գործող համակարգեր¹: Դրա համար բավականին արդյունավետ պետք է համարել իրավունքի ուսումնասիրման ֆունկցիոնալ մոտեցումը: Դա ֆունկցիաների համակարգի օգնությամբ հնարավորություն է տալիս սինթեզել երևույթի տարբեր բնութագրերը ամբողջական պատկերի մեջ: Բացի դրանից ֆունկցիոնալ մոտեցումը թույլ է տալիս բացահայտել իրավունքի, որպես որոշակի կառուցվածքի, բովանդակության կազմակերպման սկզբունքները²: Վերջին տարիներին իրավունքի և իրավական կարգավորման ուսումնասիրման ֆունկցիոնալ մոտեցումը էական զարգացում է ստացել: Սակայն գոյություն ունեն մի շարք հարցեր, որոնց վերաբերյալ կան դեռևս լուրջ տարաձայնություններ (օրինակ, իրավական երևույթների վերաբերմամբ ֆունկցիաների հասկացությունը, իրավունքի ֆունկցիաների համակարգը և այլն):

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեցող տարաձայնությունները իրավունքի ֆունկցիաների էության, նրանց համակարգի և բովանդակության ըմբռնման մեջ զգալի չափով պայմանավորված են նրանով, որ ֆունկցիաները հաճախ առանձնանում են երևույթների տարբեր դասակարգերի նկատմամբ իրենց վերաբերմունքով: Հաճախ խառնվում և նույնացվում են իրավական կարգավորման ֆունկցիաները կամ էլ նույնիսկ ամբողջ իրավաբանական վերնաշենքի և նրա կենտրոնական մասի ֆունկցիաները՝ իրավական նորմերը: Մինչդեռ նման նույնացման համար միշտ էլ, որ կան բավականաչափ հիմքեր: Բնականաբար, իրավունքի և այլ իրավական երևույթների գործունեությունը հակադրել չի կարելի: Իրականության մեջ դրանք օրգանապես փոխկապակցված են: Բայց մի շարք դեպքերում իքնուրույն վերլուծությունն անհրաժեշտ է, քանի որ այն թույլ է տալիս բացահայտել իրավական վերնաշենքի տարբեր մասերի դերը և դրա հիման վրա առանձնացնել և կատարելագործել դրանցից յուրաքանչյուրն իր առանձնահատկությունների հետ համապատասխան³:

Քանի որ իրավունքի և իրավական կարգավորման ֆունկցիաների բնույթը որոշող երևույթները տարբեր են ըստ իրենց ընդհանրության (կոնկրետ՝ հասարակական հարաբերությունները, հասարակական կյանքը, հասարակությունը), տարբեր պետք է լինեն նաև համապատասխան ֆունկցիաները: Իրավական վերնաշենքն ամբողջությամբ և ամենից առաջ նրա այնպիսի կարևորագույն բաղադրիչները, ինչպի-

սիք են իրավական կարգավորումը և իրավունքը, հասարակության նկատմամբ կատարում են միասնական ֆունկցիա: Այդպիսի ֆունկցիան կարող է կոչվել իրավունքի, իրավական կարգավորման և իրավաբանական վերնաշենքի այլ մասերի համասոցիալական կամ կառավարչական ֆունկցիա:

«Համասոցիալական ֆունկցիա» հասկացությունը արտացոլում է այն փոխադարձ կապը, որը որոշում է մեկ համակարգի (իրավաբանական վերնաշենքի) ներառման կարգը մյուս ավելի ընդհանուր համակարգի (հասարակության) մեջ: Իրականում տվյալ ֆունկցիան կարող է բնութագրված լինել միայն նրա «մասնատման», կոնկրետացման արդյունքում: Ներկայումս նշվում է կոնկրետացման երկու հիմնական ուղղություն: Դրանցից մեկը կապված է հասարակական հարաբերությունները որպես ամբողջություն ընդունելու հետ, որի վերաբերյալ պետք է առանձնացնել իրավունքի ֆունկցիաները: Հենց այդ ասպեկտով էլ տրվում են «իրավունքի ֆունկցիա» հասկացության սահմանումները: Այդպես՝ Լ.Ի Սպիրիդոնովը իրավունքի ֆունկցիաների տակ հասկանում է մարդկանց վարքի վրա ներգործության ուղղությունները սուբյեկտների սոցիալապես նշանակություն ունեցող գործունեության նախադրյալների նորմատիվ ամրապնդման և պահպանման ճանապարհով⁴: Տ.Վ. Ռադկոն գտնում է, որ «իրավունքի ֆունկցիան հասարակական հարաբերությունների վրա ներգործության այնպիսի ուղղություն է, որի իրականացման կարիքն առաջացնում է իրավունքի, որպես սոցիալական երևույթի, իրականացման անհրաժեշտությունը»⁵: Վ.Ն. Խրոպանյուկի կարծիքով «իրավունքի ֆունկցիաները հասարակական հարաբերությունների վրա, մարդկանց վարքի վրա նրա ներգործության հիմնական ուղղություններն են»⁶: Ըստ Զ.Հակոբյանի՝ «ֆունկցիաների տակ հարկ է հասկանալ հասարակական հարաբերությունների վրա դրա ներգործության հիմնական ուղղությունները, որոնք արտացոլում են հասարակական կյանքում իրավունքի ծառայողական նշանակությունն ու հանդես են գալիս որպես դրա էության դրսևորում»:

Ընդհանրացնելով իրավունքի ֆունկցիաների նշված սահմանումները՝ կարելի ասել հետևյալը. եթե իրավունքի ֆունկցիա ասելով հասկանանք միայն նրա սոցիալական նշանակությունը/դերը/, ապա նման հասկացությունը կկրի չափազանց ընդհանուր բնույթ: Իրավունքի ֆունկցիաները միայն⁷ որպես իրավական ներգործության ուղղություն ըմբռնելու դեպքում դրանցից մի քանիսի մեջ նկատի չի առնվում այդ ներգործության ուղղորդիչ պահը:

Թվում է, թե Տ.Ն.Ռադկոյի կողմից այդ հասկացությանը տրված սահմանումը առավել ամբողջական է, քանի որ դրա մեջ է պարունակվում այն նշումը, որն ուղղված է իրականացման գործընթացում իրավունքի սոցիալական նշանակության /դերի/ իրացմանը: Սակայն այն նույնպես, մեր կարծիքով, անթերի չէ: Ամենից առաջ կասկած է առաջացնում «հիմնական ուղղություն» տերմինի օգտագործման նպատակահարմարությունը: Հեղինակը չի առաջարկում «հիմնականի» և «ոչ

հիմնականի» սահմանազատման չափանիշները, և դժվար թե դրանք կարող են առաջարկվել: Ամեն դեպքում պետության ֆունկցիաների նկատմամբ դա չի կարելի կիրառել: Ֆունկցիա է հանդիսանում միայն այն, ինչ ընդունված է համարել հիմնական:

Սակայն նշված սահմանման գլխավոր թերությունը կայանում է նրանում, որ իրավունքի ֆունկցիաների, որպես հասարակական հարաբերությունների վրա ներգործության ուղղությունների, ըմբռնումը անխուսափելիորեն կիանգեցնի իրավունքի ֆունկցիաների հասկացության «նեղացմանը»: Բանն այն է, որ իրավունքի համասոցիալական ֆունկցիայի կոնկրետացման երկրորդ ուղղությունը կապված է իրավունքի այն ֆունկցիաների առկայության ընդունման հետ, որոնք պայմանավորված են հասարակական կյանքի երեք կարևորագույն ոլորտների գոյությամբ՝ տնտեսության, քաղաքականության, գաղափարախոսության: Մասնավորապես տարածում է ստացել քաղաքական և տնտեսական ֆունկցիաների բնութագրումը: Վերջին տարիներին գիտնական իրավաբանները շատ են գրում նաև իրավունքի դաստիարակչական և գաղափարախոսական ֆունկցիաների մասին⁶: Այդ ֆունկցիաները (դրանք ընդունված է անվանել սոցիալական) չի կարելի դիտարկել որպես հասարակական հարաբերությունների վրա ներգործության ուղղություններ, քանի որ դրանց առկայությունը որոշվում է ոչ թե նման ներգործության առանձնահատկություններով, այլ հասարակական կյանքի կառուցվածքի առանձնահատկությամբ: Իրավունքը և այլ իրավական միջոցները հասարակական հարաբերությունների վրա ազդում են միայն երկու՝ դրանց կարգավորման և պահպանման ուղղությամբ, ինչը համապատասխանում է իրավունքի (իրավական կարգավորմանի) կարգավորիչ և պահպանիչ ֆունկցիաներին:

Հետևաբար՝ որպեսզի իրավունքի (իրավական կարգավորման) ֆունկցիայի հասկացությունը տարածքի և հասարակական հարաբերությունների վրա (կարգավորում և պահպանում), և հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա (տնտեսություն, քաղաքականություն, գաղափարախոսություն) նրա ներգործության ուղղությունների բնութագրերը պետք է սահմանափակել այն նշումով, որ ֆունկցիաները հասարակական կյանքի վրա ներգործության ուղղություններն են: Հասարակական կյանքի ոլորտների վրա իրավունքի ներգործության ուղղվածությունից կախված պետք է տարբերել իրավունքի տնտեսական, քաղաքական և գաղափարախոսական ֆունկցիաները:

Բնական է, որ իրավական կարգավորման ֆունկցիաների սահմանումը չպետք է էապես տարբերվի իրավունքի ֆունկցիաների սահմանումից, քանի որ իրավական ներգործության մեջ գլխավորը նրա կարևորագույն օղակի՝ իրավական նորմերի գործունեությունն է:

Իրավունքի և իրավական կարգավորման ֆունկցիաների բովանդակությունը ըստ էության համընկնում է: Հաճախ դժվար է խոսել իրավունքի և իրավական կարգավորման կարգավորիչ և պահպանիչ ֆունկցիաների մասին առանձին: Ինչպես իրավունքը, այդպես էլ իրավական կարգավորումը կատարում է տնտեսական, քաղաքական և

գաղափարախոսական ֆունկցիաներ: Նշված ֆունկցիաների իրականացումն ապահովում են իրավական կարգավորման մեխանիզմի բոլոր տարրերը միասին:

Դրա հետ մեկտեղ մի շարք դեպքերում հնարավոր և անհրաժեշտ է սահմանազատել ու առանձին բնութագրել իրավունքի ֆունկցիաները որպես իրավական վերնաշենքի այլ մասերի ֆունկցիաների և նորմերի ամբողջություն: Դա կարելի է ցույց տալ իրավունքի և իրավական կարգավորման դաստիարակչական և իմացկան ֆունկցիաների օրինակի վրա⁹: Առաջին հերթին պետք է պարզել իրավունքի գաղափարախոսական ֆունկցիայի հետ միաժամանակ նաև հատուկ դաստիարակչական ֆունկցիայի առանձնացման հիմքերը:

Գաղափարախոսական ֆունկցիան օբյեկտիվորեն բնորոշ է հայրենական իրավունքին: Իրավունքն ակտիվորեն օգտագործվում է պետության կողմից գիտական հետազոտությունների (դրանցից ոչ բոլորն են անմիջականորեն կապված քաղաքականության կամ տնտեսության հետ) կարգավորման, դրանց արդյունքների ընդունման համար: Այն անհրաժեշտ է քաղաքացիների կրթության պարտադիր նվազագույնի, կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում բոլոր հաստատությունների գործունեության մեջ հայրենական գաղափարախոսության գերիշխման ապահովման համար: Իրավունքն կիրառվում է նաև արվեստի ստեղծագործությունների ստեղծման և տարածման գործընթացի վրա պատշաճ ազդեցության, զանգվածային լրատվամիջոցների գործունեության կարգավորման համար, որի նպատակը երկրի մեջ հակահայկական գաղափարախոսության և բարոյախոսության թափանցումը կանխելն է¹⁰: Կարելի է ասել, որ իրավունքի գաղափարախոսական ֆունկցիան իրենից ներկայացնում է հայրենական պետության մշակութադաստիարակչական ֆունկցիայի իրավական ձևակերպումը:

Իսկ իրավունքի դաստիարակչական ֆունկցիան դաստիարակումն է իրավունքով, որն արդեն իր գոյության փաստով և հատկապես իրավական նախանշումների իրացման միջոցով, ընդունակ է դաստիարակչական ազդեցություն ունենալ հասարակության անդամների վրա: Թույլատրելով կամ արգելելով այս կամ այն գործողությունները՝ իրավունքը դաստիարակում է քաղաքացիներին իրենց կողմից իրենց իրավունքների և պարտականությունների ճիշտ ըմբռնման և իրականացման ոգով, ձևավորում է բարձր իրավագիտակցություն: Ընդ որում դաստիարակումը իրավունքով նշանակություն ունի իրավունքի և իրավական կարգավորման ոչ միայն գաղափարախոսական, այլև տնտեսական ու քաղաքական ֆունկցիայի իրացման դեպքում:

Այսպիսով՝ եթե իրավունքի գաղափարախոսական ֆունկցիայի էությունը կայանում է մարդկանց կյանքի հոգևոր ոլորտում (գիտություն, կրթություն, արվեստ և այլն) նորմերի օգնությամբ հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ, ապա դաստիարակչական ֆունկցիայի էությունը կայանում է իրավունքով հասարակական կյան-

քի բոլոր բնագավառների կարգավորման գործընթացում անձի գիտակցության վրա ներգործության մեջ: Դաստիարակչական ֆունկցիայի օբյեկտն անձի գիտակցությունն է և ամենից առաջ նրա իրավագիտակցությունը: Նշված ֆունկցիայի իրականացման ընթացքում ձևավորվում, զարգանում, ամրանում է ժողովրդավարական իրավագիտակցությունը, հասարակության անդամները դաստիարակվում են առաջավոր գաղափարների, հայացքների, համոզմունքների ոգով¹¹:

Փորձենք սահմանազատել մի կողմից իրավունքի դաստիարակչական, մյուս կողմից՝ իրավական կարգավորման ֆունկցիաները: Բնականաբար դրանք սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ: Դաստիարակումն իրավունքով ամբողջովին կարող է իրականացվել միայն նրա գործունեության պայմաններում: Իրավունքի դաստիարակչական ֆունկցիան և իրավական կարգավորման ֆունկցիան ունեն ընդհանուր, անմիջական և վերջնական խնդիրներ ու նպատակներ: Դրա հետ միասին դրանք տարբերվում են ծավալով: Խոսելով իրավական կարգավորման դաստիարակչական ֆունկցիայի մասին, անհրաժեշտ է պարզաբանել, որ այն իրացվում է ոչ միայն իրավունքի նորմերի միջոցով, այլև իրավական երևույթների ամբողջ համակարգով նորմատիվ և անհատական ակտերով, օրինակաւնությամբ և իրավակարգով, սուբյեկտիվ իրավունքներով և պարտականություններով և այլն:

Իրավական նորմերի դաստիարակչական դերի վերլուծությունը ենթադրում է կարգավորիչ և պահպանիչ նորմերի դաստիարակչական նշանակության ուսումնասիրությունը, դրանց օպտիմալ զուգորդումը առավելագույն դաստիարակչական արդյունքին հասնելու նպատակով: Իրավական կարգավորման դաստիարակչական ֆունկցիայի ուսումնասիրությունը կարող է իրականացվել այդ գործընթացի փուլերի հետ համապատասխան: Մասնավորապես լուրջ դաստիարակչական նշանակություն ունեն իրավաստեղծ գործընթացը, սուբյեկտիվ իրավունքների ձեռք բերումը, պարտականությունների ծագումը, դրանց իրացումը: Հատուկ կարևոր դեր է կատարում իրավական նորմերի կիրառման գործընթացը, պետության իրավապահ մարմինների գործունեությունը¹²:

Իրավական կարգավորման ֆունկցիաների կատեգորիան կարող է կիրառվել իրավունքի մոտ իմացական ֆունկցիայի գոյության մասին վիճարկելի հարցի լուծման համար: Այսպես՝ Ն.Ապիյանը, պահպանելով այն տեսակետը, որ իրավունքը հասարակական գիտակցության առանձնահատուկ ձև է, նշում է, որ իրավունքը, նրա նորմերը հասարակության զարգացման օրինաչափությունների մասին գիտելիքների կուտակման յուրահատուկ ձևն է: Այդ օրինաչափությունները ճանաչում է ոչ միայն գիտնականը, այլև նկարիչը, գրողը: Ճանաչում է այն նաև օրենսդիրը, ամրացնելով իր ճանաչողության արդյունքները կյանքի մասին որոշակի տեղեկատվություն կրող իրավական նորմերում¹³:

Իրավունքի իմացական դերն առավել վառ է արտահայտվում իրա-

վաստեղծ գործընթացում: Հետևաբար, համապատասխան ֆունկցիա ունի օրենսդիրը, այսինքն՝ այն հատուկ է իրավաստեղծ գործընթացին: Սակայն դրանով սահմանափակվելը դժվար թե արդարացի է: Հասարակական կյանքի օրենքների ճանաչումը իրականացվում է իրավական կարգավորման ամբողջ գործընթացի ընթացքում, այստեղ ոչ պակաս կարևոր նշանակություն ունի իրավունքի սուբյեկտների պրակտիկան: Արդարացի է Ս.Ա. Կոմարովի այն կարծիքը, թե պետությունը հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման միջոցով նպաստում է դրանց մշտական կատարելագործմանը: Իրավական ակտերում արտացոլվում է հասարակության կյանքում արդեն ձեռք բերված աստիճանը և դրա հետ միասին իրավունքն ուղղում է նրա զարգացումը՝ նպատակ ունենալով ձեռք բերել հաջորդ, ավելի բարձր աստիճանը¹⁴: Սակայն հետագա զարգացման ուղղությունը հնարավոր է կանխատեսել միայն ձեռք բերվածի պրակտիկայի ճանաչման հիման վրա: Այդպիսի գիտելիքն է իրավունքին հնարավորություն տալիս հանդես գալ որպես իրականության արտացոլման, առաջ անցնող ձև ե, իր մեջ պարունակել տեսության, կանխատեսման պահ¹⁵: Իրավական կարգավորումը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե այն հիմնված է հասարակական զարգացման օրինաչափությունների գիտական ճանաչման վրա¹⁶: Գնոսիոլոգիական ասպեկտն այս կամ այն չափով բնորոշ է ցանկացած հանրային-տնտեսական ֆորմացիայի իրավական կարգավորմանը, բայց ժողովրդավարական հասարակության պայմաններում, իսկ իրավական պետությունում հատկապես նրա դերը նշանակալիորեն մեծանում է:

Այսպիսով՝ իմացական ֆունկցիան պետք է առանձնացված լինի առաջին հերթին հենց իրավական կարգավորման նկատմամբ: Ինչ վերաբերում է իրավունքի նորմերին, ապա դրանց իմացական ֆունկցիան կրում է անուղղակի արտացոլված բնույթ: Դրանց մեջ են ամրանում ճանաչման արդյունքները, հասարակական կյանքի մասին որոշակի ինֆորմացիան, որը ձեռք է բերվել հասարակական պրակտիկայի իրականացման և, մասնավորապես, իրավական ներգործության գործընթացի ընթացքում: Նորմերն ինքնին անմիջական իմացական ֆունկցիա չեն կատարում¹⁷: Դա, ի դեպ, առանձին խորհրդային գիտնական-իրավաբաններին առիթ տվեց իրավունքի կարևորագույն իմացական ֆունկցիայի բացասման համար, ինչը, բնականաբար, չէր նպաստում այդ ֆենոմենի հետագա զարգացմանն ու կատարելագործմանը: ԽՍՀՄ փլուզման ու իրավունքի ու նրա հիմնական ֆունկցիաների ուսումնասիրման մոտեցումներից ազատագրվելու հետ գրականության մեջ իրադրությունը կտրուկ փոխվեց, ինչը, մասնավորապես իր արտացոլումը գտավ իրավական կարգավորման իմացական ֆունկցիան որպես անհրաժեշտ և կարևոր ընդունելու մեջ:

Կարևոր է նշել, որ իրավական կարգավորման ֆունկցիայի իրացումը ևս մեկ, իր հետ կապված, բայց չհամընկնող ֆունկցիայի գո-

յության անհրաժեշտություն է առաջացնում: Խոսքը գնում է իրավական կարգավորման ինֆորմատիվ (ինֆորմացիոն) ֆունկցիայի մասին, որը կարելի է անվանել նաև հակադարձ կապի ֆունկցիա: Հայտնի է, որ իրավունքի նորմերի օգնությամբ հասարակական հարաբերությունների կառավարումը վերաբերում է այնպիսի տեսակին, որը կոչվում է կառավարում հակադարձ կապի սկզբունքով: Հասարակական հարաբերությունների և իրավունքի նորմերի միջև հակադարձ կապի մեխանիզմի առկայությունը նշանակում է նաև իրավաբանական պրակտիկայով կուտակվող ինֆորմացիայի առկայությունը, որն այնուհետև փոխանցվում է օրենսդրին: Այդ ինֆորմացիայի իրաքը հնարավորություն է տալիս իրականացնել իրավական կարգավորման իմացական ֆունկցիան, ուսումնասիրել իրավունքի սոցիալական արդյունավետության, գոյություն ունեցող նորմերի գործունեության, դրանց փոխանցման կամ կատարելագործման անհրաժեշտության մասին հարցերը¹⁸:

Այսպիսով՝ իրավունքը և իրավական կարգավորումը օժտված են կարգավորիչ և պահպանիչ ֆունկցիաներով՝ տնտեսական, քաղաքական և գաղափարախոսական ֆունկցիաներով, ինչը որոշվում է հասարակական կյանքի համապատասխան ոլորտների առկայությամբ: Վերջապես իրավունքի կառավարչական (համասոցիալական) ֆունկցիան արտահայտվում է դաստիարակչական, իմացական և տեղեկատվական ֆունկցիաներում: Վերջինները պետք է առանձին դիտարկել ամբողջ իրավունքի և իրավական կարգավորման նկատմամբ:

Այնուամենայնիվ՝ իրավունքի և իրավական կարգավորման ֆունկցիաների համակարգն իր մեջ ներառում է նաև այլ ֆունկցիաներ: Ընդ որում՝ դրանց մի մասն առանձնացվում է նշված ֆունկցիաների ներսում կամ էլ գտնվում է դրանց սահմանագծին: Իմացական և տեղեկատվական ֆունկցիաների նման որոշ ֆունկցիաները բնութագրում են իրավունքի և իրավական կարգավորման դերն ամբողջապես որևէ երևույթի նկատմամբ: Դրանց կարելի է վերագրել, մասնավորապես, իրավունքի գնահատիչ ֆունկցիան հասարակական հարաբերությունների մասնակիցների կամքի նկատմամբ, սոցիալական կողմնորոշման և հասարակության մեջ անձի ադապտացիայի ֆունկցիան և այլն¹⁹:

Իրավունքի տնտեսական ֆունկցիան կարող է բնութագրվել շուկայական տնտեսության կարգավորման մեջ հայրենական իրավունքի դերի ուսումնասիրման կոնկրետ ուղղություններից կախված (օրինակ, շուկայական հարաբերությունների զարգացման իրավունքը և հարցերը, իրավունքը և տնտեսության կառավարումը, իրավունքը և գիտատեխնիկական առաջընթացը):

Ժամանակականից պայմաններում հատուկ նշանակություն ունի այն ուղղությունը, որը կապված է իրավունքի, որպես քաղաքացիական հասարակության անդամների միջև սոցիալական բարիքներ բաշխողի, դերի հետ: Ճիշտ է՝ դեռ քիչ գիտնականներ են կողմնակից

տվյալ ուղղությունը որպես ինքնուրույն ֆունկցիա ընդունել: Բայց, մեր կարծիքով, հետագայում իրավունքի այդ ֆունկցիայի յուրահատուկ բնույթի գաղափարը կդառնա համընդհանուր: Իրավական կարգավորման տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական ֆունկցիաների գործունեության ուսումնասիրումը թույլ կտա ապագայում հետևություն անել համապատասխանաբար տնտեսական, քաղաքական, և գաղափարախոսական ֆունկցիաների համակարգի գոյության մասին:

Այդպես՝ իրավական պետության մեջ իրավական կարգավորման քաղաքական ֆունկցիաների համակարգը կարող էր ներառել այնպիսի ֆունկցիաներ, ինչպիսին են հասարակության մեջ տարբեր սոցիալական խմբերի միջև ամրապնդումն ու զարգացումը, ազգային փոքրամասնությունների մերձեցումը և նրանց համագործակցության ամրապնդումը պետության մեջ, անձի ազատության պահպանությունը և այլն: Սակայն նշված հարցն առավել խորը ուսումնասիրության կարիք ունի իրավական կարգավորման ֆունկցիոնալ բնութագրության մասին կուտակվող նյութերի բազայի վրա: Մեծ ուշադրություն է պահանջում իրավունքի և իրավական կարգավորման ու հայրենական իրավունքի առանձին ճյուղերի ֆունկցիաների հարաբերակցության հիմնախնդիրը: Իրավաբանական գրականության մեջ արդեն կարծիք է արտահայտվել, որ այն որոշում է ընդհանուրի և հատուկի կապի ընդհանուր օրինաչափություններով²⁰:

Ավարտելով մեր խոսքը տվյալ հիմնահարցի շուրջ, ցանկություն է առաջանում մեկ անգամ ևս վերադառնալ մի քանի վերը նշված ֆունկցիաների «սահմանագծի» վրա որևէ երևույթի նկատմամբ իրավական կարգավորման ֆունկցիաների առանձնացման հնարավորության մասին հիշյալ հարցին: Այդպես, ազգաբնակչության աճի նկատմամբ իրավունքը բավականին էական դեր է խաղում: Տվյալ ֆունկցիան (եթե կարելի է այն ֆունկցիա անվանել) կրում է համակոմպլեքսային բնույթ, քանի որ այն իր մեջ է ներառում իրավունքի դերի վերլուծությունը քաղաքացիների բարօրության բարձրացման, բնակչության միգրացիայի կարգավորման, ինչը շատ կարևոր է մեզ համար մեր հասարակության զարգացման ժամանակակից փուլում, ընտանիքի և ամուսնության հարցերի կազմակերպման, մշակութա-դաստիարակչական այն միջոցների ձևավորման մեջ, որոնք երկրի բնակչության մշակութային մակարդակի բարձրացման համար ունեն առաջնակարգ նշանակություն:

1.Подробнее об этом см.: Общая теория государства и права. Академический курс в 2-х томах. 2. Теория права. - Под ред. проф. М. Н. Марченко. - М.: Издательство "Зерцало", 1998, с. 231-236, 435-438.

2.См.:Гойман вания.. Право и системе нормативного регулирования .-В кн.:Н. Теория государства и права.Учебник - Под ред. проф. В.В. Лазарева.-"Право и законы",2001, с.115-116; Дминтрук В И. Теория государства и права.Учебное пособие - М.:ООО "Новое знание",2002,с.58-59,60,70,124;Григонис Э.П. Теория государства и права. Курс лекций. -Санкт-Петербург.Москва-Харьков-Минск:"Питер", 2002,с.109,182-184,186-188,190-192.

3.См.:Керимов Д.А.Филосовские проблемы права.- М.: "Мысль",1972,с.177; Его же: Методология права (предмет, функции, проблемы философии права).-М.: "АвантаЮ",2000,с.129-131,145-147,149-151;Алексеев С.С. Философия права.-М.: Издательство "Норма",1997,с.35-36,39-41,47-50.

4.См.:Спитидонов Л.И. Теория государства и права. Учебник.- М.:Издательская группа "Проспект",1996,с.103.

5.Радько Т.В. Понятие функций права. - В кн.: " Теория государства и права ".-Под ред проф. В.В. Лазарев. -М.: "Право и закон",2001,с.131

6.Хропанюк В.Н. . Теория государства и права .- В кн.: " Теория государства и права",Под.ред.проф. Стрекозова В.Г.- М.: "Интерстиль",2000,с.219.

7.Զ. Հակոբյան.Ժամանակակից իրավունքի գործառնությունները: Ապիյան Ն.Ա.,Սաֆարյան Գ.Հ.,Հակոբյան Զ.Հ. Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր գրքում: -ԵՊՀ-ի հրատարակչություն,2001 էջ 98.

8. Զ. Հակոբյան.Ժամանակակից իրավունքի գործառնությունները:Ապիյան Ն.Ա.,Սաֆարյան Գ.Հ.,Հակոբյան Զ.Հ. Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր գրքում: -ԵՊՀ-ի հրատարակչություն, 2001 էջ 110,114.

9.См.: Хропанюк В.Н. Теория государства и права(2-е издание, дополненное, исправленное). - Под.ред. профессоров Стрекозова В.Г.,с.20; Апиян Н.А., Апиян С.Н. Правосознание, правовое воспитание, правовая культураю - Ереван:изд-во ЕГУ,2001,с.84-86,90-92,93-95.

10. См.:Товмасян М.А. Совершенствование средств массовой информации по освещению деятельности правоохранительных органов - один из основных путей укрепления правопорядка. - "Свободник научных статей".- Товар,1997,N2,с.288-289,290-092,296-298.

11. Подробнее об этом см.: Апиян Н.А., Апиян С.Н. Правосознание, правовое воспитание, правовая культураю - Ереван:изд-во ЕГУ,2001,с.47-71.

12. Այդ մասին տես՝ Դիլբանդյան Ս. ՀՀ դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները:Ռեսուսնական ձեռնարկ իրավաբանական

ԲՈՒՀ-ի համար:-Երևան "Տիգրան Մեծ" հրատարակչություն, 2000, էջ.105-127:

13.См.: Апиян Н.А. Платон мне друг, но истина дороже!- "Голос Армении ",1993,23февралья.

14. Подробнее об этом см.: Комаров С.А. Механизм правового воздействия . -В кн.: "Общая теория государства и права.Академический курс в 2-х томах. Том 2. Теория права.- Под ред. профессора М. Н. Марченко. - М.: Издательство "Зерцало", 1998, с.434-444.

15. Подробнее об этом см.: Керимов Д.А. Методология права (предмет, функции, проблемы философии права), с.127-137, 277-291; Алексеев С.С. Философия права, с. 100-147, 272-275.

16. Подробнее об этом см.:Григонис Э.П. Теория государства и права. Курс лекций.-Санкт-Петербург. Москва-Харьков-Минск: "Питер", 2002, с.182-192

17.См.:Красавчиков О.А. Советская наука гражданского права.- "Ученые труды Свердловского юридического института". Т.6 — Свердловск, 1961. С.35

18. См.Хропанюк В.Н. Теория государства и права -2-е издание ,дополненное, исправленное) — Под ред. профессора Стрекозова В.Т.С.246-250

19. Подробнее об этом см.: Զ. Հակոբյան.Ժամանակակից իրավունքի գործառույթները: Ապիյան Ն.Ա.,Սաֆարյան Գ.Հ.,Հակոբյան Զ.Հ. Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր գրքում:-ԵՊՀ-ի հրատարակչություն, 2001 էջ:

20. Подробнее об этом см.: Керимов Д.А. Методология права /предмет, функции, проблемы философии права/ с. 201-2013.

РЕЗЮМЕ

Татевик Геворгян

Об обособлении функций права и правового регулирования

Рассмотрев данную тему, мы пришли к выводу, что право и правовое регулирование наделены регулятивными и защитными функциями (экономические, политические и идеологические). Следует отметить, что социальная функция права выражается в воспитательной и информационной функциях.

SUMMARY

Tatevik Gevorgyan

About Demarcation of Law and Legal Regulation Functions

Having studied the demarcation of law and regulation functions we came to the conclusion that law and legal regulation are endowed with regulatory and protective functions (economic, political and ideological). It should also be noted that the management function of law is expressed in the educational and informational functions.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ. Հայոց ցեղասպանությունը 19-րդ դարի գրականության մեջ	3
ՄՅԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Հայերի ցեղասպանության թուրքական քաղաքականության դրսեւորումը Շուշիում.....	12
ԳՐԻԳՈՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. ԼԻԼԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ. «Գրիգոր Նարեկացի» համալսարանի գիտակրթական գործունեությունը (1996-2014թթ.).....	21
ՎԱՅՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ. Հոգեւոր Հայաստանի գաղափարաբանությունը եւ արդիականության մարտահրավերները.....	33
ՏԱԹԵՎ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ. Անբերելակայելի իրականություն.....	38
ԶՈՒՆՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ. Ոգու մաքրագործման ասքեր(Գալշոյանի «Անթեղած ոգի» եւ «Օրիորդ Մարի» ակնարկները).....	45
ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ. Անկախության շրջանի արցախյան արձակի լեզվամտածողության մի քանի հարցեր.....	54
ԶԱՐԻՆԵ ՍԱՌԱՋՅԱՆ. Նորի եւ ավանդականի համադրությունը Համո Սահյանի պոեզիայում.....	64
ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ. Ազատամարտի արցախյան պոեզիայի պատմական ուրվագիծը.....	72
ՆԱՆԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ. Հակոբ Կարապետցի «Աբգար ամու օտար հարսը» պատմվածքը.....	80
ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ. Մարտիրոս Ռբնի երկերի լեզվաոճական մի քանի առանձնահատկությունների մասին.....	86
ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ. Դարձվածային-դարձվածաբանական բարբառայնությունները Արցախի եւ Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում.....	91
ՍՈՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. ԼՂՀ սահմանադրաիրավական կարգավիճակը /չճանաչված երկրների փորձի համեմատական վերլուծություն/.....	99
ՌԻՏԱ ԱՌՈՒՄՏԱՄՅԱՆ. Իրավական կարգավորումը. Հիմնահարցերն ու դատողությունները.....	108
ՏԱԹԵՎԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ. Իրավունքի եւ իրավական կարգավորման ֆունկցիաների սահմանազատման մասին...	116

«Գրիգոր Նարեկացի» պետական հավատարմագրված համալսարան
Госаккредитованный университет “Григор Нарекаци”

ԳՊՐԱՏՈՒՆ

Գիտական հոդվածների ժողովածու
Сборник научных статей

3-2015

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀԱՎՈՐՅԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ՝ ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ**

Համակարգչային էջադրումը՝ Գ.Մնացականյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Հափսը՝ 70x108 ¹/₁₆:
Ծավալը՝ 8 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 200:

Ստեփանակերտ
Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
2015